ԳԵՂԱՄ ՍԵՎԱՆ

ՀԱԿՈԲ ՄՆՋՈՒՐԻ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅ
ԱԿՍԱԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М. АБЕГЯНА

ГЕГАМ СЕВАН

АКОП МНДЗУРИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981

929:891.981 Մ 63

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

А 66220

ԳԵՂԱՄ ՍԵՎԱՆ

ՀԱԿՈԲ ՄՆՋՈՒՐԻ

3557-80

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԻՆՎԱՐԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

ԳՄԴ 83.3ՀՍ
Մ835ա

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
բանասիրական գիտությունների թեկնածու
Վ. Մ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆԸ և Գր. ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆԸ

Սեվան, Գ.
Մ835ա *Հակոբ Մնձուրի/Պատ. խմբ. Վ. Մ. Մնացականյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1981.—199 էջ, 1թ. նկ.*

Աշխատության մեջ ուսումնասիրված է հայ գյուղագրության լավագույն ավանդները շարունակողներից մեկի՝ սիսյուրահայ գրող Հակոբ Մնձուրու կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա հրատարակած հատորների և սիսյուրահայ, մասնավորապես ստամբուլահայ մամուլում տպված նյութերի հիման վրա: Գիրքը նախատեսված է գրականագետների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

Ս $\frac{4600000000}{703(02)-81}$ 47—80

ԳՄԴ 83.3ՀՍ
8 Հր3

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981



Հակոբ Մնձուրի

(1886—1978)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՄՈՒՏՔ

Միրավ ալ մարդ երբ տեղ մը կամ բան մը շատ սիրե, թույլ կուտա ինքզինքին չափազանցելու, բայց նորեն ալ շատ իրավ կան ըսածներու մեջ։

Սիյուռֆանայ գրականության կազմավորման ու համալրման առաջին քառորդ դարում (1920—1945) գաղթանայ գրաքննադատության կողմից որևէ երկի գրական արժեքն ու նեղինակի «տաղանդը» չափ ու կշռի էր դրվում նրա մեջ առկա «հայեցի դրոշմ»-ով։ Իսկ «հայեցի դրոշմ» հասկացությունը, առաջին հերթին, ընդգրկում էր հայ հողն ու նրա հերոսը, որոնք պատմական դաժան դեպքերի բերմամբ (1915 թվականին Արևմտյան Հայաստանի և առհասարակ արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կիրառած, պատմության մեջ աննախընթաց եղեռնը) դարձել էին անդառնալի անցյալ։ Անվերականգնելիից, կորուսյալից թեկուզ «փշուրներ փրկագործելու ձգտումը գրականություն էր բերում նրա շատ ծանոթ ակերից» մեկը՝ գյուղագրությունը (գավառական գրականություն), որ բացառապես հարուստ էր իր ավանդներով, խոր արմատներ ուներ հայ գրականության մեջ (XIX դարի երկրորդ կեսից սկսած) և առավել կարևորը, այդ պայմաններում, թվում էր հեշտ իրագործելի, դեռևս նոր կյանքի ու միջավայրի պայմաններից խուսնած, նրա հետ դեռևս չմերված նոր գրողի (սիյուռֆանայ գրող) համար։

Դրանք էին այն գլխավոր ազդակները, որ այսպես ասած, «գյուղագրությունը» սիյուռֆանայ գրականության զարգացման առաջին քառորդ դարում, դարձրին գերիշխող միտում, նրան հատկացնելով կամ

վերապահելով իր կարելիության սահմաններից ավելի հեռանկարայնություն: Բայց մոռացվում էր հիմնականը. նրանք, ովքեր մշակելու էին այդ գրականությունը, այլևս կանգնած էին ոչ հայրենի հողի վրա, հուշերով էին սնվելու (իսկ դրանք շատերի համար անապատ չէին կարող լինել), որ լավագույն դեպքում, ընտրյալները պատանեկան հասակում էին պոկվել հողից, իսկ նորեր չէին գալու: Բայց հակասակ արգելակող, անբնական այդ ազդակներին, սկսվեց հոսքը, բառի լայն առումով: Արևմտահայ գյուղը, նրա մարդիկ, բնությունը, կենդանիները, ծառերն ու ծաղիկները բերվեցին գրականություն: Բերվեցին երանգավորված թախծալի կարոտով, ինչպես լինում է նման պայմաններում, և ստեղծեցին այն երակը, որ կարելի է կոչել իր ելման դիրքից, իր սնող ակից՝ կ ա ր ո տ ի գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն:

Այդ բոլորի մեջ ոչինչ չկար անսովոր: Այսպես էր եղել սովետահայ արձակում և սովետական գրականության մեջ, բոլորովին հակադիր դիրքերից, երբ նրա սկզբնավորման տարիներից գյուղը, գյուղագրությունը նույնպես, գրեթե առաջնային միտումներից էր: Չնաշված, որ սփյուռքահայ գրականության համար դա առավել ևս բնութագրական էր: Որովհետև այն չկար այլևս: Որովհետև այն բողոք էր: Իսկ Զ կ ա ն ու բ ո ղ ո ք ը գլխավոր ու առաջնային հիմքեր էին տվյալ միտման համար բնդհանրապես, գրականության համար մասնավորապես[1]: Անշուշտ հասակ էր մի բան և այդ հանգամանքը առավել պարզ երևում է և այսօր, որ «գյուղագրություն» կամ «կարոտի գրականություն» կոչվող այդ տասնյակ հազարավոր էջերի մեջ ենշող էր խոտանը, հարցին ուտոպիական մոտեցումը, ազգային անհոգ ու շարդարացվող մեծամտությունն ու շովինիզմը. այստեղից էլ ծնունդ էին առնում սփյուռքահայ գրաքննադատական առաջավոր մտքի որոշ ներկայացուցիչների ժխտական կեցվածքը գյուղագրության նկատմամբ, նրանց կոչերը՝ ժամանակակից, այրող, այժմեական թեմաների հաշվին «խաղաքաղրության» յոգունգները, բայց այն սակավը, որ կար, գրականություն էր բառի իսկական իմաստով և մեծ ու կարևոր դեր խաղաց այնպիսի առաջնային մի հարցում, ինչպիսին էր ազգապահպանումը սփյուռքում:

Չնայած, որ այս վերջիններին կարելի էր առարկել նաև այն իմաստով, որ անցյալի ու ներկայի, գյուղագրություն ու խաղաքաղրություն հակադրության, այսպես ասած, վենի ընթացքում, մոռացվում էր

---

[1] *Այդ մասին՝ «կարոտի գրականություն» մանրամասն տե՛ս մեր աշխատանքը՝ «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր», 1920—1945, Երևան, 1980։*

կարևոր մի գործոն՝ «գրականության մարդագիտությունը, որի համար բավարար նյութ կարող էր լինել թեկուզև աշխարհի վերջին գյուղացին, մի կենդ գյուղացին, որովհետև նա մարդ է, մարդուն հատուկ հոգսերով, երազներով, հոգեբանական կենիտներով: Եվ ծանրության ճիշտը կախվում է ոչ թե նյութից (բաղմային կամ գյուղական նյութից), այլ այդ նյութի (և՛ բաղմային, և՛ գյուղական) միջոցով բարձրացվող բարոյական-հոգեբանական խնդիրների գեղարվեստական բովանդակությունից: Մեկը կարող է բաղմ, բաղմային եռուզեռ նկարագրել և շանցնել էկզոտիկայի սահմանագիծը (ավելին, նույնպես տուրք տալ վերը նշած ժամանակ միտումներին—Գ. Ս.), մյուսը գյուղական նյութի վրա կարող է ինչեցնել ամենաժամանակակից բարոյական մոտիվները: Կարևորը գրական հայացքն է»[2]:

Անհա ահյուսմանայ գրականության կազմավորման առաջին տարիներից էլ (խանական թվականների կեսերից) նշված թեմայի իսկական ու խոր արտահայտությունները եղան «գրական հայացքի» լավագույն դրսևորումները՝ Հակոբ Մենուրու ստեղծագործությունները, նրա «գյուղագրությունը»:

Իսկ որտե՞ղ են Հակոբ Մենուրու ավելի քան յոթանասունամյա հերոսական այդ ձեռքբերումների գաղտնիքն ու բանալին: Բացառիկ այն պարզության ու անմիջականության, բնականության, համով հոտով պատմելու այն արտակարգ տաղանդի, հեռավոր անցյալի ամենահեռին մանրամասնը, մանրուքը հիշելու և վերապրելու այն եզակի ձիրքի մեջ, որոնց շնորհիվ կենդանանում են արևմտահայ գյուղն ու գյուղացին, նրա նիստ ու կացը, վարքն ու բարքը, ոճն ու բարբառը, վերջապես. բանաստեղծական՝ այն աշխարհի վերհանման մեջ, որ շատ է նման մեծարենցյան աշխարհին, և որի միջոցով էլ ոչ միայն հարուստ նյութ է մատակարարվում հայ գրականությանը, այլ նաև հայ բանաստեղծությանն ու ազգագրությանը: Ի դեպ, վերջին նշվածները հասցված են բարձր գեղարվեստական խոսք ու պատումի մակարդակի: Մի խոսքով. կարոտի այդ գրականությունը. գրականություն է արևմտահայ ժողովրդի մասին ընդհանրապես և հայ գյուղացիության մասին մասնավորապես: Գրականություն է նրա կարոտի ու երազների, սիրո մասին, պատում մարդու նկատմամբ տածված հավատի և միաժամանակ պաշտամունքի՝ ձոն՝ բնությանը: Բայց այդ բոլորից առաջ ու հետո մի

---

2 Սուրեն Աղաբաբյան, *«Զարգացման փորձված ճանապարհով»*, *«Սովետական Հայաստան»* *օրաթերթ, 13 ապրիլի 1976։*

ինքն է ծանր ու արդար աշխատանքի, խոնարհ բազմությունների, աշխատասեր, պարզասիրտ ժողովրդի մասին, որ աշխատանքի, հողի ծանր ու շարքաշ աշխատանքի մեջ է գտնում իր կյանքի իմաստն ու երջանկությունը: Այստեղից էլ այն հիմքը, որ «հայելի դրոշմ» ու «զուտ հայկական» եղող այդ նյութին տվեցին աշխարհագրական իր նեղ սահմաններից դուրս պոռթկող համամարդկային հնչեղություն: Այդ գրականությունը նման է և եղավ գեղանկարչություն միաժամանակ, իր լավագույն արտահայտությունների մեջ, նման XX դարի ֆրանսիական տպավորապաշտներին, որ Հակոբ Մնձուրու, այսպես ասած, պատատներում՝ նկարեց, վրձնեց լեռներ, նամիսներ ու կենդանիներ: Թերևս այն տարբերությամբ, որ երբ կյանքում ու նկարչության մեջ այդ բոլորը մնում էին «լուռ», «անխոս», այստեղ՝ Հակոբ Մնձուրու պատմվածք-պատատներում լեզու առան բոլորն էլ ու խոսեցին, պատմեցին իրենց իսկ մասին, մարդու նման, մարդացած: Ամեն իր ու առարկա, ասուն ու անասուն իր երանգն ունեցավ այդ գրականության մեջ: Վերջապես, զուսպ ու խոր, համեստ ու գիտակից հայրենասիրությամբ դրսևորվեց այդ գրականությունը. «Անմիջապես ավելցնեմ, որ ես իմ գյուղես ու գյուղացիներես իմ տիպարներս առնելով հայրենասիրական զգացական գրականություն մը ընելը երբեք դիտավորություններուս մեջ չունեցա: Ես անկե կփախիմ: Ես երբեք չուզեցի բանաստեղծականացնել, բոեթիզե ընել[3] իրերը, դեպքերը: Ես Պոլսո բաղերեն Դոլարաերենն վերցուցած իմ պատմություններուս «Զորի Սահակ Աղան», «Արևին վրա կռիվ», «Շուկան» պատմելու պես պատմեցի իմ գյուղս: Նույն ռեալիզմը, նույն տեխնիկս գործածեցի: Հարկավ թե նույնը չէին տեքոռները, անձերը, հոգեբանությունները,- տեղագրությունը»[4]:

Հետաքրքիր է նշել նաև, որ առաջին հերթին Գարեգին Սրվանձտյանցի, Հովհաննես Թլկատինցու, Ռուբեն Զարդարյանի, Մելքոն Կյուրնյանի (Հրանդ), Արտաշես Հարությունյանի (Մալկարացի Կարո) և այլոց անմիջական հետևորդ Հակոբ Մնձուրու գրականությունը .մեր օրերում հնչում է նաև այժմեական ու ժամանակակից, բանաստեղծական մեծարենցյան խորքով և ոչինչ չկա զարմանալի, նաև՝ վիլյամսարոյանական հումանիզմով և խոսքի ոճով (կառուցվածքի անմիջականություն, պարզություն, վարակող լիրիկա) հանդիսանում է բոլորի ողջանչ կա-

---

3 *Բոեթիզե ընել (ֆր.) — բանաստեղծականացնել։*

4 Հակոբ Մնձուրի, *ժամանակագրություն, «Արմտան», «Մարմարա» օրաթերթ, Ստամբուլ, 28 նոյեմբերի 1963, № 7056։*

պիտալիստական մաղարի լնցած ու այլասերող բարքերի դեմ, և փոդի պաշտամունքի, փոքրոգության ու անազնվության հասցեին, և այս բոլորը, ոչ այն հեշտ ու դյուրին ճանապարհով, որ շատերը սփյուռքահայ գրականությունում փորձեցին անել «հայեցի դրոշմի» կեղծ դիմակի տակ, հակադրվելով ներկային, ու կեղծ ու չեղյալ իդեալիստական դրոշ պարզելով անցյալի կորուսյալ գյուղի ու նրա մարդկանց վրա:

«Եթե Սկը, Սրմատանը, Տիվրիկը կամ Երզնկան, Սրաբկիրը, Զմշկածագը կխոսեցնեմ, պանծացնելու համար չեմ ըներ: Միմիայն այդ տեղերը լավ կճանչնամ, քայլ-քայլ գիտեմ, տակե է»[5]: Եվ հենց այստեղ է, որ պարզորոշ է դառնում գրողի զարմանալի, պարզ ու խորունկ իրապաշտությունը: Հակոբ Մնձուրին չի իդեալականացնում իր գավառը, այնտեղ տիրում է լավի կողքին և՛ ազգային, և՛ սոցիալական անարդարությունը, իշխում է անհուսալի ոգիությունը, առատ է վիշտը, դժվար է սերը, վեհ ու մարդամաքուր սիրո կողքին գոյություն ունի խենթեշային կիրքն ու սերը, մանր ու մաշող է պանդխտությունը, անգամ ժամանակավոր տունդարձի գալը (Սիլա), սնահավատությունը, սնոտիապաշտությունը մեծ տեղ են գրավում, բայց այդ բոլորով հանդերձ, այնտեղ ինչ որ վեհ ու բանաստեղծական բան կա, մարդկային հուզիչ անձնազոհություն ու ազնվություն, հավատք:

Հակոբ Մնձուրին իրապաշտ էր ու մնաց այդպիսին: Հենց այդ իրապաշտությունն էր, որ ուղի բացեց նրան իսկական ու մեծ գրականության համար, դարձնելով նրան կարոտի գրականության մեծ Սոսքյալը, որ հուզիչ ու վեհացնող հավատարմությամբ, մի ամբողջ յոթանասունամյակ և ավելի մնաց պատանեշի վրա: Հասել էր խոր ծերության, իննսունհերկուամյակի մեջ էր, մենք աշխատում էինք ներկա գրքի վրա, երբ լսեցինք նրա մահվան բոքը (փետրվարի 1, 1978): Կորցրինք սփյուռքահայ գրականության խոշոր դեմքերից մեկին ևս:

---

5 Հակոբ Մնձուրի, *Կոռնկ, ուստի՞ կուգաս, «Հաշվեկշիռ», Ստամբուլ, 1974, էջ 13։*

ԳԼՈՒԽ Ա

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ

1

«Ստեղծելու հաճույքը ապրելու հաճույքին չափ գեղեցիկ է»

Հակոբ Մնձուրին (Հակոբ Տեմիրճյան) ծնվել է 1886 թվականի հոկտեմբերի 16-ին, Երզնկայի գավառի Արմտան գյուղում։

«Յոթանասուն տունով գյուղ մըն էր։ Արմտանները երկուք էին, մեծը տասը վայրկյան մը անդին էր, երեք հարյուր տունով։ Ես պզտիկեն եմ։ Եփրատի ձախ ափն էր. «Բայց անմիջապես ափն ալ չէր, բարձրավանդակի մը վրա էր», Տերսիմի, ուրիշ բառով՝ Տուժիկի, ուրիշ անունով՝ Մնձուրի լեռներուն դեմը։ Երկու կիրճերուն, խոստայի, Բեհրրի հավասարությունը, պզտիկ, շատ պզտիկ դաշտի մը մեջ (Արմտանի շրջակայքում կային նաև ինը գյուղեր, որոնցից մեկը՝ Կոստական՝ թրքական, մյուսները քրդական ու զզելպաշների գյուղեր էին։ Այդ բոլոր գյուղացիք հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էին, մինչև պատմական ծանոթ, աննախընթաց դեպքերի նախօրյակը—Գ. Ս.)։ Ակը ամենեն մոտ քաղաքն էր։ Մեր ֆոլկլորը իր գունագեղ հարստությունովը Ակեն էր»[1]։

«Գյուղին բնիկները յոթը տուն եղեր են, մեր պապերը հրավիրեր, բնակության տեղ ու արտեր տվեր են, որ ցանեն, քաղեն ու ուտեն, գյուղն ալ շենեցնեն, բազմանան։ Մենք, Գրիգոր պապուն թոռները, զատվեր, զատ տուն եղեր ենք, երկաթագործ ըլլալուն Տեմուրճենց ըսեր են. մենք Գրիգոր պապուն թոռներն ենք»[2]։

Հակոբի ծնունդը (որի պապերը Արմտան են եկել Տերսիմից հետու Ղարաչոռեն, «ե՞րբ... հայտնի չէ») տեղի է ունեցել յուրօրինակ պայմաններում, որի մասին հետագայում որդուն պատմել է Տեմուրճենց հարսը՝

---

1 «Համայնապատկեր հանրապետական շրջանի Ստամբուլահայ գրականության», Ստամբուլ, 1957, էջ 44։

2 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Տաղլուենց Մարոն», Ստամբուլ, 1966, էջ 50։

մայրը. «Մայրս միշտ կըսեր ու կըսեր. «Ախ քեզի... քչիկ մըն ալ համբերեիր չէ՞ր ըլլար... իրիկունը տուն գայիր, տունը ծնեիր չէ՞ր ըլլար։

Ես կիսնդալի, «ինչպե՞ս, ինչպե՞ս» կբացագանչեի...»։ «Ինչպե՞սը կա... գետինը, հողերուն վրա աշխարհ եկար...», «քեղմով հղի էի, վերջին շաբաթներս էին։ Ինչպես ըլլա ետքի օրերդ չեն, ըսավ մամդ, այս-օրվան վաղվան չես, շաբաթ մը, շաբաթեն ավելի օր ունիս»։ Իմ հաշիվովս ես ալ անանկ գիտեի։ Հաց առի, մանգաղն առի, ձորը իջա, սկսա քաղել։ ...խորոմ մը քաղեցի։ Մեկալ խորոմիս մեջքիս ցավերը սկսան։ Կանցնի, ըսի ես ինձի։ Երեկ ալ ցավեցավ, ետքը անցավ, կուդա ու կերթա։ Չանցավ։ Քաղը չշարունակեցի։ Մանգաղը ձգեցի։ Նըստա։ Չեղավ։ Ոտքի ելա։ Մերոնց նայեցա։ Անոնք ալ չկային։ Լեռան մյուս երեսը դարձեր են մտածեցի։ Ցավերս սաստկացան։ Շունչ չէի կրնար առնել։ «Վարը ձորը իջնամ» մտածեցի։ Իջա։ Դիմացս, գագաթը Կախմխցի էին, Ռեբթացի էին, քրդերուն կնիկներուն կանչեմ ըսի։ Քիչ մըն ալ համբերեմ ըսի։ Աչքերս մթնցան։ Ձորը մթնեց։ «Ինչ կըլլա, ի՞նչ կըլլամ» ըսի։ Ու դուն աշխարհ եկար»[3]։

Այդպես ծնվեց Հակոբ Մնձուրին։ Բայց կարող էր և երբեք չծնվել, քանի որ այդ հիշարժան օրից ուղիղ քսանհինգ օր առաջ, տեղի էր ունեցել մի այլ, արդեն ողբերգական դեպք, նույն հերոսների հետ։ Նույն Տեմուրճենց հարսը բարձրացել էր «Կավին դարը» կոչվող լեռան բարձունքը և հողերը փուլ էին եկել, իր տակ ծածկելով հղի կնոջը։ Բայց, բարեբախտ զուգադիպությամբ, գյուղացիները հասել էին և տեսնելով բրգացած հողերի տակից երևացող կնոջ «էնթարիին փեշը», փրկել էին ստույգ մահից։ Այս մանրամասները վերցված են Մնձուրու «Կավին դարը» պատմվածքից[4]։

Մնձուրու դավառը ամբողջովին ձորերով էր ծածկված, որոնց մեջ հոսող մի քանի գետեր շորանում էին ամառները. «ատկե է, որ Դուրուչայ կըսեն, պաշտոնական անունը ատ է։ Դավառին որոշ գոտիները բուռ են, աղի գույն, փխրուն քարի տեսակ մը, որոնցմե վազող ջրերը անպատմելիորեն լեղի են, բայց այդ մասերուն հողերն ալ շատ բարեբեր են, մեկի դեմ քսանչորս, անկե ալ ավելի կուտան, ատոր համար Արմբոյայց դավառ ալ ըսեր են, հին գրքերու մեջ»։

«Արմտանը մեր թվականեն առաջ երկրորդ հազարամյակին հեթական պնակիտներուն մեջ հիշատակված Արմատանան է, Մնձուրը՝

3 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Առջիններ», Ստամբուլ, 1974, էջ 103—105։

4 Տե՛ս Հակոբ Մնձուրի, Արմտան, «Կավին Դարը», էջ 138։

Մուղուրին։ Նույնպես նույն պնակիտներուն մեջ հիշվածը։ Խայասայի կամ Հայասայի արևմտյան մասին մեջ, Եփրատի աջը, Արմեններուն գալեն առաջ, փոքր ասիական բնիկ խայերուն կամ հայերու հնագույն տեղանուններն են»[5]։ Ի դեպ, Հակոբ Տեմիրճյանին Մնձուրի գրական ծածկանունը տվել է, ըստ հեղինակի վկայության, Օննիկ Չիֆթե-Սարաֆը։ «Չիֆթե-Սարաֆը, որ Հովհաննես Ասպետ եղավ ետքեն, «Միամիտի մը Արկածները» գրողը, նորավիպագիրը։ Գատըգյուղ կբնակեր։ Մոդայի պողոտան, Բիլա փաշա գրավաճառ էր։ Ես ալ Սկյուտարեն Գատըգյուղ անցած էի, հացագործ էի նորեն։ Քանի մը օրը անգամ մը իրարու կերթայինք, երկու բերան խոսելու համար։ Ան էր, որ մականունս Մնձուրի դրավ, իմ գավառիս անունով, ինքն ալ Օննիկ Չիֆթե Սարաֆի տեղ Հովհաննես Ասպետ դրավ իրեն։ Ես նախապես Փափազյան, ետքն ալ Տեմիրճյան կստորագրեի»[6]։

Հակոբ Մնձուրին իր նախնական կրթությունը ստացավ գյուղի դպրոցում, իսկ երբ «գյուղեն հոս (Ստամբուլ, 1898-ին—Գ. Ս.) եկա ավելի շուտ ֆրանսերեն գիտեի քան հիմիկվան հինգերորդն ելլող մը։ Հետագային այդ դպրոցը ավելի աղեկ հունձքեր տվավ։ Ըսեմ որ ուսուցումի գրքերն ալ միասին ձրի էին, ժամուն արտերուն բերքերովը կհատուցվեին»[7]։

«Տասներեք տարեկանիս Ստամբուլ եկա կարդալու համար։ Գյուղի հագուստներով էի, կարմիր գոտի մը մեջքիս։ Նավ նստելե առաջ տրեխներս նետեցինք։ Ինձի Տրապիզոնի չափուլուներ մը առին, որոնց քիթերը վեր դարձած ըլլալուն շատ հավնեցա։

Գյուղը, դպրոցին ամենեն աչքը բացը, խելացին էի»[8]։ «Հոս Ղալաթիո նախակրթարանի վերջին կարգեն անցնելեն հետո Ռոբերտ կոլեջ հաճախեցի մինչև անոր Սոֆոմորը։ Օրինակելի ուսանող մը չեղա, ինչպես կըսեն։ Եղած դպրոցներս ինձմով չհպարտացան, ես ալ անոնցմե աղեկ հիշատակ մը չունիմ»։

Ի միջի այլոց, հետագայում, 1964 թ. «Սինան Թանտրճյանին» ուղղված իր հուշերում, Հ. Մնձուրին գունեղ ու վառ երանգներով է պատկերում կենտրոնական վարժարանի այն ժամանակվա աշակերտության

---

5 Հակոբ Մնձուրի, *Արմտան*, էջ 174—175։

6 Հակոբ Մնձուրի, *Ժամանակագրություն*, «Մարմարա» օրաթերթ, Ստամբուլ, 2 մայիսի 1963, № 6849։

7 «Համայնապատկեր հանրապետական շրջանի Ստամբուլահայ գրականության», էջ 44։

8 Հակոբ Մնձուրի, *Կենսագրություն*, «Մարմարա», 16 ապրիլի 1959, № 5410։

որոշ բարբերն ու դպրոցի միջավայրը։ «Տարին երկու անգամ, երկու Բայրամին, Սուլթան Համիտը Թոփղափուի պալատը մարգարեին նվիրական ավանդներուն այցելության կերթար. պողոտային երկայնքին կշարվեինք «փատիշահըմ չոգ յաշա»[9] պոռալու։ Սուլթանին եռաձի կառքին հնձյալ թիկնապահներու շողշողուն թափոր մը կհետևեր, մեր վարժարանին կեդրոնականին ուսուցչության ու աշակերտության դահին ու սուլթանին մեր հավատարմության ու փարումին թուղթը կըհանձնեինք թիկնապահի մը, որ ձիեն ծռելով կվերցներ՝ տանելու և մատուցանելու նորին Մեծափառության»[10]։

Վերադառնանք իր հաստատումներին.

«Դպրոցը չկազմեց ղիս։ Ես ղիս կազմեցի։ Անկե շատ բան չկա մեջս կամ գրեթե չկա։ Արդեն անոր կազմածը կկքի եթե մեր մոնտաժը մենք չընենք։ Իմ մոնտաժս ես ըրի, կարդալու, շատ կարդալու, ամեն բան կարդալու կիրքս ըրավ։

Գործիքներս աղեկ էին։ Ֆրանսերենս շատ աղեկ էր, անգլերենս ալ բավական աղեկ էր։ Տղայությանս լավ որ Ռոբերտ կոլեջ եղա։ Կոլեջին գրադարանին ու հայ ուսանողական միության գրադարաններուն մեջ կգտնեի փնտրածներս։ Արևելահայ գրողները, արտասահմանը ես հոն կարդացի։ Թենին հոն հանդիպեցա։ Նույնպես ռուս վիպագիրներու անգլիական թարգմանություններու վրայեն»[11]։

«Գրականությունը իմ տեղս էր, պղտիկությենես կսիրեի զայն։ Գրող ըլլալու փափաք ունեի։ Ես ալ, անհաջողություններուս փոխադարձելու համար, ինքդինքս կարդալու տվի»[12]։

«Իմ վարպետներս Զապել Եսայանը, Արտաշես Հարությունյանը, Մալկարացին եղան։ Ֆլոբերը, ամենեն շատ ղիս կազմեց, ղիս ղիս ըրավ։ Իր նամակները, իր նամակներուն մեջ իր վեպերուն ծննդաբանությունը, արվեստի և գրականության վրա իր մտածումները, ըլլա որ հիմա տեղ տեղ չբաժնեմ ղինքը»[13]։

«Այդ 1902—1903 ներուն Զապել Եսայանը իր ամուսնին՝ Տիգրան Եսայանին հետ Փարիզեն եկավ։ Օրթագյուղ, Բոսֆորալ փաշայի փողոցը տան մը երկրորդ հարկը բնակեցավ։ Մեր փուռին հաճախորդը

---

9 Փատիշահըմ չոգ յաշա (Թրք.)—թագավորս շատ ապրիր, երկար ապրիր։

10 Հակոբ Մնձուրի, Դպրոցականությունս, «Մարմարա», 4 մարտի 1964, № 8192։

11 «Համայնապատկեր հանրապետական շրջանի Ստամբուլահայ գրականության», էջ 44։

12 Հակոբ Մնձուրի, Կենսագրությունս, «Մարմարա», 16 ապրիլի, 1959, № 5410։

13 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Հաշվեկշիռ», էջ 12։

եղավ, հացը հայրս տվավ։ Իր պատմվածքները հրատարակեց։ Փարիզի ռուս ուսանողուհիներու տիպերը պատմեց, որոնք իրենց երկիրներեն եկեր էին բժշկություն ուսանելու տենչերով, խմբովին միասին կապրեին խցիկներու մեջ գրեթե առանց դրամի, ծայրագույն զրկանքներով։ «Շնորհքով մարդիկը» վեպը մըն ալ գրեց։ Իր ստեղծագործությունները, իր աղջիկները հմայեցին զիս։ Իմ խառնվածքիս շատ մոտ եկան։ Առաջին անգամն էր որ հայերենով նման պատմություններ կկարդայի։

Իմ երևակայությունս հրահրեցին։ Իր գրելու կերպն ալ սիրածս էր։

Երկու անգամ իր տունը գացի, իմ առաջին մտորումներս տարի։ Ես զիս ճանչցուցի։ Իր հայացքին տակն եմ ըսի։ Շատ երիտասարդ էր, գեղանի էր։ Աչքերս իրեն չսևեռեցի, գրեթե միշտ գետին նայեցա, գավառացի, գյուղացի, ասիացի տղու մը ամչկոտությունովը»[14]։

Հակոբ Մնձուրու առաջին գրվածքը, պատմվածք «Հարս ու կեսուր» խորագրով, լույս տեսավ իր տասնիններամյա հասակում, Արփիար Արփիարյանի եղբոր հրատարակած «Մասիսում»։ Նույն թվականին «Մերկյուր-դը-ֆրանսից» թարգմանաբար նույն «Մասիսում» հրապարակվեց Մոկլերի՝ «Այցելություն մը Թենի գերեզմանին» և Լերմոնտովից «Կովկասյան պատմվածք մը» Հակոբ Փափազյան ստորագրությամբ։ («Երկրորդ գործ մը չկարողանալով տալ, թարգմանություններ արեցի»,—անկեղծորեն խոստովանում է Մնձուրին—Գ. Ս.)։ Ինքնազարգացմամբ իր խսկական ուսումը սկսած և շարունակած ու այդ գծով էլ գրական ասպարեզ մտած Հ. Մնձուրին, 1907-ի ամռանը վերադառնում է երկիր, ամուսնանում և ունենում չորս զավակներ։ Երկրում մընում է մինչև 1914-ի ամառը։ Վերջին անգամ հայրենի գյուղում ապրած այդ յոթ տարիների մասին, իր սեփական անձին ու գործունեությանը վերաբերող տողեր մենք գտնում ենք նրա պատմվածքներում, ժամանակագրությունների մեջ և «Կռունկ, ուստի՞ կուգաս...» ժողովածուում։

Մի խոսքով, չհաշված մանկության ու պատանեկության տասներեք տարիները և դրան գումարած վերջին յոթնամյակը, Հակոբ Մնձուրու կյանքի միայն քսան տարիներն են, որ անցնում են գյուղում, իր հայրենի հողում՝ Արմտանում, նրան պարգևելով երկարատև մի կյանքի համար գրական անսպառ հումք ու պաշար և հայ գրականությանը՝

---

14 Հակոբ Մնձուրի, Պեշիկթաշի փուռը, «Մարմարա», 28 ապրիլի, 1977, Ա մաս։

վերին աստիճանի հետաքրքիր, իր սերնդակիցների մեջ, բացառապես ինքնուրույն, մի խոշոր գրող։

Վերադառնալով այդ յոթ տարիներին, նախ խոսենք 1907 թ. ամռան մասին, երբ նա գալիս էր երկիր։

«Ասիան էր, Արևելքը, և ես շատ երիտասարդ, այն տարիներուս մինչև մազերուս ծայրերը ռոմանտիկ, ջորիս վրա նստած, չգիտեի ինչ ընեի ցնծութենես։ Ու ավելի զարմանալին։ Ինիկ մը ըլլալուս հակառակ, իմ տեղացիի աչքերուս տեղ, ֆրանսացիներուն՝ Գոտիեի Կոնստանտինոբըլին, Ֆրոմանթենի Սահարային, Լոթիի դեպի Սպահանի ուղեղրական նկարագրություններուն մեջեն, ու անոնց աչքերովը կնայեի իմ շուրջիս տեսարանին ու հետիս ճամփորդներուն վրա»[15]։

Իսկ երբ գյուղում էր. «Անգլիական, ֆրանսական գրականությունները հետս արտերը, այգիները տարի։ Բալլակը, Ֆլոբերը իրենց բնավ չգացած, իմ տանելես ետքը ալ անդամ մըն ալ երբեք չերթալիք տեղերը իմ այգիներուս մեջ պատցուցի»։ «Եվ աչքերս լեցուցի բոլոր տեսածներովս, զոր գրեցի կամ պիտի գրեմ»[16]։

«Ծննդավայրին, Թեոդորաթրիային[17], նախահայրերու տեղին պաշտամունքը կար մեզ մոտ, ինչպես Կյուսթել-դը-քուլանժին «Սիթե Անթիքին» մեջ պատմած հին հռոմեացիներուն մեջ»[18]։

Դա իր հերթին, բայց կար ավելի հիմնավորը, որ ժամանակաշրջանի մտայնությունն էր, մտայնություն, որ մուտք էր գործել հայկական դպրոցների մեջ, մասնավորապես Պոլսում (Ստամբուլում), որտեղ մեծ մասամբ պաշտոնավարում էին հայ գրականության ծանոթ ու անվանի մշակներ։ Ահա թե այդ օրերի մասին ինչ է գրում. իր «Կապույտ լույս» ժողովածուում՝ «Սիրահարություն մը» պատմվածքի մեջ Մնձուրին. «Ու ասոնցմե զատ կար նաև երկրորդ պարագա մը։ Վարժարանին մեջ փոքրաթիվ խումբ մը ուսանողներ գրելու, գրող դառնալու երազը ունեինք։ Ամեն ամիս մեր թերթը կհրատարակեինք։ Իհարկե ձեռագիր, արձակներով ու քերթվածներով ծայրե ի ծայր։ Պարբերական հավաքույթներ, վիճաբանություններ կսարքեինք, խմբապետություններ կկազմակերպեինք, միշտ պատանեկան խանդավառություններով, ինչպես շատ բնական էր այդ տարիքին մեջ։

---

15 Հակոբ Մնձուրի, Կենսագրություն, «Մարմարա», 30 ապրիլի 1958, № 5424։

16 Նույն տեղում։

17 Թեոդորաթրիային, ֆր.—հայրենի հողին։

18 Հակոբ Մնձուրի, Կենսագրություն, «Մարմարա», 30 ապրիլի 1958, № 5424։

Մենք բոլորս ալ հավատավորներն էինք այն շարժումին որ այդ օրերուն մեր գրականության մեջ ձև ու կյանք առնելու վրա էր. թե հայ արվեստը իր բոլոր ճյուղերովը, ընդորս և գրականությունը որպեսզի կարենա ցեղին հոգին ցոլացնել, յուրահատուկ գեղեցկությունները երևվան հանել, բնագավառեն ներշնչվելու, անկե առնելու է իր ավիշը, անոր հողեն ծնելու է, այդպիսով միայն կենսունակ, բարախուն, ինքնատիպ, նույնատեն խորապես մարդկային կարենալ դառնալու համար։ Ու ատոր համար պետք է դիմել, մոտենալ բուն իսկ ակին, առավելապես գյուղին, ապրիլ հոն, ճանչնալ ու սիրել զայն։ Ու ուսումնասիրության համար, ի՞նչ ավելի հարմար վայր քան իմ գյուղս, իմ գավառս, կիսորհեի հս ամեն անգամուն»։

Հ. Մնձուրու համար իրականացել էին այդ բոլորը։ Նա, ինչպես ասացինք, իր գյուղացիների հետ էր, ամբողջովին մերված նրանց կյանքին ու առօրյային։ Սիրահարված իր այգիներին, արտերին, գետերին, ծառերին ու գետակի ավազներին, մոշիներին, խիճերին։ Արմբտանները տասներկու հանդ ունեին, յուրաքանչյուրը յոթանասունից մինչև հարյուր քսան այգիով։ Տեմուրճենք երեք տեղ էգի ունեին, երկուսը Կարմիր հողերում, երրորդը՝ Խառիծակում։

Հակոբ Մնձուրին ամուսնացավ Կորջայենց աղջկա հետ, որի անունը՝ Ողբտան էր, ունեցավ չորս զավակ։

«Ես, ըսել է տասը տարի հետը, 1907-ի ամառը, հուլիսին, Վարդավառին, կամ ինչպես երկիրը կըսեինք, հերկին, խոտին ամսվան, քսանմեկ տարեկան էի, պարկ մը մինչև շրթները գիրքերով, ուրվյուններով, ամենաշատը ֆրանսերեն, հայերենես հետը իմ երկրորդ լեզվովս, ամենեն շատ սիրածովս, Արմտան դարձա, ամուսնացա ինչ օվսաննաներով։ Իմ ազամանդյա օրերս էին։

Գողթան երգիչները երգեցին. «Տես տեղայր ոսկի ի Հարսնության Ալանաց օրիորդին Սաթենկան, Տեղայր մարգարիտ ի փեսայության Արի Արբայն Արտաշեսին»։

Մենք դրամ չունեինք, իմ հարսնիքիս, մեր արտերուն հացովը, մեր այգիներուն գինիովը, մեր մեղվանոցին մեղրովը, ոչխարներուն յուղովը ըրինք Մեծ խաչին կիրակի օրը։ Դրամ ալ մեճիտիյե մը, այսինքն քսան ղուրուշ զուռնային, տավուլին տվի, մեճիտիյե մըն ալ մեր Կամախու Սեպուհ լեռան ավագ վանքին վանահորը, Բրոխորոնյան Վարդան վարդապետին, որուն ենթակա էինք։

Մեկ երկուշաբթիեն մյուս երկուշաբթի ալ, յոթը օր դափերը չալ-

3557-80

վեցան[19], իմ հարսնևորներս պարեցին. «Դացեք ըսեք կնքամորը, ծառը ծաղկեր է... Ոտոմ ոչխար, տիկով գինի կուզեմ, ձայնս մարեր է» կանչեցին»[20]։

Մնձուրին ամռան ամիսներին աշխատում էր բոլորի նման, իսկ դպրոցական ամիսներին զբաղվում ուսուցչությամբ։ Դա ևս յուրօրինակ էր և ուրույն, որ հեռվից հեռու հիշեցնում էր հայ դրականության մեծ լուսավորչին՝ Խ. Աբովյանին, իր ինքնուրույն գործելակերպի նկատմամբ ունեցած հավատով ու վստահությամբ։

«Դասարանիս դասերը ես պիտի պատրաստեի։ Իրենց գիրքերեն պիտի ըլլային անշուշտ։ Բայց պիտի հասկանի, ամենը պիտի շատնի, որոնք որ ես կպահանջեի իրենցմե, ատոնք պիտի տայի։

Աշակերտներս պիտի ընդօրինակեին, իրենց տետրակներեն պիտի սորվեին։ Իմ դասերս մենագրություն մը, մասնագիտություն մը պիտի ըլլային, պայծառ, հստակ պիտի ըլլային։ Անդամ մը կարդային, պիտի ըմբռնեին։

Թիվ պիտի չունենային։ Ոչ գրո, ոչ տասը։ Թիվը կավերե աշակերտը, կանարգոյականացնե։ Իր գիտնալը, չգիտնալը նույնքան բնական է ինձի համար։ Իմ հարցումիս ես կպատասխանեի իր տեղը, ես իրեն կրկնել կուտայի ու իրեն ալ կըսեի որ չզդածվի։ Բայց պիտի շաշխատի, պիտի չսորվի, պիտի առարկվի։ Ոչ, պիտի աշխատի, պիտի սորվի, վասնզի ես կատեմ պատիժը, զինքը վախցնելը։ Ես կհարգեմ իր ես-ը, կօգնեմ իր մեջը իր ես ին։ Ես ոստիկան ուսուցիչը պիտի չըլլամ, ինձմե ավելի ան իր դասարանին ազդեցությանը տակ է։ Իր դասընկերները 30—40 հոգինոց իր դասարանը կհասկնա վիս, իր դասարանը մեզմե ավելի մեղ կճանչնա, կծաղրանկարե անդամ մեր թերությունները։

Քննություն ալ պիտի չունենային։ Քննությունը կավերե աշակերտը և ի վերջո, հակառակ կարծվածին, օգուտ մը չունի։ Ամեն տարի իմ աշակերտս պիտի փոխե կարգը, պիտի չկրկնե, և պիտի ստանա հաստատագիր մը որ լրիվ հետևած է իմ դպրոցիս։ Ես ալ, իմ դպրոցս ալ հանցավոր ենք, երբ չենք սորվեցուցած։ Քննություն մը կկատարվի ստուգելու համար թե աշակերտը յուրացուցա՞ծ է իրեն ավանդվածները։ Բայց ի՞նչ է յուրացում մը։ Հիշողություն մը որ եթե չապրվի, չշարունակվի, չկիրարկվի, կմոռցվի։

---

19 Զարվեցան՝ նվաղեցին։

20 Հակոբ Մնձուրի, Պեշիկթաշի փուռը, «Մարմարա», 28 ապրիլի, 1977։

ԱՅԱՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Պիտի խրատեի դասարանիս երկու սեռին ալ որ հայերեն օրաթերթ կարդան։ Տունը հայերեն թերթ մը մտնե։ Ամոթ մըն է հայու մը համար, հայ կյանքեն հեռու ապրիլը, չհաղորդվիլը։ Հետո ուղղագրության պարագան կա։ Միշտ հայերեն կարդալով մեր աչքերը կսորվեցնեն մեզ մեր բառերը ուղիղ գրելը։ Միայն աչքերը։

Պիտի փափաքեի դարձյալ երկու սեռին ալ որ հայերեն գիրքեր ունենային տունը։ Գիրք կարդային, վեպ, քերթված, մինչև գիտական, բաղաքական, հասարակական երկեր։ Գրականությունը միայն կբյուրեղացնե ամենը զոր կտեսնենք, կլսենք, թարմ կպահե մեզ, մեզ կնորոգե, կծերանանք բայց չենք օթնկանար, չենք հիննար, մեր մակարդակը կբարձրացնե, ինչ որ ես կբաղձայի ամենուն համար»[21]։ Նշած մեթոդով Հ. Մնձուրին դասավանդեց մի քանի տարիներ։ Իհարկե, հայանված գաղափարներն ու սկզբունքները կարող են վիճելի շատ կողմեր ունենալ և ունեն, բայց այստեղ հետաքրքիրը այդ գաղափարներով ու մեթոդով օժտված մարդն է, որ բնորոշվում է, այս հարցում ևս, իր արմատով՝ դյուղացիական պարզությամբ, անմիջականությամբ ու զուլալությամբ և ամենակարևորը՝ իր անդավաճան սկզբունքներով ու հետևողականությամբ, որ եղել է նաև իր գրականությունը, նրա սկզբնավորման օրից։ Մնձուրին դպրոցի և ուսուցչության թեմային անդրադարձել է բազմիցս իր պատմվածքներում։

Այդ թվականներին «Մեհյանում» լույս տեսան «երկու-երեք գլուխներ Հակոբ Տեմիրճյան ստորագրությամբ, իսկ Զինադարին՝ «Ոստանում» Հակոբ Մնձուրի ստորագրությամբ չորս-հինգը», «Ասոնցմե ոչ մեկը կա քովս։ Գավառը մնաց, հետո Սկյուտարի երկու հրդեհներուն հրկիզվեցան, այրեցան։ 1922 են, հանրապետական շրջանեն կսկսի արտադրություններս»[22]։ Այս շրջանից հետո գրած «Նաղար» թատերախաղը եղավ միակը և լույս ընծայվեց ամերիկահայ մամուլում, իր խոստովանությամբ իսկ. «մեծ բան մը չեղավ»։

Հ. Մնձուրին, ինչպես երիտասարդության սեմին նոր ոտք դրած ամեն իդեալիստ, ուներ իր երազները՝ ավարտել դպրոցը և, եթե հաջողվեր, վարժարանի նպաստով մեկնել արտասահման բարձրագույն ուսման և վերջնականապես վերադառնալ դյուղ ու մնալ այնտեղ։ Գյուղի կարոտն ու առաջին վերադարձին իսկ ծավալած գործունեությունը և թերևս ընտանեկան նոր պայմանները. ամուսնություն, չորս երեխա-

21 Հակոբ Մնձուրի, Եթե ուսուցիչ մը ըլլայի, «Մարմարա», 26 մայիսի, 1977։
22 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Հաշվեկշիռ», էջ 14։

ների ծնունդ, ի չիք դարձրին այդ երազների առաջին մասը։ Իսկ երկրորդը, որ գլխավորն էր իր համար՝ դառնալ ուսուցիչ, գրող և հողագործ, «խանգարվեց» մի փոքր պատահարի պատճառով, որ դարձավ ճակատագրական։ 1914-ի ամառը բորբոքվեցին Մնձուրու նշագեղձերը և նա մեկնեց կրկին Կ. Պոլիս, այս անգամ արդեն բուժվելու։ Նույնիսկ կարդին «Մնաք բարով» չասաց իրենցներին, չէ՞ որ օրերի հարց էր. «օգոստոսի մեջ, ամսվան կեսն ալ կանցներ, նշագեղձերուս բորբոքումին համար որոշեցի Պոլիս երթալ։ Երթուղարձը քսաներկու օր կտևեր, քանի մը օր ալ դարմանումին կմնայի, սեպտեմբերի 15-ին նորեն հոս եմ ըսի տունիններուն։

Այնքան ալ ստիպողական չէր, կրնայի չերթալ, բայց անգամ մը մտքիս դրի»։ Հետո Պոլսում «Զորաշարժ, զորակոչ հայտարարվեցավ։ Սկյուտար, Ենի-Չեշմե, Արիանյանին փուռը կմնայի։ Սելիմիյեի զորանոցին ենթարկվեցան գործավորները, ես ալ անոնց հետ, հացագործ զինվոր եղա։ Ալ ո՞ւր կրնայի երթալ»[23]։

Սկսվեց երիտթուրքերի գենոցիդը հայ ժողովրդի նկատմամբ, հայ ժողովրդի պատմության նոր և մեծագույն զոհողության։

Մնձուրին կորցրեց իր հարազատներին, ազգականներին, ամեն ինչ... իսկ Արմտանը՝ իր դաստիարակին, հողագործին։ Բայց եթե արևմտահայ գրականությունը կորցրեց Հովհաննես Թլկատինցուն (Հովհաննես Հարությունյան), Մշո Գեղամին (Գեղամ Տեր Կարապետյան), Ռուբեն Զարդարյանին, Արտաշես Հարությունյանին (Մալկարացի Կարո), Տիգրան Չյոկյուրյանին, Գեղամ Բարսեղյանին, դեռևս այն երեքին, որոնք կոչվում էին Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, նրանց՝ Սիամանթոյին և Երուխանին (Երվանդ Սրմաքեշխանլյան) և այլոց, դեթ շահեց Հակոբ Մնձուրուն, մի չնչին պատահականության շնորհիվ փրկվեց նրա կյանքը։

«...Ալ ո՞ւր կրնայի երթալ»։

«Գատրգյուղ փոխադրվեցանք։ Արաբական տաներով թրքերենը ժանյակ հյուսելու պես կգրեի։ Գատրգյուղեն մինչև Բենաիք բոլոր զինվորականներուն տունները մեր փուռին կապվեցան։ Մինչև վեց հազար անուն ունեինք։ Անոնց հացի թայինները[24] մենք կուտայինք»[25]։ «Աքսորութենե ազատված կնոջ մը հետ երկրորդ անգամ ամուսնացա հոս։

---

23 Նույն տեղում, էջ 27։

24 Թայիններ (Թրք.)—բաժիններ

25 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Հաշվեկշիռ», էջ 28։

Նավաբեկութենե ազատող մը ինչ կընե...», «Տունը հաց կուղեր, վարձք կուղեր։ Զավակներ ունեցա։ Բան մը պետք էր ընել։ Սկյուտար կերավաճառ եղա», «Ամեն գործ ըրի ապրվելու համար։ Խոտ, դարի, հարդ ծախեցի, ածուխ ծախեցի, հացագործ եղա, գործակատար եղա, պարապ պտտեցա», «Ապառիկ տվի, բանինները չտվին, ուրացան։ Տասնհինգ տարի դժվարավ բալեցուցի։ Արմատացիները ուրիշ ի՞նչ կըլլան։ Կամ հացագործ, կամ կերավաճառ։ Բանկալթի անցա, փուռը տեղկահյտար եղա։ Բոքաթլըյան պանդոկը հաշվակալ դրագիր եղա։ Երբ գոցվեցավ եկեղեցական եղա, Թադոսիմ Սուրբ Հարութիւն եկեղեցին»։

«Ինչպես գավառը, ինչպես Սկյուտար խանութպան եղա, կամ Մխիթարյաններուն Բանկալթիի փուռը հացագործ, Բոքաթլըյան պանդոկը գրագիր, կարդալը, գրելը շարունակեցի։ Բայց երբեք, ամենեին թույլ չտվի ինձի իմ գործս, ինձի հանձնված պաշտոնը զոհելու։ Ճշտապահ էի։ Ակամա դողունի դրականություն մը ըրի, պարապ ժամերուս թերթերու տակ պահելով, չտեսնվելու համար Կոտոյեն[26]։ Ուրիշ կերպ մը չունեի։ Ինչպես պիտ ընեի, առտուները շատ կանուխ, գիշերները ուշ տուն կդառնայի։ Ամեն տեղ Կոտոն նույնն է։ Երբ դուրս կելլես, պտիս կամ սրճարան մը երթաս շաղակրատես, չտեսնելու կուգան։ Բայց ինչե՞ն է, գրելուն չեն հանդուրժեր»[27]։

Դաժան երիտասարդության տարիներ վիճակվեց Հակոբ Մնձուրուն, բայց տասնամյակներ անց, հիշելով այդ դառը տարիների մասին, «Զիմաստցիները» պատմվածքում գրեց։ Գրեց ու գնահատեց երիտասարդական այդ տարիները այնպես, ինչպես միայն գրողը կարող էր գնահատել... «Հե՜յ տասնութերես մինչև քսանութերս, երիտասարդության ոսկի օրերը, մենք կծփայինք միջոցին ու ժամանակին մեջ, կարհամարհեինք իրականությունները, ռոմանտիզմով լեցված էինք»։

Իհարկե, ապշել կարելի է, բայց և հավատալ։ «Կարհամարհեինք իրականությունները, ռոմանտիզմով լեցված էինք»։ Դա երիտասարդության տարիներին էր, ինչպես եղել էր պատանության ժամանակ և շարունակվեց, հակառակ կյանքի ծանր ու դառը պայմաններին, հետագայում ևս, մինչև խոր ծերություն, մինչև իր վախճանը։ «Խելքի չեկավ» Մնձուրին և դրա պատճառը, երևի, պիտի փնտրել կրկին նրա առողջ ու երազային զյուղացիական արմատների մեջ։ Արմատներ, ո-

---

26 Կոտո—հավանաբար Բանկալթիի Մխիթարյանների գպրոցի մոտակայքում փռան տեր Թոկո Աճեմյանը։ Թոկո՝ Կոտո։

27 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Հաշվեկշիռ», էջ 28։

ոնք վաղ պոկվեցին պատմական դաժան վերաբերմունքից, բայց ընդունեցին նրան, ընդհակառակը, արմատավորվեցին նրա հոգում, խորացան, ամրացան և տասնամյակներ ուժ ու ավյուն ներարկեցին նրա պարտադրյալ քաղաքային կյանքին, սովորեցնելով արհամարհել իրականությունը հանուն այն մյուս իրականության, որ կյանքում հաղթանակն է գեղեցիկի, լավի։ Իսկ այդ հաղթանակը, Մնձուրու կյանքում, այն գեղեցիկն ու լավը, հենց նրա իսկ ստեղծած գրականությունն է։

«Դիցուք թե որևէ ամենեն մեծ հաստատության վարիչը ընեին զիս. գյուղացին չերթար նորեն մեջես։ Իմ գյուղիս արտերը, այգիները, գետափները միտքս, որ իյնան, աչքիս բան չերևար, կխենթեցնեն զիս։ Ինչե՞ն է ասիկա։ Իմ խառնվածքս է։ Գյուստավ-լը-Բոնը իր «Ամբոխներու հոգեբանության» մեջ կպատմե թե, ինչպես հնդիկ ուսանողներ Օքսֆորտեն, Քեմբրիջեն դուրս կուգան առանց փոխվելու։ Հնդիկի, ասիացիի մտածողությունը կապրի իրենց հետ։ Բայց իմ գյուղացիի ճաշակներս իմ էվոլյուսիոնս չեն կեցներ։ Հակառակը, կօգնեն անոր, իմ անհատականությունս դնելով անոր վրա»[28]*։ Սա էր արմատը և մեկ էլ անհուն, անբանաձևելի, համառ սերն ու կիրքը գրականության նկատմամբ, և այս դեռ վաղ պատանության ու երիտասարդության տարիներից։*

«Ես իմ ամեն օրվան գործս ունիմ, պատմվածքիս գրելը։ Անոր վրա խորհիլս պետք է, ո՞ւր ձգած էի, հոնկե շարունակելու համար։ Ու ամեն օր, լուռ, կիրակի, ամառ, ձմեռ ատ կընեմ, թե կբալեմ, թե ի՞նչ պիտի գրեմ, անոր վրա մտքովս կբանիմ։ Հարկավ ճամփուն մեջտեղը չեմ կրնար նոթագրել։ Միծաղելի պիտի ըլլար։ Ետքը տունը կընեմ։ Տասնյակներով տարիներն ի վեր այս ձևով կպատրաստեմ գրածներս։ Ես շատ բան կպարտիմ ճամփաներուս»[29]*։*

«Այս սովորությունս, ես կըսեմ, առաջին ընդհանուր պատերազմին սկսավ իմ մեջս։ Հայագործ էի, ամեն օր Սկյուտարեն Գատրգյուղ կերթայի կուգայի քալելով։ ...Ես ինձի, մենակս միտքս ինչո՞վ զբաղեցնեի, առավան կամ ուշ իրիկվան ատ ժամերուն, գրականություն կընեի, մտքովս կգրեի, «Անգիր գրականություն» դրեր էի անունը, բայց թուղթի վրա չէի անցներ, որովհետև ոչ ժամանակ, ոչ ալ տեղ ունեի նստելու գրելու։ Սեփական անկողին մը անգամ չունեի, որ գրածներս տակը պահեի»[30]*։*

---

28 Հակոբ Մնձուրի, *Կենսագրություն, «Մարմարա», 30 ապրիլի 1959, № 5425։*

29 *Նույն տեղում։*

30 Հակոբ Մնձուրի, *Ժամանակագրություն, «Մարմարա», 4—20 օգոստոսի, 1959 № 5533։*

Դա բացահայտ կիրք էր, իհարկե, գրականության նկատմամբ, նման ծանր պայմաններում անբանաձևելի թերևս և «հավանաբար» կարող պատասխանի։ Այդ պատասխանը մենք գտնում ենք Հակոբ Մնձուրու «Բարեկամիս՝ Ա.-ին» գրած նամակում։

«...գրելով չապրվիր։ Այդ գիտեիր դուն։ Գիտնալով մտար, քեզ ոչ ոք ստիպեց։ Ուրեմն թե պիտի գրես, թե պիտի աշխատիս, որ ապրիս, որովհետև տունդ հաց կուզե, դուն հաց կուզես։ Ինչ գործ պիտի ընես։ Ինչ որ գտնես։ Գտածդ սիրելը պայման չէ։ Ուսույցիչ եղիր, հաշվակալ եղիր, խանութի մը մեջ թևերդ սոտթն գեղգահար մը եղիր, ատոնք ալ չգտնես, ամեն կողմ վազողծառայող մը գործակատար մը եղիր, կամ եկեղեցիի մը բանկալը քարտուղար մը, մոմ ծախող մը եղիր»։

«Արյունին մեջ ալ ըլլաս ժամանակ կունենաս ուղածդ ընելու։ Ժամանակը չեն շնորհեր, որ նստիս ու գրես, նույնիսկ չեն ներեր քեզի երբ տեսնեն, ժամանակդ դուն պիտի ճարես»։

«Բոլոր գիտունները, երգահանները, բանաստեղծները, որոնք աղքատության մեջ մեռան, փիլիսոփան, որ կփիլիսոփայեն ինչո՞ւ ըրին, ինչու՞ կընեն։ Հազար բան կարելի է ըսել։ Բայց բացատրություն չէ։ Տրամաբանությունը կանգ կառնե։ Մարդը շընչելը չի կրնար»[31] *(ընդգծումը մերն է—Գ. Ս.)։*

Այս է միակ տրամաբանական պատասխանը այն հարցին, թե ինչո՞ւ սփյուռքահայ կյանքի, գրականության համար անհրաժեշտ պայմաններում եղան, կան, ապրում և ստեղծագործում են մարդիկ, որովհետև չգրել չեն կարող, *դա արյան մեջ է։ Երբ «արյունին մեջ ալ ըլլաս», թրքերեն ասացվածք է՝ «երբ ձեռքերդ արյան մեջ էլ լինեն», գտնվես այնպիսի կացության մեջ, որ քեզ համար նույնիսկ օրհասական լինի, մղձավանջային պայմաններում, դու եթե կիրք ունես, ժամանակ կարող ես գտնել... ստեղծագործելու համար։*

Իհարկե, ապշել կարելի է, բայց և հավատալ, որովհետև այդպես են ստեղծագործել արևմտահայ գրականության բոլոր մեծերը և այդպիսին են եղել սփյուռքահայ գրականության մեծ ու փոքր նվիրյալները։ Եվ այդ գրականության մեծ անմահների շարքերն անցած՝ Հակոբ Մնձուրին։ «Կգրեմ, որովհետև չեմ կրնար չգրել։ Կուգան»։

«Ո՞վ գրող ըրավ զիս։ Ամենուն պես ես զիս ըրի։ Գրականությունը,

---

31 Հակոբ Մնձուրի, *Ժամանակագրություն, «Մարմարա» օրաթերթ, Ստամբուլ, 26 հոկտեմբերի 1961, № 6307 և 2 նոյեմբերի 1961, № 6313։*

անկի շատ ախորժիլս, ալյն շատ սիրելս, շատ գիրք կարդալս ըրավ։ Պատանությանս եղավ այդ բանը ինձի»[32]։

Ի դեպ, հետաքրքիր է նաև այն գրքերի ցանկը, այն գրողների անունները, որոնք հանդիպում են նրա «Հաշվեկշիռ»-ում և որոնք, անկասկած, կարող են որոշ գաղափար տալ նրա լայն ու համապարփակ հետաքրքրությունների մասին։

«Մանկությունս գնաց, պատանի եղա։ Գրքերը ընտրել սկսա։ Կոլեջին գիրքերուն շատը դոկտոր, աստվածաբանության, իրավագիտության հեղինակներու գործերն էին։ Կվերցնեի, վար կդնեի։ Թենի անգլիական գրականության պատմությունը, Լոթիի «Վեր Սպահանը» գտա, կարդացի։ Հայ ուսանողության գրադարանը արևելահայ գրողներու գիրքերը կային։ «Մշակը», «Մուրճը», Փարիզեն «Անահիտը» կուգար։ Անոնց փակա, կարդացի։ Լեոն սիրեցի։ Շիրվանզադեին «Արսեն Դիմաքսյանը», «Մշակի» Գրիգոր Արծրունիին հրապարակախոսությունը ցնցեցին զիս... Ճանչցա Զոլան, Ֆլոբերը, Կոնդուները, Ռոլանը, հանդեսները՝ «Մերկյուր-դը-Ֆրանսը», «Ռըվյու-Բլանշը», «Էրմիթաժը»։ Մեկ անդամին Ֆլոբերի «Գուսեբոնատանին» չորս հատորները գտա... դանձ մը գտնողի պես։

...Դոստոևսկիեն, Տոլստոյեն կամ Չեխովեն ֆրանսերեն կամ անգլերեն թարգմանություններեն ինչքան բան կարդացած էի։ Անոնց թարգմանություններեն բոլոր ռուսները կարդացի։ Եվ ամերիկացիները, և իտալացի Մարիո Բուզոն, և սև Աֆրիկեի, սև Ամերիկայի գրողները, և նահատակ Լորկան, Ֆրեդերիկ Լորկան և չիլիցի Պաբլո Ներուդան։

Ի՜նչ արձակ, ի՜նչ քերթողություն։ Մեր շեշտերովը չեն անոնք։ Մեզ մեկմե հանող շեշտերով են»։ Եվ այլն և այլն...

«Լավ գիրքերը ամենալավ համալսարան մըն է. կըսեն ամերիկացի փիլիսոփա Էմերսընն ու սկովտիացի պատմաբան քննադատ Թոմաս Կարլայլը, երկուքն ալ գրեթե նույն բառերով։ Ճիշտ է իմ փորձովս»։

Այսպես Մնձուրին իր նախնական կրթությունը սկսեց գյուղի դպրոցում, հետո Կ. Պոլսում հաճախելու համար մի տարի Օրթագյուղի ֆրանսիական վարժարանը, երկու տարի Ղալաթիո կեղրոնականը և ապա անգլիական Ռոբերտ կոլեջ, որ, ինչպես գիտենք, նույնպես թողեց

---

32 Հակոբ Մնձուրի, Ժամանակագրություն, «Մարմարա» օրաթերթ, Ստամբուլ, 15 Հունիսի 1965, № 7609։

թերի։ Բայց Հակոբ Մնձուրու համալսարանները եղան իր կարդացած գրքերը, իր ինքնազարգացումը և բոլորից ավել ու առաջ՝ կյանքի նկատմամբ իր անսովոր զգոնությունն ու ընկալումը, մարդկանց ու կյանքը ճանաչելու այն եղակի ընդունակությունը, այն լիովին զգալու բացառիկ ձիրքը, որ արդյունք էր կյանքից պարտադրված ծանր, դաժան ու ողբերգական փորձությունների, որոնք կոփեցին ու փորձեցին ու դարձրին... փորձառու։ Մարդ, որ չընկճվեց այդ վիթխարի բեռան տակ, մնալով միշտ լավատես ու ռոմանտիկ, ու միշտ մարդ գլխագիր։ Բառի իսկական հասկացությամբ։ Երևի դա էր պատճառը, որ կյանքը երբեմն զյուղացու անտաշ աղային դարձրեց գերզգայուն, բայց անկոտրում քաղաքացի, դարձրեց գրող (նման փաստեր շատ են մեր գրականությունում)։ Ինչ իմանաս, կարող է և հակառակը, թերևս իր ծննդից իսկ իր երակներում շրջող արյունն էր արվեստագետի, որ բեկվեց կյանքի հարվածների տակ, բայց չկոտրվեց և հաստատեց ի վերուստ տրված... կոչումը։ Համենայն դեպս ապշել կարելի է, բայց և... հավատալ, որովհետև Հակոբ Մնձուրու օրինակը, գրականության պատմության քառուղիներում՝ ո՞չ առաջինն է և ո՞չ էլ վերջինը։

Հակոբ Մնձուրին արևմտահայ գրականության մեջ գտնվում է այն լուսավոր անունների կողքին, որոնք կոչվեցին Խրիմյան, Սրվանձտյանց, Բլկասինցի, Զարդարյան, Հրանդ, Մշո Գեղամ, Շուշանյան, Համասեղ և այլք, այսինքն նրանք, ովքեր XIX դարից և ավելի ուշ, մինչև մեր ժամանակները, հայ գյուղը մտցրին մեր գրականության մեջ։ Հայ գյուղն ու իր ժողովուրդը իր հոգսերով ու ձգտումներով, իր ավանդություններով ու բարքերով, իր գունեղ ֆոլկլորով, իր տառապանքներով ու զրկանքներով, իր հաղթանակներով ու պարտություններով, իր կորուստներով ու ձեռքբերումներով, մի խոսքով՝ գյուղն ու գյուղացին իր հայրենաբույր հողով ու գերազանց իր մարդկայնությամբ։ Տվին և ուրախություններն ու խաղերը, հայրենները, հարսանեկան երգերն ու «վիճակի» տաղերը։ Նկարագրեցին գեղջկական սերը, գյուղացի պանդուխտների կանանց ողբերը, անարատ հայ մարդու ըմբոստ ոգու հծծյունը, և ծիծաղն ու երգիծելու անբանաձևելի կարողությունը։ Բացառապես իրապաշտ էր այդ գրականությունը, գրեթե բացառապես, դա «գրականության մարդագիտություն» էր, և այդ է վկայում հենց Հակոբ Մնձուրու, այսպես ասած «գյուղագրությունը», որովհետև հենց թեկուզ որպես «մարդագիտություն» սխալ կլիներ այն պարփակել գրական այդ նեղ հասկացության մեջ։

«Ռեժիոնալիստ գրականություն մը կընեմ, իրապաշտության, ռեալիզմի մեկ ուրիշ տեսակը։ Ես տեղի մը, աշխարհագրության մը մարդը, սովորությունները, բարքերը կպատմեմ։ (Նշված տեղն ու աշխարհագրությունը, մարդը, սովորությունները, բարքերը, ինչ խոսք, շատ քիչ առանձնահատկություններով, ընդհանուր բնույթ ունեին։ Դա արևմտահայ գյուղացիության, ժողովրդի պատմությունն էր։ Եվ ոչ միայն արևմտահայության (Գ. Ս.)։ Եթե Ակը, Արմտանը, Դիվրիկը կամ Երզնկան, Արաբկիրը, Զմշկածակը կխոսեցնեմ, պանծացնելու համար չեմ ըներ (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։ Միմիայն ատ տեղերը լավ կճանչնամ, քայլ-քայլ գիտեմ, ատկե է։ Եթե ես մշեցի, գոնիացի, տրապիզոնցի ըլլայի, Մուշի, Գոնիայի, Տրապիզոնի մարդը, աշխարհագրությունը պիտի պատմեի։

Հիններուն դասականներուն ու անոնց գործերուն պակասավոր կողմը այն է, որ շատերուն մեջ իրականությունը, իրական մարդը չկա (ընդգծումը մերն է—Գ. Ս.), կամ գրեթե չենք գիտեր, թե հիները ինչպե՞ս կապրեին»[33]։

Մնձուրու գրականությունը այդ բոլորի գեղարվեստական բարձր մակարդակով տրված համայնապատկերն է՝ իրական ու շոշափելի։ Բայց Հակոբ Մնձուրին երկար տասնամյակներ մնաց անծանոթ ոչ միայն հայրենիքում, այլև, տարօրինակ չթվա, սփյուռքի լայն ղանգվածներին։ Նրան իր առաջին լուրջ գիրքը վիճակվեց տեսնել 72 տարեկան հասակում, 1958 թվականին։ «Հայաստան» հրատարակչությունը տաս տարի անց հրապարակեց նրա «Կապույտ լույս» պատմվածքների ժողովածուն[34]։ Այդ բոլորը արդյունք էին որոշ ողբերգական պայմանների։

Առաջին՝ Հակոբ Մնձուրին ապրել և ստեղծագործել է Թուրքիայում։ Ստամբուլում՝ սփյուռքի որևէ մի այլ երկրից տարավել քաղաքական փակ միջավայրի մեջ։ Իր գործը, իր անձի նման, որտեղ մեծ է դերը գրողի խառնվածքին, եղել է նույնիսկ լուսանցքից դուրս, լռությամբ տարված, համեստ ոստյուններով։

Երկրորդ՝ չնայած Մնձուրին ստեղծագործել է վեց տասնամյակից ավելի, սակայն ամբողջ մի հիսուն տարի նրա ստեղծագործությունները ցրված են եղել թերթերի (գլխավորապես Ստամբուլի «Մարմարա»

---

33 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Հաշվեկշիռ», էջ 11—12։

34 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, Երևան, 1968։ Գիրքը ընդգրկում է «Կապույտ լույս» և «Արմտան» ժողովածուներից ընտրված պատմվածքները, Մնձուրու մասին Գեղամ Սևանի խոսքով և հեղինակի նախաբանով։

օրաթերթում), պարբերականների, առանձին տարեգրքերի ու հանդեսների էջերում։ Իր առաջին գիրքը՝ «Կապույտ լույս» (գրքի խորագիրը անունն է հեղինակի հայրենի լեռան) հրատարակվել է Ստամբուլի Նսայան սաների միության երիտասարդների նախաձեռնությամբ, 1958 թ.։ Գիրքը, որ հիսուն պատմվածքներ է ամփոփում, հեղինակին ընձեռվեց, ինչպես ասացինք, արդեն ծերունական տարիքում, արդյունք յուրահատուկ մի համեստության և լուռ, զսպված տառապանքի, որ նաև գալիս էր նյութական սուղ պայմաններից։ Իսկ մինչ այդ թվականը, Հակոբ Մնձուրին հրապարակված ունեցել է միայն 86 էջանոց փոքր մի վիպակ՝ «Երկրորդ ամուսնությունը», որ 1931 թ. տպել է «Ազդարարը» Մանուկ Ասլանյանի նախաձեռնությամբ, որը նախապես լույս էր ընծայվել նույն թերթում՝ որպես թերթոն։ Այդ գրքից ժամանակին սպառվել են մի քանի տասնյակ օրինակներ միայն, իսկ հետո հրատարակիչն անհայտացել է քաղաքից, առանց տեղեկացնելու Մնձուրուն իր գնալու և մնացյալ գրքերի «ճակատագրի» մասին։ (Հետագայում Մանուկ Ասլանյանի «Ազդարարը» լույս տեսավ Բեյրութում)։ Տարիներ անց, Հակոբ Մնձուրին անդրադառնալով «Երկրորդ ամուսնություն» հատորին, գրում է. «1931—1967։ 36 տարի հետո գրավաճառ Հակոբ Աբրահամյանի Մարմարայի մեջ ծանուցումներին դացի տեղեկացա, թե Ասլանյանը իր մեկնումին Ազդարարի իր տպարանի տառերուն հետ գիրքերը իրեն ծախած է, կորսված չեն»[35]։

Երկրորդ գիրքը՝ «Արմատան» (խորագիրը ծննդավայրն է հեղինակի) լույս տեսավ 1967 թվականին գրասեր անհատների նախաձեռնությամբ ու զոհողության գնով։ Եվ, վերջապես, 1974 թվականին, կրկին Ստամբուլում, «Մարմարա» օրաթերթը լուրջ նախաձեռնություն հանդես բերեց, և ինչ-որ ձևով, վարձահատույց լինելու համար իր բազմամյա աշխատակցին, հրատարակեց «Կռունկ, ուստի՞ կուգաս» պատմվածքների նոր ժողովածուն։

Կեդրոնական վարժարանի «Հանդես Մշակույթի» ամսագիրը, 1953 թվականի հոկտեմբերյան համարը ամբողջությամբ նվիրել է Հակոբ Մնձուրու գրականությանը (խմբագիր՝ բժիշկ Գևորգյան)։

Պատահականության, լավագույն դեպքում անհատների կամ երիտասարդների նախաձեռնության ու զոհողության գնով լույս աշխարհ եկող գրքերի ու սփյուռքահայ գրականության մասին (մասնա-

---

35 Հակոբ Մնձուրի, Ժամանակագրություն, «Երեսունվեց տարի հետը», «Մարմարա» օրաթերթ, Ստամբուլ, 21 հուլիսի 1967, № 8355։

վորապես նրա «Հրատարակչական» գործի) հուզիչ են հենց Հակոբ Մընձուրու խորհրդածություններն ու խոստովանությունը, որ մենք կարդում ենք նրա վերջին պատմվածքների ժողովածուի «Հաշվեկշիռում»։

«Ո՞վ կտրամադրե ութ հազար, գուցե ավելի ոսկին, որովհետև դարձյալ մյուս երկուքներուն ծավալովը պիտի ըլլա։ Հետո միայն դրամական պարագա մը չէ այս գործը։ Անով պետք է զբաղիլ։ Ամեն օր տպարան հանդիպիլ, ձեռագիր հասցնել, փորձերը անձամբ ընել, տաղտուկներուն հանդուրժել կպահանջե։ Ո՞վ իր ժամերը կրնա զոհել։ Ամեն մարդ իր գործը ունի։

Թեև ես հեղինակի իրավունք չեմ ուզեր, նույնիսկ հետին տասնոց մը։

Թող գիրք չըլլա, անտիպ մնան։ Ես, ինչպես ամենը իմ շրջապատես, դրամ շահելու համար չենք գրեր։ Մենք արևմուտքցի չենք։ Նույնիսկ եթե ունենանք մեր քսակեն կծախսենք, մեր գիրքերը հրապարակ հանելու համար։ Հոս դրամ չկա, կամ շատ կա, գրքի համար չկա։ Մենք ոչ թե գրելով, այլ արհեստ մը, պաշտոն մը, որևէ գործ մը, ծառայություն մը ընելով կապրինք։ Ուրիշն ինչո՞ւ կգրեք։ Մի գրեք։ Ատ չենք կրնար ընել։ Մեր շուրջը, մեր տեսածները, աշխարհը, դուրսը, գեպքերը, մարդիկը մեզ կլեցնեն։ Չենք կրնար միայն դիտել։ Պիտի պարպվինք։ Պիտի ըսենք։ Ի՞նչ է գրականությունը ամենեն վերջը, մեկ բառով։ Ըսել է, ինքզինքը գրել է։ Բանաստեղծ, վիպագիր, քննադատ, փիլիսոփա, պատմաբան, մենք մեզ գրել է։ Եթե չգրենք, կմթագնինք, իսկ եթե կգրենք, ըսենք մանավանդ խոսքեր դոր մեր խելքովը կերևակայենք թե ուրիշ մը պիտի չկրնար գտնել, ըսել, կպայծառանանք, կճառագայթենք, տունը, սպրուստին, դրամին ամենեն վերջը կանդրադառնանք, կսթափինք։

Լավ, որ իմ ամբողջ գործս թերթերու մեջ ելած է։ Ձեռագիր չէ։ Լույս տեսած կհամարվի։ Եթե իմ գործն շահեկանություն չի բերեր, ոսկեկազմ տպագրությունով ալ ելլե, կմոռցվի։ Հակառակը հողերուն տակն ալ մնա, կփնտրվի, կհանվի։ Գիրը չի մեռնիր, գիրը անմահ է»։

Իհարկե, նայած ինչպիսի՞ գիր։ Եթե այդ գիրը այնպիսին է, ինչպիսին ցրվել է Հակոբ Մնձուրու «Ճակատագրի» նման, նույնիսկ օրաթերթերի էջերում, ավելին, եթե նույնիսկ ձեռագիր էլ լինի և եթե լինի հողերի տակ էլ... «Կփնտրվի, կհանվի»։ Դրա մասին երկու կարծիք լինել չի կարող։

Եվ, վերջապես, ուզում ենք շեշտած լինել մի այլ ճշմարտություն ևս. Հակոբ Մնձուրին, լինելով իր իսկ խոսքերով ասած «Անկաժեշ գրականության մը՝ կողմ բռնող գրականության մը» հավատավորը, չի եղել, այսպես ասած, կողմի մարդ, այսինքն սփյուռքում չի հարել որևէ կուսակցության (եթե ցանկանար էլ, Թուրքիայում, հայ գաղութի կյանքում նման կարելիություն չի եղել ու չկա), որը ճանաչում գտնելու փոքր արգելակող ազդակ չէ սփյուռքահայ պայմաններում։ Այստեղից էլ սփյուռքում արժեքների մասին ստեղծված առկա շփոթն ու ապրող «հեղինակությունների» շատ դեպքերում ոչ լիարժեքությունը։

Հակոբ Մնձուրին հայ գրականությանը «տվել է երեք բաներ»՝ «գյուղը, իմ օրս, ժամանակագրություններս»։

«Առավելապես գյուղը տված եմ։ Տված եմ գայն հեքիաթներով, գյուղագրություններով, պատմվածքներով։ Հեքիաթներով սկսած եմ։ Գյուղագրություններուս մեջ հայրենական պանորամա մը կառնեմ, դաշտ մը, ձոր մը, այգեխումբ մը, լեռնապար մը, գետ մը, զոր շատ հստակ, համարեա թե երեկ տեսածի պես աչքիս առջև կբռնեմ, կամ ամառվան մեջ անձրև մը, խոտքաղի ամսուն օրինակ, աշուն մը, ամառ մը, իրիկուն մը, ու ինչ որ շատ լավ դիտեմ թե կայծն հոն, կըլլային, կընեին, կխոսեին, էշ, ծառ, քար, ճամփա, մարդ, ատոնք կպատմեմ, կբանիմ ատոնց վրա։ Ամբողջ ուզածս պահը ճիշտ տալ, կենդանացնել է։ Լուսանկարչություն չեն։ Ես կամ անոնց մեջը։ Պատմվածքներուս մեջ նույնպես գյուղը, գյուղացին ամենեն շատ տեղը բռնած է։ Անոնց մեջ միայն հայ գյուղացին չկա։ Թուրքը, բուրդը, զզըլպաշը ևս կան զոր շատ լավ կճանչնամ։ Գյուղեն վերջ մեր օրը, իմ օրս կա իմ գործիս մեջ։ Իմ շուրջս եղածները կպատմեմ։ Ատոնցմե վերջ իմ ժամանակագրություններս կուգան, որոնց մեջ իմ վկայություններս կբռնեմ իմ ժամանակիս վրա, այս կամ այն եղածներուն, տեսածներուս վրա»[36]։

«Ժամանակագրություններս օրագրություններ են, գրողներու, գիրքերու, գրական տեսություններու և իմ վրա։ Իմ ըսածներս են։ Մյուս երեքը («պատմվածք, ժամանակագրություն, հայրենական գյուղանկար»—Գ. Ս.) դավառը կպատմեն, Պոլիսը թիչ կա անոնց մեջ»[37]։

Հակոբ Մնձուրու երեք հատորներում լույս են ընծայվել 121 պատմվածքներ, գրեթե կեսը մամուլում ցրվածների. «Կապույտ լույս»

---

36 «Համայնապատկեր հանրապետական շրջանի Ստամբուլահայ գրականության», էջ 44։

37 Հակոբ Մնձուրի. Կոմնկ, ուստի՞ կուգաս, «Հաշվեկշիռ», էջ 13։

հատորում՝ 50-ը, «Արմտանում»՝ 44-ը, «Կռունկ, ուստի՞ կուգասում»՝ 27-ը։

«Ժամանակագրությունները», որոնց քանակը մոտ է հարյուրի, ամբողջովին մնում են օրաթերթերի էջերում, գլխավորապես, «Մարմարա» օրաթերթում։ Հեղինակի հեքիաթները, ավելի քան մեկ տասնյակ, նույնպես ցրված են թերթերում, չհաշված «Բանաստեղծը», որ ինքնակենսագրական բնույթի է և զետեղված է «Արմտան» հատորում։

Հակոբ Մնձուրու գրչին են պատկանում նաև 26 հայրենական գյուղանկարներ (Այգենկար, Լեռնանկար, Ձյունանկար, Դաշտանկար, Գետանկար և այլն)։

Ստամբուլում հրատարակված երեք հատորներում պատմվածքներից կրկնվել են միայն երկուսը. «Կռունկ, ուստի՞ կուգասում» «Մեղրերը» պատմվածքը վերածվել է սցենարի, որը «Կապույտ լույսում» ունեցել է «Ամո՜ւ, ես եկա» խորագիրը։ «Արմտան» հատորում՝ «Փշատիին ծաղիկը» «Կռունկ, ուստի՞ կուգաս» ժողովածուում կրկին դարձել է սցենար, նույն խորագրի տակ։

Ներկա աշխատությունում Հակոբ Մնձուրու ստեղծագործության մասին խոսելիս հենվում ենք այն բոլոր երկերի վրա, որոնք լույս են ընծայվել հատորներով, ինչպես նաև այն ստեղծագործությունների վրա, որ մեզ հաջողվել է գտնել ու կարդալ Ստամբուլահայ մամուլում մասնավորապես և սիյուռքահայ մամուլում ընդհանրապես։

Վերջապես այս աշխատությունը գրական և որոշ իմաստով նաև մոտ անցյալի պատմական և ազգագրական մի ուսումնասիրություն է, բեկված միշտ գրականության միջով և մեկնած հենց հեղինակի իսկ խոստովանությամբ, նրա իսկ անձի ու կենսագրության պատմությամբ ընդհանրապես։

Բայց չէ՞ որ գրական ստեղծագործությունը կամ ստեղծագործությունների գումարը, բնորոշում է հենց իրեն՝ հեղինակին։ Լ. Ն. Տոլստոյն ասում է. «Իմ գրվածքները ամբողջովին ես ինքս եմ»։

Հ. Մնձուրու «Ժամանակագրություններում» կարդում ենք.

«Ես կհալեցնեմ իմ ըսելու, պատմելու արվեստիս մեջ 1890 են մինչև 1914 շրջանին ամենը, որ կա իմ մեջս, ամենը, որ ունիմ անկեւ։ Ես կհավատամ իմ գործիս»[38]։

---

[38] Հակոբ Մնձուրի. Ժամանակագրություն, «Իմ վրա», «Մարմարա», 26 հոկտեմբերի 1967, № 8453։

Այս, մենք ևս հավատում ենք այն գործին, որ այսօր կարելի է նշել երկու բառով՝ Մնձուրու գրականություն, յուրօրինակ մնձուրիական։ Մի գրականություն, որ նրա կյանքից հեռացումով (փետրվարի 1-ը 1978) «հեռանում» է ինքը ևս, որովհետև չունի և չի ունենալու հաջորդը։ Դա նույնպես եզակի ողբերգություն է գրականությունների պատմության մեջ։ Բայց կա մեծ մխիթարանքը, որ Մնձուրիով ստեղծվածը ապրելու է երկար, ապրելու է որպես այրող կարոտ, քանի կա ու ապրելու է հայ ժողովուրդը, ապրելու է բողոքի ու կարոտի որպես կանչ, որպես «կարոտի գրականությունը»։

II

«Առատ արտադրող մը չեղա, վրան կանգ առնելու գործ մը չավի, կամչցնեն նույնիսկ գիս, ինչ որ ավի. բայց ինչ ըսել, ըսել է թե ինձմե ալ այսքան բան դուրս կուգա»։

Իհարկե, Հակոբ Մնձուրիից զատ մի ուրիշը, մի այլ մարդ ու գրող այդպես չէր խոսի իր գրականության իսկապես տաղանդաշատ և բեղմնավոր գործունեության մասին։ Սա միայն վկայությունն է այն անսովոր համեստության, այն լուսանցքից դուրս կեցվածքի, որ կարող էր ասել այն գրողը, որ մեծ է ոչ միայն որպես գրող, այլ որպես մահկանացու, մարդ։ Այս խոսքերը՝ ասված իր գրական գործունեության վաթսունամյակի օրերին, լիովին բնորոշում են նրան և նրանի թաքուն ցավն են այն կարելիությունների, որոնք կարող էին լինել առավել մեծ կտավի գործերի համար, բայց կյանքի պայմանները ղլացան նրան։ Բայց այն փոքր պատմվածքները, երբ հարյուրի սահմաններում, ինքնին մի մեծ կտավի լրացուցիչ օղակներ են, որի ամբողջականությունը այն աշխարհն է, որ անցնող ժամանակների հետ ոչ միայն պիտի աղոտի, այլ դառնա ավելի արժեքավոր ու մնայուն։ Բայց վերը նշված «ինքնագնահատականը» ունի իր շարունակությունը. «Օրինակ՝ թատերախաղ մը գրեցի «Նաղար» անունով, որ մեծ բան մը չեղավ, վիպակ մը՝ «Երկրորդ Ամուսնությունը» գրեցի, նույնպես կարելի է զանց ընել (ընդգծումները մերն են—Գ. Ս.)։ Թերթերու, հանդեսներու մեջ 115 պատմվածք, 15 հեքիաթ, 20 գյուղագրություն, 25 ժամանակագրություն հրատարակեցի, անոնց համար ալ ինչ կուզեք ըսեք, ամեն իրավունք կուտամ ձեզի»։ Այս տողերը ունեն ճշմարտացի կողմեր, որ վերաբերում են «Նաղար» թատերախաղին, «Երկրորդ Ամուս-

նությունն» վիպակին և, թերևս, այստեղ չհիշատակված, բայց տասնինգամյա հատակում «Մասիսում» հրապարակած «Հարս ու կեսուրին»։ Այդ երեք ստեղծագործությունները, այսինքն այն ստեղծագործությունները, որոնք գրվել են մինչև առաջին աշխարհամարտի զինադադարը, եղել են «առաջին երիտասարդության դրածները, էովրը-ար-ժյոնեսս։ Առկե վերջ գործս սկսավ» (ընդգծումը մերն է—Դ. Ս.)։ Թողնելով Հակոբ Մնձուրու իսկական գրականության մասին մեր ասելիքը հետագա էջերին, այժմ խոսենք նրա էովրը-ար-ժյոնեսի, այսինքն, նրա երիտասարդության շրջանի ստեղծագործության, այսպես ասած, «փորձերի» մասին։

Հակոբ Մնձուրու գյուղագրությունը, որ այժմ տեղին բնորոշմամբ կարելի է որակել «կարոտի գրականություն» և հայ գրականության մեջ ունեցավ իր նախորդներն ու ժամանակակիցները, «գյուղագրությունից» դարձավ «կարոտի գրականություն», երբ կորավ հայրենին, Արևմտյան Հայաստանը։ Երիմյան, Մշո Գեղամ, Բլկատինցի, Զարդարյան և այլք ապրեցին և ստեղծագործեցին հայրենի հողի գոյության պայմաններում, նրա հետ անմիջական շփման մեջ։ Հակոբ Մնձուրու իսկական գրականությունը ծնունդ առավ, երբ այլևս չկար, կորուսյալ էր այդ հողը։ Հակոբ Մնձուրու համար անցյալի հուշ էր դա, այնպիսի անցյալի, որ եթե իր ժամանակակիցներից շատերի մոտ ապրեց ու գրականություն դարձավ մեկ ու մի քանի տասնամյակներ, նրա, Մնձուրու համար, հանդիսացավ մի ամբողջ կյանքի անսպառ նյութ ու ակունք։ Նա իր սերնդակիցներից համեմատաբար ուշ սկսեց կարոտի այդ գրականությունը (Թուրքիայում հանրապետության հռչակումից հետո)։ Ուշացման պատճառները մեկ չէին, բայց հիմնականներից մեկն այն էր, որ կարոտի այդ գրականությունը նա մշակեց այն երկրում, որտեղ ոճիրը ծրագրել ու իրագործել էին, այն դարձրել չսպիացած ու չսպիացող վերք, կարոտ։ Պատճառներից մի ուրիշը, գեռևս շատ մոտ անցյալն էր, հուշերի գեռևս շատ արյունոտ լինելը։ Դրանց հետ նաև կորուսյալ հայրենիքի այնչափ մոտ ու այնչափ հեռու գտնվելը, նրա մերձակա անմերձենալիությունը։ Այստեղից էլ, արևմտահայ գրականություն հասկացությունից սփյուռքահայ դարձած գրականությունում, Ստամբուլում (Պոլսում) ուշ սկզբնավորվեց այդ գրականությունն ընդհանրապես և սփյուռքահայ գրականությունը մասնավորապես (երեսնական թվականներին)։ Պոլսահայ գրականությունում «Գյուղագրությունը—կարոտի գրականությունը» գրեթե աննշան էր, համեմատած ԱՄՆ-ում և Ֆրանսիայում լույս ընծայվածի հետ։ Հրապարակվել էին

Կոստան Զարյանի, Համասեղի, Վազգեն Շուշանյանի հիշյալ ժանրի լավագույն ստեղծագործությունները, նաև այլ գրողների բազմաթիվ երկերը։ Կ. Պոլսում լույս տեսան Թորոս Ալպատյանի (Ալպատունի) Ակն— «Զմրուխտե պատմուճան»՝ 1936 թ. և Վարդան Եղիշեյանի «Աստվածարյալ քաղաքը»՝ 1939 թ. գրքերը։ Առաջին գրքում այդ հիշատակները ամփոփվում էին գյուղական պատկերների մեջ, որոնք հատորի մի փոքր մասն էին կազմում, իսկ երկրորդում հում նյութ էր և կիսավարտ դեմքեր, առանց գրական հավակնությունների։ Դրանցից առաջ լույս տեսած նույն Թ. Ալպատյանի «Բառասնակը» (հուշեր, հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ) բացի իր հայրենի Ակնի ժողովրդական բարքերի, ավանդությունների, հավատալիքների, սովորությունների հպանցիկ պատկերացումից, որևէ նոր որակ չէին նշում սփյուռքահայ գրականությունում։ Թվում էր, սփյուռքահայ գրականությունում անխոցելի կմնան Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը» վիպերգը, Համասեղի «Գյուղը», «Անձրևը» պատմվածքների ժողովածուները, Վազգեն Շուշանյանի «Օրերը գեղեցիկ չեն» երկհատորանոց ստվար վեպը և «Ամռան դիշերներում» «Ծառեր ծլարձակ» գլուխը ու այլ գործեր («Մթին պատանություն», «Ձերմակ Վարսենիկ» վեպերը և այլն)։ Հակոբ Մնձուրու Էվրը-ու-Ժյոնեսը արդարացրեց այդ կարծիքը։ Իսկ ինչի՞ մասին էին գրանք, ինչպիսի՞ միտման էին ծառայում։ «Հարս ու կեսուրը» գյուղական մի պատկեր է. «Իմ առաջին գրվածքս պատմվածք մըն էր «Հարս ու կեսուր» խորագրով։ Թոնիրը վառեր են, հարս ու կեսուր դեմ դիմաց նստեր են, հարսը խմորը կրանա կեսրոջը կուտա, որ ռապատին վրա կտարածե, թոնիրին կողը կփակցնե, եփվածը ակիշով մը դուրս կհանե։ Եվ կխոսին»։

Սա պատմվածք լինելուց ավելի գյուղական մի գողտրիկ պատկեր է, նման գյուղական այն հարյուրավոր պատկերներին, որոնց մենք հանդիպում ենք հետագայում Հակոբ Մնձուրու պատմվածքներում։ Այստեղ հետաքրքիր է այն, որ Մնձուրին իր առաջին իսկ գրվածքով սկսեց պատմել գյուղի կյանքից. դա նրա կոչումն էր, կոչում, որ ամբողջ մի կյանք չէր լքելու նրան, և եթե որոշ ժամանակ բաժանվելու էր նրանից, որպեսզի առիթ տա նրան զբաղվելու իր շրջապատով, «իր օրով», իր ժամանակով ու ժամանակագրություններով, ապա կրկին վերադառնալու և մի այլ, նոր պատմվածքում շարունակելու համար իր գործը։ Բայց ո՞վ ասաց, որ այդ «շեղումների» ընթացքում ևս չէր զգացվելու նրա գոյության փաստը, չէր լինելու «գյուղը» նրա առօրյայի մտահոգություններում, նրա ժամանակագրություններում, պարզապես

գրական «դիմակ» փոխելով, զգացնել տալով իր գոյությունը՝ գրված յուրաքանչյուր նախադասության տողատակերում։

Բայց իսկապես էլ՝ Հակոբ Մնձուրու առաջին ստեղծագործություններում դեռևս չկար այն խորաթափանցությունն ու գրական կատարելությունը, ինչպես Համաստեղի մոտ (բացառվում է Կոստան Զարյանը, նրա «Տատրագոմի հարսը» բարձր վարպետությամբ գրված պոեմ է) և որի ստեղծագործության ոլորտներում էին գտնվում Վահե-Հայկն ու Բենիամին Նուրիկյանը, Արամ Հայկազը, բոլորն էլ ԱՄՆ-ից։

Հակոբ Մնձուրին իր ստեղծագործական թափով ու մակարդակով շատ հեռու էր Ֆրանսիայում ապրող ու ստեղծագործող Վազգեն Շուշանյանից (նկատի ունենք նրա՝ դյուղին նվիրված գրականությունը), բայց զգալի էր, որ հրապարակ է մտնում մի գյուղագիր ևս, բացառապես իրապաշտ (թեպետ արևմտահայ գյուղագրությունը՝ «գավառական գրականությունը» XIX դարի երկրորդ կեսից սկսած ճանաչվեց որպես իրապաշտ գրական շարժում), որ զգալի առավելություն ուներ վերև նշվածներից, թեկուզ այն փաստով, որ իր գիտակցական կյանքի որոշ մի մասը՝ երկու տասնամյակ (1886—1898 և 1907—1914) գյուղում, բնօրրանում էր անցկացրել և երբ վերջնականապես դուրս եկավ գյուղից, քսանութ տարեկան էր արդեն և այդ կյանքը չէր անցել սոսկ որպես դիտողի դերում, այլ միաձուլված էր եղել հողին, մարդկանց և այդ այնպիսի տարիների, որտեղ եղել էր և առաջին սեր ու ամուսնություն, հայրություն շորս երեխաների, այսինքն տարիներ, որտեղ ապրվածը խորը քանդակվում է մարդու հոգու ու հիշողության մեջ և մի ամբողջ կյանքի հաշ՞ար անունդ հայթայթում։ Հակոբ Մնձուրին, կազմավորվող սփյուռքահայ գրականության նման, ապրում էր իր կազմավորումը։ Այդ գրականության առաջին տասնամյակին էլ Մնձուրին գրեց ու հրապարակեց «Նապար» թատերգությունը։ Առհասարակ թատերգությունը ամենամամուլ ասպարեզն էր շրջանի (թեպետ շատ էին քանակով), դրանով զբաղվում էին առավելաբար վտարանդի գրողները, իրենց շաբլոն ազգային ու քաղաքական հինգ արարնոց թեմաներով և չկար մի ուշագրավ ստեղծագործություն, որ հետք թողած լինի։ (Իհարկե, Լևոն Շանթը դուրս է մնում այդ խմբակից՝ իր բացառիկ տաղանդով ու գործով, նրա լավագույն պիեսները գրվեցին հենց այդ տասնամյակում)։ Միայն հետագայում Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը», գրման որոշ գրական տեղաշարժ արձանագրեց։ Հակոբ Մնձուրու «Նապարը» լիուսափեց վերոհիշյալների ճակատագրից և տպվեց նույնպ՞ես «Հայրենիք» ամսագրում (դեկտեմբեր, 1929, № 2)։

3—602

Այստեղ նույնպես ու նույնիսկ արարները... հինգն էին։ Կար նաև մի այլ գրական հանգամանք՝ Հակոբ Մնձուրու պիեսը հետու էր քաղաքական ճամարտակությունների և ինչպես վերոհիշյալների մեծամասնությունը, կապ չուներ քաղաքականության հետ։

Նապարը՝ ջահել ամուսին, գյուղից գնում է հետու աշխարհներ զարիբության, թողնելով տանը տատնհինգ տարեկան, դեռ պատանի իր կնոջը՝ Արեգին։ (XX դարասկզբին հայ գյուղերում շատ վաղ հասակից էին ամուսնանում)։ Նման միտքը հետագայում նույնպես դառնալու էր Հակոբ Մնձուրու լավագույն պատմվածքների հիմնական և հուզող թեմաներից մեկը և հայ գրականությանը պարգևելու էր աննման ու անմոռանալի էջեր։ Բայց վերադառնանք «Նապարին»։ Ամուսնու մեկնումից հետո Արեգը դգում է, որ հղի է և ամիսներ հետո մայրանում է։ Գյուղում անպաշտպան, գեղեցիկ կնոջը դարձնում են Մելիք Բեկը, հետո ուրիշներ, բայց Արեգը մնում է անհաղորդ, մարուր։ Սկսում են շարամիտ բամբասանքները և անցնող տարիների հետ լեռնանալով, հասնում մինչև Նապարին։ Վերջինս ուզում է անձամբ ստուգել լսածները և մի օր, օտարականի տարազով, ծպտված վերադառնում է գյուղ։ Գիշերը մոտենում է հարազատ տանը և պատուհանից տեսնում կնոջ կողքին գցված մի այլ տղամարդու անկողին։ Կարծելով, թե անկողնում քնող «տղամարդը» իր կնոջ սիրահարն է, սպանում է արդեն մեծացած, հասակն առած, առնականացած սեփական որդուն և իմանալով ճշմարտությունը, ինքն էլ անձնասպան է լինում։ Արեգն էլ չդիմանալով ողբերգությանը, խելագարվում է։ Ավելին, որպեսզի գյուղերն ավելի խտանան, դեպքերը զուգադիպում են սպանված որդու հարսանեկան օրվա նախօրեին և մինչև տեղի են ունենում ողբերգությունները, այդ բոլորից անտեղյակ, հարսնևորների խումբը մոտենում է տանը՝ դավուլ ու զուռնայի ուրախ արձագանքներով։

Այս բոլորը, ինչ խոսք, կարող է, որ իսկապես պատահած լինի։ Բայց սա դեռ այն գյուղագրությունը չէր։ Այստեղ, իհարկե, և Նապարն է իր տեղում և Արեգը։ Իրենց իսկական և մեր գյուղագրության մեջ բազմիցս հոլովված գլխավոր դերերում են և Մելիքբեկերը։ Բայց չափից դուրս է էժանացած գրական այն ճաշակը, որ հետագայում անհամատեղելի դարձավ Հակոբ Մնձուրու գրականությանը։ Արարների իրապաշտ, նույնիսկ հեգհեգ հետապնդել սիրող ընթացքը, բեմում դիակների առատությունը դեռևս թատերգություն չէ, ոչ էլ շեքսպիրյան դրամա։ Իսկ եթե դրամայի գլխավոր միտումը, ինչպես հարկ է ենթադրել, եղել է զարիբության պատճառած ողբերգությունների վերհանու-

մը, դրա պատկերումը, ապա պիտի ասել, որ նման պատումների գեղարվեստական բացարձակ վարպետության փաստեր հետագայում տվեց և ոչ սակավ օրինակներով (պատմվածքներ, վեպակ) հենց ինքը՝ Հակոբ Մնձուրին։ Եվ այդ ողբերգությունները նույնիսկ շուշափելի դարձան ոչ թե ցավ ու վշտի ընդգծումով, խելագարության ու ինքնասպանության փաստերով, այլ թեկուզ առնչարձի այն տոնական, ուրախ մթնոլորտով, որի «տողատակերում» թաքնված ցավն ու հոգսը, շնորհիվ գեղարվեստական կատարելության, հիշեցրին նաև... Շեքսպիրին, նրա մարդկային, խոր ողբերգությունները։ Կանխելով ինքներս մեզ, կարող ենք մատնանշել Հակոբ Մնձուրու վիպակներից մեկը՝ «Սիլան», որ մեր գրականության գոհարներից մեկը կարելի է նկատել, առանց երկմտման։ («Կռունկ, ուստի՞ կուգաս», էջ 261—285)։ Վիպակ, որ գրվեց «Նաղարից» մոտ կես դար անց։ 1931 թվականին գրված «Երկրորդ ամուսնությունը» նույնպես չխուսափեց վերոհիշյալների բախտից։ Այդ մասին ժամանակին դիպուկ է նկատել Հր. Մաթևոսյանը «Գրական թերթում» Վ. Դավթյանի հետ վարած զրույցում.

«Պատումը նաև ինքնակենսագրություն է ենթադրվում. վիպակին ինքը կարևորություն չի տալիս, թերևս՝ արդարամտորեն, սիրտը կոտրած մարդու երկրորդ ամուսնության մասին սիրտը կոտրած մարդու գրվածք է վիպակը։ Ինքը Մնձուրին ու իր նմանները 15-ից հետո փաստորեն ոչ երկրորդ ամուսնություն, ոչ էլ առհասարակ երկրորդ կյանք ունեցան»[1]։

Նկատման դիպուկությունը այստեղ, առաջին հերթին, վիպակին տրված ճիշտ գնահատականն է։ «Սիրտը կոտրած մարդու երկրորդ ամուսնության մասին սիրտը կոտրած մարդու գրվածք է վիպակը»։ Իսկ տեսնենք, թե ինչ է ասում ինքը՝ հեղինակը. «1931-ին գրեցի «Երկրորդ ամուսնությունը» վիրքս, որ պոլսահայ կյանքին վիպակ մըն է 87 էջնոց։ Նյութը հացագործ Գեորգի մը Սկյուտարցի աղջկան մը հետ ամուսնության մը պատմությունն է։ Գեորգ երիտասարդ է, երկիրը կին ու զավակներ ունեցած է, բայց տեղահանության ու աքսորի մեջ կորսնցուցած է, ու նորին կամուսնանա։ Առհասարակ ամենքը կնախընտրեին աքսորեն վերադարձողներեն կնության առնել, բայց շատ քիչ էին անոնցմե ողջ դարձողները ու Թափեցան ստամբուլցիներուն վրա։ Ստամբուլի աղջիկներուն ու կիներուն բախտը բացվեցավ։ Անոնք, որ

---

[1] Վ. Դավթյան, Հր. Մաթևոսյան, Հեռացող աշխարհի Առաջյալը, «Գրական թերթ», 1976, № 47։

թերևս տունը պիտի մնային ցուցադրվեցան, մինչև Ամերիկանները զրկվեցան և ամուսնացան։ Իրար առնողները ինչպե՞ս պիտի հարմարեին... Ես այն օրերու տպավորություններես շինեցի այս վիպակը։ Իմ տեղգահտար Գևորգս իմ ծանոթներես արաբկիրցիե մը ստեղծեցի, իսկ առած աղջիկը՝ Զիֆրե պախխալեն...»[2]։

Պարզվում է, որ այնքան էլ ինքնակենսագրական բնույթի չէ վիպակը, ինչպես ենթադրում է Հր. Մաթևոսյանը։ Մի՞թե, բայց չէ՞ որ 1915 թվականը ջնջեց ոչ միայն Արևմտահայաստանը, ոչ միայն ժողովրդի միլիոնավոր մի հատված, այլև վերապրողների «ինքնակենսագրությունը»։ Համաձարիեց։ Եթե Հակոբ Մնձուրին չէ վիպակի իսկական հերոսը, Գևորգը պարզապես նրա տարբերակն է, որ Մնձուրու նման «երկիրը կին ու զավակներ ունեցավ, բայց տեղահանության ու աքսորի մեջ կորսնցուց և կրկին ամուսնացավ»։ Հիշենք Հակոբ Մնձուրու ինքնակենսագրական տողերը. «Երկրորդ անգամ աքսորութենեն ազատված կնոջ մը հետ ամուսնացա հոս։ Նավարեկութենե ազատող մը ի՞նչ կրնե», ո՞չ, սխալ չէ Հր. Մաթևոսյանի ենթադրությունը։ Եվ այստեղ մի այլ, Հակոբ Մնձուրու գրականության համար շատ հետաքրքիր փաստ կա. ընդհանրացվող փաստ։ Հակոբ Մնձուրին իր գրություններում բազմիցս խոստովանում է, որ գրում է իր մասին, իր կյանքի մասին. «Ես կամ», «իմ կենսագրությունս կա իմ գրականությանս մեջ» և այդ ինքնախոստովանությամբ նրան հեռվից դատողը կարող է կարծել կամ ենթադրել, որ նրա ստեղծած գրականությունը չի քանդում նեղ, անձնականի սահմանները (սա, իհարկե, նույնպես գրականության նկատմամբ նեղ կարծիք ունենալու դեպքում), բայց դա թյուր կարծիք է միայն։ Հակոբ Մնձուրին, իր նույնիսկ «նեղ» ինքնակենսագրական բնույթի պատմվածքներում, ասում ենք՝ նույնիսկ «նեղ», երբ խոսում է իր մասին, դա ինքն է և նաև... նա։ Նա, գլխավոր այն երրորդը, որ կոչվում է հայ գյուղացի, արևմտահայ գյուղացի, արևմտահայ ժողովուրդ իր ճակատագրով, անցյալով ու ներկայով։ Դրա առանձին փաստերից, շոշափելի, խոսուն փաստերից մեկը, հենց նրա «Երկրորդ ամուսնություն» վիպակն է։ Մնձուրու ես-ը մենք-ի ես-ն է, ինքը՝ մենք-ը։ Մեր անցյալը։ Եվ դրա համար է նա մեծ իր անձով ու գործով։ Մեծ իր գրականությամբ, որովհետև այդ գրականությունը ոչ թե մի անհատի մասին է (կյանքից,

---

2 Հակոբ Մնձուրի. Ժամանակագրություն, «Երեսունվեց տարի հետ», «Մարմարա», 18 օգոստոսի 1967, 20 օգոստոսի 1967, № 8352 և № 8354։

շրջապատից կտրված) ընդհանրապես, այլ իր անձի, անհատի մեջ բեկման ենթարկված մի ամբողջ ժողովրդի պատմություն. «Կամչցնե նույնիսկ դիս, ինչ որ տ:լի»։ Այդ զարմանալի համեստության հետև երևի նույնպես կանգնած է մենք-ը։ Եվ ոչ թե երևի։ Հր. Մաթևոսյանը, ծանոթանալուց հետո Մնձուրու գրականությանը, իր արդեն մեզ հայտնի գրույցում, այսպես է խոսել նրա մասին, որ հաստատում է ավելիով, ինչ մենք աշխատեցինք փաստել վերևում։

«Իմ հիացմունքս անշուշտ նաև հոգեհարազատությունից է գալիս, նրա Ցորնիկին Գիրքորը մեր գյուղացի քրմանց Մացակն է, «Սիլան» ինքը եթե գրած չլիներ՝ եթե կարողանայի ես էի գրելու, կենդանի բարի գոյության կարոտն ինձ ահա-ահա կանգնեցնում էր նման մի կերպարի ու սյուժեի վրա... Բայց Մնձուրու մեծության ընկալումն արդեն անձնականության ու հոգեհարազատության հետ գործ չունի. Մնձուրին մեծ է, որովհետև մեծ է, բնության ու մարդու մասին մի անսպառ հանրագիտարան է Մնձուրին, նրա բերած կենցաղի մեջ կարելի է բնակեցնել մեր ամբողջ պատմության ու տարեգրության դեպք ու դիպվածը՝ Քսենոփոնի ժամանակներից սկսած, և այդ պատմությունն ու տարեգրությունը կհայտնվեն կենդանի մթնոլորտում, օդ, դույն ու շունչ կառնեն։ Մնձուրին իսկապես հանրագիտարան է։ Եթե Մնձուրին է ասել՝ ուրեմն ասված է։ Մնձուրու գոյությամբ ես ինձ հարուստ եմ զգում, և փառք աստծո, որ նա եղավ»[3]։

«Երկրորդ ամուսնության» մեջ գործող արաբկիրցի Գևորգը, եթե արմատանցի Մնձուրու մի տարբերակն է, թեղուտցի անցյալ դարի իննսունականների Ցորնիկին Գիրքորը («Կապույտ լույս» ժողովածուի համանուն պատմվածքից) Արևելյան Հայաստանի, այն էլ ներկայումս՝ յոթանասունական թվականների, Լոռվա գյուղացու դավակ՝ Հր. Մաթևոսյանի ահնիձորցի քրմանց Մացակին է նման... Այո, դուրս է գալիս, որ մեծ է այն գրականությունը միայն, որ առանց տեղի ու ժամանակի սեղմումների ու սահմանագծումների, խոսում է մարդկային կրքերի, ուրախությունների, ցավ ու ողբերգությունների մասին։ Այսինքն՝ համամարդկային է։ Մնձուրու գրականությունը այդ տեսակից է, նրա ազգայինը արտաքին կեղևն է միայն, այն էլ իր առանձնահատուկ արժանիքներով ու հարստություններով։ Ինքնուրույն ու գունեղ բառ ու բանով։ Հանգամանք, որ համամարդկայինին ազգային յուրօրինակ փայլ ու երանգ է տալիս։

---

3 Վ. Դավթյան, Հր. Մաթևոսյան, նշված հոդվածը։

III

«Իմ պարագան բացառիկ է գրականությունների պատմությունների մեջ։ Ես կպատմեմ տեղն մը, ուր այլևս չկան իմ անձերուս ու անոնց շարունակությունը։ Իմ պատմվածքներս միայն պատմություն չեն։ Իմ անձերուս և տեղերուն աղգագրությունն է, աղգային պատմությունն է, վկայաբանությունն է զոր ես կգրեմ։ Անոնց սինեման է, թատրոնն է զոր ես կխաղցնեմ։ Անոնց պանթեոնն է զոր ես մեր գրականության կփոխանցեմ։ Ես ասոնք կընեմ հիմա։ Մարդը կմեռնի, գիրն անմահ է, գիրը չի մեռնիր»։

Գիրը անմահ է, գիրը չի մեռնի, դրանից հետևում է նաև, որ Հակոբ Մնձուրին ձգտում է, որպես խղճի պարտք, անմահացնել «անոնց պանթեոնը» գիր ու գրականության միջոցով։ Իհարկե, հայ գրականության մեջ նա առաջինը չէր, որ փորձեց կանգնեցնել այդ պանթեոնը և, երևի առաջինները, երբ ձեռնամուխ եղան այդ գործին, երբևիչ չմտածեցին էլ պանթեոնի մասին, նրանց ձգտումներն ու երազներն այլ էին. նրանք մտածում էին ապրելու, գոյատևելու, լինելու մասին։ Խրիմյանն ավելի գործիչ էր, նրան ուղղություն էին տալիս ազգային-քաղաքական մտահոգությունները, 1860—70-ական թվականների իր ստեղծագործություններում դավառական կյանքի սրբությունն ու անեղծությունն էր նաև նրա տեսադաշտում, սուրբ ու անեղծ իր անձի նման, կրոնական գործչի իդեալիստական խառնվածքը, որ գեր էր խաղում ժողովրդի հոգսերն ու ձգտումները պատկերելիս։ Սրվանձտյանցը պրպտող, անխոնջ ազգագրող էր և նրանով էր, որ դավառն իր ֆոլկլորով մուտք գործեց արևմտահայ գրականության մեջ, իսկ ազգագրությունից դեպի գեղարվեստական գրականության վերընթացը նշանավորվեց, երբ հրապարակ եկան Հովհաննես Թլկատինցին, Մշո Գեղամը։ Գրականություն բերվեցին Խարբերդի, Տարոնի մինչ այդ անծանոթ աշխարհները... Առաջինի կյանքից առանձին, ընտրովի վերցված հերոսներով (պատկերներ, պատմվածքներ, վեպակներ), որտեղ գրողը ջանում էր լույս աշխարհ բերել դավառի առանձին մարդկանց կենցաղային խորքը, դրանց պատկերմամբ վեր հանել կյանքի ճշմարտանման պատկերը։ Երկրորդով գրականություն բերվեց այդ աշխարհում ապրող և ճնշող մեծամասնություն կազմող հերոսների թշվառությունն ու ողբերգու-

թյունը, պանդխտության ցավն ու տառապանքը և, գլխավորը, Մարաբան և նրա հարստահարիչը, վաշխառուն։ Հրանոշը առավելապես հանդիսացավ պանդխտության ու պանդուխտի երգիչը (քրոնիկներ) իր խոսքը հասցեագրելով ընթերցողի խղճմտանքի ձայնին, այն մյուսի՝ Ռուբեն Զարդարյանի կողքին, որ դիմում էր նույն ընթերցողի երևակայության ուժին, իր նպատակամղված պանթեիզմով ու մշակված այն դրականությամբ, որ ավելի արվեստում գեղեցիկի մտահոգություններ նաև։ Իհարկե, բոլորի մեջ էլ առաջնայինը հայրենին էր, հայրենի հողը։ Միտումը, նրա նկատմամբ անսպառ ու անդավաճան սերն ու նվիրումը։ Մեկում՝ նրա վարքն ու սրբությունը, մյուսում՝ նրա անգիր գանձերը կորստից փրկելու մտահոգությունը, հղկումը, երրորդի մոտ՝ նրա ցավի ու տառապանքի անհանգստությունը։ Ու եթե առաջինը փորձում էր իր խոսքը հասցեագրել ընթերցողի մարդկային հոգուն, երկրորդը՝ խղճին, երրորդը՝ սրտին ու չորրորդը՝ նրա երևակայության,— ոչ մեկը նրանցից չէր էլ մտածում, կարող չէր էլ մտածելու, որ այլևս չեն լինելու դրանք, նույնիսկ այդ սիրտը, խղճը, հոգին ու նույնիսկ... երևակայությունը։ Չէր լինելու հողը։ Հայրենին։ Նրանք պատմում էին ու գրում այն բոլորի մասին, որտեղ ապրում կամ ապրել էին, գրում էին հերոսների մասին, որոնք եղել էին, կային ու կարծում էին կշարունակեն լինել։ Ինչպե՞ս կարող էր հակառակը (քաղաքական գործիչներ էին նաև նրանցից մանք), հակառակն էր անբնական։ Եվ դեռ վիճում էլ էին այդ «գավառացի» գրողներն ու գավառից «քաղաքաբնակ» դարձածները։ (Գավառի՞ թե քաղաքի գրականության առաջնայնության մասին)։ Այդ օրերին էր Թլկատինցին գրում բանաստեղծ Մալկարացի Կարոյին, որ լույս տեսավ «Բյուրակնում», 1899-ին.

«Պիտի ասես, կարելի է, ի՞նչ կա, ի՞նչ կպատահի գեղի շրջանակ մը, ուրկե հնարավոր ըլլա կղակի տակ ձգելիք պատմություն մը մեկտեղել։ Դուն կուզես այս կասկածն ըրե, ես ասեմ որ օր մը, ես ալ քեզի պես կիսորհեի, իրավ է, բայց սխալ, ընդունե հիմա որ ան մութ տեղվանքն ալ մարդ կապրի, երիկ կնիկ սիրով ու անսեր կցակները կան, կուշտի անոթիի կռիվները կան, ասոնք ալ եթե չըլլային ասենք, սա տերտերը արդեն բավական չէր որ գեղ մը գեղով իր վառած կրակներովը խարկեր, խորվեր։ Դուք տակավին լսած չե՞ք երբեք Քեսրիկի տերտերին դժոխքի արարքները։ Ես պիտի ասեմ, որ մարդիկ կան, կապրին արևի տակ մեր գեղին մեջ, որոնք ողջ ողջ թաղողը մեյ մեկ շեն քաղաք շինած կըլլար։ Գեղը, կըսեմ ի՞նչ չկար, ի՞նչ չափ շահագրգիռ գեղի ինձի համար, ան խաթխաթ խոսքերը որ թոնիրին եղերքը

նստողներուն բերնին վրա կփշփշկի, այն սիրուն, խուտուտ հեքիաթներուն, որ ախորին տախտը, տանը նահապետի դահլիցության տակ կփակվի։ Ուրիշները թող քաղաքը գրեն, մենք բեգի հետ գեղը կներկայացնենք, եթե կարելի ըլլա այնպես, ինչպես գրողի մը մտքեն կանցնի, անկախ, անկաշկանդ ու գրելիքնիս գիտնայինը ըմբռնել։ Այն ատեն, անկե վերջը կհուսանք, հայտնի կըլլա թե ջայլամի՞ն թե ցախսարիկին ածած հավկիթը խոշոր կկշռեր»։

Մի այլ տեղ, մի այլ հարցում ծանր կշռեց... ցախսարիկինը։ Կատարվեց անբնականը։ Որովհետև այլ տեսակի «մարիսպաներ» կային այնտեղ, նույնպես քաղաքական գործիչներ, որոնք սակայն հեռու էին գրականությունից և հաշվի չէին նստում մարդկային սրտի, հոգու, խղճի ու մանավանդ... երևակայության հետ։ Թեպետ զուրկ չէին նույնպես երևակայությունից, բայց ոչ բնապաշտական, այլ ընդհակառակը՝ ավերման ու կործանումի։ Այդ էր պատճառը, որ Հակոբ Մնձուրու, Վազգեն Շուշանյանի և Համաստեղի սերունդը, նրանց պարագան, բացառիկ, անբնական դարձավ... «գրականություններու պատմություններուն մեջ»։ Նրանք գրեցին, ստեղծագործեցին իրենց նախորդների և միլիոնավոր հերոսների պանթեոնը մեր գրականությանը փոխանցելու համար։ Բայց նրանց դժվարին, ծանր, դաժան ճակատագրերն էլ, ինչքան միասնական, թեկուզ մանրամասնությունների մեջ որոշ, հատուկենտ գրողների մոտ ավելի բախտաբեր, «երջանիկ» տվյալներ ունեցան։ Եվ դրանց մեջ Հակոբ Մնձուրին այն միակն էր, որ քսանամյա կենդանի, այրող ու վառ, անմոռանալի հուշեր բերեց իր հետ սփյուռքահայ գրականություն, ինչ չունեին մյուսները։

Վազգեն Շուշանյանը դեռ նոր էր պատանության սեմին ոտք դրել, երբ պոկվեց հողից, ընկավ անապատները, իսկ Համաստեղը արհավիրքից առաջ հեռացել էր հայրենի հողից ու հասել ԱՄՆ (1913 թ.)։ Մի խոսքով, գրականության համար «ամենաբախտավորը» Հակոբ Մնձուրին էր։ Նա կենդանի վկա էր, անձամբ տեսած, ապրած, վայելած իր գիտակցական հասուն երիտասարդական տարիներին։ Ու դրա համար էլ, եթե Շուշանյանի գրականությունը եղավ կարոտի զեղում, սիրո անգերազանցելի պոռթկում, մանկական ու վաղ պատանեկության գողտրիկ, անմոռանալի հուշերի, իր հարազատների կորած ու բզկտված հոգիների մղձավանջային հաճախանքից հառնող վիշտ ու տառապանք, այրող ցավ, որ հարյուրավոր հրաշալի էջեր պարգևեց սփյուռքահայ գրականությանը՝ սկսած «Ամռան գիշերներում» ծառեր ծլարձակից, «Գարնանայինի» որոշ էջերից, վերջացրած «Մթին պատանու-

թյուն», «Ճերմակ Վարսենիկով» և փոքր հիշողությունների, լսածների ու մեծ երևակայածների օգնությամբ դարձավ երկհատորանոց վեպ՝ «Օրերը գեղեցիկ չեն» և նույնիսկ պոեմ, բանաստեղծություն՝ «Երկիր հիշատակաց», Համաստեղի մոտ անցյալը, անցյալի գյուղը, բարձրարվեստ վարպետության շնորհիվ ստացավ ոգեղեն տեսք, ռոմանտիկ գունավորում, հոգու վեհություն ու սլացք։ Բայց երկուսի մեջ էլ, երկրորդում ավելի, զգալի պակասեց ամենակարևորը, էականը։ Համաստեղը կերտեց իր պատմվածքների «Գյուղը» և «Անձրևը» ժողովածուները դեռ առաջին տասնամյակում, որոնք իրավամբ բարձրարժեք ստեղծագործություններ էին անցյալի հայ գյուղի ու գյուղացու մասին, բայց՝ առանց հողի։ Համաստեղի գրականության մեջ պակասեց հիմնականը, առաջնայինը՝ հողը և նրա բույրը։ Եվ ոչ միայն Համաստեղի, այլ գրեթե բոլոր նրանց, ովքեր արևմտահայ կորուսյալ գյուղի մասին գրեցին։ Այդ ամբողջ գրականության մեջ գրեթե հայրենի հողը իր բնությամբ մնաց բացակա։ Ասում ենք գրեթե, որովհետև թերևս Շուշանյանն էր, որի մոտ հայրենի բնությունը շոշափելի հող լինելուց բացի երազային, հեքիաթի հմայք ու բույր ուներ և այդ հայրենին, Շուշանյանի մոտ համենայն դեպս, Արևելյան Հայաստանը չէր, այլ Արևելյան Թրակիան (Ռոդոսթո)։ Հակոբ Մնձուրու գրականության առավելությունը՝ նաև նրա հողեղենությունն էր, նրա միջավայրի, գործող անձանց բնական, անշպար «անարվեստ», շոշափելի լինելու չափ հարազատությունն ու «տարերայնությունը», վերջապես այդ բոլորին միացած, այդ բոլորը մեզ փոխանցող նրա նույնքան «նախնական», անշպար, բնական գրելաձևը, ոճը, արվեստը։ Եվ այս երկու բնական հումքից շաղախված այն արդյունքը, որին կարելի է որակել, երևի, որպես արվեստներից դժվարագույնը։

Արվեստ, որ «նման է ցորենի արդար ու ազնիվ հացի», ինչպես բնութագրել է Հր. Մաթևոսյանը։ Բայց այդ ազնիվ ու արդար հացի նման, իր հումանիզմով մանավանդ շատ մոտ կանգնած, նույնպես իր գավառացի համաշխարհային հռչակ վայելող սարոյանական արվեստի մերձակա մնձուրիական գրականությունը, մինչև նման մակարդակ նվաճելը անցավ կազմավորման երկար փուլ՝ ինքնազարգացման համառ, օրինակելի շրջանից, որ քչերին տրվեց հայ գրականությունում ընդհանրապես, սփյուռքահայ կյանքի դժնդակ պայմաններում մասնավորապես։ Հակոբ Մնձուրին չանցավ համալսարաններից և չունեցավ դասախոսներ։ Բայց նրանցից ավելի նրա կյանքում համալսարաններ եղան ու դասախոսներ նրա ապրած կյանքն ու այն ամենը, ինչ

նա կարդաց, ուսումնասիրեց կյանքում առանց ընդմիջումների, մինչև իր խոր ծերությունն ու մահը՝ գեռևս դպրոցական հասակից օգտվելով դպրոցական ու հանրային գրադարաններից, հետո իր սուղ միջոցներից գրքեր գնելով պատահած գրավաճառներից ու Ստամբուլի մայթերի հրեա բուկինիստներից։ Ու այդ գրքերը անբաժան դարձան, հանդիսացան նրան լրացնողը, ամբողջացնողը, երբ նա աշխատում էր փուռերում, «դեղդահի» ետևում, փողոցում, հայրենական դաշտերում և երբ հետագայում, պարտադրված, խուռ, դարի, հարդ ու ածուխ էր ծախում, գործակատար էր, գրագիր կամ մի եկեղեցու գավթում մոմ վաճառող։ Մնձուրու հետ էին այդ գրքերը, երբ նա «պարապ», անգործ ման էր գալիս։ Գրքերը, գրանք էին նրա համալսարանական դասախոսները։ Իսկ ինչպիսի՞ դասախոսներ էին նրանք։ Անտարակույս մեր գրականության և, մասնավորապես այսպես կոչված, գյուղագրության դասականներն էին (Խրիմյանից մինչև Հակոբ Օշական), հետո իր ժամանակակիցները և իր իսկ խոստովանությամբ, առաջին հերթին Զապել Եսայանն ու Արտաշես Հարությունյանը։ Հակոբ Մնձուրին, ինչպես հայտնի է իր իսկ ինքնակենսագրական տողերից, խորապես հաղորդ էր ֆրանսիական արվեստին ու գրականությանը, գիտեր, ուսումնասիրել էր ու հիացած էր ռուս դասական գրականությամբ։ Այդ գրականության համաշխարհային այնպիսի մեծությունների էր պաշտում, ինչպիսիք Դոստոևսկին էր, Տոլստոյը, Չեխովը, Գորկին։ Նրա «ժամանակագրություններում» քիչ չենք հանդիպում վերջիններիս հասցեին ասված բարձր ու հիացական կարծիքների։ Մնձուրին վերցնում էր բոլորից, բայց.

«Քու ամեն ըսածիդ մեջ դուն ըլլալու ես. քու ճաշակներդ, քու կիրքերդ, քու կենցաղդ, քու պատկերդ։ Քու ամեն ըսածիդ, ամեն սիրածիդ մեջ քու կարդացած հեղինակներդ կան։ Թեն մը, Ռընան մը կա, Հյուկո մը, Բոտլեռ մը, Ռենբո մը, Ֆլոբեր մը, Զոլա մը կա, Դոստոևսկի մը, Չեխով մը կա, Կարլայլ մը, Նիցշե մը, Տոլստոյ մը կա։ Եվ ինչ զարմանալի է, որ անոնք հալեր են քու մեջդ, անոնք չկան, անոնք քեզի փոխվեր են, դուն եղեր ես»[1]։ Հակոբ Մնձուրին ծանոթ էր նաև ժամանակակից գեղարվեստական մտածողության միտումներին և ուներ այդ միտումների մեջ իր նախընտրածները, ուներ իր կողմը և դեմը։

---

1 Հակոբ Մնձուրի, Ձեզի հետ մշակույթի վրա պիտի խոսիմ, «Մարմարա», 11 մայիսի 1955 Ն 4006։

«Մեր օրերուն գրողը չի կրնար արդեն, ինչպես իր նախորդները, իր գործին մեջ փակվիլ, ու իր շուրջը հեղածներուն, խոսվածներուն դիմաց անտարբեր կենալ։ Ան չի կրնար չեղոք մնալ։ Պետք է ու պարտավոր է կողմ բռնել ու արտահայտվիլ։

«Ինձի համար ով ազվոր բան մը ըսե, ու տա կհմայե զիս։ Իսկ ամեն նորը, զարուղին գրականության թե փիլիսոփայության մեջ հայտնվի՝ զիս կառևանդե, զլուխս կբանամ կվազեմ անոր։ Հարելու պարագա չկա անպայման։ Տղայությունենս կար այս բանը իմ մեջ, ինչ որ ուրախ եմ, որ չգնաց ինձմե։ Ահա ես մեր նորերուն փակա, կկարդամ զիրենք։ Իրավունք գեղեցիկ են ամեն գրածնին, թող չըլլան։ Ոչ գեղեցիկներ, անհաջող, տղայորեն ըսվածներ ալ կան անշուշտ։ Պիտի գա սակայն ժամանակը, որ լավագույններն ալ պիտի տան»[2]։

Մի խոսքով, ժամանակակից ամերիկյան ու անգլիական, ֆրանսիական ու աֆրիկյան գրականություններից մինչև ամենաժամանակակից սովետահայ նորերը, մինչև Զահրատ, Խրախունի, Հատտեճյան և այլք, և այդ բոլորի մեջ նրանց ցնցողները, նրան «առևանդողները»... Ֆրեդերիկ Դարսիա Լորկա, Պաբլո Ներուդա։

Բացառապես հետաքրքիր է այն փաստը, որ ապրելով (մի ամբողջ կյանք) թուրքական իրականության քաղաքական փակ պայմաններում, Հակոբ Մնձուրին դաղափար ուներ և կարողանում էր հետևել սովետահայ գրական կյանքի անցյալին և ներկային՝ սկսած նրա կազմավորման օրերից մինչև մեր օրերը։

«Հակոբ Մնձուրին սերտ կապերի մեջ էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Հայաստանի գրողների միության հետ, կարդում էր հայրենիքից առաքված ամեն մի գիրք, հետևում սովետահայ գրականության մեջ հայտնված նորերի առաջին քայլերին, նրանց մասին գրում իր կարծիքը, ուրախանում և հպարտանում հայրենի գրականության ծաղկումով ու հարուստ բերքով»[3]։

Այո, նա հրճվում էր և գիտեր այն բոլորի մասին, որ կատարվել ու կատարվում էր հայ գրականության անդաստանում.

«Դուն Ակսել Բակունցին «Ծիրանի փողը» պատմվածքին գրական դատավարությունը գիտե՞ս, կարդացա՞ծ ես, ըսի.

---

2 Հակոբ Մնձուրի, ժամանակագրություն, «Նորերուն վրա» «Մարմարա», 28 հուլիսի 1960, № 5865։

3 «Հակոբ Մնձուրի (Տեմիրճյան)—մահախոսական», «Հայրենիքի ձայն», Երևան, 8 փետրվարի, 1978, № 6։

— Ոչ,— ըսավ։

— Երեսուն և ավելի տարի առաջ ես կարդացի «Գրական թերթին» մեջ այդ նիստին ատենագրությունը։ Թերթը ո՞վ բերեր էր, հետո ի՞նչ եղավ չեմ գիտեր։ Ըսվածները մոռցած եմ, ինչ որ մնացած է հիշողության մեջ այդ նիստին մթնոլորտն է և Բակունցի բանագրությունը, ինչո՞ւ, որովհետև Բակունցը ղզացական, հայրենաբաղձական շունչով գրած էր։ Անշուշտ թե այդ օրերու հոգեբանությունը հիմա չկա, բայց նորեն ալ ավատապետական անցյալը, պապենական օրերը վերակենդանացնող գրականութենե մը շատեր չեն ախորժիր։ Դերենիկ Դեմիրճյանի «Ուխտավորները» պատմվածքին տեսակեն ուրիշներ գրե՞ց ավելի վերջը, Լեոն եթե ողջ ըլլար «Այծարածին» պես մը նորեն կգրե՞ր...»[4]։

Լեո, Դերենիկ Դեմիրճյան, Ակսել Բակունց... Հրանտ Մաթևոսյան և սովետահայ գրականության մեջ հայտնված նորերի առաջին քայլերը... «Ես այն գրողներեն կախորժիմ, որոնք արյունս կբռնեն։ Անոնցմե, որոնց ըսածներուն ես կսպասեի արդեն։ Որ զուգահեռականեն կուզե ըլլա, քերթված, պատմվածք, վեպ, քննադատություն թե փորձագրություն կամ մտածումի գործեր տված ըլլա։ Որևէ երկ մը կարքեցնեն զիս երբ իմ ուզած ալկոհոլես իր մեջ ունի»[5]։

«Կճանչնա՞ս Հրանտ Մաթևոսյանը։ Իմ ալկոհոլես ունի...»[6].

Ընդգրկման այդ համապարփակությունը, հետաքրքրությունների այն լայն ու ընդարձակ ծիրը, վերջիվերջո, դեռևս իր գրականության սկզբնավորման ու կազմավորման շրջանից, իր ակտիվ նկարագիրը գրականության հանդեպ («մեր օրերուն գրողը չի կրնար չեզոք մնալ»), ստիպեցին նրան ճշտել իր դիրքը և գտնել իր աշխարհը, իր սեփական աշխարհը մեր գրականության մեջ, ինչպիսին իր ժամանակին ու իր հերթին խոստովանել էր Համաստեղը. «1915-ին, ինչպես ամեն տեղ, հոս ես սկսած էր (իմա՝ ԱՄՆ-ում—Դ. Ս.) հայ գրականությունը մեր ուժերով շարունակելու խլրտումը։ Այդ խլրտումը շնչելու չափ բնական էր և ես ինքս ալ միացա այդ շարժման գրելով բանաստեղծություններ, խորհրդապաշտ արձակներու, տեսակ մը փնտրտուք ձևի և մտածողության։ Այդ թվականներուն մեջ կանգ առի, գտա իմ ներքին

---

4 Հակոբ Մենուրի, Ժամանակագրություն, «Ասուլիս», «Մարմարա», 25 ապրիլի 1967, 8270։

5 «Համայնապատկեր հանրապետական շրջանի Ստամբուլահայ գրականության», էջ 44։

6 «Գրական թերթ», 12 նոյեմբերի 1976։

աշխարհը—գավառը, գյուղը—և տեսա, որ Ես-ը, ուժը (ընդգծումը մերն է—Գ. Ս.) հոն էր արդեն և ես իզուր փնտրտուք ըրած էի, այն որ տված էր Թլկատինցին և մանավանդ Զարդարյանը»[7]։

Եթե առաջինի համար «մեղավոր» էր միջավայրը, Ամերիկան, երկրորդը միշտ գտնվեց Իրենների հետ, այնտեղ՝ Հայրենիքում և այստեղ Ստամբուլում, գաղթերից վերապրող իր համագյուղացիների շրջապատում, որոնք օր ու գիշեր խոսում, պատմում ու վերհիշում էին անցյալի օրերը, որովհետև հուշերից բացի այլ բան չէր մնում նրանց ապրել կարենալու, տոկալ կարենալու համար։ Հետո ոչ անտեսելի հանգամանք էր նաև աշխարհագրական հեռավորությունը առաջինի համար և նրա «մոտիկությունը» երկրորդի հաշվին։ Կար նաև Հակոբ Մնձուրու համար գրականության մի այլ հետաքրքիր վարկած։

«Ես ալ ամեն կարդացածիս մեջ գրողն ու իր երկիրը կփնտրեմ, կուզեմ, որ գրողին խառնվածքը, իր երկրին դույնը ըլլա մեջը։ Առարկայական գրականություն չկա։ Սուտ մըն է։ Գրականությունը մենք ենք։ Մենք կանք մեջը։ Մենք մեքենա չենք։ Ամեն գրականություն ենթակայական է։ Առանց իր երկրին մարդ չկա, ինչպես առանց իր հողին՝ ծառ չկա»[8]։

Եվ, վերջապես, երրորդը. այդ համագյուղացիների մեջ կար այլևս մեծ բացական, այն, որ նույնպես, իր ժամանակը ապրեց «ներքին էմիգրացիայի» հոգեբանական ծանր պայմաններում (ամեն օրվա և տարիներ, տասնամյակներ տևող հուշերի, անցյալի վերապրումը դրա արդյունքն էին) և գտավ, նույնպես ներքին ձայնով, որ «ես, ուժը» «հայրենի եղերքի» մեջ է գտնվում։

Հակոբ Մնձուրու գրականության կազմավորման շրջանում այդ մեծ բացական լրացնողը (նրան անցյալը վերհուշողը) նրա համագյուղացի Միսաք Մեծարենցն էր նաև, նրա հարազատը, նրա սրտի ու հոգու ամենամերձ մարդը, ապա Դանիել Վարուժանն իր երգերով, երգեր, որ Մեծարենցը բնութագրում էր այսպես.

«Իրիկնալույսին ծիրանի ծուլուն մեջ կղզիացած արտասվող ուռիներուն շուքին տակ, հովիտին խորը, ահավասիկ իմ երգս, արոտներուն շունչովը լեցուն, ահավասիկ իմ երգս, առվեղերքի անուշիին ու

---

7 Համասեղ, Պատմվածքներ և հեքիաթներ, «Ինքնակենսագրություն», Ստամբուլ, 1963։

8 Հակոբ Մնձուրի. Ժամանակագրություն, «Իրանահայ արդի գրողներուն վրա», «Մարմարա», 10 սեպտեմբերի 1964, № 7336։

ռեհանին խունկովը օծուն, ահավասիկ իմ երգս, հնձված արտերուն ու հերկված հողերուն բույրովը, արևի խաղողներուն ու մեղրացած թուզերուն անուշությամբ ակաղձուն։ Իմ երգս՝ իղձի մը, արցունքի մը պես պարզ ու վճիտ՝ որ իրիկվան ոսկի հրեշտակին հետ թև առած կթռչի, սարերն ի վեր, կապույտն ի վեր»։

Ցորենի արդար ու ազնիվ հացի, արցունքի պես պարզ ու վճիտ այդ արվեստը, որ Վարուժանինն էր, Մեծարենցինը, որ հողաբույր էր, հողեղեն և, միաժամանակ, եթերային, հանդիսացավ հետագայում սաև Հակոբ Մնձուրունը։ Որովհետև Մնձուրու արձակը, նրա պատմվածքները շատ նման եղան «հանճարեղ այդ պատանու» և մյուսի բանաստեղծական աշխարհի գույներին ու բույրին և ոչ միայն դրանց, այլև այն հիմնական խորքին, մարդկային այն վեհ ձգտումներին, հումանիզմին, մարդասիրությանը, և հասարակ, խոնարհ խավերի նկատմամբ նրանց տածած հոգու հարազատությանն ու նվիրումին։ Հետաքրքիր է, որ Մեծարենցն ու Մնձուրին, երկուսն էլ ծնվեցին 1886 թվականին և համարյա նույնքան տարիներ ապրեցին գյուղում, հանդամանքների բերումով նույնպես վաղ կտրվեցին հողից և առաջինը մի անգամ հեռանալուց հետո երբեք, իսկ երկրորդը, մի փոքր ժամանակ անց, կրկին վերադառնալով և ետ դալով, կրկին՝ երբեք չվերադարձավ այնտեղ։ Մնձուրու համար դա, երևի, առավել ցավալի էր։

Հակոբ Մնձուրու կազմավորման մեջ դեր ունեցան նաև, և դա թող պարադոքս չթվա, թուրք գյուղացիները, ժամանակակիցները։ Իհարկե, նրանք, ովքեր գրեցին թրքական (արդեն թրքական դարձած) գյուղի և այն դավառների մասին, որոնք հարազատ ու հայրենին էին Մնձուրու։

Բայց ինչ ահավոր հակասություն Հակոբ Մնձուրու և այս վերջինների պատկերածի միջև...

Հակասությունը ոչ թե ծնունդ էր առնում գրական վարպետությունից կամ գրական ըմբռնման տարբերություններից, այլ բուն իսկ միջավայրից, մթնոլորտից, որ այն չէր այլևս, երբ այնտեղից հեռացվեց նրա հարազատ տարրը, գերակշռողը, հայ ժողովուրդը։ Փոխվեց նույնիսկ բնությունը (այդ մասին հետագայում խոստովանեց նաև թրքական մամուլը), արմատախիլ արվեցին ծառերը, վառելիք էր հարկավոր, անմշակ թողնվեցին հողերը, արդասաբեր արտերը անջրդի դարձան, որի միակ պատճառը ծուլությունն էր, անաշխատունակությունը, նոր «տերերի» կենցաղն ու բարքերը (այդ մասին էլ հետագայում խոսեց

Թրքական մամուլը)։ Եվ «զարմանալի» այդ մասին ցավով ու ափսոսանքով, խոկական քաղաքացիական սրտացավությամբ դրեց նաև ինքը՝ Հակոբ Մնձուրին. «—Չէ, կըսեմ, այս երկիրը երեսուն միլիոն չէ, հարյուր միլիոն մարդ կապրեցնեն։ Մենք ցորեն դուրսեն պիտի չառնենք, ցորեն պիտի ծախենք, բայց ասոր պատճառը ծուլությունն է, դուք եք։ Ես գավառը ըլլայի, իմ արտերուս բերքովը քանի մը տարիեն ափարթման մը կկայնեցնեի...

— Հիմա ձեր օրերուն պերեքեթը[9] չկա, զոնշու[10],—կպատասխանեն,— հիմա մեր տուներուն տարեկան ուտելիքը չենք կրնար հանել։ Հիմա մեկ եղը հազար ոսկի է։

— Զգեցեք ատ պերեքեթի խոսքը,— կըսեմ, միշտ ալ կկրկնեք, արտերը նորեն այդ արտերը չե՞ն։ Եվ թե ինչո՞ւ եղը փարայով[11] պիտի առնեք, դուք եղ չե՞ք կրնար հասցնել ձեր կովերեն։ Պատճառը ձեր ըսածը չէ։ Ծույլ եք, չեք աշխատիր»[12]։

Հակոբ Մնձուրու իր զուռուչայցի թուրք, անցյալից ծանոթ, հարեվան հայրենակիցների հետ, արդեն տասնյակ տարիներ անց, Ստամբուլում վարած ու պատմվածքի վերածած այս խոսակցության բովանդակության նմանները գրվեցին թրքական գրականությունում, որտեղ թվում էր անհավատալի է նույնիսկ պատկերված միջավայրը իր հետամնացությամբ, գորշությամբ ու մռայլությամբ։ Նման աղմկահարույց ստեղծագործություններից էին քառասնական թվականների վերջերին Մահմուտ Մաքալի «Մեր գյուղը» և մինչև մեր օրերը լույս տեսնող տասնյակ ու տասնյակ Անատոլիայի կյանքը պատկերող գրքերը։

Թուրք հանրապետական շրջանի գրականությունը, ժամանակակիցը մանավանդ, այսօր ունեցել է և նույնիսկ ունի միջազգային ճանաչման արժանացած գրողներ ու «գյուղագիրներ», որ ամենաբեղուն ու արդասաբեր սեռն է ներկայի թրքական գրականությունում։ Նրանց պատմվածքները, իրենց ուժով ու տեխնիկայով, գրական իմաստով, ուսանելի եղան հանրապետական շրջանում ստեղծագործող ստամբուլահայ գրողների համար, գարձան ձևի և խորքի իմաստով անմիջական ազդեցության գործոններ։ (Ի դեպ, այդ գրականության մեջ ուժեղ է զգացվում ռուս դասական և ժամանակակից սովետական գրականության բարերար ազդեցությունը՝ Դոստոևսկուց, Տոլստոյից մինչև Գոր-

9 Պերեքեթ (թրք.)—բարեբերություն, առատություն։

10 Զոնշու, քոմշու (թրք.)—հարևան։

11 Փարա (թրք.)—դրամ, փող։

12 Հակոբ Մնձուրի, Զուռուչայցիները, «Մարմարա», 26 օգոստոսի 1965, № 7679։

կի ու Շոլոխով)։ Թրքական ժամանակակից գրականության ստամբուլահայ գրողների վրա ունեցած բարերար ազդեցության մասին խոստովանել է նաև Հակոբ Մնձուրին. «Այսօրվան մեր պատմվածքը մեր նախորդ սերունդին նորավեպը չէ։ Մենք Սրմաքեշխանլյանին, Ջոհրապին պես չենք պատմեր։ Մենք ավելի հոսուն ենք, ինչպես կյանքը, ինչպես պատահած դեպքերը։ Մենք մեր շուրջի պզտիկ տառամները կպատմենք պարզությունով մը, մերկությամբ մը, որ մեր նախորդները կանգիտանան։ Մենք կպատմենք ինչպես թուրք գրական նոր սերունդը։ Մեր պատմվածքները անոնց հիբայեին (թրք. պատմվածք) շատ կնմանին։ Ավելի նիշտը մենք անոնցմե սովրեցանք (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։ Անոնց Սաիտ Ֆայիքը, Օրհան Քեմալը, Սաիմ Դոչագյոզը, կամ անոնց գյուղագիրները՝ Ֆաքիր Պայբուրդը, Ջեթին Կարամանբեյը ամենեն ավարտուն պատմվածքները գրեցին»[13]։

Մենք վերոհիշյալ անունների վրա կավելացնենք նաև Սապա հաթթին Ալիին (որին, իր ձախակողմյան միտումների պատճառով, գազանաբար սպանեց թրքական ոստիկանությունը 1948 թվականի մարտին, 41 տարեկան հասակում), Օքթայ Ադպալին, Բեքիր Յըլտըզին և վիպագիրներ Քեմալ Թահիրին ու, մասնավորապես, Յաշար Քեմալին (որի «Յախ Մեմեդը» թարգմանաբար հրատարակեց «Հայաստան» հրատարակչությունը 1976-ին) և այլոց։

Իհարկե, երբ խոսում ենք ժամանակակից թրքական գրականության, նրա առաջադիմական թևի մասին, պիտի ասել, որ այն խորապես աղդվել է նաև ամերիկյան ժամանակակից գրականության փորձից ու գրելաձևից՝ Հեմինգուեյից, Ջոն Սթայնբեկից, Էրսկին Կոլդուելից և Վիլյամ Սարոյանից։ Իհարկե, Հակոբ Մնձուրին ևս ծանոթ է այդ բոլորին և դրա փաստերը առկա են նրա «Ժամանակագրություններում», որտեղ խոսվում է վերոհիշյալների ու նրանց ստեղծագործությունների առանձին հերոսների մասին։ Այդ բոլորը նույնպես ձուլված են Մնձուրու անձի ու գործի մեջ։ Եվ դեռևս ինչքան բան կա նրա մեջ համաշխարհային մշակույթի գանձարանից։ Եթե Հակոբ Մնձուրին իր հայրենի եղերքի բնապաշտ գեղանկարիչն է (ձյունանկար, այգենկար, լեռնանկար, գետանկար, դաշտանկար), ապա այստեղ ևս չի կարելի անտեսել այն խոր ազդեցությունը, որ արդեն գրականությանը չէ, այլ գեղանկարչությանը, որ հիշեցնում է իր գույների

---

13 Հակոբ Մնձուրի, Ժամանակագրություն, «Վ. Կոմիկյանի պատմվածքները», «Մարմարա», 19 մարտի 1959, № 5356։

անկաշկանդ սլացքով, վառ, փոթորկուն երանգներով այն մեծ հոլանդացուն, որ XX դարի մեծագույն ազավորասլաշտ նկարիչներից մեկն էր և կոչվեց Վինսենթ Վան Գոգ։

Թե ինչքա՞ն Մնձուրու պատմվածքներն ու մանավանդ հայրենական գյուղանկարները՝ նրա գրչի վրձնահարվածները, հիշեցնում են Վան Գոգին, դա առանձին հարց է, բայց որ նրա գրականությունը հիշեցնում է նկարչությունը, դա փաստ է և այդ փաստի մասին է վկայում սովետահայ մի այլ գրող՝ Ռաֆայել Արամյանը. «Հիշում եմ «Փշատիին ծաղիկը» պատմվածքն էի կարդում Մարտիրոս Սարյանի համար, տարիներ առաջ, իսկ Վարպետը լսում էր ներքին մի հուզմունքով ու երբ վերջացրի, ասաց.— Թեկուզ դու շատ վատ ես կարդում, բայց սա զարմանալի գրող է, ինչ-որ բանով հիշեցնում է Գայֆեճյանին, իսկ ես Գայֆեճյանի նկարչությունը սիրում եմ, սիրում եմ այս գրողին, որն արտաքնապես և ինձ, և Գայֆեճյանին է նման։ Ասում են՝ ինձնից մի քանի տարով է փոքր։ Աստված տա ինձնից երկար ապրի։ Նա պետք է վկայի, նա պետք է վերստեղծի մեր երկիր կորուսյալը ու մենք հենց նրա ստեղծածի ուժով ոչինչ չպետք է կորցնենք»[14]։

Այո, Հակոբ Մնձուրու գրականությունը «հիշեցնում» է և... Մարտիրոս Սարյանին, իսկ դա, երևի արդեն «առանձին հարց» չէ, այդ մասին Վարպետն ինքն է ասել, դեռևս առաջին անգամ ծանոթանալով նրա ոչ այնքան էլ «նկարչական» պատմվածքին։

Միայն մեծ տեսնողը, խորը ընկալող արվեստագետը առանց իմանալու կարող էր տեսնել ու դատել մնացյալի մասին և... չսխալվել։

IV

«Մեր դարը ճշմարիտին ճաշակը ունի։ Գեղեցիկը անկեղծը կուզա։ Մենք իրականությունը կուզենք։ Մեր երազները անդամ մեր ձեռքերովը շոշափածներեն են, մեր աչքերովը տեսածներեն կառնենք»։

Իր ժամանակին Ալֆոնս Դոդեն (1840—1897) ծանոթանալով Ֆրեդերիկ Միստրալի դավառական կյանքից վերցված և Պրովանսի ժողովրդական հերոս Կալանդալին նվիրված վիպերգին, ասել է. «Ինչի՞ս

---

14 Ռ. Արամյան, «Գնաց, անցավ «Կապույտ լույս» լեռան թիկունքը», «Գրական թերթ», 1978, № 6։

է պետք «Կալանդալի» պատմությունը. ամենից վեր, ինչ որ պաշտելի եմ գտնում այս հեղինակության մեջ, գավառական շունչն է, ծովը, լեռը, բնությունը իրենց կենդանի բնանկարներով և ժողովուրդը, որ ազատ է ու հավատավոր, որ գտել է իր մեծագույն բանաստեղծին, նախքան իր անցնող գեղեցկության մահը»։

Այն, ինչ ֆրանսիացի մեծատաղանդ բանաստեղծի մասին ասել է ֆրանսիական դասական գրականության մեծ գրողներից հանրահայտ «Նամակներ իմ հողմաղացից» (1869) գրքի հեղինակը, որտեղ ինքը ևս «արձակ բանաստեղծություններ» հիշեցնող պատմվածքներում քնարական ներշնչանքով պատմել էր իր պրովանսի (գավառի) բնաշխարհի, մարդկանց, բարքերի ու լեգենդների մասին («Հայաստան» հրատարակչությունը Ա. Դոդեից հայերեն լույս է ընծայել «Պատիկը», «Տարասկոնցի Տարտարենը» և վերոհիշյալը 1976 թ.), նույնությամբ կարելի է ասել նաև Հակոբ Մնձուրու ողջ գրականության առնչությամբ, որտեղ տիրողը նույնպես գավառական շունչն է, բնությունն իր կենդանի բնանկարներով և հավատավոր այն ժողովուրդը, որ կոչվում էր արևմտահայություն և, որ հետագայում գտավ իր «բանաստեղծին»՝ արդեն ոչ թե... նախքան իր անցնող գեղեցկության մահը (ֆրանսիայում այլ էր պարագան, գավառը կորցնում էր իր անաղարտությունը քաղաքային կյանքի դյուղ ներխուժումով), այլ «մահից» հետո։

Ա. Դոդեն շարունակել է. «Ինչ փույթ սակայն, գավառը պիտի ապրի Հավիտյան Միստրալի ստեղծագործությունների մեջ։ Բանաստեղծը կարողացել է կանգուն պահել իր ճշմարիտ պալատը և այս պալատը ուրիշ բան չէ, եթե ոչ գավառի լեզուն»։

Կասկածից դուրս է, որ արևմտահայ գավառը նույնպես և Հակոբ Մնձուրունը մասնավորապես, ապրելու է հավիտյան, քանի լինելու և հարատևելու են հայ ժողովուրդն ու նրա գրականությունը և այս նաև նրա համար, որ ինչպես Միստրալը ֆրանսիական գրականությունում, Մնձուրին իր սեփականում կարողացավ կանգուն պահել ճշմարիտ այն պալատը, որ կոչվում է գավառի լեզու։

Ի դեպ, այդ լեզվի (բարբառի) մասին։ Մեր նախորդ հոդվածներում հիշատակված Վ. Դավթյան-Հր. Մաթևոսյան զրույցում («Գրական թերթ») կա այսպիսի երկխոսություն.

Հր. Մաթևոսյան. «Նրա լեզուն իրոք կարելի է բարբառ կոչել, բայց դրա տակ չենթադրելով այն տարբերիչը գրական լեզվից, որը, ի վերջո, ընթերցողին ինչ-որ խորթ հեռավորության վրա է պահում, չի թողնում մոտենալ գործի բուն էությանը։

Մնձուրու բարբառը նույնպես հարազատանում է ինձ, ես սիրում եմ նրա աշխարհի հետ նրա բարբառը, այդ բարբառի ելևէջումը նույնպես, որը ինչ-որ տեղ ինձ մի քիչ անհասկանալի է մնում, բայց բոլորովին չի խանգարում մտնելու ու թաթախվելու նրա հոյակապ աշխարհի բույրերով ու գույներով, ամենևին, այդ բարբառի շնորհիվ, ես ընդգծում եմ՝ նույնիսկ շնորհիվ, Մնձուրու և բոլոր ծննդավայր աշխարհն ինձ համար մնում են մի տեսակ մոտիկ հնում, որին ահա-ահա կհասնես, բայց չես հասնում, խոսքն ինձ է վերաբերում, այդ աշխարհը մընում է կարոտելի հեռավորության վրա, ինչը որ ինձ արվեստի անհրաժեշտ պայման է թվում։

Վ. Դավթյան. Զարմանալի է, բայց այդ բարբառը, որը լավ գիտեմ և մերոնց հետ մինչև հիմա էլ դրանով եմ խոսում, իմ մեջ էլ համարյա նույն զգացողությունն է ծնում... Մնձուրու էջերում հանդիպելով այդ բառ ու բանին, սկսում եմ տեսնել մի իրական, բայց և երազային, բանաստեղծական աշխարհ, մեծարենցյան աշխարհ... Ու թերևս այստեղ բարբառի հարց չէ, այդ բնականության, ինչ բնական է, բանաստեղծական է նաև։ Ոչ, իր արձակ էջերում, Մնձուրին բանաստեղծելու մի տոմմներ չունի, նա պարզապես նկարում է Նիրատի հովիտը, նկարում պարզ, անպաճույճ, անհամակնոտ, նույնիսկ միամիտ, բայց վերջնական հաշվում ստացվում է մի մեծ, անընդմեջ բանաստեղծություն, բանաստեղծական մի աշխարհ, որ Մեծարենցի «Ջրաստրի», «Տապի նոպաների», «Գյուղանկարի», «Աղբյուրեն դարձի» (երևի՝ «Ջուրեն դարձին»—Դ. Ս.) նույն աշխարհն է՝ բեկված այլ անհատականության, այլ հայացքի մեջ»։

Ալֆոնս Դոդեի, Հր. Մաթևոսյանի և Վ. Դավթյանի ելույթությունների նմանության եզրերը, առաջինը՝ Ֆրեդերիկ Միստրալի, վերջիններիը՝ Հակոբ Մնձուրու մասին շատ են միանման, գրեթե միանման, թեպետ առաջինը խոսում է բանաստեղծի, Վ. Դավթյանն ու Հր. Մաթևոսյանը խոսում են արձակագրի մասին։ Նմանության հիմնական եզրերը «բանաստեղծական աշխարհն» և այդ աշխարհը վերարտադրող լեզվի մասին են, որ Մնձուրու պարագայում զարմանալիորեն զուգահեռվում է Մեծարենցյան բանաստեղծությանը։ Ֆրեդերիկ Միստրալից... Միսաք Մեծարենց, Ալֆոնս Դոդեից... Հակոբ Մնձուրի։ Եթե այդ աշխարհը ֆրանսիացին ֆրանսիացու մոտ բանաստեղծական ոլորտի մաս կազմող «վիպերգ-պոեմայում» է դտել, վերջիններիը այն տեսնում են մնձուրիական պատմվածքներում (ի դեպ, Ալֆոնս Դոդեի «Նամակ-

պատմվածքներում» էլ նույնն է պարագան և Հակոբ Մնձուրին լավ գիտեր ֆրանսիական գրականությունը, կասկած չկա, ծանոթ էր, յուրացրել էր նաև Դոդեին ու Միստրալին) իհարկե, ոչ առանձին պատմվածքներում, այլ ամբողջականության մեջ, որ Հակոբ Մնձուրու մոտ դառնում է մի խոշոր վեպ-վիպերգ։

Եվ իսկապես էլ, Հակոբ Մնձուրու երկու հարյուր հիսունի սահմաններին հասնող պատմվածքները օղակներն են, ենթագլուխները մի ամբողջական վեպի, որ գտել են իրենց հարազատ, «մեծագույն» հեղինակին, որպեսզի այն դառնա ավելին՝ վեպ Արմտանի մասին կամ ինչպես Շահան Շահնուրն է կոչել իր «Նահանջն առանց երգին» երկրորդ ենթախորագրով՝ «Պատկերազարդ պատմություն հայոց», դառնա «պատկերազարդ պատմություն արևմտահայ գյուղի»։

Ճիշտ է, Հակոբ Մնձուրին առանձին երևույթ չէ արևմտահայ «գավառական» գրականությունում, ոչ էլ սփյուռքահայ գրականությունում, նա ունի իր նախորդներն ու ժամանակակիցները, ինչպես տեսանք, բայց նա իր անձով ու գործով (արվեստով) հիմնովին յուրօրինակ է անցյալի ու ներկայի գյուղագիրներից և յուրահատուկ։ Նախ՝ իր ամբողջական նվիրումով ու միաձուլումով թեմային, նույնացումով նրա հետ։ Հակոբ Մնձուրին ինքը՝ Արմտանն է, ինքը, առանձին վերցրած, իր կյանքի վեպով՝ պատկերազարդ պատմությունը արևմտահայ գյուղացու։ Եվ եթե վեպ է, ամբողջական մի վեպ նրա ողջ ստեղծագործությունը և սա նաև նրա համար, որ Մնձուրին կամ իր հերոսը չի վերջանում մի պատմվածքում (թեպետ մի առանձին պատմվածքն էլ ամբողջ է ինքնին), այլ անցնում է պատմվածքից պատմվածք (ինքը և իր հերոսներից շատերը, նույնիսկ երբեմն ինքնիրեն կամ իր հերոսներից ոմանց կրկնելու գնով) ու մի նոր շերտ ավելացնում նախորդի վրա, մի նոր դուռ բացում, որտեղ ի հայտ են գալիս նոր մանրամասներ, հոգեբանական նոր ծալքեր, և այսպես այդ բոլորը դառնում են ամբողջական, երբ ընթերցվում են լրիվ։ Երբ վերջացնում ես բոլորը, գյուղի այր մարդիկ, հարսները, մայրերը, այսինքն՝ գործող հերոսները (տասնյակներ) և դեռևս ոչ միայն նրանք, այլև անասունները, քարերը, լեռները, ձորերը, ընությունը իր առանձին շերտերով, նոր միայն դառնում են ամբողջական, յուրաքանչյուրն առանձին-առանձին՝ վերցրած մի կատարյալ «հերոս», որ վեպի, այդ Արմտան կոչվող վեպի, գլխավոր հերոսների ամբողջությունն են կազմում։ Եռոտանին։ Ա.—մարդիկ, Բ—անասուններ, Գ—բնություն։ Իսկ նման երևույթ չկա ու չի եղել նախքան Հակոբ Մնձուրին մեր գրականությունում, և ոչ էլ նրա ապրած

ժամանակաշրջանում, իսկ դրանից հետո, սփյուռքահայ գրականությունում նման բան սպասել և հուսալ, պարզապես դուրս է իրականությունից։

«Մեր դարը ճշմարիտին ճաշակը ունի», «մեր երազները անգամ մեր ձեռքերովը շոշափածներեն, մեր աչքերովը տեսածներեն կառնենք», ասել է Մնձուրին։ Թերևս այստեղ պակասում է մի կարևոր և առաջնային գործոն ևս, հարկ է ավելացնել և... երևակայականի, երևակայվածի բաժինը գրականության մեջ, որ անխուսափելի է գրողի համար։ Բայց Հակոբ Մնձուրին այդ մեկը շեշտելու կարիքը չի զգացել, որովհետև նրա գրականության մեջ երևակայականը նույնպես ամբողջովին գրավել է իրականի, «ճշմարիտին» տեղը, որովհետև այդ երևակայականը նույնպես բնական է և «ինչ բնական է, բանաստեղծական է նաև»։

Վերջապես, իր ժամանակին ռուսական գրականության մեծ դասականներից մեկը՝ Գոգոլը, նույնպես հայտնել է նույնանման տեսակետ. «Ես ոչինչ չեմ ստեղծել երևակայությամբ և չեմ ունեցել այդ առավելությունը։ Ինձ մոտ լոկ այն է լավ ստացվել, ինչը վերցրել եմ իրականությունից»։

Բայց մի՞թե կարելի է բաժանել այդ տեսակետը և պնդել, որ «Մեռած հոգիների» հեղինակը լրիվ հրաժարվել է երևակայության գոգոլյան տաղանդից, որ այնքան է եղել մոտ իրականությանը՝ նրա «գունազարդումը» այնքան հերոսներին մոտեցրել է առավել ճշմարիտին (ճշմարտանմանին), որ ստացվել է այն բնականը, որ երևակայության գործոնով այս դեպքում նույնպես դառնում է «բանաստեղծական» իրականություն։ Լուսավառված իրականություն, իրականություն՝ լուսավորված ներսից։

Այստեղ հետաքրքիր է նշել ստամբուլահայ գրող-դրաքննադատի կարծիքը Հակոբ Մնձուրու մասին. «Մնձուրին—Կալին դարը—անուն պատմվածք մը ունի, օրինակի համար։ Որքան ապրող պատկերներով կենկարագրն հոն հղի կնոջ մը վրա լեռան փլչիլը, տխուր լուրին գյուղ հասնիլը, գյուղացիներուն իրարանցումը և, վերջապես, կնոջ փրկվիլը։ Կըսեք որ հեղինակն ալ հավանաբար կգտնվեր այդ խուճապահար գյուղացիներուն մեջ, բայց պատմվածքին վերջին տողերը անակնկալի կբերեն ձեզ։ Մնձուրի, կարծես ձեր միամտության վրա խնդալով կգրե թե այդ կինը ուրիշ մեկը չէ եթե ոչ իր մայրը։ «Ինձմով իր վերջին ամսվան մեջ հղի եղեր էր, կըսեն, դեպքեն քսանհինգ օր վերջ ես աշխարհ եկեր եմ, բառ առ բառ իմ պատմությունս է աս»։ Երբ այս տո-

ղերը կկարդաք, հանկարծ մշուշը կփարատի ձեր աչքերուն առջև և կանդրադառնաք թե Մնձուրի, անդիմադրելաբար, իր արվեստին զաղտնիքը կհանձնե ձեզի։ Այո, բառ առ բառ իր պատմությունն էր ան, բայց ինք չէր տեսած այդ դեպքը ուրեմն, տարիներ վերջ լսած էր միայն և հիմա որքան համոզիչ տողերով կնկարագրե զայն։ Իր ստեղծագործողի տաղանդը ինչպես դույն ու ապրում կդներ դեպքի մը զոր չէր տեսած։ Ուրեմն նույնը կըներ, կամ կրնար ընել նաև մյուս պատմվածքներուն մեջ։ Պապուճանը Մնձուրիին դիմաց նստած չէր անշուշտ, երբ ան Բամամ մամային բերած ճաշը այնքան ախորժակով կերած էր։ Բայց ի՞նչ հոյակապ նկարագրություն մը ծնած է անկե։ Հարյուր ականատեսներ, քով քովի գալով, պիտի չկրնային զայն պատկերացնել այնքան ուժեղ կերպով, որքան կընե մեր հեղինակը։ Որովհետև այս վերջինը գյուղին սովորական մեկ բնակիչը չէ, այլ Հակոբ Մնձուրին է։ Որովհետև ան շատ բան կավելցնե պատմական այն սովորական, այն աննշան դեպքին կամ դեմքին վրա, որուն մասին կխոսի։ Որքան կուզե թող ըսե թե իր պատմվածքներուն մեջ իր գյուղը, իր Արմտանը գրած է, թե իր պատմվածքներուն մեջ բառ առ բառ իր կենսագրությունը կա, մենք գիտենք սակայն, թե ան հոն դրած է նաև իր երևակայությունը, իր պոռթկացող տաղանդը (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։ Եթե այդպես չըլլար, ոչ Տեմիրճենց Հակոբը Հակոբ Մնձուրի մը կըլլար այսօր, ոչ ալ իր գործը՝ արվեստ, գրականություն»[1]։

Բացառապես իրավացի է գրադատը։ Մնձուրին իր գրականության մեջ դրած է նաև իր երևակայությունը, իր պոռթկացող տաղանդը, որ արդյունք է իրականության, մեր դարի բարձր ճաշակին, որից հետո... «գեղեցիկը կուգա»։ Թերևս հենց նրա համար, որ բնականությունը, բնականը, որ բանաստեղծական է նաև, ինքնին գեղեցիկն է։ Եվ եթե չլիներ դա, իրավամբ Տեմուրճենց Հակոբը չէր լինի... Հակոբ Մնձուրի։ Մնձուրիականը նման չէր լինի մեծարենցյանին։ Բայց այստեղ ևս մի՞թե անցկացվող զուգահեռը այն բանի արդյունքը չէ, որ—բնորոշվում է այն ճշմարիտ սիրով, այն չափ ու կշռով, որ վերաբերում է երկրին, հողին, նրա գեղեցկությանը։ Եվ չէ որ Մեծարենցն ու Մնձուրին նայել են երկուսով նույն երկրին, նույն հողին ու բնությանը, ձգտել են նույնին։ Երևի Մնձուրու վիպերգը նման կլիներ միստրալյան պոեմին, Դոդեի «Նամակներին», եթե Մնձուրու աչքերն ու սիրտը հակված լիներին

---

1 Ռոբերտ Հատտենյան, *Մնձուրին և իր Արմտանը*, «Մարմարա», Ստամբուլ, 2 մարտի 1967, № 8218։

ֆրանսիական միստրալյան Պրովանսի բնությանը, Ալֆոնս Դոդեի գավառին, հողին ու մարդկանց։ Բնության մնձուրիական գյուղանկարների «վրձնահարումները» նման են, հիշեցնում են Վան Գոգին կամ Մարտիրոս Սարյանին, որովհետև բնությունը հասարակաց շատ կողմեր ունի արևով շիկացած ժայռերի ու արտերի վրա, լինի դա Միջերկրականի ափին, ծովեզերի գյուղ ու դաշտերում, թե Հայաստանի բարձրաբերձ լեռներում կամ Արարատյան դաշտավայրում, կամ էլ Արևմտյան Հայաստանի «անցյալի»՝ Արմտանում։ Եվ չէ՞ որ բնորդ Երկիրը, ինչպես բնորդ կինը, աշխարհի թեկուզ տարբեր մասերում, որոշ կողմերով նույնն է դրեթե, հիշեցնում է մեկը մյուսին, նույնն է ու տարբեր իր մանրամասներով, տարբեր, բայց և միաժամանակ, նման։ Այստեղ առավել էականը տեսնող աչքն է, լսող սրտի ներքին «տրոփը» և այն, թե ասենք դու Հայաստան աշխարհին կնայես Մարտիրոս Սարյանի վառ, ամառային կիզված սիրով, թե Հակոբ Հակոբյանի աշնանային այրող թախիծով, թե որտեղի՞ց կվերցնես քո բնորդին, ի՞նչ դիրք ու կեցվածքով, ի՞նչ ներքին բովանդակության նախասիրությամբ։ Բայց չէ՞ որ Հայաստան աշխարհը երկու դեպքում էլ նույն Հայաստան աշխարհն է... Մի խոսքով հարցի եղրահանգումը նույնն է, ինչ էր սկզբում. հիմնականը սերն է, «վերստեղծող անհատի սերը, սիրո չափը» և եթե մեծ է այդ սերը, յուրօրինակ սարյանական, թե հակոբյանական, ուրեմն այդ մեծ սիրով ոգեշնչված վերստեղծողին՝ լինի դա Միսաք Մնձարենց, թե Հակոբ Մնձուրի, չես կարող շփոթել ոչ մի ուրիշ բանաստեղծի, ոչ մի ուրիշ արձակագրի հետ։ Իսկ հանգել նման եղրակացության, նշանակում է բարձր գնահատել վերստեղծողի, արարողի, արվեստագետի տեղն ու դերը տվյալ դրականության, նկարչության կամ երաժշտության ու արձանագործության մեջ և այլն։ Հակոբ Մնձուրին նման արվեստագետ գրողներից է։

«Գյուղի տեսարաններս իմ մեծագույն ներշնչարանս կկազմեն, որքա՜ն կցավեմ, որ էապես իրենց զավակը չեմ իմ բանաստեղծությանս մեջ. այն ատեն ավելի ինքնատիպ ու ապրող կըլլայի»[2],—գրել է Մեծարենցը 1907 թ. նամակներից մեկում։ Իհարկե, չափազանցրել է, բայց փաստ է և իրավացի, որ «ավելի ինքնատիպ ու ապրող» լինելու հանգամանքը նկատել է բանաստեղծություններում «էապես գյուղի զավակ» լինելու մեջ։ Իր անձի օրինակով գյուղին ձգտող, արմատը գյուղում, հողում, երկրում եղող գրողներին է նկատի ունեցել։ Իսկ Հակոբ

2 Մ. Մեծարենց, *Ոսկի արիշին տակ*, 1933, էջ 152։

Մնձուրին իր գրականությունում, իննսուներկու տարեկան հասակում նույնիսկ, այն էլ Ստամբուլում ապրելով ավելի քան յոթանասուն տարի, անդավաճան մնաց իր արմատին, հանդիսացավ էապես գյուղի զավակ, բացառապես արմատանցի և դրա համար էլ դարձավ ավելի «ինքնատիպ ու ապրող», քան իր նախորդներն ու ժամանակակիցները, որոնք ապրեցին ու կապրեն մեր գրականությունում։

«Քաղաքային տեսարանները նրա բանաստեղծության համար նյութ չտվեցին, մեծ քաղաքն այդպես էլ չկարողացավ գրավել նրա սիրտը, որը միշտ բաբախեց գյուղական կյանքի և բնության կարոտով ու սիրով»[3],— նկատել է Միսաք Մեծարենցի կյանքի ու ստեղծության լավագույն մեկնաբաններից մեկը՝ Էդվարդ Ջրբաշյանը։

Հակոբ Մնձուրու պարագան թերևս մի քիչ տարբեր էր։ Քաղաքային տեսարանները նրա գրականությանը նյութ մատակարարեցին, մեծ քաղաքը չանաց գրավել նրա սիրտը, բայց... այդ նյութը, որ մշակեց Մընձուրին («Ստամբուլը տվի») չհասավ երբեք այն մյուսի բարձրությանը (Արմատանի), հանդիսացավ միջանկյալ միայն, երկրորդական արվեստի արտահայտություն ու միայն որոշ «հանգստի պահեր» պարգևեց նրան։ Այո, Հակոբ Մնձուրու սիրտը, հակառակ քաղաքի կյանքի հետ ունեցած երկար տարիների մտերմության, տարիների, տասնամյակների սովորությանը, «միշտ բաբախեց գյուղական կյանքի ու բնության կարոտով ու սիրով»։ Այդտեղ էր Հակոբ Մնձուրին։ Այդտեղ էր նրա մեծության գաղտնիքը։

Մի այլ հանգամանք ևս, որ նույնպես Էդ. Ջրբաշյանն է նկատել Մեծարենցի մոտ. «բնության փիլիսոփայությունը թափանցում է նրա ամբողջ հասարակական և գեղարվեստական մտածողության մեջ, դառնում է երևույթների պատկերման և գեղագիտական գնահատման հիմնական չափանիշներից մեկը։ Մեծարենցի ստեղծագործության գեղարվեստական շատ գծեր, նրա հումանիզմը, որ բանաստեղծի աշխարհայացքի հիմնական բովանդակությունն է կազմում, լրիվ չեն կարող հասկացվել, առանց նկատի առնելու բնության ընկալման յուրահատկությունները»[4]։

«Մեծարենցը—իր ստեղծագործական կյանքի երկրորդ՝ «գիտակից ու ինքնավստահ» շրջանը—այդ շրջանի հիմնական նորություններից ու նվաճումներից մեկը տեսնում էր մարդկային զգացմունքների և բը-

---

3 Էդվարդ Ջրբաշյան, *Միսաք Մեծարենց*, Երևան, 1977, էջ 84։

4 Նույն տեղում, էջ 76—77։

նության տեսարանների օրգանական միասնության հասնելու մեջ»[5]։

Վերը մեջբերվածները ամբողջությամբ կարելի է կրկնել և Հակոբ Մնձուրու վերաբերյալ։ Բայց մի՞թե միայն Մնձուրու, ոչ միայն նրա, այլև, ասենք, Ռուբեն Զարդարյանի և հայ գրականության շատ ուրիշ ներկայացուցիչների մասին և... հայ միջնադարից մինչև... ինչու՞ չէ, մինչև ֆրանսիական, ռուսական դասական գրականության խոշորագույն ներկայացուցիչները։ Բայց հետաքրքիր է Մեծարենց—Մնձուրի զուգահեռը մասնավորապես «Այգերգի» հետ, չհաշված «Տապի նոպաները», որտեղից ինչքա՞ն նմանություններ են առկա Մնձուրու գրականությունում։

«Կիրճին խորը, ժայռին ծոցն է գյուղանկարը փռված,
Տարտամորեն, հսկայական, արծիվի մը ձևերով,
Մագիլները խորասուզված խորշերու մեջ մրթամած»։

Սա Մեծարենցի «Այգերգից» է. ահա Մնձուրունը «Արմտանի այգիներից»։

«Ապառաժներ են։ Մեկը, ամենամեծը կատաղի վագրի մը կնմանի, որ բերանը բացեր է։ Վարեն ալ կապտագույն կերևա, քովը կհասնիս, որ կպրագույն է»[6]։

Մի՞թե նմանության թաքնված եզրեր չկան Մեծարենցի «Գետափի երազանքի» և Մնձուրու «Գետանկարի» միջև, որը կարծես Մեծարենցի տողերի «լուծությունից» է ձև առնում։

«Գյուղն համորեն կը մրափե ծոցն արևոտ ժայռերուն,
Տիվանդորրի պահն ըմպած է մեղկ հեշտություն մի սյուքի
Որ ջուրերուն վրա կը ցանե գինովի դողն իր թրթռուն,
Գետն համբույրի մը երազով դեպի ափունք կը թեքի։
Գետեղերյա ծառաստաններ, միջօրեատքի այս պահուն,
Ինձ անծանոթ թավուտներու կը խրկեն բույրն հեշտանքի,
Որ համբորեն կը ծավալի ծաղիկներեն այն լեռուն,
Ասդին անդին տարտղնված՝ որոնց հոգին կը ցամքի»։

Իսկ Մեծարենցի «չասածը», նրա «լռության» տակ թաքնվածը. «Գետեղերքի մոշիները պատժված տղոց պես կայներ են։ Իրենց մեծերուն պես մինչև կրունկները փեշով են։ Գետը շուտ շուտ կվերցնե իրենց փեշերը («Գետն համբույրի մը երազով դեպի ափունք կը թեքի») կխաղա անոնց հետ, իրենք ալ ատ չեն ուզեր, կամչնան, ամոթ է,

---

5 Նույն տեղում, էջ 77։

6 Հակոբ Մնձուրի, Կոմնկ, ուստի՞ կուգաս, «Արմտանի այգիները», էջ 194։

մինչև ծունկներին կծռին գետին մեջ, աղջիկներու պես վար կքաշեն, որ մարդ չտեսնե»[7]։

Եվ եթե Մնձարենցի մի այլ բանաստեղծությունում հովը շնչավորված է, ինչպես վերևում մոշիները մարդացած և դարձած չարաճճի աղջիկ, ապա Մնձուրու մոտ մոշիներն են աղջիկները, այն տարբերությամբ, որ առաջինի համար «հանդուգն» աղջիկը, որ չարաճճի խաղի է ելած բանաստեղծի հոգու հետ, Մնձուրու մոտ ամոթխած է ու «վար կքաշե» փեղերը... գետի հանդգնությունից։ Չհաշված, որ վերի բանաստեղծությունում և նրան զուգահեռվող արձակում գետերը երկուսի մոտ էլ նույնպես շնչավորված ու մարդացած են, համբույրի կարոտ, առաջինում՝ պասսիվ, երկրորդում՝ ակտիվ դերում...

Նմանությունները, որոնց քանակը կարելի է հեշտությամբ կրկնապատկել, քառապատկել, տասնապատկել, երբեք չեն խոսում, ընդհանրապես, այս կամ այն հեղինակից, թեկուզ խոշորագույն, կրված ուղղակի կամ անուղղակի ազդեցությունների մասին, այլ հաստատում են այն ճշմարտությունը, որի որոշիչը այն մեծ սիրո չափ ու կշիռն է, որ ծնունդ է առնում անհատի հոգու ու սրտի մեջ իր երկրի հողի նկատմամբ։ Եվ եթե այդ նմանությունները ոչ թե եղակի են, ինչպես Լբոնա դը Լիլի «Միջօրե» և Մնձարենցի «Տապի նոպաների» դեպքում, այլ շատ են իրար հիշեցնում՝ Մնձուրի—Մնձարենց զուգահեռում, դա բացատրվում է նրանով, որ երկուսն էլ նույն դավառից են և, ինչպես ասել ենք, նույն աչքով ու սրտով են նայել նույն հողին, մարդկանց ու բնությանը, տառապանքի նույն, կարոտի նույն հորձանուտում, որ նույնպես շատ է հատկանշական և կարևոր։

Եվ ի՞նչը կարող էր տարբեր լինել այդ նայվածքներում... Թերևս միայն այն, որ եղել է, ու եթե մեկի համար դյուղանկարը հիշեցրել է «արծվի մը ձևերը», երկրորդի համար՝ մի այլ գիշատիչի՝ «վագրի մը կնմանի» և վերջապես հենց «Տապի նոպաներում».

«Ջրաշոդին գետին վրայեն ամպանման կը բարձրանա,
Կը փողփողին լաղվարթ դույներ ճամփան ի վար կապույտ
դարին,
Շինականներ արևահար, ծերունի մը դյուղակ տարին,
Արեգակի բորբ ընձյուղներ կայրեն ամեն իր անխընա»։

Բայց չէ՞ որ այդ «Կապույտ դարը» հենց Մնձուրու «Կավին դարը» պատմվածքի մեջ հայտնի լեռան է նման, որի տակ, երկրորդ դեպքում

7 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Գետանկար», էջ 296։

շինականները, հենց նույն շինականները թերևս, ոչ թե արևահարված «ծերունի մը դյուղակ տարին», այլ հենց Մնձուրու մորը, Տեմուրճենց հարսին, որ «Կալին դարը հողին տակ մնաց»։ Եթե «Կալին դարը» «Կապույտ դարը» չէ, ուրեմն դա հենց նա է, որ Մնձուրին խորագրեց իր պատմվածքների առաջին «Կապույտ լույս» ժողովածուն, անունով իր հայրենի՝ «Կապույտ լույս» լեռան։

«Մեր բուն լեռը «Կապույտ լույսն» է, հոն որ գալու ըլլաս մեր Արմտանները կերևան», ասել է Մնձուրին։

Իսկ «Իմ գավառիս թուրքերենը» և «Արմտանի այգիները» պատմվածքներում գրել է հետևյալները, որոնք, իրար միացնելով, կազմում են մեր ներկա ենթադրության տխուր, ողբերգական վերջնակետը։

Առաջինը՝

«Հիմա Դիվրիկին եկող շոգեկառքերու կառաշարները հոսկե Եփրատին վրա կապված կամուրջեն դեմի ափը կանցնին, հոնկե ալ Մեծարենցին ծնած գյուղեն՝ Բինկյանին տակեն Լիճք, այսինքն Իլիճ կերթան, որ իմ հայրենի բարձրավանդակին դիմացը կիյնա ու անոր կայարանն է։ Լիճքին ալ Քիմախ, Երզնկա, Կարս կուղղվեն» (էջ 65)։

Երկրորդը՝

«Հիմա շոգեկառքը դեմի ափեն կանցնի։ Եփրատեն։ Լիճքեն։ Հիմակվան անունով Ըլըճեն։ Պոռանք մեր ձայնը հոն կհասնի։ Հիմա մենք ափարթման կշիններ, հարկեր կգնենք Ստամբուլի մեջ» (201)։

Հիմա մենք ափարթման (բարձրահարկ շենքեր) կշիններ, հարկեր (այդ շենքերում առանձին հարկարաժիններ) կգնենք... Կրկնակի է ողբերգական... Բայց եթե «պոռանք մեր ձայնը հոն կհասնի», երևի կհասնի և դա արդեն շատ, շատ է տխուր։

ԳԼՈՒԽ Բ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՄԱՅՔԸ

I

«Ես պետք է, որ անոնք շարունակեմ, մեր երեկին մարդիկը, գեղքերը, իրերը տամ։ Դուք կախորժի՞ք, այո՞, ո՞չ, ի՞նչ գիտնամ»։

«Բայց սա կա, որ մարդ անգամ մը չբռնվի գրականութենեն։ Անկե ետք իր ձեռքը չէ, չի կրնար ձգել։ Օդին կձգե։ Կրնա։ Ծխելն ալ կձգե։ Ան ալ կրնա։ Մարդ մը իր կնիկն ալ կձգե։ Գրելը չի կրնար։ Քաղքենին՝ բուրժուան՝ հաշվի մարդը՝ փղշտացին չպիտի հասկնա ասիկա»։

Երբ ծանոթանում ես Մնձուրու գրականությանը, թվում է, թե ծանոթ գիրք ես կարդում, գիտեիր, ինչ որ տեղից ճանաչում էիր նրան։ Նույնիսկ քեզ անհայտ ու անծանոթ Արմտանը հարազատ է թվում։ Դա արդյունք է, առաջին հերթին, այն ջերմ շունչ ու պատմելաձևի, մնձուրիական ոճական այն առանձնահատկությունների, որ իրենն է միայն, բացառապես իրը, բայց և այնպես, մեր անցյալի գյուղինը, որ արյան ճանապարհով անցել է քեզ, եթե դու նույնիսկ երբևէ չես ապրել գյուղում և երբևէ չես կարոտել նրան ու չես էլ կարոտում։ Հակոբ Մընձուրու գրականության ակունքներից մեկը՝ այդ զլխագիր կարոտը, այդ գրականությանը ծանոթանալուց հետո, անցնում է նաև քեզ։

Մնձուրու գրականության մեջ գյուղացին իր անասունի հետ խոսում է հարազատի նման, նրա հասցեին շռայլում նույն, կամ նույնիսկ ավելի, քնքշանքի ու սիրո այն բառերը, ինչպես, ասենք, պիտի ասեր իր զավակին կամ կնոջը ու դու չես զարմանում կամ ծիծաղում, եթե երբևէ գյուղի զավակ էլ չես եղել, որովհետև գիտես, լսել կամ կարդա-

գել ես, որ անասունը գյուղացու առաջին օժանդակն է եղել, հարազատը։

Մնձուրի կարդալով միայն առավել լավ ես ըմբռնում մեծ Կոմիտասին և չես կարող չհուզվել այն ժողովրդի զգացական խորության նկատմամբ, որ քոնն է եղել, եթե դու հայ ես, որ երգել է հորովել ու եղանն ասել... աղբեր ջան։

Մի՞թե եղանը աղբեր ջան ասող գյուղացու հոգվույն մեջ չկա դարերից եկող մեր ժողովրդի առաքինության ու իրեն ձեռք մեկնողին վարձահատույց լինելու լավագույն հատկանիշներից մեկը, իր բեռը թեթևացնող թեկուզ կենդանու հետ «եղբայրանալու» մի խորին ինքնամոռացում, որ միայն կարող է մտածել տալ։ Այստեղ կա և հայ գյուղացու խոր հումանիզմը, մեծ սերը, այսպես ասած «աստծու» ստեղծած բոլոր շնչավորների նկատմամբ, լինեն նրանք մարդ, թե անասուն, ծառ կամ ծաղիկ։ Մնձուրու հերոսները՝ մայրերն ու հարսներն են իր գյուղի (ի դեպ, Մնձուրու բարբառում հարսիկ ասելով պիտի հասկանալ մայր, իսկ մայր հասկացողության տակ տեսնել՝ մեծ մորը, տատին), որոնք «ինչեր որ քաշեցին անոնք սուրբերը չքաշեցին։ Հռիփսիմեները, Գայանեները, ավելի չչարչարվեցան սուրբ ըլլալու համար» («Մեր մայրերը»)։ Այրերը, որոնք մինչև ծերանալը մեծ մասամբ զարիրության են դնում և չորս-հինգ տարին մեկ, այն էլ լավագույն դեպքում, վերադառնում գյուղ, կրկին դնալու համար, կարոտ՝ իրենց հարազատներին, կանանց ու հաճախ ու միշտ, իրենց բացակայությամբ մեծացած որդիներին («Նազար», «Ըստամբուլ», «Սիլա»)։ Մնձուրու գյուղում խոր արմատներ ունի անահավատությունը, կրոնական մոլեռանդությունը, որից միայն վնասվում և ծիծաղելի կացությունների, հաճախ աղետ ու ողբերգությունների մեջ են ընկնում, այսպես ասած, նվիրյալներն ու հավատացյալները («Ալերուն հարսնիքը», «Էլմա կիպի բեյվագը յեմեզ քի, ե՞հ՞ո՞», «Քռիկի բաղարջ»)։ Իհարկե, գործող գլխավոր հերոսներից մեկն են նաև գյուղի աղան կամ աղաներն ու վաշխառուները, որոնք անհոգի են, անխիղճ ու անտարբեր խեղճի ու թշվառի կարիքների նկատմամբ, որոնք կարող են խժռել ու հարբել ու սոված թողնել իրենց իսկ աչքի առաջ, իրենց իսկ ծառայող համագյուղացուն և ավելին, նույնիսկ ձեռ առնել նրան («Կոզիկ», «Քենը»), անարդար են, անկուշտ («Տուրսուն էֆենդին», «Մարտո»), այդ բոլոր աղաները կամ գրեթե մեծ տոկոսը նրանց, անբարո են, հարգալից հեռավորություն չեն պահում նույնիսկ իրենց ծանոթ, նույն դասակարգի մարդու կնոջ նկատմամբ, իսկ անտեր ու անօգնական կանանց հան-

դեպ ցինիկ են ու հանդուգն և եթե «հոգատար» են իրենց իսկ հղիացրած ապօրինի աղջկա կամ կնոջ հանդեպ, ապա նրա համար, որ այս վերջինին ամուսնացնելով մի խեղճ գյուղացու հետ, ծածկեն իրենց իսկ անբարոյությունը («Երկայն թևերով Նշանը»)։ Դեռևս գյուղական այդ կյանքում մեծ է տեղն ու դերը սեռական առողջ, բայց հաճախ անառողջ, չբողարկված պոռթկուն բնազդների, որ հետաքրքրում է կամ նրանով տարվում են ոչ միայն տղաները, ամուրի երիտասարդները, ամուսնացած մարդիկ, այլև պատանիները, որոնք կա՛մ մղվում են անբարո արարքների, կա՛մ, լավագույն դեպքում, իրենց տարիքին ոչ սազական, թաքուն, աշխույժ խոսակցությունների։ Ի դեպ, դա գյուղական, այն էլ իր տղամարդիկը դեռ նոր ամուսնացած կամ ամուրի, զարթնության ուղարկող, տղամարդկանց մեծ մասից դատարկված գավառների տիպական ցավն ու ողբերգությունն է։ Եվ այդ նաև նրա համար, որ մշակութային կյանքից, գրեթե որևէ հասարակական հետաքրքրություններից հեռու կանգնած այդ գավառ ու գյուղերում, մասնավորապես ձմռան անաշխատ օրերին, առաջ է քաշվում սեռականը որպես հոգեկան ապրումների միակ ու առաջնային գործոն։ Մնձուրին չի խուսափել նաև այդ պրոբլեմից և իր գրականությունում, քողարկված կամ բացահայտ, խոսել ու գրել է այդ մասին։ Եվ եթե նրա գրականության մեջ այդ թեման մեծ տեղ է գրավում, դա նրա համար, որ հենց թեման ինքը գյուղական կյանքում մեծ տեղ է գրավել։ Մնձուրին թերևս միակ գրողն է ափյուռքահայ և արևմտահայ գրականությունում, որ ամենից շատ և բարձր արվեստով, առանց գռեհկացնելու իր նյութը, անդրադարձել է կյանքի հիմքերից մեկը կազմող այդ նյութին, մի բան, որ գրեթե լրիվ բացակայում է իր մեծ ժամանակակից՝ Համաստեղի արձակից նույնպես («Բոպիկ ոտքերով Մկրտիչը», «Հայ ուզելու պես», «Էյուպ աղան», «Երեկ ո՞ւր էիր», «Գարնան ճամբով», «Համբ», «Ցորնիկին Գրիգորը», «Քնռիին տունը», «Ջիմառու աստված, վար եկուր», «Երկայն սեխերով Աղիկը», «Երկայն թևերով Նշանը», «Գյուղի տղայությունն», «Աղաճան Ամուին էլմասը», «Ավետենց աղջիկը», «Փշատիին ծաղիկը» և այլն)։

Հակոբ Մնձուրին իր ստեղծագործություններում նկարագրել է նաև գավառում տարածված մանր ու մեծ զողություններն ու կազմակերպված ելուզակությունները։ (Այս վերջինների հերոսները մեծ մասամբ հարևան այլազգի գյուղերից են)։ Եվ դրանք, այդ զողերն ու ելուզակները սարսափիր, ահի մթնոլորտ էին ստեղծում գավառում և շրջակայքում («Մախսո», «Աղային տղան» «Անոթությունը», «Տղաքը», «Բիրի-

տեսնցի Տիմիթը», «Թանկի ականջներով այծը», «Ոսկիները» և այլն)։

Մնձուրու հերոսների մեջ մեծ կշիռ ու տեղ ունի ասես նախնական, նախնադարյան մարդու հոգեվիճակը, բնազդն ու վարքը։ Եվ այդ ամենը բավականին մռայլ երանգներով։ Բայց ահա զարմանալին ու տարօրինակը, այդ բոլորից հետո, այդ բոլորով հանդերձ, քո մեջ այդ բոլորի հետ շփվելուց հետո էլ մնացող... կարոտը։ Որովհետև ժխտականի կողմ հակվող այդ ամենի կողքին դրականի նժարը և հեղինակի, Հակոբ Մնձուրու այդ վերջինների հետ, նրանց կողքին լինելու փաստը։ Իսկ ամենաէականը՝ նույնիսկ ամենաժխտական հերոսի մեջ հեղինակի այն մեծ կարողությունն ու կարելիությունը, որ առատ է քիչ, հիասթափված ընթերցողին, ցույց տալ այդ ամենավատ ժխտական մարդու մեջ գտնվող լավը, թեկուզ չնչին լավը, դրականը, մարդկայինը ասելու, պնդելու, փաստելու, հաստատելու համար, որ դեռևս ամեն ինչ չէ, որ կորած է մարդու մեջ վաղվա համար, որ կարելի է չհիասթափվել ամենավատ մարդուց էլ՝ եթե նրա մեջ, ինչ-որ տեղ գոյություն ունի, առկա է լավի, մարդկայինի սաղմը, մասնիկը։ Մի հանգամանք, որ չի կարող գոյություն չունենալ, չլինել... Այստեղից Հակոբ Մնձուրու առողջ հայրենասիրության, նրա ոյուղադրության դրականը, նրա դրականության շինիչ ակունքը։

Իհարկե, ժխտականի, վատի, այլասերումի գեմ պայքարողները պակասում են, չկան նրա դրականության մեջ (այստեղ արդեն միայն իրականությունն է, բացակայում է երևակայությունը), բայց եթե նկատի ունենանք այն միջավայրը, այն ժամանակաշրջանը, որ և որի ընթացքում ստեղծագործել է Հակոբ Մնձուրին և եթե զանց չանենք և դրողի խառնվածքը, որ իրենն է, Մնձուրունը, ապա նրանից սպասել այս վերջինների էլ գոյությունը, անկարելի կլինի։ Բայց պիտի չմոռանալ նաև, որ ինչպես ինքն է ասում, թե ես «կողմ եմ անկաձև դրականության մը, կողմ բռնող դրականության մը», ապա արդեն պարզ կլինի և բավ է հասկանալու համար, որ Հակոբ Մնձուրու դրականության մեջ կողմը՝ աղքատ ու բարի մարդիկն են իր գյուղի, գավառի՝ բարի, պարզ, հապարակ ու արի, շարքաշ աշխատավոր մարդիկը, որոնք, այնուամենայնիվ, ենշող մեծամասնություն են կազմում և այդպիսով ծանրացնում, թեքում նժարի բեր իրենց կողմը։ Եվ դեռ նրանց տածած անխարդախ, սրտաբաց, անմիջական հավատքն է մարդու նկատմամբ, թեկուզ պասիվ տեսությունը շահագործողների հասցեին (որ ինքնին զսպված պայքարի արտահայտություն է) և ընդվզումը երբեմն այն «աստծո»

դեմ, որ իբր գերազույն արդարություն է («Սուրբ Գևորգ»)։ Մենք դրականի նժարը ծանրացնող ու հատկանշող, այդ վերջիններիը բնութագրող պատմվածքների խորագրերը չենք նշում, դրանք շատ են, իսկ նրանց հերոսները, բազմազան հերոսները խորհրդանշվում են, առաջին հերթին, ոչ միայն այդ պատմվածքները գրի առնող հեղինակի անուն-ծածկանունով, այլ հենց այդ պատմվածքների գործող գլխավոր հերոսով, որ կոչվում է Հակոբ Մնձուրի։

Բազմազգի են նաև Հակոբ Մնձուրու գրականության գործող անձերը՝ թուրք, բուրդ, զզբլպաշ, ասորի, հույն և բազմապիսի նրանց կյանքի ու բարքերի, ավանդությունների, բարիդրացիության նկարագրությունները, որոնց նվիրված պատմվածքները («Տիվրիկցի Միսաքը», «Ատը կյուղելը», «Ղոռի՜... ղոռի տե ղոռի», «Ղառխա պուրնու շարուխ», «Եղնները», «Ջիմնիի՞ն մի, ղբդ—ջիմնիիմ յա՜», «Էլմա կիպի բեյվազը յեմեղ քիթ էհո՜.՜.՜.», «Աղային տղան», «Ճիկառան», «Էլիֆ», «Անոթությունը», «Աննան», «Էյուպ աղան», «Բիրիտեղեցի Տիմիթը» «Տաղլուենց Մարոն», «Ղուռուչայցիները», «Ես կըսեմ այս մարդը հայ չէ», «Թանիկ ականջներով այծը», «Նունիկ մամային տղուն խանութը», «Էղ աղայի վի կյունտի նը՞մրնե», «Ոսկի տեղաց էլբակյանի հարսնիքին», «Հարեն», «Ըստամբոլ», «Թեփթացի ղրմըլը», «Շատան Ալի», «Մե պեժե Մինաս աղա, Մինաս Զորպաճը», «Սի փարա հոթուզ փարա» և այլն) պարզ ու հստակ են դարձնում ժամանակաշրջանի հայ ժողովրդի կապն ու հարաբերությունների բնույթը տվյալ ազգությունների հետ։ Հեղինակի բարի մարդիկը, որ անտարակույս կան և այդ բազմազգի հերոսների մեջ ևս, եթե մերթ ընդ մերթ բախումների մեջ են, շատ անգամ են եղբայր մեկ-մեկու, եղբայր են հողից բարիքներ քաղելու, խաղաղ ապրելու գործում, եթե միայն հասկանան, որ թշնամության սերմերը գալիս են այլ տեղերից, մութ ու պղտոր ակունքներից և ոչ քիչ անգամ չար նախանձից, որի հիմնական պատճառներից մեկը եթե ծուլությունն ու ագիտությունն է, նաև ազգային ավանդությունների ծուռ դրսևորումները, ավարառությամբ ու ելուզակությամբ ապրելու հեշտ ու դյուրին ճանապարհը, հողին կապված չլինելը, որից հետու է եղել հայ ժողովուրդն ու գյուղացին իր ծագման օրից։ (Ի դեպ, հարևան թրքական ու զզբլպաշի գյուղերը, որոնք «զարմանալիորեն» ունեցել են հայկական անուններ, թրքական գյուղեր են եղել. «Սուրբ Թորոսը», «Վարդենիքը», «Ուռեկը», «Սերկևիլը», «Ալրունիկը», «Հնոբվան», «Գետինակը», «Նորտունը», «Մուշուտը», «Դարդզվոսը», «Ջրնզբնուտը», «Խելմրկան» և այլն)։

Մենք ասել ենք, որ Հակոբ Մնձուրու գրականությունը օգնում է նաև, մեծ, անգնահատելի նպաստ է բերում հայ ազգագրությանը։ Ուշագրավ է և կարևոր, որ արդեն անցյալի դիրկն անցած այդ գյուղերում գյուղացիները ի՞նչ կհագնեին («Մենք ինչ կհագնեինք»), ինչպե՞ս կհագնեին, ի՞նչ կուտեին («Մենք ինչ կուտեինք»), ինչպե՞ս կուտեին, ի՞նչ բանի կհավատային, ի՞նչ ձևով, ինչպե՞ս («Մեր ժամը), ինչպե՞ս կատարեին հարսանիքները («Ոսկի տեղաց էլբակյանի հարսանիքին», «Էմիրկյանի փեսը գնաց»), տոները, ծննդյան ու մահվան արարողությունները ինչպե՞ս տեղի կունենային (թաղման, յոթի, քառասունքի) ծեսերը, զարգացում ինչպե՞ս կստանային, ինչպիսի՞ն էին ընտանեկան բարքերը, հարս-կեսուր, հարս-աներհայր հարաբերությունները, վերջի-վերջո, նիստուկացը, քնել-վերկենալը՝ ո՞ր ժամին, ինչպե՞ս, ի՞նչ էին անում կալերում, այգիներում, ի՞նչ ծառեր, բույսեր, ծաղիկներ կային, սուգի և ուրախության երգերը, ի՞նչ թափ ու եղանակով, բառերով, բանահյուսությունը, օրորները, զարիբության, սիրո, վշտի երգն ու բանաստեղծությունը (խաղ, հարևն, մանի), բնականը, ինքնուսը։ Այդ բոլորը վերը փակագծերում նշված պատմվածքներում և գրեթե Մնձուրու յուրաքանչյուր պատմվածքում, առանձին մանրամասներով առկա են, մի բան, որ նման տարողությամբ, ճշգրտությամբ, մանրամասնությամբ և գրական բարձր ճաշակով գոյություն չի ունեցել մեր գրականության մեջ և չի եղել նույնիսկ մյուս խոշոր գյուղագրի, իր ժամանակակցի՝ Համաստեղի գյուղական պատմվածքներում։ Ինչ որ ասացինք հայ ազգագրության համար, գրեթե կարելի է կրկնել նաև Մնձուրու այլ ազգությունների կյանքից վերցրած պատմվածքների վերաբերյալ, մասնավորապես քրդական ազգագրության համար։ Նրա գրականության մեջ քիչ չեն և քանակ են կազմում քուրդ, թուրք, զղլպաշ գյուղացիության կյանքին, ապրելակերպին, արտաքինին, նիստ ու կացին, սովորություններին նվիրված էջերը, որոնք միաժամանակ բերում են մի այլ պարզություն ևս. նպաստում և առավել շոշափելի դարձնում հայ գյուղացու տեղն ու դիրքը, մակարդակը այս վերջիններիի նկատմամբ։

Բայց գլխավոր հերոսներից մեկը, հենց Արմտանը ինքն է Մնձուրու գրականությունում, նրա բնությունը, տեղը, դիրքը, աշխարհագրությունը, մասամբ և պատմությունը։ Բայց Արմտանը իր հետ գրականություն է բերել ոչ միայն արմտանցուն, այլև կասմացին, զիմառցին, բեկցին, լճացին, հասանօվացին, թեղուտցին, ապուշտացին, շաֆախցին և այլն, այսինքն Հարևան մոտ ու հեռու գյուղերն ու նրա հերոս-

հերուսուհիներին, նույնպես իրենց ամբողջության մեջ, Արմտանի հետ ունեցած նմանություններով, բայց նաև տարբերություններով։

Եթե Հակոբ Մնձուրու գրականության գլխավոր հերոսներն են մարդը (իր բոլոր սանդղամասերով և պատկանելիությամբ), բնությունը (իր բոլոր մանրամասներով) և անասունները (իրենց ընտանի ու վայրի տեսակներով, գեղեցիկ թռչուններով, սողուններով ու միջատներով) նվազ գլխավոր տեղ չի բռնում նաև մարդու կատարածը՝ գործը, աշխատանքը։ Որովհետև նրա ստեղծագործություններում այդ աշխատանքի գեղեցկությունն է հիմնականը, շարժիչ ուժը, իմաստավորողը այս կամ այն հերոսին, հողային աշխատանքի օրհնյալ գեղեցկությունը, որ հստակ է դարձնում ու բացատրելի, թե որտեղ են գտնվում մեր բազմաշարշար ու բազմիցս ջարդ ու կոտորած տեսած ժողովրդի գոյատևման ակն ու գաղտնիքը։

Միայն աշխատանքը, այդ «վերին հերոսին», այդ ձևով սիրող, այդ ձևով այն իր գրականության մեջ և կյանքում արվեստի վերածած ազգը երևի կարող էր միայն յուրաքանչյուր յաթաղանից հետո կրկին փարել իր ժայռոտ ու քարքարոտ հողերին, ապրել ու գոյատևել... Հակոբ Մնձուրու էջերը ընթերցողի մեջ այդ ճշմարտությունը մի անգամ ևս վերհանող և ազգի գոյատևման նպաստող, նրան լավատես դարձնող գրականության էջերից են։

Հավանաբար մի օտար ընթերցող (եթե մի օր բախտ վիճակվի թարգմանել Մնձուրու գրականությունը, իհարկե, նախ հայերենով փորկելուց հետո նրա ողջ ստեղծագործությունը սիյուրբահայ մամուլի ցրված ու խունացած էջերից) կարդալով նրա «Ստամբոլ» պատմվածքը, կանգ առնի «Կռունկ, ուստի՞ կուգաս» ժողովածուի 66-րդ էջի վրա, երբ հասնի այս տողերին.

«— Պապա, ի՞նչ կընես հոդ։

— Եգիպտացորեն կտնկեմ որդի։

— Պապա կկեցվի՞ այդ գահավեժին վրա, պիտի սահիս փսորփսոր պիտի ըլլաս անդունդը...

— Ի՞նչ ընեմ որդիս վաթանս է...»։

Եվ երբ այդ օտարազգի ընթերցողը՝ ռուս, ֆրանսիացի, թե անգլիացի կամ ամերիկացի, որ արդեն գիտի, կարդացել է, թե պապան «զառիթափի մը նեղ շերտի մը վրա, արտի մը, կորիի չափ կա չկա շիշուրագովը հողը կփորե եգիպտացորեն կտնկե։ Կին մը իրմե վեր բարձրունքի մը վրա կայներ է, պարանով մը կապեր է պապային մեջքեն, ամբողջ ուժովը ամուր մը բռներ է, մի դուցե թուլցնե կամ թողու

պարանը, պապան պիտի չկրնա կեցնել ինքզինքը, անդունդը պիտի գլորի»։ Եվ խնդա կամ, լավագույն դեպքում, հավանություն տա Մնձուրու պատմվածքում հայտնվող թուրք անցորդի հայհոյանքին, որ մենք այստեղ թարգմանաբար ենք մեջ բերում։ Պատմվածքում այն հայատառ թուրքերենով է գրված.

«Հե՜յ .... Եմ այդպիսի հայրենիքն էլ, չվանը բռնողն էլ, ա՜խր, այդպիսի հայրենի՞ք կլինի...»։

Այս, օտարազգի ընթերցողը լավագույն դեպքում կարող է ծիծաղել, խնդալ, բայց ո՜չ հայ մարդը, որ գիտի. թե ոչ քիչ անգամներ բերրի ու արգասաբեր, անծայրածիր իր հողերի թալան ու հրկիզումներից ու բռնագաղթերից հետո, կաչել է նման գաղթականների նեղ շերտերին և անդունդ գլորվելու, դահավիժելու գնով սերմանել է ցորեն, ցանել եգիպտացորեն կամ տվելի ճիշտ, տնկել... խաղողի վազ։ Որովհետև այդ է եղել իրեն մնացած վաթանը (հայրենիքը) և հենց այդ քարքարոտ գաղթականներից է սկսել... շենանալ նոր ու ապագայի հայրենին։

Մենք, Հակոբ Մնձուրու եռատանու «հերոսներին» կաշխատենք ծանոթանալ շրջված կարգով, որպեսզի վերջում առավել պարզ ու հստակ պատկերանա առաջինը՝ Մարդը։

II

> «Իմ երկրի մեջ սայլ չկար։ Մերինը էշ էր, սայլի տեղ մենք էշ կգործածեինք։ Ատոր ալ պատճառը այն էր, որ մեր ամեն կողմը լեռ ու ձոր էր, դաշտ չուներինք, գյուղի մեջ արտերուն ճամփաներին սայլ չէր բաներ։ Այդիներուն մանավանդ գյուղիններեն ալ գեշ էին։ Թե ժայռոտ էին և թե գառիվար էին։ Սայլը կրնա՞ր իջնալ այս տեղերեն։ Էշը միայն կհարմարեր մեր ճամփաներուն, մեկ մըն ալ ջորին»։

Արմտանում ամեն տուն իր սեփական էշն ուներ։ Դա առաջին այն կենդանին էր, որ տարվա բոլոր եղանակներին ու օրերին մոտ էր կանգնած գյուղացու առօրյա, ընթացիկ հոգսերին։ Նա էր, որ ամենաշատը բաժանում էր նրա չարքաշ աշխատանքի ծանրությունը։ Էշն էր, որ քաղաքից քաղաք, գյուղից գյուղ կրում էր գյուղացու բեռները, բերում էր լեռներից խոտը, արտերից՝ խուրձերը, աշնանը գնում «կարմիր

կապան» կամ «իննսունիններին» լեռները փայտ բերելու, ամառը հողե ամաններով արտավորին թան, թանապուր կամ ոսպ ու լուբիա տանում, «Ախշղայլեն» մեղր, «Սիմայեն» աղի տեղակ օգտագործվող կուժերով աղջուր բերում, ձմռանը «Մամասալից» ջուր կրում և այլն, և այլն։ Էշի կողքին, նրա չափ գյուղի հոգսերի ու աշխատանքի բաժնեկիցներն էին եզն ու կովը, ջորին ու ձին և, վերջապես, բոլոր այն անասուններն ու կենդանիները, որոնք անբաժան մասն էին կազմում գյուղական կյանքի՝ շունը, հորթը, այծը, ոչխարը և այլն։ Դեռևս նաև նրանք, որոնք լրացնում էին գավառական բնության համայնապատկերը սկսած թռչնազգիներից վերջացրած սողուններով։ Իհարկե, դրանց բոլորի բառացիորեն բոլորի մասին՝ նրանց վարքի ու բարքի, «սովորությունների», մենք շատ հաճախ ենք հանդիպում Հակոբ Մնձուրու պատմվածքներում և նրանցից շատերին չենք տարբերում Մնձուրու գրականության գործող առան հերոսներից։ Նրանց կերպարը այնքան շոշափելիորեն է պատկերված Արմտան կոչվող... վեպում։

Ասում ենք վեպում, որովհետև այստեղ, ինչպես նրա գործող մարդ-հերոսները, այս վերջիններն ևս, իրենց լրումին են հասնում պատմվածքից պատմվածք, օղակ առ օղակ լրացվելով, քիչ առ քիչ ու վերջում դառնալով ամբողջական, լրիվ ու մնայուն հերոս։

Եթե Համաստեղի «Զալոն» նույնքան ապրող «հերոս» է, ամբողջական, լրիվ հերոս մի պատմվածքի սահմանում, ինչպես լրիվ ու ամբողջական են Համաստեղի գյուղագրությունը կազմող «Գյուղը» և «Անձրևը» ժողովածուների պատմվածքներից յուրաքանչյուրի հերոսները, Հակոբ Մնձուրու մոտ հակառակն է։ Սակայն այդ չի նշանակում, որ Հակոբ Մնձուրին ավարտուն, ամբողջական պատմվածքներ չունի։ Բայց եթե ավարտունությունը, տոտանձին պատմվածքի համար, ոճ ու արվեստի ըմբռնում է Համաստեղի մոտ, Մնձուրին կարող է սկսել պատմել մի բանի մասին, հետո կիսատ թողնել այդ, անցնել մի ուրիշին, մի այլ պատմվածքում «կիսատ թողնված հարցերին ու հերոսներին կրկին վերադառնալու համար»։ Եվ նրա արվեստի անկրկնելիությունը հենց տիպիկ գյուղացիական այդ կիսատ ու թերի, համով-հոտով պատմելաձևի «թերությունների» մեջ է կայանում նաև։

Ինչ խոսք, մինչև Հակոբ Մնձուրու հանդես գալը մեր «գյուղագրություններում» բնությունն ու կենդանական աշխարհը չի ունեցել այդքան վառ ու բազմազան, բազմերանգ նկարագիր (գրական պատկերման իմաստով)։ Համաստեղի Զալոն շատ հետաքրքիր ու ողբերգական կերպար է, իհարկե, բայց շուն է, անասուն առաջին հերթին, իսկ Մնձու-

ռու «Զալոյ»-ները լինելով շուն, կենդանի, նաև ուրիշ են, առավել են սրտի մոտ և ոչ միայն այն բանի շնորհիվ, որ ցնցող ու ողբերգական է նրանց կյանքն ու ճակատագիրը շատ անգամ ինչպես Զալոյինը, այլ նրա համար, որ մնալով ու լինելով սովորական էշ, եզ կամ կով, առօրյա, ընթացիկ իրենց կյանքում շատ են մոտ կանգնած մարդուն, այնքան մոտ, որ շփոթեցնում են քեզ, թե որտե՞ղ է վերջանում ասունի սահմանը ու որտեղ սկսվում... անասունը։

Մնձուրու գրականությունում մարդ ու անասունի, մարդ ու բնության միջև սահմանները դրեթե ջնջված են, որովհետև անասունն ու բնությունը ձեռք են բերել այնպիսի հատկանիշներ, որ մարդուն է հատուկ, ինչպես «կեղծելը», «սուտ խելոք ձևանալը», «իբրև մի գործ անելու միտք չունենալը», «ժպտելը», «շաղակրատելը» «խորհիլը», «նվաղիլը», «օրապահիկ վաստակելը», «երգասաց լինելը», «լուռ ու լուրջ, հանդիսավոր, վեհափառ կեցվածք ընդունելը», «ժողով գումարելը», «ճառ կարդալը», «քարող տալու դիրք ընդունելը», «համերգ տալը», «ծափ տալը», «հայհոյանք լսելն ու հասկանալը», «հետաքրքրասեր լինելը» և այլն, և այլն և դումարած այդ բոլորին, մարդու վերաբերմունքը իր անասունի ու բնության նկատմամբ, որ կարող է շփոթ ստեղծել այդ սահմանների մեջ։ Շատ անգամ դյուզացու «իր մեկ ջորին տասը մարդու հետ չփոխելու» որոշումը, «ծառների բուներն ու կոճղերը թզուկ մարդոց նմանեցնելը», «մարդու երնջի ճակտի նմանեցվող ճակատն ու երնջի նման աչքերը», «Աղուշաղի ձմերուկները հեռվից ծնկածալ նստած կովեր կարծելը», այն շամամները, որ «կդողան» ափիդ մեջ, մասրենին, որ «ջերմ բռնողի պես կդողա ջրերի վրա», որ կարող է նաև «ինքնավստահ» դառնալ, «աղվես մը որ արվեստագետ է», հողը, որ «մայրության» կպատրաստվի, ձայնը, որ կլսես «չգիտես մարդու՞ թե գետի» ձայն է և այլն, թերևս ամենահուզիչն ու հետաքրքիրը, եզը, որ «աղբեր» է, «պապ», որին կարելի է «շփոթել» մարդու հետ ու ասել նույնիսկ «քեռի քեզ ու եղնոցդ ստված բարի ուտել տա», ավելին, սատկած եզան վրա կարելի է լալ ու ողբալ, նշել նրա անցյալի բարի վարքը, մանրամասն «կենսագրությունը». «Ալ հերիք է, լալով եզը կողջննա՞ ի՞նչ ընենք, դուն ողջ եղիր, աստված տղադ, հարսդ, թոռներդ ողջ պահեն», այս անբանաձևելի հավասարեցումը՝ տղա, հարս, թոռ ու եզան միջև։ Դեռևս սատկած կարծված եզը, եթե ողջ է դտնվել, ուրեմն կարելի է ասել, հենց եզան՝ «արևդ սիրեմ, մեղ վախցուցիր, փաշա եզս», փաշա տղաս, որդիս ասելու նման և այսպես անվերջ...

Բայց կարևորը, հիմնականը այն չէ, որ Հակոբ Մնձուրուն հաջողվել

է մարդացնել կենդանական աշխարհն ու բնությունը, տեսնել այս վերջինները մարդու հետ անմնայուր միասնության ու օրգանական կապի մեջ, այլ այն, որ այդպիսի իրականության մեջ են ապրել նրանք, այդ եռատանին, և Հակոբ Մնձուրուն է վիճակվել ըմբռնել այն ու իրապաշտորեն, անշպար դրչով վերարտադրել իր գրականության մեջ, վաստակելով նույնպես ոչ քիչ բան ասող այն գնահատականը, որ դա, այդ «գյուղագրությունը» բացառապես մնձուրիական է հայ գրականությունում։ Նրա մոտ մարդ-անասուն երկխոսությունները եղակի հրմայք ունեն։ Դրանք այնպիսի էջեր են, որտեղ բացահայտվում է նախ և առաջ մարդը (գյուղացի մարդը)։ Հայ մարդու, հայ գյուղացու խոր հոգսն ու չարքաշ կյանքը, նրա հումանիզմը (սփյուռքահայ գրականությունում իսկուիսկ հակապատկերը Շավարշ Նարդունու գրականության)[1]։ Երկխոսություն, որ բեկվելով «խոսակցի» պրիզմայում, արտացոլում է առաջինի ներքինը, նրա հոգեբանությունը, գյուղացու արտաքինից պարզ ու սահմանափակ թվացող, բայց ներքին հարուստ բովանդակությունն ու հոգու անսպառ գանձերը։

«Ամեն օրվան պես առտուն կանուխ Շիրինը դուռը բացավ ու դուրս ելավ, լեռը նրթալու, վառելու փայտ բերելու համար։

Դուրսը, փողոցին պատին կապված էր էշը, որ գլուխը կախած կմրափեր։

Ինքնիրեն, ինչպես հանդիպած ամեն առարկայի հետ խոսելու սովորություն ունենալով, մոտեցավ իշուն ու ըսավ բարձր ձայնով ու գորովով.

— Հ-ը... Չերթա՞նք... Երթանք, երթանք... Ականջներդ մի այդպես կախեր, աչքերդ բաց որ երթանք... հիմա պիտի բանինք որ ձմեռն ալ ուտենք... պապս... որ չերթանք, չբերենք, վաղը ձմեռ որ գա, պո՞ւ... որ ընե քամին, ո՞վ մեզի փայտ կուտա։ Աս գործը ես ու դուն պիտի ընենք... Հելե հո, ըսեր է, մեր երկուքին մալը, եղը Բող կերը ուտե, արտ վարողը հայտնի է...

Ու իշուն ականջները շոյելով ու քակելով պախուրցը՝ անցան ա-նոնք գյուղին ամայի փողոցներեն։

Գիշեր էր, խորունկ լռություն մը կար, ու լիալուսինը կփայլեր դաշտին վրա։ Աղբյուրի մը առաջքը հասան։ Էշը կայնեցավ ինքնաբերաբար, առանց ըսել տալու, ու սկսավ խորհիլ ջուրին վրա, իսկ Շիրինը ծռեցավ լվացվելու համար։

---

[1] Տե՛ս «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր», 1920—1945, 1980։

— Չե՞ս խմեր... ինչու՞... խմե, խմե... վերսկսավ խոսիլ, միաժամանակ ափովը ջուր շաղեցնելով իր երեսներուն, մի մտմտար։ Որ խելքդ փչե փողոցներուն սև ջուրերը, հավերուն կրիճին աղտոտ ջուրերը կխմես, հիմա արծաթին պես ջուրին վրա կայներ կխորհիս... տատիդ գեղը գտե՞ր էիր ասանկ ջուր մը, պապս։

Էշը լռեց ու Շիրին ոտքի ելավ, չորցուց երեսները ու մորուքը։ Հետս բիրը առավ, խմեց իշուն ու միասին բարձրացան դաշտին մյուս կողմը։

— Հիմա չխմեցիր։ Եթե ալ երեկվան պես ըրե, քեզ տեսնեմ, շարունակեց ան, հոս նայե՛ չկա էշ, հոն նայե՛ չկա, ալ ձոր չմնաց, որ չփնտրեմ քեզ։ Որտե՞ միտքը կուգա թե պիտի ելլես մինչև խորունկ ձոր պիտի երթաս ջուր գտնելու, խմելու համար»[2]։

Այստեղ ուշադրության արժանի հիմնական գծերից մեկը, գյուղացու՝ իր անասունի նկատմամբ տածած սերն ու գորովն է, զարդը նրան վստահելու, նրա հետ կիսելու ներքին պահանջը. «Հիմա պիտի բանինք, որ ձմեռն ալ ուտենք, պապս..., որ չերթանք, չբերենք..., ուրիշ էլ ո՞վ հաց ու փայտ կտա»։ Նրա հետ, սեփական երեխայի հետ խոսելու նման կիսվելը. «վաղը ձմեռը որ գա, պո՞ւ... որ ընե քամին...»։ Հակոբ Մնձուրին իշուն վերագրում է մարդկային գծեր ու փոխանակ գրելու «էշը կայնեցավ ինքնաբերաբար, առանց ըսել տալու, ու սկսավ նայիլ ջուրին վրա...», գրում է. «սկսավ խորհիլ» կամ նրան դնում է «մտմտացող»-ի վիճակում. «մի մտմտար, խմե, խմե...»։ Խորհիլ ու մտմտալ՝ միայն մարդուն հատուկ գծերով։ Հետո ասել տալիս. «ինչ է տատիդ գե՞ղը գտեր էիր ասանկ ջուր մը, պապս»։ Դարձվածք, որ ընդհանրապես գործածվում է ոչ անասունների հետ խոսելիս։ Հետո այն հանգամանքը, որ Շիրինը իշուն հիշեցնում է, թե առհասարակ մինչ այդ որտեղերի՞ց է ջուր խմել, բացահայտում է նույնպես սեր ու գորով, որ գալիս է միայն իր սիրածին լավը, համեղը, մաքուրը մատուցելու ցանկությունից։ Իսկ վերջին տողերը. «Հիմա չխմեցիր, եթե ալ երեկվան պես ըրե...» որտեղ հասկանալի է դառնում, թե երեկ ի՞նչ էր պատահել ու Շիրինը ինչ փորձանքի մեջ էր ընկել, արդեն դառնում է տիպիկ մնձուրիական այն իմաստով, որ արդեն այդ մասին (սիրած անասունի կորստի պատճառած իրարանցումն ու ողբերգությունը) ընթերցողը կամ կարդացած է նախապես և կամ կարդալու է հետագայում։

---

2 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Բարի լույս, Մարդար աղա», Ստամբուլ, 1958, էջ 236—237։

մի այլ պատմվածքում։ Շիրինին և իր իշուն մենք հանդիպում ենք «Սուրբ Գևորգում», իսկ իշու կորստից առաջացած փնտրտուքի պատմությանը «Մաղիկանց էշը» պատմվածքում։ Եվ ահա, այդ առանձին պատմվածքներից վեր հառնող կերպարը (թեկուզ անասունի) դառնում է ամբողջական, իր վարքով ու նկարագրով, իր հոգեբանությամբ և նույնիսկ, կարելի է ասել, անասնային «փիլիսոփայությամբ»։ Շիրինը իր իշուն ճանապարհին դեռ շատ բան է վստահում, պատմում, խոսում։ Իսկ այդ խոսակցությունից գծագրվում է նաև անասունի կերպարը, և ստացվում է այնպես, որ թվում է, իր մասին խոսել, պատմել, ինքն իրեն բացահայտել է հենց ինքը՝ անասունը։

Հարազատ, վստահելի օգնական է նա գյուղացու համար, որ միշտ գիտի «իր երթալիք կողմը» և կարող է իր տիրոջը այս անգամ արդեն մի այլ պատմվածքում՝ «Արութին», որ սաստիկ հոգնած է ու քնատ, որ անկարող է նույնիսկ ճանապարհին կողմնորոշվել, տանել ուղիղ ու հասցնել հարկ եղած վայրը։

«Մեծ իշուն պոչեն բռնեց որ չիյնար ու թողուց, որ տաներ զինքը։ Ատկե ետքը ալ ո՞ւր երթալը չգիտցավ։ Էշերը գիտեին իրենց երթալիք կողմը ու առանց վարանելու թեքվեցան իրենց աջին։ Արտերու մեջեն ալյուրի բեռներով գացին, գացին, ինքն ալ, իշուն պոչը թող չտալով գնաց, գնաց անոնց ետևեն։ Երկու անգամ կամուրջներե անցան։ Էշերը կտեսնեին թե վարը ձորեր կային, ջուրերը կվազեին, Արութ ասոնք չգիտցավ անգամ։ Գյուղ մտան։ Էշերը ընկուզենիներու տակի Մաղիկանց փողոցը շղարձան։ Սուրբ Թորոսի քովեն Թումասենց բակին ու տան առաջի սալահատակը ելան։ Հոնկե վար իջնելուն իշուն ոտքը գայթեցավ։ Մաղ մնաց ալյուրի բեռնով-մեռնով պիտի իյնար, շուտ ինքզինքը փրկեց ու շտկվեցավ։ Արութն ալ իշուն վրա պիտի իյնար, բայց չպատահեցավ ատ, կղակը իշուն քամակին զարնվեցավ։ Աչքերը չբացավ անգամ. էշերը իրենց աջակողմի Կոչենց փողոցը չմտան։ Ոչ ալ ավելի առաջ Կորջայենց, ու ձախի Թեվոյին նեղ փողոցը դարձան։ Ճիշտ իրենց տան առջևը կեցան։ Ալ քայլ չնետեցին։ Սպասեցին, որ դուռը բացվի, դան ու իրենց կռնակի բեռները վար առնեն։ Արութն ալ էշերուն հետ սպասեց, աչքերը միշտ գոց։

Էշը հազաց»[3]։

Իհարկե, Արութը էշ չէր, որ տոկար այդքան հոգնածությանը, մարդ էր... քնեց, բայց անասունը փրկեց նրան՝ ուժասպառ վիճակում տուն

3 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Քունդուխ», էջ 108—109։

հասցնելով։ Այս էշը Շիրինինը չէ, Արութինն է, բայց թվում է նույնն է, որովհետև այս պատմվածքում հիշատակված Մաղիկանց փողոցը, Սուրբ Թորոսը, Թումասենց բակը, Կոչենց, Կորշայենց փողոցները, Թեվոյի նեղ փողոցը ծանոթ են ընթերցողին ոչ միայն «Քունդլուխ» պատմվածքից, այլ շատ առաջ, այլ պատմվածքներից և հետագայում կհիշատակվեն, գլխավոր դեր կկատարեն նաև այլ պատմվածքներում, զառնալով հարազատ վայրեր Արմտան «վեպում»։

«Էշերուն հետ ճամփա դացած ունի՞ք, չեմ գիտեր։ Ականջներեն ներս ջուր չերթա։ Երթա ու մեկ մը որ թրջին, հոգիներդ բերաննիդ կբերեն։ Կկենան, ոտք չեն նետեր, կոկորդնիդ պատռեցեք, ուզածնուդ չափ «չո՜-չո՜...» պոռացեք, կարծես իրենց չեք պոռար, լեռներուն կպոռաք, ինձմե, քենե աղեկ գիտեն, որ իրենց կըսեք, սուտ չլսել կձևանան...»[4]։ Դա փաստում է, որ Մնձուրին երկրորդ դեմք չէ իր պատմվածքներում։

Այստեղ, իհարկե, փորձն է խոսում, փորձառությունը։ Գյուղացիական աչքը, որ լավ գիտե անասունի հոգեբանությունն ու սովորական գիտողի համար անտեսանելին, անբացատրելին կարող է բացատրել խորիմացորեն, հավաստի։ Ավելին, գիտի նաև, որ անասունը իր հերթին, նույնպես կարող է «բացատրել» իր տիրոջ արարքը, երբ վերջինս իջեցնեն բիրը քամակին ու հայհոյեն։

«Տիրոջը ըսածները ամենքն ալ կհասկնա, ամեն բան կհասկնա, Թող ըսե, հոդ չէ, ան տունն ալ ամեն օր կհայհոյե կնոջը, հարսին, տըղուն, բայց ծեծը գեշ է, մեկ մը որ ղարնելու սկսի՝ բիրը կկոտրե քամակին»[5]։

Հետաքրքիր է, երբ իշու «խորհրդածություններին» միջոցով է հայտնի դառնում—սա ևս մարդ-անասուն հավասարեցման նմուշ է—որ իրեն հայհոյող տերը, նույն վերաբերմունքն ունի իր սեփական կնոջ, հարսի ու տղայի նկատմամբ։ Իրապաշտ չէ՞ արդյոք իշական այդ խորհրդածությունը, իհարկե «իրապաշտ» չէ, որտեղի՞ց էշը կարող էր անել նման վերլուծումներ, բայց կարծես կյանքում ամեն ինչ իր տեղումն է։ Բացառապես իրապաշտ։ Չէ՞ որ իշային է այն վերաբերմունքը, որ մարդը, տունը հայհոյի իր կնոջը, հարսին ու տղային և ծեծի, ինչքան էլ էշը նույնիսկ դա վերապահի միայն իրեն։ Իսկ մարդկային նման արարքի դնահատականը, երբ էշը իր բերնով, իր մտածելակերպով է տա-

---

4 Հակոբ Մնձուրի, *Արմտան*, «Մինաս բեսիին հինգ կնիկները», էջ 120։

5 Հակոբ Մնձուրի, *Արմտան*, «Ջրհեղեղ», էջ 306։

լիս, դառնում է ոչ միայն իրապաշտ, այլև ահեղ դատաստան հետամնացության և տխուր բարքերի հասցեին, այս անգամ արդեն մարդկային բարքերի հասցեին։ Սա, վերջապես, այն բարոյախոսությունն է, որ կարող է անել միայն բարձր վարպետությամբ մշակված դրականությունը, տողատակերում, առանց բարոյախոսի բացահայտ ու պոռոտ ձևերի, նույնիսկ ծիծաղ առաջացնելով, բայց գիտակից ընթերցողին հասկացնել տալով, որ թիրախը ճիշտ կենտրոնից է խփված։ «Թող ըսե, հոգ չէ, ան տունն ալ ամեն օր...»։ Անասունն այսպիսով մխիթարում է ինքն իրեն, ճակատագրակիցը լինելով իր տիրոջ կնոջը, հարսին ու աղային։ Անասունը, հավասարվելով մարդուն, դառնում է նաև աստվածների դատավորը։ Եվ ոչ քիչ դեպքերում անարդարացի է այս համահարթումը, որովհետև եթե կան սեփականատերեր, որոնց համար էշ, կին, հարս ու աղա սեփականություն են, սեփականատիրական նույն արտոնություններով, կան նաև ոչ սեփականատերերը, ընչազուրկները և նրանց մեջ այնպիսիները, ինչպես Պողոս աղբարն է, որոնք չեն տարբերվում անասունից. «Սուսիկ բուսիկ մարդ մըն էր։ Ի՞նչ ուզեիր, ինչ գործ տայիր կըներ։ Արտ վարել, այգի բահել, այգի ջրել, լեռը փայտի երթալ։ Կուժը կշալակեր աղբյուրեն ջուր կբերեր։ Ախոռը կավլեր, աղբը կշալակեր աղբանոցը կտաներ կթափեր։ Ասոնք կիներուն ընելիք գործերն էին, անոնք ալ կըներ։ Զմեղքանայիր մինչև գիշեր աշխատցնեիր, չէր բողոքեր։

Փարա չէին տար։ Իրենք ալ փարա չունեին։ Երկու երեք եփելիք ձավար, ոսպ, փեշ մը ընկույզ, թան կամ այլուր։ Առջևը ինչ դնեիր, ես աս չեմ ուզեր չէր ըսեր։ Ապուր եփած չըլլային, սոխ ու հաց դնեին առջևը կբավեր։ Հացը շատ կուտեր։ Մեկ նստելուն երկու երեք հաց կուտեր։ Ավելի ալ դնեիր առաջքը ան ալ կուտեր։ Անասուններուն պես էր։ Մտուրը որչափ կեր լեցնեիր կմաքրեր»[6] (ընդգծումը մերն է— Գ. Ս.)։

Ուրեմն էլ ի՞նչ, եթե Պողոս աղբարը Շիրինի էշուն չափ էլ չկա, որ զուլալ ու սառնորակ ջրի վրա մի անգամից խոյանալու փոխարեն սկսում է նույնիսկ... խորհել։ Գյուղացու կյանքում համահարթված այս կացությունն է երևի պատճառը, որ «Ոսկեհան քեռին» արտ հասնելով դիմում է իր իշուն և չքմեղանքով, սրտակցորեն ասում. «Եկանք։ Առաջ քու բեռդ վար առնեմ։ Ինչո՞ւ գլուխդ կախեր ես, քեռն ըրեր ես։ Մո-

6 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Ոսկիները», էջ 38։

տուլած[7] տե՞ղս կցավի։ Քու խենթությունովդ եղավ։ Հապիտան[8] գետին իջեցուց։ Հիմա ուր որ է թռուս Ակոն կուգա։ Քեզ տուն կդրկեմ։ Դուն հոս կենաս ի՞նչ պիտի ընես»[9]։

Անասունի (էշի) հանդեպ այս բացառիկ հոգատարությունն ու մտահոգությունը, գորովն ու սերը աննպատակ չէ, իհարկե, ունի նաև իր հստակ պատճառները.

«Էշը ոչ եղի կնմանի, ոչ կովու, ոչ ջորիի, ոչ ձիի։ Եզը տեղ մը կանգ չառներ։ Եթե թողուս թե կուտե թե կերթա։ Շուրջը ինչքան խոտավետ ըլլա չարածիր, անդադար կառաջանա, միշտ դնպի լեռ, դեպի բարձրությունը։ Կովն ալ ուտելով կքալե, ջորին խառնածին է, դեգ է, չար է, անվստահելի է, իր տիրոջը անգամ կիցիր կարձակն ու կկորսվի, չես կրնար որոշել ու՞ր ու ո՞ր դի։ Ձին շատակեր չէ. քիչ կարածի. ձիգ, երկայն, արծաթյա հնչյուններով կխրխնջա հեռավոր հորիզոններուն, սպասելով, որ պատասխանվին։ Իսկ էշը սակավապետ ու ծանրաբարո է։ Չի հեռանար, մինչև իրիկուն կարածի իր եղած տեղին վրա։ Երբ կշտանա իր փիլիսոփայական ականջները կկախե, աչքերը կգոցե։ Չի քնանար, կխոկա իր գերության, իր ճակատագրին վրա»[10]։

Այո՛, էշը, որ ներողամտաբար կնայի իր տիրոջ ոչ մարդավայել արարքների վրա («Ջրհեղեղ»), դիտե խորհել, մտմտալ («Բարի լույս, Մարդար աղա»), որ «շլսել ձևացնե, կբանա իր աչքերը, որպես թե հանցավոր չէ, անմեղ է ըսվի» («Մաղիկանց էշը») և, վերջապես որ ծանրաբարո է, սակավապետ և հավատարիմ, զոհաբերվող ու հարազատ («Քունգլուխ»), որ կարող է առաջնորդել իր տիրոջը, երբ նա անկար է, հոգնած ու ուժասպառ և, որ փիլիսոփայական, ստոիկյան կեցվածք ունի իր գերության ու ճակատագրի, բախտի բերմամբ, իհարկե, ամենասիրելի անասուններից է, ամենավառ «հերոսներից» մեկը Արմլտանի։ Հակոբ Մնձուրին իր համազգուղացիների զգացած սիրով ու գեղարվեստական բարձր վարպետությամբ է պատկերել այս վերջինին։ Նկարագրել նրա վարքը այնպիսի տողերով, որ հիացմունք են պատճառում ընթերցելիս. «Էշերը շատ կախորժին փուշեն ու կոթինքեն՝ այսինքն հարդին կարծր, չմանրվող մասեն։ Փուշը շատ կսիրեն, մանավանդ բարձր ցողունով կարմիր-կապույտ-մանիշակագույն կառերը։ Մենք մատներնիս անգամ կվախնանք դպցնելե, կխայթվին, անոնք

7 Մոտուլել—մականին սուր ծայրովը իշուն պոչին տակը խոցել, որպեսզի քայլի։

8 Հապիտան—իշու վրա երկու կողմերից բարձած տոպրակ։

9 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Աշուն», էջ 49։

10 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Մաղիկանց էշը», էջ 249—250։

խենթի պես անհագորեն կուտեն, ի՞նչ ընքշությունով, ի՞նչ ձևով ու արվեստով, կհիանաք։ Ասեղի չափ երկար ու սուր փուշերեն մեկը չի մնաներ իրենց լինտը, լեզուն, քիմքը կամ շրթունքը, երբեք տեղ մը չարյուներ։ Կոթինքն ալ նույնքան կսիրեն։ Կամերուն կայծքարերը հալարներով վրայեն անցած ու չկրցած փշրած հարդերուն ատ հանգույցները ակռաներով անանկ շաղեցնելով ու աղալով կուտեն, որ կապշիս։ Շատ մոտենաս ու իրենց ծամելուն հետևիս, քեզ կփախցնեն իրենց քիթերը թառած փոշիները քեզի փռիկացնելով»[11]։

Այս սիրված ու սիրելի անասունի կորստի դեպքում կարող է մի ամբողջ գյուղ ոտքի կանգնել, լեռ ու ձոր մտնելու գալ գտնելու համար։ Նման առիթներն էլ, ինչպես Շիրինի հետ կատարված պատմության մեջ («Բարի լույս, Մարգար աղա», որտեղ միայն ակնարկված է խոր մտահոգություն), Հակոբ Մնձուրուն առիթ է ընծայում այդ կորստի պատճառած ցավի ու իրարանցումի այնպիսի հոյակապ էջեր ստեղծել, ինչպիսին «Մաղիկանց էշը» պատմվածքում և, մասնավորաբար, «Սուրբ Գևորգում»։ Պատմվածք, որ հավիվ հինգ էջի սահմաններում, հայ գրականության կարճ պատմվածքի սեռի աննման գոհարներից մեկն է։

«Սուրբ Գևորգ» պատմվածքում հերոսները նույնպես Շիրինն ու իր էշն են, որ երկուսով առավոտ շատ վաղ, դեռևս մութին, ճանապարհ կընկնեն դեպի Քաջտանին լեռը փայտ բերելու։ Ճանապարհին կրկին մեզ ծանոթ հարազատությունն է, գորովը, սրտակցությունն ու սրամտությունը, երկխոսության տպավորություն թողնող Շիրինի մենախոսությամբ։ Երկրորդի վարքը շոշափելիորեն զգալի է առաջինի խոսքերից ու մեկնաբանություններից։ Ամբողջ պատմվածքը կառուցված է գրական բայառիկ վարպետությամբ և հիշեցնում է այն դրավիչ հոսունությունը, որ հատուկ է ամերիկյան ժամանակակից գրականության ոճ ու պատմելաձևին՝ Գոլդվիլ, Սթայնբեկ, Հեմինգուեյ, Սարոյան և այլն։

«Ճամփուն ճիշտ մեջտեղը կրիա մը կար, մեկին կեցավ էշը։ Շիրին որ հացին տոպրակը բացեր էր, պանիրը հացին մեջ կդներ, մատներուն մեջ կսեղմեր, պատառ կշիներ, կուտեր, հասկցավ, որ անոր համար էր.

— Ամա՜ն, չըլլա, որ երթաս... Պեռ՜... Հիմա վրադ կցատկե, քեզ կուտե,— հեգնեց։ Հետո շեշտը փոխեց, իշուն ականջին մոտեցուց բե-

11 Նույն տեղում, էջ 249։

ռանը, խուլի մը ինչպես կպոռան,— գոչեց,— տաշտիկ է, տաշտիկ, տաշտիկն՞ ալ մարդ կվախնա։

Բայց էշը ականջները ցցեց, միշտ նույն կետին նայեցավ, ոտք չփոխեց, մինչև որ Շիրին վերցուց կրիան ճամփուն վրայեն, այն ատեն քալեց։

— Ի՞նչ պիտի ընենք աս քու վախկոտությունդ, չեմ գիտեր, որ ըսեմ,—վերսկսավ Շիրին,— տաշտիկեն կվախնաս, հոս-հոսիկեն կվախնաս, եվեվիկեն կվախնաս, կովուրծուծեն կվախնաս։ Աս ի՞նչ անուշ է քու հոգիդ քեզի։ Աղվեսի պոչիկեն ի՞նչ կելլե, խոտ մըն է, դուն անկե ալ կվախնաս։ Ո՞ր օրն էր, հա, եկած շաբաթ օրն էր, Պարան հողքեն կերթայինք, հովը փչեց, վերեն աղվեսի չորցած պոչիկ մը առաջդ ձգեց, անանկ եռ ցատկեցիր, որ ես ալ ի՞նչ գիտնամ, ետևդ էի, կռնակիս վրա գետին պառկեցուցիր։ Մարդ իր ականջեն կվախնա՞։ Ամեն ասուուծո օր աղբյուր տանելուս, նալկրուդ ծայրերուն վրա կոխելով, կամաց-կամաց, կամաց-կամաց, սիրտդ նետելով-նետելով դուռին կմոտենաս, ջուրին մեջ ականջներդ որ տեսնես, ալ կլմննաս, լեղիդ կպատռի, ալ ո՞ւր ջուր պիտի խմես, առաջդ ով կուզե ըլլա, կկոխես վրան, կփախիս։ Աս քու ականջներդ քեզի ի՞նչ կերևան, չեմ գիտեր։

Ձորերը պաղլեղի ճերմակություն մը առին։ Առտու եղավ։ Գետին ծռեցավ, տրեխին կապը թուլցեր էր, ամուրցուց, քալեց հասնելու համար։

— Գնալիք տեղներնիս չըսի,— շարունակեց։— Քաջտանին լեռն է, սուրբ Գևորգն ալ ճիշտ դիմացը կիյնա։ Ուխտին պատերը, գմբեթը, բռինչի ծառերը, ուխտավորներուն պարխանա, պարխանա նստած տեղերը, լուսաղբյուրը, անանկ աղվոր կերևան որ հոնկե. քուրդ Բաղդոյին այծերուն գոմերն ալ կերևան, մինակ թե անոնք քիչ մը շեղ կիյնան։ Ուրկե՞ ալ պիտի երթանք, ան ալ ըսեմ։ Թեղը պիտի անցնինք, Քարնիտածը չկա՞, ուր է, ուխտ՝ գացողները վարեն զագաթը քար կնետեն, նոր հարսերը տղա՞ թե աղջիկ պիտի բերեն, դիտնելու համար՝ հոտկե ձորը պիտի իջնենք, անկե ալ լեռը պիտի ելլենք։ Մինակ վերի չորս պառեխներուն առաջքը գեշ է։ Գեշ ըսածս ալ շատ դարվարի է։ Երեք չորս քայլ տեղ է եղածը ամա, ոտքերնիս որ չկրնանք բռնել, սահելու որ ըլլանք, դարվար անանկ ձոր մը կա, որ կտորնիս անգամ չմնար։ Աղեկություն մը կա նը հողը կակուղ է, որ կոխես ոտքդ կթաղվի։ Ես ալ աղեկ մը փորեցի, դուրցուցի։ Առաջ ասուած բան մըն ալ չենք ըլլար.

Սուրբ Գևորգին ալ խոշոր մամ մը խոսք տվի, առաջքը պիտի վառեմ։ Սուրբ Գևորգը մեզ կպահե»[12]։

Սա, իհարկե, թվում է շատ միամիտ ու ծիծաղելի խոսակցություն բայց թվում է միայն։ Ծիծաղելի և միամիտ թվացող այս հակիրճ ու միակողմանի խոսակցությամբ, մենք հասկանում ենք հերթականությամբ, անասունի, էշի վարքի մասին, թե ի՞նչ բաներ կարող են խրտչեցնել նրան ճանապարհներին, իմանում նաև այնպիսի բաներ, որ մինչ այդ մեզ անծանոթ էին. պարզ է դառնում, որ Արմտանում կրիային տաշտիկ են ասել, կովուրծուծ՝ կանաչ մորթով մեծ մողեսներին, հոսհոսիկ՝ փոքր մողեսներին, իսկ աղվեսի պոչիկը պարզապես խոտի մի տեսակ է։ Ի՞նչ էր իրենից ներկայացնում Քաջտանին լեռը, որտե՞ղ էր գտնվում, ի՞նչ բարքեր ու ավանդություններ, սովորույթներ կային. նոր հարսները «լմանալու» համար տղա թե աղջիկ են ունենալու Քարնետածի դագաթը քար էին նետում և հավանաբար այդ դագաթը հենց այդ պատճառով էլ այդպես է կոչվել։ Եվ այն, որ ինչ ամեհի բնության տեսարաններ էին բացվում այդ վայրերում, որից անվտանգ անցնելու համար գյուղացին ապավինում էր... Սուրբ Գևորգին։ Այո, թվում է, թե միամիտ ու ծիծաղելի է Շիրինի խոսակցությունը, մոնոլոգը։ Իհարկե, այն նաև միամիտ ու ծիծաղելի է, բայց խոր հոգեբանական ծալքեր է բացում։ Գյուղացու հոգեբանության հարազատ, սրտամոտ ծալքեր, որ միամիտ է հենց նրա համար, որ մաքուր սիրտ ու հոգի է ունեցել այդ գյուղացին։ Մեր այսօրվա գիտանկյունից «ծիծաղելին» թերևս այդպիսի անկեղծությունն ու սրտբացությունն է միայն, կույր հավատը, անհուն հումանիզմը, որ տարածվել է ոչ միայն իր նմանի, այլև անասունի վրա.

«Շիտակ չես կրնար քալել, ի՞նչ կփարտվիս,— ըսավ Շիրին,— Ալ բուռակ չես, բուռակությունդ գնաց, զոմա էշ եղար, ամեն մարդ քանի մեծնա խելք կբոլորե, դուն ալ քանի մեծնաս, խելքդ կբոցնես» (էջ 264, ընդգծումը մերն է—Գ. Ս.)։

Իսկ էշը, որ համենայն դեպս էշ է, սկսում է համառել, հետո «քեֆ կտրիլ», «ցնծության մեջ ընկնել» ու մեկ էլ համեստից գետին դցել կացինը, պարանը, հացի տոպրակը։ Իսկ Շիրինը, որ համենայն դեպս մարդ է, սկսում է բարկանալ.

«Ա՛ռ քեզի ճուկումուկ քալել, առ քեզի թոթվրտիլ, առ քեզի վեր նետվիլ, հոտոցը, կացինը վար ձգել, քեզի պես շանը շարական, եր-

12 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Սուրբ Գևորգ», «Ստամբուլ», 1958, էջ 262—263։

թաս ապրիս բարբարական, *ես ալ քեզի պես շանը կեցեր եմ շարական կկարդամ» (էջ 264, ընդգծումը մերն է—Գ. Ս.)։ Եվ առնում է բիրը ու մի լավ ծեծում իշուն։ Բայց հետագայում, երբ ամեն ինչ բարեհաջող վերջ գտնելու վրա է, բարձում է փայտը ու պիտի արդեն բռնել վերադարձի ճանապարհը, նույն վտանգավոր ուղիներից ետ գալով։*

Էշը, ոչ իր մեղքով այս անգամ, թերևս հենց Շիրինի հողը «դուրցուցած» լինելու պատճառով, այսինքն նախապես փորած ու իբր դյուրանցանելի վիճակի բերած լինելու պատճառով գահավեժի բարձունքից գլորվում է ցած...

«Շիրին գանգին մեջ պարապություն մը զգաց։ Ինչպե՞ս մարդու ոտք չկոխած այդ գահավեժին հատակը իջավ, չէր գիտեր։ Դիակին վրա նայեցավ։ Գլուխը չկար։ Համեսը, փայտը ո՞ր մնացեր էին, ատոնք ալ հայտնի չէին»։

Քիչ վերը մենք խոսեցինք «հումանիզմի» մասին և կատարեցինք մեջբերում, որտեղ արարքը հակասում էր հենց «հումանիզմին», բայց հենց դա շեշտելու համար, Հակոբ Մնձուրին Շիրինին ծեծել է տալիս իր անասունին, որպեսզի այդքան ջանք ու տքնանքից հետո կատարված ողբերգության առաջ եզրափակի պատմվածքը Շիրինի վերջին մենախոսությամբ.

«—Ճամփան քեզի ծեծեցի։ Մեկը իս ծեծեր։ Քեզի զարկած բիրս իմ վրաս կոտրուեր,—*ըսավ Շիրին։* Արցունքներ սահեցան աչքերեն։

Նորեն պառեխները եկավ, թեև պետք չկար։ *Սուրբ Գևորգին նայեցավ։ Մանիշակի գույն մը կար մատուռին շուրջը, միջոցին մեջ։*

— Այնչափ ալ հույս դրի վրադ, այնչափ ալ աղաչեցի,— ըսավ Շիրին։— Ա՞ս էր պահածդ։ Մոմ պիտի վառեմ քեզի հա՞։ Չեմ վառեր։ Ինչո՞ւ պիտի վառեմ։ Հոռոմ չե՞ս։ Քենե՞ ալ բարիք կուգա» (ընդգծումները մերն են—Գ. Ս., էջ 266)։

Մեկնաբանություններն ավելորդ են, իհարկե, բայց արժե մտածել Մնձուրու հիշյալ տողերի թեկուզ մի նախադասության վրա, որ բնությանն է վերաբերում, ավելի ճիշտ և հատկապես Սուրբ Գևորգի մատուռին. «Մանիշակի գույն մը կար մատուռին շուրջը...»։ Կատարված այդ ահավոր ողբերգության մեջ սուրբն ու իր մատուռը համեստության երանգով են պարուրված, անտեղյակ իրր կատարվածին «Հոռոմ չե՞ս, ոչ հայ լուսավորչականներին հատուկ սուրբ չե՞ս դուն. չեմ վառեր մոմը»։ Հակոբ Մնձուրին մեծ վարպետ էր։

Եթե Արմտանում ամեն տուն իր էշն ուներ, ամեն տուն անհրաժեշտ էր, որ ունենար նաև իր եզը... «միշտ դեպի լեռ, դեպի բարձրու-

թյունը» գնացող, օրհնյալ ու օրհնաբեր այդ երկրորդ արմատնյան «հերոսին»։ Դժվար լինի երևի մեր ողջ գրականության մեջ գտնել մի երկրորդ հեղինակի, որ նման ձևով բացահայտած ու նկարագրած լինի այս վերջինին, պարզած ու պատկերած լինի գյուղացու անպարփակ սերը, գորովն ու հակվածությունը եղան նկատմամբ, քան Հակոբ Մնձուրին, եթե, իհարկե, չհաշվենք այն խտացյալ արտահայտությունը, որ կոմիտասյան հորովելինն է։

Օթն գյուղացու համար էշը մարդու առաջին օգնականն է, տան հիմքերից մեկը, եղը սյունն է տան, մարդու հետ հավասար աշխատողն ու նրա թափած քրտինքի բաժնեկիցը։

«Ծո՛ մեր ապրուստը անոնցմե է, եղը որ չըլլա արտը ո՞վ պիտի վարե, կալը ո՞վ պիտի կամնե, եղան վաստակն է որ կուտենք»[13],— ասում է Հակոբ Մնձուրու պապը, ասում է, ոնց որ իր թոռան հետ խոսի տան մի իրավ, իսկական անհատի մասին, հորդ, եղբորդ վաստակն է, որ ուտում ենք ասելու նման։ Իսկ Ոսկեհան քեռին ուղղակի դիմելով եղներին հարում է. «Հայտն նայինք պապերս, դուք մեր պապերն եք, մեր տան սյուներն եք»[14]։

Եվ այդ իսկ պատճառով, ինչպես հայրը դուրդուրում է իր որդիներին, այնպես էլ Ոսկեհան քեռին մտնելով եղնասը «կամաց մը դըպավ երկուքին ծունկերուն։ Որոճալը դադրեցուցին ոտքի կանգնեցան։ Երրորդին չդպավ։ Ան ալ չշարժեցավ, անտարբերությամբ նայեցավ միայն ու շարունակեց որոճալը։ «Դուն նստե, դու մի ելլեր, ըսավ անոր, ամեն օր մեկերնիդ պիտի նստիք, հանգչիք որ արտերը վարենք։ Երեք դում, մեկ մըն ալ ես չորս ենք (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։ Չորսին կնային մեր արտերը։ Մարագը երթով, անպարները՝ ցորենով, ալյուրով մենք պիտի լեցնենք։ Ամենուն աչքը մեզի է, պապերս»[15]։ Աշխատանքի այս բաժանումը՝ «երեք դուք մեկ մըն ալ ես, չորս ենք» արտահայտությունը, այդ հուզիչ հավասարեցման արդյունք է, որի մեջ իհարկե տուժողը մարդն է միայն, ասունը։ Չէ՞ որ անասուններից մեկն ու մեկը, հերթով, մի օր հանգչելու է, իսկ մարդը՝ ոչ։ Այդ բացառիկ հոգածությունը; խնամքը, սերը հասնում է այնտեղ, որ գյուղացին նույնիսկ իր երազում տեսնում է իր... եղանը. Հակոբ Մնձուրու պապն է դարձյալ, որ ասում է իր թոռան «Մեր կարմիր եղը» պատմը-

---

13 Հակոբ Մնձուրի, *Արմատան, «Մեր կարմիր եղը», էջ 15։*

14 Հակոբ Մնձուրի, *Կոտնկ, ուստի՞ կուգաս, «Աշուն», էջ 51։*

15 *Նույն տեղում, էջ 45—46։*

վածքում. «Ակոբ, դիշերը երալս մեր կարմիր եզը տեսա լեռը, քովս եկավ, երեսները երեսիս քսեց (ընդգծումը մերն է.—Գ. Ս.), լզեց, ըլլա՞ թե գլխուն փորձանք մը գա...»[16]։

Այդ նույն սերն ու հավասարեցումն է, որ «Աշուն» պատմվածքում խաշմանը արտում տեսնելով արորի ետևից քայլող Ոսկեհան քեռուն, մաղթում է. «Աստված կարողություն տա Ոսկեհան քեռի, քեզի ու եղնոցդ Աստված բարի ուտել տա» (էջ 51)։

Իսկ Ոսկեհան քեռին թոռանը բերած ճաշատեսակը բաց անելով, դիմում է եզներին. «Թոռս ինձի թանապուր, ձեզի ալ խոտ բերավ։ Օ-օ՞-օ-օ... մարգի, լեռան խոտ չէ ձերինը։ Վիկի բիլա զրկել է ձեզի հետ կասմբցի խաթունը։ Ի՞նչ անուշ ալ կհոտին վիկերուն խոտերը, աս ինչ պատիվ է, կերեր նայիմ։ Շատ չոր չեն չթափին աստին անդին» (էջ 51)։

Եվ ավելին ու առավել հուզիչը, քուրդ Սլոն, երբ «զարիբության» է գալիս Ստամբուլ, համագյուղացի հայերը շտապելով նրան տեսության, հարցնելով այլևայլ իրենց հետաքրքրող անձ ու դեպքերի մասին, չեն մոռանում նաև իրենց անասունների մասին։

«Հետևյալ առտու Նշան Սլոն Սկյուտար տարավ։ Այնտեղի շուկային փուռերը վերիգեղցիները բանեցնելուն, երբ լուր առին թե Սլոն եկեր է, որչափ գյուղացիներ կային բովը եկան։ Չհարցուցածներին չմնաց։ Մինակ իրենց ընտանիքները չհարցուցին։ Սլ, կով, ոչխար, ինչ որ ունեին։ Մեր եզանը ճիվերը («մենք ոտքերուն ճիվ կըսեինք» ասում է Մնձուրին, մի այլ՝ «Մանկություն» պատմվածքում—Գ. Ս.) ինտո՞ր եղավ որ կոտրեցան» հարցուց Մանկանց Հաճի Համբարձումը։ «Մաղիկանց սուր կոտոշներով եզը զոչեց։ Գարեգուրի գոռչանին վրա կարծեին։ Ձեր եզը չկրցավ ինքզինքը բռնել, վերեն վար նետվեցավ, երկու ճիվերն ալ կոտրեցան։ Մորթեցինք, Հաճի աղա, քիրվա»։

«Մեր ալաճա մոզին պիտի լծեին, լծեցի՞ն, Սլո, հարցուց Օղիկին Ակոբը։ «Ձեր մոզին եզ մը եղավ, որ Ակոբ բիրվա, տեսնես, վըլլահի չես ճանչնար։ Աս դարունը լծեցին» պատասխանեց Սլո»[17]։

Իսկ մի այլ պատմվածքում՝ «Տյուկն Մամուն եզը», որ նույնպես Հակոբ Մնձուրու գրականության լավագույն արտահայտություններից մեկն է, արդեն պարզ է դառնում, թե ինչ թանկ արժեք ու դին ունի եզը

16 Նույն տեղում, էջ 15։

17 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Նոնիկ Մամանքն օղունքն Տյուքյանը—Նոնիկ մամային տղուն խանութը», էջ 147։

ու ի՞նչ է նշանակում գյուղացու համար նրա կորուստը։ Կորուստ, որ հավասար է տնից մի հարազատ մարդ կորցնելու վիշտ ու տառապանքի, իր բոլոր անկեղծ ու նաև ցուցադրական ձևականություններով։ Տյուկե Մաման անծանոթ չէ մեզ, նա Արմտանի գլխավոր հերոսուհիներից մեկն է, դեռևս «Արմտան» ժողովածուից։ Այդ ժողովածուի «Իմ տղայությունս» պատմվածքում մենք գիտենք, որ «Տյուկե մամա կըսեինք մամուն, որովհետև տյուկեի՝ երինջի ճակատ մը ու աչքեր ուներ, ախոռեն դուրս հանված երինջի մը պես կնայեր դոնեն անցնողներուն» (էջ 28)։ Ու հիմա նա, երբ լսում է, թե իր եղբ Ղափլան Ղայայում Տոստալցոնց եղների հետ «զոչվտեր» է և զարի (լեռան) գլխից գլորվել ու Ինեիսունիննի ձորն է ընկել, ինքն իրեն չի կարողանում զսպել, փոխվում է դեմքը, լայնանում, գունատվում ու գոչում հեծկլտալով... Բայց նախքան այդ ցնցող տողերի, ողբի մեջբերումը, որ անգնահատելի էջերից մեկն է հայ գյուղագրության, պիտի ասել նաև, որ այդ տողերը չեն մնում սոսկ եղերական փաստեր, այլև, ինչպես Մնձուրու յուրաքանչյուր նման նկարագրություններում, բաց են անում, բացահայտում գյուղական բարքերի ու ավանդությունների բանահյուսային, աղգագրային նոր շերտեր, դառնալով բացառապես հետաքրքրական ու թանկ, և ապա նաև անբանաձևելիորեն «ծիծաղելի», որովհետև այստեղ ևս ի հայտ է գալիս, որ հեռվից հեռու, լեռ ու ձոր «ձեռնելով», այսինքն իրար դռռալով փոխանցվող, հաղորդվող լուրը սխալ է տեղ հասցվել, երևույթ, որ հաճախ պատճառ է դառնում նման ողբերգակատակերգությունների և որից Հակոբ Մնձուրին կարողանում է ոչ քիչ թվով գրավիչ ու զուսպ հումորով հագեցած պատմվածքներ ստեղծել։ Բայց նախ Տյուկե մամու ողբը, որ դժվար է զանազանել, թե ասվում է մարդկային վերջակետված կյանքի՞, թե անասունի վրա, իհարկե, եթե չլիներ եղան սատկած լինելու դեռևս չստուգված փաստը և ողբում նրա հիշատակը.

«—Վայ գլուխս, ալ ի՞նչ ընեմ ալ ո՞ւր երթամ, լաչակները քակեց, ծեր նոսրացած մազերը թափեց աչքերուն, աղջի հարս, աղջի Դալենց աղջիկ, դուրս եկուր, նայե ի՞նչ սև լուր բերին մեղի։ Հարսը, որ լսում էր, եկավ փղձկալով արձանացավ քովը, ինչպես մահտունները եղերամայրը բոլորելով ծունկի կուգան մահվոր կիները, լաչակները քակելով, աչքերուն թափելով, եղանակավոր բառերով մահվան բայագիներ կերգեն, մեռնողին հանցանքները կներեն, կենսագրությունը, բարեմասնությունները կգովեն, «վայլըմե, վայլըմե պավե, վայլըմե պապո», քրդական հանգերգները կկրկնեն, լացավ ու ըսավ եղանակելով, ալա ե՞ղ, ալա ե՞ղ. աս ինչ է ըրիր մեղի, ինչ սև ձյուն բերիր մեր գլխուն,

արևդ առիր ու դացիր, ես քեզ տունես հասցուցի, հորթուկ մըն էիր, մեծցուցի մոդի մը ըրի... մոդի մը եղար, մեծցուցի եվ մը ըրի, ո՞ւր աղվոր առվուլտ մը, աղվոր խոլորձ մը, աղվոր կորեքնա մը կար, փետտեցի, քեզի բերի ու կերցուցի, դեղին եղնոցը մեջ ամենեն բոյովը եղար, կոտոշներդ լեռան եղնիկներուն կոտոշներեն ալ բարսցան, փաշա մը դարձուցի քեզ, ալա ե՞ղ, ալա ե՞ղ, վայլըմե պալե, որու՞ չար աչքը դպավ քեզ, դուն ինտո՞ր թող տվիր ինքզինքդ, ես քեզ չէի թողեր որ վարդը հոտվըտայիր. ինտո՞ր հիմա քեզ սև հողին տամ ու պառկեցնեմ, ինտո՞ր լեռը ղրկեցի քեզ. լեռը դլոխդ կերավ, ես ինչու՞ տունը քեզ չպահեցի, մարդերուն թումբերը կտանեի քեզ կկշտացընեի, արոտ արոտ կպտտեի գիշերվան խոտդ կբերեի մսուրդ կլեցնեի ալա ե՞ղ, ալա ե՞ղ, վայլըմե պապո, հիմա ի՞նչ պիտի ընենք մենք, տանը էրիկ մարդը խորենս ղրկեցինք, էրիկ մարդ չունինք. մենք մնացինք դուանը ետև, հարսս ու ես, երեք մանուկներով տուն մը մարդ քու հացդ կուտեինք, քու վարած արտերուդ, քու կամնած կալերուդ, ցորենին հացը, ալա ե՞ղ, ալա ե՞ղ, վայլըմե պալե, վայ մեղի...

Լեռը փայտեն դարձող տղաքը, տուներուն կնիկները շրջապատեցին դուռը։

— Ալ հերիք ծեծկվիս, ըսին ամեն կողմեն, լալով եղը կողջընենք մենք ալ հետդ նստինք ու լանք, ի՞նչ ընենք, դուն ողջ եղիր, Աստված տղաղ, հարսդ, թոռներդ ողջ պահե։ Մենք մեր եղնիքը կլծենք արտերդ ալ կվարենք, կալերդ ալ կկամնենք»[18]

Կարելի է Տյուկե մամու ողբից հանել հորթուկ, մոդի, եզ հասարակ անունները, որանց տեղ դնել որևէ հատուկ անուն և կրկին ամեն ինչ իր տեղում կլինի։ Եվ դա է, դրա մեջ է այն անհուն, համապարփակ սերը, որ ինչ-որ տեղ հումանիզմ է կոչվում նաև, այն տարբերությամբ, որ այստեղ այս հասկացության սահմանները ընդգրկում են կյանքում առկա բոլոր շնչավորներին։ Իսկ ի՞նչ է կատարվում, երբ պարզվում է, որ եղը, համենայն դեպս, չի սատկել, ողջ է...

«Տյուկե մամը, անունը Ռեհան էր Տյուկե կկանչեին, ճակատը երկու քունքերը, աչքերը տյուկեի երինջի շատ նմանելուն (ահա այսպիսի տողերում են հանդես գալիս կրկնությունները Մնձուրու գրականության մեջ և դա անխուսափելի է իհարկե։ Դրա համար էլ նրան լրիվ ընթերցելուց հետո միայն երևան է գալիս Տյուկե մամու զանազան պատմվածքներից օղակ առ օղակ համադրված կերպարը, նման մյուս,

18 Հակոբ Մնձուրի, Կոռնկ, ուստի՞ կուգաս, «Տյուկե Մամուն եղը», էջ 168—169։

Մնձուրու գրականության հերոս-հերոսուհիներին—Գ. Ս.), ուրախության արցունքներով դիմավորեց եղը, ոտքի ելավ, ափերը բացավ Աստված փառաբանեց երեք անգամ, երեք անգամ խաչակնքեց, երեք անգամ եղին ճակատը, երկու երեսները համբուրեց. «արեգ սիրեմ, մեղ վախցուցիր փաշա եղս» ըսավ։ Օննոն ու անկե փոքրը Եսոն, անունը Եսայի էր Եսո կկանչեին, վազելով գացին աղբյուրին բլուրեն դեղին հոտոցիկ, քուշմաթ, եղան ճակտիկ, մկան ակռիկ, ինչքան անուշ խոտեր կային փետտեցին բերին եղին մսուրը լեցուցին, որ ճամփեն եկած էր, գիշերը ուտեր, երեք օր ալ, մինչև եղնիքը լեռնեն գյուղ գային, եղը պիտի տաններին, արածեին մոտակա Ավաղանի Զորին, մեղվընոցին բլուրները, որմե հետո հերկը պիտի սկսվեր»[19]։

Իհարկե, այս բոլորը պատմվածք են, արձակ գրականություն, բայց ո՞վ կարող է պնդել, որ այս տողերում չկա նաև թատերգություն, բանաստեղծություն, երաժշտություն, արվեստի մակարդակին հասցված բանահյուսություն ու ազգագրություն և, ամենակարևորը, այն հայեցին, «հայեցի դրոշմը», այն ամենալավը, որ մեր պապերինն ու մամերինն էր, արևմտահայ մեր անցյալի հայ գյուղացիությանը։

Այո, բանաստեղծություն են այն տողերը, արձակ բանաստեղծություն, երբ Ակնեցի Մաման, Արութիկ պապայի կինը ողբում է իր այծի կորուստը, այն այծի, որ ականջները թանի դույն սպիտակ լինելու համար կոչել էին թանիկ այծ։ Այդ կոչումն իսկ բանաստեղծություն է ինքնին.

«Լուսնկան լուսնկա չէ որ ամեն դի տեսնվի, հատեր, հրուկ մը մնացեր է։ Ըճեպ գլուխը առավ, հովիտն ի վե՞ր գնաց։ Ըճեպ լեռաղբյուրին դի՞ն գնաց։ Թանիկ ա՜յծ... պոռաց, աղվորս, խանդում ածս, ու՞ր ես, խաթունս...»[20]։

Եվ այն Նանոյի ուլիկի մահը, այն ուլիկի, որի մասին ասում էին, թե մայրը... եղնիկից է հղիացել, այն ուլիկի, որ գյուղացիք ստիպված սպանեցին, որպեսզի փրկեն նրան գահավիժելուց ու ջարդուփշուր լինելուց...

«Զարկ՛ն,— նկարագրում է Մնձուրին,— մեկ գնդակեն վեր նետվեցավ, վար ինկավ ու մեռավ։ Ես ալ վրան գացի ու նայեցա։ Գետինը պառկած վիճակին մեջ մոտեն ավելի լավ կորոշվեր։ Ուլի բնավ չէր նմաններ եղնիկ մըն էր։ Բարակուկ ճյուղավոր կոտոշներ էին, մընընիկ

---

19 Նույն տեղում, էջ 171։

20 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Թանիկ ականջներով այծը», էջ 131։

բերանիկը եղնիկի բերանիկ էր, սրունքները եղնիկի սրունքներ էին, աչուկները եղնիկի աչուկներ էին, ոտոցիկ կերեր էր, ոտոցիկի ծաղիկ մը կար ձյունի պես ճերմակ ակռաներուն մեջը (ընդգծումը մերն է— Գ. Ս.): Նանոն լացավ, լացավ, լացավ»[21]։

Չի կարելի անտարբեր աչքով, անհույզ անցնել Մնձուրու գրականության տասնյակ ու տասնյակ նման սքանչելի տողերի վրայից։ «Հոտոցիկի ծաղիկ մը կար ձյունի պես ճերմակ ակռաներուն մեջը», մի՞թե կարելի է մոռանալ...

Մնձուրու կենդանական աշխարհի հերոսները բազմաթիվ են ու բազմազան իրենց շարքաշ, ծանր դերության ու դառը ճակատագրի բազմերանգությամբ. աշխարհ, որ ինչպես ասացինք, իր մեջ ընդգրկում է նաև թռչուններին ու սողուններին։ Այս վերջինները նույնպես սովորական, ընթացիկ ֆոն չեն նրա գրականությունում, այլ նույնպես հանպես են բերված իրենց նկարագրով, վարքով ու «ճակատագրականությամբ»։ Երբեմն էլ այնպիսի վառ երանգներով, որ թվում է սարսափելի տեսարանից ուղում ես փախչել վախեցած, լեզապատառ. բայց մեծ վախի ու նաև մեծ հիացմունքի կրկնակի զգացումների տակ մնխված կանգնած տեղումդ դիտում (ընթերցում) ես տեսածդ (նկարագրվածը)։

«Օձ շատ կա այս ձորերը, մանավանդ ցերեկի ժամերուն։ Երբ արևը կհրդեհե այս երկնագույն ժայռերը. սեփսև բռանները, սպիտակ ավազները, իրենց բուներնեն դուրս կուգան։ Կդրդռվին, վրադ նետվելու պատրաստ։ Բնությունը իր բոլոր գույները թափեր է անոնց վրա։ Դեղին օձեր կան, քրքումի գույնովը։ Սեփսևները կան, եռացող կուպրի գույնովը։ Ոսկի, շողակի պես վառողները կան կարմիր բիծերով։ Խայտաբղեխները կան կանաչ ու կապույտ օղակներովը, երկճյուղ բերաններով, դժնե աչքերով, որոնք քեզի կնային, սուր ատամնաշարով, ասեղի պես վերջավորող լեզուներով»[22]։

Միայն իր հայրենին այդպիսի բորբ, մնձուրիական սիրով սիրող, նրա կարոտով ապրողը կարող էր այդ սարսափազդու սողուններին նկարագրել այդպիսի վառ, հմայիչ գույներով, որտեղ, ինչպես հստակ երևում է, առկա է և հմայվածությունը, որ այդ սողունների նկատմամբ ցուցաբերված քաջության ու սառնարյունության հետևանք չէ համենայն դեպս, մանավանդ, երբ գիտենք, թե Մնձուրին, իր մանկու-

---

21 Հակոբ Մնձուրի, Կուռնկ, ուստի՞ կուգաս, «Մանկություն», էջ 86։

22 Նույն տեղում, «Արմտանի այգիները», էջ 195։

թյան օրերից մինչև խոր ծերություն, միշտ էլ վախենում էր օձից։ «Ես ձեզի ինձմե՝ իմ կյանքես կպատմեմ։ Իմ մեջս օձի վախը կա, և ասիկա տղայութենես մինչև այսօր։ Հիմա՝ այսպես ըսեմ՝ իմ բնակած տունս օ՞ձ կա։ Չկա, կհավատամ թե չկա, այո, բայց նորեն իմ հավատացածիս ալ չեմ վստահիր։ Ամեն անգամ, որ ես կարասի մը կամ որևէ բան մը վեր վերցնելու կամ տեղափոխելու ըլլամ, մարիս մեջ առաջին եկածը այս է, չըլլա՞ թե տակը օձ մը կենա։ Իմ վախս իմ երկրես բերի հետս»[23]։ Իսկ այժմ, թռչունների մասին և այդ թռչուններից ոչ թե սոխակ կամ դեղձանիկի, այլ՝ ագռավների.

«Մեր գավառներուն ագռավները ճերմակ էին, սև թևերով։ Անոնք այնքան վարժված էին մեզի՝ գյուղացիներուս, որ՝ մենք ուր որ ըլլայինք մեր բոլորտիքեն չէին հեռանար։ Օրը քանի մը անգամ երդիքները կիջնային, «գա...» կկանչեին ու մեզի կնայեին նայվածքով մը որ մարդկայինին կնմաներ»[24] (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։

Այստեղ է ասված երևի, որ էականը նայվածքի մեջ է, թե դու ինչպիսի՞ ներքին լիցքով, հոգեբանությամբ, խառնվածքով ես դիտում տվյալ առարկան, անասունին, մարդուն։ Եվ եթե ասված էլ չէ, պարզ է դառնում երևի, որ քո այդ նայվածքով բացահայտում ես դու ինքդ քեզ։ Նույնիսկ ագռավների նայվածքում մարդկայինը տեսնելու մնձուրիական դիտակետը մի անգամ ևս հաստատում է նրա խորը մարդկայնությունը։ Մարդկայնություն, իհարկե, չի նշանակում կույր սեր, բոլորանվեր սեր առանց խտրականության։ Դեռ աշխարհում չի եղել մի մարդ, որ սիրեր բոլորին, ամեն ինչ, նույնիսկ անխտիր բոլոր մարդկանց։ Նման դեպքում ո՛չ սերը կլիներ սեր, ո՛չ գեղեցիկը՝ գեղեցիկ, և ո՛չ էլ արդարը՝ արդար։ Եթե ասում ենք ձգտել սիրո, գեղեցիկի ու արդարի, նշանակում է չենք բացասում գոյությունը տգեղի ու անարդարի։ Եթե ասում ենք մարդկային, ուրեմն առկա է և անմարդկայինը։ Եվ եթե լինենք անկեղծ ու արդարամիտ, պիտի խոստովանենք նաև, որ կյանքում զգալի տոկոս են կազմում տգեղն ու անարդարը, անմարդկայինը։ Եվ հենց դրա համար գեղեցիկի, արդարի ու մարդկայինի ձգտման մեջ կա գեղեցիկը, հերոսականը։ Այսինքն լավը կյանքում ոչ թե քանակ է, այլ՝ որակ։ Հերոսականն է քիչ, հերոսներն են քիչ։ Եվ

---

23 Հակոբ Մնձուրի, *Արմտան*, «Օձի վախ», էջ 95։

24 Հակոբ Մնձուրի, *Արմտան*, «Ագռավները», էջ 177։

այդ բոլորից եզրակացություն, որ Հակոբ Մնձուրին քչերի շարքում է, նրա ձգտումը արդարի ու գեղեցիկի, ձգտում է լույսի, ոչ այնքան լուսառատ իր կյանքում։ Ագռավների նայվածքում մարդկայինի նմանություն տեսնելը ինքնին նույնպես լույսի ձգտում է, որովհետև մարդկայինը ամենալուսավորն է, մարդը բոլոր տեսակի ստեղծագործությունների ամենալուսառատ երևույթը, չժխտելով նաև նրա մեջ առկա վատը, հոռին ու մութը։ Այստեղ նաև էականը դիտակետն է, նայվածքը, անցկացված զուգահեռը, նայվածքի խորքը, նրան առաջնորդող սկզբնաղբյուրը։ Մնձուրին լավ գիտե ագռավական մարդկային նայվածքի խորքը, նաև գիտե, որ այն մարդկայինի հոռի, մութ կողմերի կրողն է, և այդ նայվածքի տակ թաքնված է մարդկայինին հատուկ կեղծիքը, սուտը, խորամանկելը... Ագռավները «երդիքներուն եզերքները կուգային, խելոք խելոք կպտտեին, իբր թե բան մը ընելու չէին. բայց կկեղծեին, սուտեն կընեին։ Ու հանկարծ կհարձակեր իրենցմե մեկը, ընկույզ մը կգողնար, ուրիշ մը թարխնայեն բլիթեն փսոր մը կփրցներ, ու մինչև աղջիկը որ կհսկեր, ձեռքը երկայն ձողը անոնց ուղղությունովը փարտելով «լե՛... լե լե լե լե՛...» պոռար, իրենք կթռնեին»[25] (ընդգծումը մերն է.—Գ. Ս.)։

Մարդկանց անգամ խաբող ագռավները, որոնց հետ նույնիսկ շար խաղեր խաղացող այդ թռչնազգիները, իհարկե, ընդունակ էին ավելի խորամանկորեն վարվել չորքոտանիների մեջ ամենաշատ սյլասեր ու լավ գծեր ժառանգած շունների հետ։

«Օրը երեք ժամ մեր կերածներեն՝ ավելցածները տանը դուռը կամ բակը շուններուն կուտայինք։ Կբավեր որ տեսնեին բարդիի մը գագաթեն, վար կթռնեին ու կշրջապատեին շունը։ Իրենցմե մեկը կմոտենար։ Շունը անշուշտ չէր ախորժեր, թե կուտեր թե կղայրանար, կհաչեր։ Ագռավը գիտեր սա, թող զայրանար, ան ավելի կմոտենար, մինչև բերանը մոտենալու աստիճան։ Շունը աներես ագռավը բզկտելը կուգար, սպատառը կձգեր, կվազեր, որ բռներ, ու՞ր պիտի բռներ—իսկ մյուսները ինչ կար կհափշտակեին ու կփախեին։ Աս խաղը միշտ կկրկնվեր։ Շունները խաբելը բա՞ն մըն էր անոնց համար։ Մեզ կխաբեին, ո՞ւր կմնային շունները»[26]։

Եվ ինչպիսի վարպետությամբ էին իրագործում ագռավները այդ դողությունները, որ մինչև իսկ կարող էին սուված թողնել նույնիսկ ար-

---

25 Նույն տեղում, էջ 178—179։

26 Նույն տեղում, էջ 179—180։

տում աշխատող կանանց ու տղամարդկանց, մանավանդ կանանց, օգտվելով նրանց... շատախոսությունից։

«Կինները դիտեք շատախոս են, թե կաշխատին և թե չկար բան մը որ չպատմեին իրարու։ Ագռավները, որ կլրտեսնեին զիրենք, կմոտենային. իրենց կտուցներովը, ճանկերովը կքակեին հանգույցը, աղածոները կթողնեին, մյուսները կկրեին։ «Աղջի հարսի՜կ... կպոռար աղջիկ մը որ կերթար ու վալան կտեսներ քրքրված վիճակի մեջ, անծե՛ղները վալան բացեր ու տարեր են ճաշը, բան չեն ձգեր, հիմա ի՞նչ պիտի ուտենք»[27] (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։

Կխաբվեին նաև տղամարդիկ, «մասնագիտացած»... այդ գողերից։

«Մեր այրերուս ալ օձիքը չէիք ձգեր։ Արտերը վիպ, դարի, ցորեն ցանել կերթայինք։ Արտ վարողը իր ճաշը ծառի մը տակ կդներ, կորի մը կգծեր, սերը կցաներ կորիին մեջ ու մաճեն բռնած կվարեր եղները։ Ագռավ մը հեռուեն հերիք էր որ նշմարեր վալան, կիջնար մոտակա արտ մը, մեկ մը վեր, մեկ մը վար մաճ կուգար, և ոչպեսզի չգիտցվի այդ արտ վարողեն, մարդու մը, գողի մը բոլոր զգուշությունները ընելով, կծկվելով կմոտենար, կքակեր հանգույցը ու շուտ շուտ կկրեր ինչ որ կար իրեն ուտելիք»[28] (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։

Այս, բնությունն է իսկական համայնապատկերը կյանքի. նա է ամբողջական ու լրիվ և ագռավը, բնության այդ մասնիկը, եթե իր նայվածքով մարդկայինին, մարդուն է նման, մարդ էլ կա, որ նման է... ագռավի, կեղծող, ստախոս, խարդախ ու ագռավական՝ բոլոր զգուշություններով, կծկվելով մարդկանց ինչք ու հարստությունը գողանալու մոտեցող։ Կա գող մարդ կամ մարդ գող ագռավի նման, նրա պես։ Ինչպես կա մարդ-մուկ, նրա պես կրծող, նրա նման վարակի բույն։ Բնության մեջ առկա անասունների նմանողությամբ։ Եվ դեռ կան ագռավական ժողովներ, այնպես ինչպես մեր մարդկային ժողովները կամ նման նրանց.

«Բայց ամենեն շատ իմ զարմացածս իրենց ժողովներեն էին, մեր պատգամավորական նիստերուն այնքան նմանությունովը»[29]։ Եվ Հակոբ Մնձուրին նկարագրում է այդ ժողովների լրիվ մանրամասնությունը մարդկայինի այնքան մոտ ու վառ գույներով, որոնք նույնպես, ինչ-

27 Նույն տեղում, էջ 180։

28 Նույն տեղում, էջ 180—181։

29 Նույն տեղում։

պես այս վերջինները, շատ հաճախ տեսում են ուշ գիշերից մինչև լուսաբաց[30]։

Ժողովներ ու ճառեր, քարոզներ, որոնք, եթե նման են ագռավական ժողովների, կան ճառ ու քարոզ ասողներ... այծերի նմանողությամբ. «Կատույա այծն ալ սանդուղին ամենեն վերի աստիճանին վրա կայներ, մորուքը կախեր, բակին այծերուն կնայեր, անոնց ճառ մը կարդալու, քարոզ մը տալու պես դիրքով մը»[31]։

Եվ եթե կան իրենց մեջ կեղծիք ու խաբեություն թաքցնող ագռավական նայվածքներ, կան նաև արհամարհականները, որոնք հիշեցնում են մարդկայինը նույնպես և պատկանում են... ուղտերին։ «Ուղտերը իրենց տձև երկայն պարանոցները հանկարծ ինձի դարձուցին ու նայեցան նայվածքով մը որ արհամարհական էր կամ ինձի այնպես թվեցավ»[32]։

Վերջապես կենդանական աշխարհում ամենատխելքները, նրանք՝ թռչնազգիներից հավերն ու աքաղաղները, վառյակները նույնիսկ «խելք» ունեն և գիտեն, ճանաչում են մարդուն, տիրոջը. «Հարսները տուն մտան։ Հավերուն նայող չեղավ։ Կոկուացին դարձան։ Հավերն ալ անխելք չէին։ Խելք ունեին։ Ո՞չ հարսներեն, ո՞չ Ոսկեհատ քեռիեն կուտ ապատեցին։ Ե՞րբ պիտի երենար, ե՞րբ կուտին դաբեկը ձեռքը տուներն դուրս պիտի ելլեր հարսներուն կեսուրը, Ոսկեհատ քեռիին կինը, տանը տիկինը։ Աքաղաղները, հավերը, վառյակները, հավկիթեն նոր ելած ձագերն անդամ կճանչնային զինքը։ Բոլորը պիտի վազեին վրան։ Կուտի տաբեկով ալ չըլլար, փեշերեն պիտի չհեռանային։ Դուրսեն, փողոցեն ալ դար, պիտի շրջապատեին։ Փախչեր ալ, պիտի չերթային։ Տուն մտներ, տուն պիտի մտնեին հետը, մինչև որ կուտ տար իրենց»[33]։

Իսկ նապաստակը. «որ չողանի թուփի մը մոտ կլորվեր նստեր է, ու երաժիշտ չի կուկուին պես, բաղաձայն է, կղարմանա կուկուին վրա»։ Եվ դեռ «Աղվես մը որ նույնպես արվեստագետ չէ...»[35]։

Եվ վերջապես. «Գյուղի մը մեջ տղա մը կկարդեն, հարս մը կբերեն տուն, աս տղան աս հարսեն չի կշտանար։ Ան օրը երկու երեք

30 Տե՛ս նույն տեղում, էջ 181—183։

31 Հակոբ Մենուրի, Արմտան, «Շեխկնիկ, ո՞ւր», էջ 248։

32 Հակոբ Մենուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Զիմաոցիները», էջ 97։

33 Հակոբ Մենուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Աշուն», էջ 47։

34 Հակոբ Մենուրի, Արմտան, «Բանաստեղծը», էջ 315։

35 Նույն տեղում։

անդամ կուզն վայելել դայն։ Ասկն հարսին թեև բան մը չըլլար, տղան օրն օր կիյնա, այնքան կհալի, այնքան կնիհարնա, որ ոտի վրա կայ-նելու ուժ չմնար, կհիվանդանա»[36]։ Ու որպեսզի կարողանան բուժել տղային կմտածեն հեռացնել հարսից դեթ որոշ ժամանակով ու կու-զարկեն քեռիին տունը։ Տղան ոչինչ կհասկանա իր տկարությունից ու ուժասպառությունից, անփորձ ու անգետ է այդ հարցերում ու քեռիին տանը, մի օր, պատահաբար տեսնելով խոյ մը, որ իր նման նստած տեղից չի կարողանում վեր կենալ, հարց կուտա քեռուն.

«— Ի՞նչ է եղեր ան խոյին, որ տեղեն չերևար, քեռի, կհարցնե։ Քեռին չհամբերեր, վերջապես կըսե.

— Քեզի պես եղավ, ուժ չկա վրան, որ ոտքի ելլե։ Դուն ինտոր գիշեր ցերեկ հարսեն չկշտացար, աս հալը ինկար, ոտքերդ չեն բռներ, քեզ հարսեն զատեցինք, քեռիդ տունը բերինք, ան ալ այծերեն չկըշ-տացավ, անոր ալ ոտքերը չեն բռներ, այծերեն զատեցին, ծառի տակը ձգեցին։ Անոր քեռիին տունն ալ հոն է։ Հասկցա՞ր հիմա։

— Հասկցա, այո, կըսե, կլռե»[37]։

Այս պատմվածքը շատ է տիպական Մենուրու գրականության մարդ-անասուն սահմանագծերի «խախտման» բնույթի մեկնաբանման իմաստով։ Խախտում, որ վերին աստիճանի բնական է դառնում իր հերոսների՝ ջահել, անգիտակից ու բնությունից անմիջականորեն սե-րած լինելու հանգամանքով, և նաև բնության բնական տարերքին տուրք տալու նրանց անհաշիվ պատրաստակամությամբ։ Մարդ-անա-սունի տարբերությունը այստեղ հանդես է գալիս միայն մի հարցում, որ տղայի համար ծնողների կամքով բերված հարսը մեկն է, իսկ անասունի «հարսները» մեկից ավելին։ Եվ եթե չլինի մարդկանց կող-մից մարդկանց «փաթաթված» օրենքի ուժը, դժվար թե լինի այն տար-բերությունը, որ մարդկային կյանքի առավելությունն է անասունների նկատմամբ. այսինքն ամուսնական կյանքում միակնությունը, հանրա-յին, հասարակական կյանքում դողության, սուտի, կեղծիքի և այլն դատապարտումը, այն դեպքում, երբ դող ագռավը և բազմաէջ խոյը զերծ են դատապարտումից, չհաշված նաև այն հանգամանքը, որ շա-բաշահումը բնության իսկ արտանած սահմաններից, վնասում է և մարդուն և նույնիսկ խոյին։ Բայց չէ՞ որ կան նաև մարդ-խոյեր, որոնք ապրում են և խոյի կյանքով, խոյի պես։ Իհարկե, Հակոբ Մենուրին,

---

36 Հակոբ Մենուրի, *Կապույտ լույս, «Քեռիին տունը», Ստամբուլ, 1958, էջ 252։*

37 *Նույն տեղում, էջ 256։*

այն դրողներից չէ, որ մարդու ամուսնական կյանքում նախապատվություն է տալիս մարմնականին, նրա գրականությունն այդ հարցում ևս լույսի ձգտում է, հոգեկան կյանքի, հոգեկան միասնության։ Բայց ի՞նչ հոգեկան կյանքի, հոգեկան սիրո մասին կարող էր ընդհանրապես խոսք լինել այն միջավայրում, երբ ծնողները ամուսնացնում էին իրենց զավակներին դեռևս վաղ պատանեկան հասակում՝ և այն էլ ոչ այս վերջինների կամք ու ընտրությամբ։ Եվ ինչ խոսք կարող էր լինել կամքի և ընտրության մասին, հաղիվ տասներկուսը բոլորած աղջկա կամ տասնհինգը թեակոխած տղայի մասին, այն էլ կիսագրագետ գյուղում։ Ուրեմն, դուրս է գալիս, որ մարդ-անասուն այդ բացառիկ հարաղատությունը, «շփոթը» արդյո՞ւնք է այն իրապաշտության, այն ճշմարտության, որ մարդկային զիտակցական կյանքի մակարդակը բարձր չի կանգնած անասնականից, դրական գծերում էշ ու եզի հետ իր չարքաշ տքնաջան աշխատանքում. ժիտականի նժարում խոյի ու ադռավի հետ։ Եվ վերջիվերջո բնությունը, այդ մեծ դաստիարակը, նրանց ծնողն ու սնողը ոչինչ չի՞ պարդևել ավելի մեկին կամ մյուսին։ Երևի այդպես էլ լիներ հարգելի բացառություններով, ի հաշիվ մարդ արարածի և, շատ դեպքերում, այդպիսին էլ կա։ Դրա փաստը Հակոբ Մնձուրու գրականությունում հանդես եկող հերոսներն են, նրա պատմվածքների դդալի տակոսի մեջ գծագրված կերպարների նախնադարյան կենցաղն ու հոգեբանությունը։ Բայց նույնիսկ նման հերոսների, մընձուրիական նման կերպարների մեջ կա մի բան ավելի, քան նույն բնությունից սերված անասունների մեջ։ Եվ հենց այդ բանն է, որ ամենասովորական մարդ-ադռավին, մարդ-էշին, մարդ-եզ ու այծին, մարդ-խոյին դարձնում է սիրելի, թեկուզ ինչ-որ տեղ առավել սիրելի, քան էշը, եզը, այծն ու խոյը։ Այդ բանը հենց բնության կողմից սեռած, նրա կողմից մեծավ մասամբ դաստիարակված մարդ արարածի բնությունն զգալու, նրանից սովորելու, այն իր դաստիարակը ընդունելու և նրան սիրելու, ընկալելու գիտակցությունն է։ Ահա թե ինչն է բնության կողմից մարդ արարածին տրված առավելությունը։ Մարդկային միտքը, որ իր լայն ու խոր իմաստով բացակայում է բնության մյուս «զավակներից», անասուններից, ծառ ու ծաղիկներից, մարդուն դարձնում է մարդ։ Մարդը կարողանում է սովորել իր ծնողից, բնությունից։ Սովորել, յուրացնել լավը, գեղեցիկը, արդարը, տեսնելով նույն բնության մեջ առկա վատը, տգեղն ու անարդարը։ Եվ նրանք, ովքեր սովորում են մերձենալ բնության արևին, լույսին ոչ միայն լուսավոր են դառնում, այլև լուսավորում են շրջապատը, իրենց նմաններին։ Եվ Հակոբ Մնձու-

բու գրականության նժարը թեքված է այդ ուղղության, նրա հերոսները, իրենց մեծ ծնողին հավատարիմ, նրա սերն ու պաշտամունքը ունեցող որդիներ են, որդիներ, որ գիտեն սիրել նաև, գիտեն նույնանալ նաև իրենց ծնողի այլ «որդիներին», չխորթանալ նրանց, ապրել միասնաբար, խոսել մարդկային լեզվով, ջանալ «մարդկայինը» տեսնել նրանց մեջ և մարդկայնորեն վերաբերվել և, զգալով մարդ արարածի առավելությունը, ուղղություն տալ այս վերջիններին, արդարամիտ տերը դառնալ նրանց, լծել իրենց դուրանին, բեռնել վրան, ողբալ նրանց կորուստը և նույնիսկ անհուն ցավ զգալ նրանց պատժելիս։ Մարդիկ, որոնք համեստ են խոտի նման ու ամուր՝ կաղնու հաստաբեստ բունի տեղակ։ Ինքուլշ են ու վաղանցիկ բամբուսիկների նման ու վարդի նման բուրումնալից, որոնք կարող են համեստ լինել մանուշակի նման և փուշ լինել, երբ հարկ լինի։ Եվ այդպես էլ են, որովհետև բնությունից են սեռած, բնական են ու լուսատատ։ Մի խոսքով, գյուղացի են։

III

«Արտը տունն առաջ է։ Ան կպահն տունը։ Դուն արտին պիտի նայիս։ Քարը, խիճը, տատասկը պիտի մաքրես, որ ան ալ քեզի նայի։ Քու մեկիդ դեմ բան, երեսուն տաս։

Մնձուրիական այս խոսքերի մեջ կա նույն այն ճշմարտությունը, ինչ կար ու եղել է նրա կենդանական աշխարհի որոշ ներկայացուցիչների նկատմամբ։ Էշը, եզը, հորթը, կովը և արտը նրանք են, «ովքեր» պահում են տունը, իսկ որպեսզի նրանք լավ պահեն քեզ, դու էլ պիտի նրանց լավ պահես, հոգաս, դուրդուրես, սիրես։ Սա նույնպես պատգամն է բնության։ Այն մեծ դաստիարակի, որի մասին խոսեցինք մեր նախորդ էջերում։ Պատգամ, որ հաստատված է փորձ ու փորձառությամբ։

Դպրոց ու դաստիարակություն չտեսած գյուղացի մարդու համար այդ գիտությունը հենց բնության հուշածն ու սովորեցրածն է։ Բնության ու կյանքի հուշածն ու սովորեցրածը, կարելի է ասել, ամենաճշմարիտն է ու հիմնավորը։ Ամենառեալը։ Եվ դա արդյո՞ք վերաբերում է միայն գյուղացուն։ Դժվար թե։ Դա վերաբերում է նաև, և մասնավորապես..., դրողին։ Արվեստագետին։

«Գրելը առնել ու տալ է։ Գրելը մտածել ու տալ է, որ նորեն նույնն է։ Գրողը գրելը ինքնիրեն կսորվի։ Իր աշակերտությունը ինքը կընե, մինակը։ Անոր պետք եղածը շատ բան տեսնել, շատ բան կարդալ է։ Ան ինչքան շատ առնե, այնքան շատ կուտա։ Գրողը իր նյութերը օդեն չառներ։ Ան իր ապրած միջավայրեն, իր շատ աղեկ ճանչցած շրջանակներեն, իր ընթերցումներեն կառնե։ Եթե հակառակը ընե, չգիտցած կամ աղեկ չդիտցած տեղերեն, անձերեն առնե, գեշ գործ կուտա։ Ասիկա այնքան ճիշտ է, որ մենք կրնանք գործի մը ժեննեղը[1], ծննդոց գիրքը երևան հանել, գրողին ճանչցած մարդիկը կամ եղած տեղերու քարտեզը պատրաստելով»[2]։

Այդ բոլորը վերին աստիճանի տիպական են Մնձուրու գրականությանը։ Թեկուզ ընթերցելով այն տողերը, թե Հակոբ Մնձուրին ինչպես է ստեղծել բնության անմահ իր «ձյունանկարները», «լեռնանկարները» ու «գետանկարները», հանդում ենք այն եզրակացության, որ բնությունն է եղել նրա առաջին ու մեծ դաստիարակն ու ուսուցիչը։

«Ամեն տարի խիստ ձմեռ մը կունենայինք։ Ձյունը կտեղար, ձյունը ձյունին վրա։ Փողոցները կթաղվեին ձյունին տակ։ Չորս ամիս բևեռային սպիտակություն մը կար ուր նայեիր շուրջանակի։ Աղբյուրը կսառեր։ Կիները շալակ կողովներով ձյուն կբերեին հալեցնելով խմելու համար։ Ագռավները գիշերները ժողով կընեին ընկուզենիներու գագաթը, քաղաքագետներու ժողովներուն զարմանալիորեն նմանը։ Աջակողմ, ձախակողմ, կենտրոն ունեին, նախագահ ունեին, պատգամավորներ որ պատգամ կտանեին կամ կբերեին սառած միջոցին մեջեն։ Իմ տունս գյուղին պարտեզներուն անմիջապես կիցը ըլլալով, գիշերվան որ ժամուն դուռը եկեի, երգիքը ըլլայի, անոնք կտեսնեի։ Ագռավներենով կընեին վիճաբանությունները։ Հաճախ մինչև լուսաբաց կտևէր։ Նախագահը անդադար կսաստեր, կարգի կհրավիրեր կամ ժողովեն կվտարեր անկարգները։ Ասոնցով ես բանեցա ձյունանկարս»։

«Խատուտիկ կկուն՝ սանտրը գլուխը՝ կալին պատին վրա կնստեր։ Իմ տունս թեև երկնցնեի պիտի բռնեի։ Կամ խուլ ձորի մը գագաթը բոան մը ծերպը կըլլար։ Կուկ-կո՜ւ... կուկ-կո՜ւ... կկանչեր։ Մեկ չէ, երկու չէ, տասը չէ, հարյուր չէ, առտըվընեն ի վեր։ Նապաստակ մը ձորը, արևին մեջ պառկեր է, աչքերը բաց են, կթմրի կկուին երգեն։ Աղվես մը կթափառի շողաններուն մեջ, կլսե կկուին երգը, բայց մտիկ չը-

---

1 Ժեննեղը (Ֆր.)—ծննդաբանությունը։

2 Հակոբ Մնձուրի, Նամակ բարեկամիս՝ Ա-ին, «Մարմարա», 1958, № 5287։

ներ։ Կարմիր, կապույտ հագուստներով հարսերու խումբ մը դիմացի ճամփեն կիջնա շաղակրատելով, զուլպա հյուսելով։ Ամեն օր իմ տունս կամ ամեն անգամ որ այս ձորերեն կանցնեի, այս տեսարաններով կլեցվեի։ Անոնցով լեռնանկարս շինեցի»։

Գետին ձայնը կբռներ միջոցը։ Երբեմն անանկ կըլլար որ կիսլանայիր, չէիր լսեր, հետո նորեն ականջներդ կբացվեին, կլսեիր։ Գետափեն ավազները կփփեին արևին։ Հանդերը, այգեխումբերը կճողային ծիրաններով, խնձորներով, թութերով։ Բյուրավոր ժիժիներ մեկ ձայն ժիժի-ժիժի... կկանչեին։ Միջոցը, որ բոցի գույն կուենար՝ թութ, ծիրան, խնձոր, ծաթրի՞ն կհոտեր։ Կին մը կհայտնվեր գետափը, կպոռար գետին վրայեն դեմի ափը այգիի մը, որքան ձայն ուներ—Լճացի հարսի՜կ... Ասոնք ինձի գետանկարը գրել տվին»[3] (ընդգծումները մերն են—Գ. Ս.)։

Բայց ու՞մ համար բնությունը նման դեր չի կատարել, ու՞մ համար նա չի հանդիսացել առաջին մեծ դաստիարակն ու ուսուցիչը։ Հիշենք թեկուզ Մ. Մեծարենցի տողերը «Իրիկնալույսին ծիրանի ծովուն մեջ կղզիացած արտասվող ուռիներուն շուքին տակ, հովիտին խորը, ահավասիկ իմ երգս, արոտներուն շունչովը լեցուն, ահավասիկ իմ երգս, առվեղերքի անանուխին ու ռեհանին խունկովը օծուն, ահավասիկ իմ երգս, հնձված արտերուն ու հերկված հողերուն բույրովը, արևելի խաղողներուն ու մեղրացած թուզերուն անուշությովը ակաղձուն»։ Ահավասիկ այն երգը, բանաստեղծությունը, որ նույն ակից է սնվել։ Նույն ակից է սնվել և Դանիել Վարուժանը։ Գյուղական աշխարհին նվիրված նրա բանաստեղծությունները հուշողը, նրան անբանաձևելի արվեստի գագաթներ նվաճելու ուղիներ բաց անողը եղել է հենց նույնպես նա, այդ «ուսուցիչը»։ Այն «ուսուցիչը», որ գյուղացուն «պարտադրել» է հայրեններ երգել ու այդ հայրենները լսելով հուզվել, վերանալ բանաստեղծին ու հայրենների նման երգեր հորինել.

Հունձք կժողվեմ մանդաղով
— Լուսնակը յարս է —
Ակոս ակոս ման դալով։
— Սիրածս հա՞րս է։

Մանդաղս քարին եկավ,
— Յարս յա՜ր ունի —
Քարեն լորիկը թռավ։
— Ե՞րդս կարյունի։—

3 Նույն տեղում։

Կամ ո՞ր դպրոցը, ո՞ր համալսարանը կարող էր բանաստեղծին սովորեցնել այն, որ նա գրեց կանգնած «Ցորյանի ծովերի» առջև և կարո՞ղ էր գրել միթե, եթե գրելը «առնել ու տալ» չլիներ։ «Առնել» կարողանալ առնել ինքարկե և տալ, կարողանալ տալ նաև, որը այս դեպքում, առավել էականն է։

Հովե՞ր կանգնին.—
Ու ցորյաններս հուշի՜կ-հուշի՜կ կարթննան.
Իրենց խորքեն կհոսի դող մը անսահման։
Գեղագալար կողերն ի վեր բլուրին
Ծովե՞ր կանգնին...
Հովե՞ր կանգնին.—

«Ասոնք ինձի «գյուղանկարս» գրել տվին» պիտի ասեր Մնձուրին, եթե ինքը լիներ Վարուժանի տեղակ գրած նաև այս բանաստեղծությունը։ Բայց միտքն այսպես է ավարտում Մնձուրին իր «Բարեկամին, Ա.-ին» ուղղված նամակում.

«Կտեսնես որ ամեն գրողի պես ես ալ իմ շուրջես առած եմ նյութերս։ Դպրոց մը ավարտելու ալ ըլլայի՝ առավելություն մը չպիտի տար ինձի։ Դպրոցը՝ գրականության ֆակուլտետ մը ըլլա անգամ, գրող չի հաներ, ուսուցիչ, պաշտոնյա, գրականության դոկտոր կպատրաստե, որ գրող ըսել չէ։ Արդեն ամեն գրող, օթոդիդակտ, ոչ-օթոդիդակտ[4], նույն բանը կընե, ինքզինքը կհասցնե։ Սթենդալ մը, Բալզակ մը, կամ Դոստոևսկի մը, Տոլստոյ մը, Ֆլոբերի մը գործին մեջ դպրոցը ինչքա՞ն բաժին ունի»[5]։

Եթե Հակոբ Մնձուրին ինչպես խոստովանում է իր ինքնակենսագրական հուշերում ոչնչով պարտք չէ դպրոցին ու իր ուսուցիչներին, այնուամենայնիվ, նա իր ամբողջ կյանքում խորապես երախտապարտ ու հավատարիմ մնաց և անհաշիվ պարտական իր այն մյուս դպրոցի ու ուսուցչի նկատմամբ, որ բնությունն էր, իր հայրենի բնությունը։ Մնաց հավատարիմ, որովհետև ոչ միայն ստեղծեց անգնահատելի «ձյունանկարներ», «լեռնանկարներ», «գետանկարներ» և այլն, այլ հենց այդ նկարների յուրաքանչյուր տողից ու բառից լույս աշխարհ բերեց այնպիսի պատմվածքներ, որոնք դարձան հայ գրականության գոհարները։ Ահա, թեկուզ, այդ գոհարներից երկուսի՝ «Մարիկ Տալիա» և «Փշատիրն ծաղիկը» պատմվածքների մասին արած իր խոստովանությունը.

---

4 Օթոդիդակտ (Ֆր.)—ինքնուս, ինքնադարգացմամբ։

5 Նույն տեղում։

«Մարիկ Տալիան» եղած չէ հարկավ, ես ստեղծեցի, բայց ամեն տարի կալ հանելը, ցորեն չափելը կային, անոնց վրայեն շինեցի Մարիկ Տալիան։ ...Այս դեպքը նույնպես չէ եղած, բայց տեքորը իմ գյուղիս ամենօրյա տեքորն է։ Անոր վրա ես բանեցա իմ փշատիի ծաղիկիս պատմությունը»[6]։ Այն պատմությունը, որ ինչպես նշեցինք մեր նախորդ էջերում, Մարտիրոս Սարյանը նմանեցրել է իր դեղանկարչությանը, ունկնդրելուց հետո, բացառապես հոգեհարազատ գտնելով այն։

Իհարկե, միայն այդ երկուսը չէին, նրանց վրա կարելի է ավելացնել թեկուզ «Կապույտ լույս» ժողովածուից՝ «Մուտքը», «Մունջը», «Կարմիր կանաչ ապրշումը», «Հարսնությունը», «Նուռ մամը», «Նորեն Նուռ մամը», «Ջորեքուռակը», «Քռիկի բաղարջը», «Արմտան» ժողովածուից՝ «Մեր կարմիր եղը», «Թամամ մամային արմանքն ու զարմանքը», «Ահարոնին Մարոյին պատմությունը» «Մեր վերիգեղին Տեր Պողոսը», «Օձի վախը», «Խիպը», «Քունգլուխը», «Մինաս քեռիին հինգ կնիկները», «Թանիկ ականջներով այծը», «Ճերմակ ցախավելի թուփերը», «Դիշեր մը Կոչենց Խորենին պատահածը», «Հայան հարսիկին Մուշեն», «Ագռավները», «Մոլլա Էմերին էշը», «Բզեզները», «Դիր թե այս տարի թութ չեղավ», «Գաբրիել աղան հիվանդ է», «Տեր Գենարը», «Խնկենց տունը», «Շեխնիկ ուր», «Կինս ու ես», «Մելիքենց Մկրչը», «Ջաղիկ Օհանը», «Գետանկար», «Ջրհեղեղը», «Կոռնիկ, ուստի՞ կուգաս» ժողովածուից՝ «Աշունը», «Մանկությունը», «Մեր մայրերը», «Ջիմաոցիները», «Տյուկե մամուն եղը», «Օձը մատս կճե՞ց... օձը մատս խածա՞վը», «Արմտանի այգիները», «Խաղցեք գառնուկներս, ուլիկներս, խաղցեք, մարդն ալ գնաց, տերտն ալ գնաց, խաղցեքը», «Լեռան տանձը», «Մաղիկանց էշը» և տասնյակ ու տասնյակ այլ պատմվածքներ։ Այո, Հակոբ Մնձուրին բացառապես հավատարիմ ու երկյուղած սեր ու հարգանքով լցված մնաց իր ուսուցչի նկատմամբ և դրա առաջին արտահայտություններից մեկը իր գրականությունում եղավ այն, որ բնությունը նույնպես ձեռք բերեց այն հատկանիշները, որ ուներ Մնձուրի գրողի համար ամենապաշտելին՝ Մարդը։ Եվ այսպես պարտեզներ լռեցին. «Գյուղին բոլորտիքը պարտեզները կլռեն դեղնածաղիկ խոտերուն մեջ»[7]։ Արտերը քրտնել, հոգնել ցանկացան. «Արտերը արոր բնավ մտած չըլլալով քառ էին դարձել, քառսուն վկա

6 Նույն տեղում։

7 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, Ստամբուլ, 1958, էջ 15։

կուղեին հոտ տեղերը արտ կա ըսելու համար, պոսթանն ալ քրտնիլ, հոգնիլ կուղեր»[8]: Խնձորենիները հոգնած երևույթ ստին, ընկուզենիները տերևաթափի պատրաստվեցին. *«Աշուն ըլլալով՝ խնձորենիները ու սալորենիները հոգնած երևույթ մըն էին առեր, ընկուզենիները մինչև գետինները հակող իրենց ճյուղերով տերևաթափի կպատրաստվեին, ու ագռավները բարտիներուն վրա թառեր կկանչվռտեին»*[9]: Աշնան արևը ժպտաց. *«Աշնան արևը իր մեղմ, դեղին ժպիտը տվեր էր հնձված, հոգնած արտերուն, շրջակայքի լուռ բլուրներուն»*[10]: Խոտերը նվադեցին. *«շոգեն չորացած ճերմկած խոտերը կնվազեին...»*[11]: Դեռևս արևը՝ նկարչի նման գծագրեց. *«մայրամուտի արևը հինայի փափուկ կարմիր մը կքսեր հանդիպակաց լեռներու կատարներուն»*[12]: Բամբոսները մարդ տենչացին. *«Կքսեն թե բամբոսները*[13] *մարդ տեսնելու ըլլան անոր երթալ կուզեն, մեկ առեր կքսեն»*[14]: Գետերը երգասաց դարձան, մարդու նման լուռ, լուրջ, հանդիսավոր, վեհափառ կեցվածք ընդունեցին: *«Մեր Ղարապուտաղը աշխարհի ամենեն երգասաց գետերեն մեկն է... քիչ վարը լուռ, լուրջ, հանդիսավոր, վեհափառ հոսումով Եփրատին կիսառնվի, երբը մեկեն կդարձի, կլուծվի մեջը»*[15]: Ժիժիները միապետություն հաստատեցին, գետերը ընդունեցին գերիշխանությունը. *«Ամառ։ Բյուրներով ժիժիներ, բոլոր այգիներուն թթենիներուն փակած ժի-ժի-ժի-ժի... կանչելով իրենց միավանկներով իրենց միապետությունը կծանուցանեն հանդերուն վրա։ Գետը կընդունի անոնց գերիշխանությունը ամեն տարի վաթսուն օրվան համար, ամեն օր արևածագեն մինչև արևմուտ կթողու որ երգեն ինչքան որ կուզեն»*[16]: Հողերը մայրության պատրաստվեցին. *«Հողերը մայրության պատրաստվող վիճակ մը առեր էին»*[17]: Մորմենիները, փշատիները խորունկ քուն մտան. *«Պատերուն եզերքի մորմենիները, փշատիները չէին արթնցեր դեռ, խորունկ քունի*

---

8 Նույն տեղում, էջ 108։

9 Նույն տեղում, էջ 214։

10 Նույն տեղում, էջ 235։

11 Նույն տեղում, էջ 274։

12 Նույն տեղում, էջ 311։

13 Բամբոս—դեղին առէջներով, սուտակի բաժակներով նունուֆարների նման նուրբ ծաղիկ։

14 Նույն տեղում, էջ 316։

15 Հակոբ Մնձուրի, Արմտան, էջ 64։

16 Նույն տեղում, էջ 237։

17 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, էջ 164։

մեջ էին»[18]։ Մարդու նկատմամբ անսովոր սեր ունեցող մեկ ծանոթ բամբասները պահակ դարձան, պահվեցին, շերեւացին, քաշվեցին... «Բամբուսիկ մը բուսեր էր, մեկ հատ մը, միայնակը, Մաման գիտեր, որ ան պահակ էր, ուրիշներ ալ պիտի ըլլային ան մոտերը, խումբով, շատ։ Անոնք կպահվեին, չէին երեւար, կքաշվեին։ Իրավ ալ փնտրելով գտավ, ավելի անդին երկու երեք գծի վրա կարգով տասը, տասներկու հատ մը, բամբուսիկներուն պես ալ աղվորիկ ծաղիկ կա՞ աշխարհիս վրա։ Պատիկ»[19]։ Բամբուսիկները որ հարսնություն ունեին և կարող էին... մեռնել. «Մաման չիմացաց որ դառները, ուլերը մոտենային, թրնթեին։ Պիտի մեռցնեին, մեղրը պիտի մտնեին։ Արդեն որչա՞փ կապրին։ Քսան, քսանհինգ օրվան հարսնություն մը ունին»[20] և այսպես դեռևս տասնյակներով։ Եթե բնությունը օժտվեց մարդկային գծերով, պիտի լիներ և հակառակը. դա ավելի բնական էր և այսպես հարսը նմանվեց հուրբի աբտեի. «Հարսն ալ ըսես, ջուրեն հագեցած արտերու պես հուրբի, հասակ կնեան, կհորդի ուժեն, առողջութենե»[21]։ Մարդը շատ անգամ շփոթվեց ծառի, քարայրի, այգիի ինչ որ հատվածի հետ. «Բոպիկ ոտքերովը՝ ան կերեւար կամ քարայրներեն մեկուն առջեւը, կամ այգիի մը մեջ, ծառի մը բունին կոթնած կամ գետափը։ Ու այնքան կնոյնանար իր եղած տեղին հետ որ ես շատ անգամ կխարվեի քարայրին, ծառին, այգիին մեկ մասը կկարծեի զինքը, չէի կրնար զանազանել իրարմե»[22]։ Եվ ընդհանրապես այս շփոթը տարածվեց մարդ, անասուն և ծառ ու ծաղկի մեջ։ «Աղուշաղի ձմերուկները երկու հոգի ձեռք ձեռքի տալով կվերցվի ու ջորիին կամ ուղտերուն կբեռցվի։ Երբ ես առաջին անգամ հեռուն տեսա զարմացա, ավագներուն երեսը կարգով ծնկածալ նստող սև կովեր կարծեցի»[23]։ «Ականջին ձայն մը եկավ։ Մարդու՞ էր թե գետին ձայնն էր»[24]։ «Զիմաղցիներուն խենթ կյուլին ջուրին խենթությունը բռնեց, ալ չկեցավ, եկավ նոս եկավ»[25]։ (Ընդգծումները մերն են—Գ. Ս.)։

Բայց այս «շփոթը» հասնում է իր գագաթնակետին, միանալով նաև դեպքերը, իրերը, մարդիկ գնահատելու մնձուրիական դյուղացիա-

---

18 Նույն տեղում, էջ 231։

19 Նույն տեղում, էջ 232։

20 Նույն տեղում, էջ 232։

21 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, Ստամբուլ, 1958, էջ 253։

22 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Մելիքենց Մկրտը», էջ 282։

23 Նույն տեղում, էջ 66։

24 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, էջ 164։

կան չափանիշներին և ստացվում է այն գեղեցիկը, այն բացառապես յուրօրինակ գունագեղությունն ու շոշափելիությունը, որ գրեթե եղակի է մեր ողջ գրականության մեջ։ Եվ նաև այն, որ մի ամբողջ կյանք, նա, Մնձուրին, բառացիորեն կանգնած է եղել նաև ալյուրի ու հացի կողքին, փռում և ցրանից ոչ միայն իր արվեստն է նման եղել «ցորենի արդար ու աղնիվ հացի», այլ եղել ու հանդիսացել է հենց այդ արդար ու աղնիվ, փրից նոր եկած տաք հացը։ Թե չէ, որտեղի՞ց պիտի լինեին այնպիսի նմանություններ, զուգահեռներ, ինչպիսիք կան իր գրականությունում։ Թե չէ որտեղի՞ց այդ «շփոթը» պիտի լիներ այնքան բնական, մարդկային։ Անբանաձևելիորեն հարազատ, գյուղացիական։ «Խաղող ընթողներու պես մինչև ազգրերը մերկ, շապիկով ու վարտիքով մը, բահը ուսին՝ կայներ է ան ու կնայի առուին, որ ուռեստանին ետևեն, հորիզոնին ալյուրի գույն բլուրներուն սառորտեն ոլորվելով կուգա»[26]։ Բլուրներ, որ ալյուրի գույն ունեն. «Գետը ճերմակեր էր, ճիշտ ճերմակ ալ չէ, ուր է մածունը ջուր մը թող կուտա, կես ճերմակ, կես կապույտ, ատ գույնը առեր էր»[27]։ Ո՞վ կարող էր նկարագրել այդպես, եթե ոչ նա, Մնձուրին միայն, ո՞ւմ մաքով կանցներ մածնի ջուրը, որ կիսով սպիտակ, կիսով կապույտ է լինում, այդ գույնով նկարագրել գետը։ Կարող էր միայն նա, գյուղից ծնվածը, գյուղը իր ամբողջ կյանքում իր հողու, երակների ու ջղերի մեջ կրողը, բայց ոչ սովորական ծնվածը, այլ գրողը, որ Հակոբ Մնձուրի կոչվեց։ Ստորև բերում ենք նման օրինակներ, որոնք հուզում են, հիացմունք պատճառում ընթերցելիս, իրենց բացառիկ բնականությամբ, բնությանը այդպիսի հոգի ու երանգ պարգևելու իմաստով, բերում ենք, տողատակերում նշելով էջերը և ստորագծումները անելով մեր կողմից.

«Օդի մեջ ալյուրի հոտ կար...»[28]։

«Լեռները բոնաբարե են, անկե է։ Այս բուռ ըսածս պանիրի պես ճերմակ, փտած քար մըն է։ Մատներուդ մեջ սեղմես, աղի պես կփշրվի, բայց ինչպե՞ս կկեղվեցնե ջուրը»[29]։

«Այդ օրը Քեմախեն ելանք, Նալտյոքենի կուժի հողի գույն կարմրորակ, կպչուն զատիվայրը, որ իջանք...»[30]։

---

25 Նույն տեղում, էջ 98։

26 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, Ստամբուլ, 1958, էջ 13։

27 Նույն տեղում, էջ 88։

28 Նույն տեղում, էջ 124։

29 Նույն տեղում, էջ 93։

30 Նույն տեղում, էջ 193։

«Երկու արտ Գարեգուր, ատոնց ալ հողը հող չէր, բարակ ավազ մը, ուր է ձավարին մանրումը կըլլա, ծնիկ կըսեն, մրջնաբուներուն բերանը նրբահող մը կըլլա, անոնց կնմաներ»[31]։

«Զիմառցի Մարոն, առավան լուս կնմաներ, խաչ հանելդ կուզար առաջքը, կամ թե Ավետանց Սիմոնին առածը, Տողաննց Վարդանուշը, Ախղայայի ներմակ մեղրին կնմաներին երեսները, մատ մը առնելդ կուզար...»[32], «Հապա այտերուն զատկական հավկիթի պես կարմրությունը»[33]։

«Ջարը խանումը... հասուն ցորեններու չինված արտերուն երեսը կարմրավուն գոլորշիի մը պես մոն մը կըլլա, նայելու ըլլաս վրան, աչքերդ կառնեն, ատ մոնին նմանեցնողը դուն չէի՞ր, անոր երեսներուն գույնը»։ «Սարը Ջիշնքի մեղրին մեջ արևին որ բռնես շաղվիղը մը կերևա, ոչ գեղին է, ոչ հակինթի գույն է, թե գեղին է, թե հակինթի գույն է, անոր ծամերուն, թարթիչներուն գույնը անկե է, դուն չէի՞ր ըսողը»[34]։

«Կնիկն ու ձին մեկ են։ Տակիդ ձին, ոտքդ վրան նետելեզ կհասակնա վարպետ ձիավոր ըլլալդ չըլլալդ։ Կինը ամուր չբռնելու որ ըլլաս, վար կիջնաս վրայեն, գիտցած եղիր»[35]։

«Խաչքարի դարվարին իջանը, անկե անցին ճամփան կշակվի, ներմակ ալյուրի փոշիի պես պարանհողը կա...»[36]։

Ջորին մեջ մաղված ալյուրի պես ավազ մը կար...»[37]։

«Շատ բնելուց—աչքերդ կոկոն-կոկոն են եղեր»[38]։

«Ջոր բանները՝ աղը գրված սամիթը՝ բեմկին՝ պանիրը սոխին հետ հացին մեջ կդներ, մատներովը խոշոր կլորիկ մը կշիներ, թիմելով կիսոբեր բերանը, մարագին մուղեն ներս խուռ կոխելու պես։ Անանկ ալ կշփայներ որ լվացքի ձայնին պես կուզար դուրսեն անցնողին»[39]։

«Տղան իշուն վրա նայելով զարմացավ։ Արտասոց գույնով մազեր ուներ. շոր սոխին կեղևին կարմիրը»[40]։

---

31 Նույն տեղում, էջ 228։
32 Նույն տեղում, էջ 242։
33 Նույն տեղում, էջ 258։
34 Նույն տեղում, էջ 260։
35 Նույն տեղում, էջ 290։
36 Հակոբ Մնձուրի, Արմտան, էջ 16։
37 Նույն տեղում, էջ 108։
38 Նույն տեղում, էջ 114։
39 Նույն տեղում, էջ 121։
40 Նույն տեղում, էջ 223։

«Մաղերուն գույնն ալ՝ ինչի՞ նմանեցնեմ՝ չխաշած նավկիթը կոտրելու ըլլաք, անոր դեղնուցին գույնովն էին»[41]։

«Մեր աղջիկներուն մանավանդ ամենեին չէր նմաներ։ Ոչ՝ մերիններուն պահենի խնձորներուն պես կարմիր ու կլոր երեսները, ոչ ալ սև հոնքերը ուներ։ Թուխ, ինչպե՞ս թուխ, չոփ չոր աղջիկ մըն էր։ Սեղմն արտեղեն կուգես, մատներուդ տակ միսը ի՞նչ է, չէր դար։ Ոսկոր էր։ Մինակ ճերմակ ակռաներ մը ուներ, և ի՞նչ ճերմակ։ Խոռոչնան կուտես, մեջեն կաթ մը կելլե, անանկ ճերմակ»[42]։

«Այդ հովիտին ալ արտերը հերկեր էին աշնցանի համար, հողը կարմիր էր, իրիկվան արևն ալ զարկեր էր հերկերուն։ Միջոցին մեջ, հովիտին երեսը ճիճայի գույն մը կար»[43]։

«Ժողովուղները չէին ուտեր (թութը—Գ. Ս.), հափրացեր են ուտելեն, շատ աղվոր մը կամ խունկի պես կլոր մը պիտի ըլլա որ հատ մը ուտեն»[44]։

«Կանաչ եղեգներով աղբյուրին առաջքը կապույտ տիզլիկով պատանի մը ծուռ ջուր կիմեն»[45]։

«Նարդոզ (զզլպաշ կնոջ անուն—Գ. Ս.) դույն փոխեց։ Նարդոզ նույնպես ճերմկցավ։ Լեռան քառներուն մեջ փայլող նունուկի բերբերուն պես թափանցիկ դարձավ»[46]։

«Մեկ մը կիմեինք (աղբյուրից—Գ. Ս.), կկենայինք, նորեն կիմեինք որ շուտ չծարավնայինք։ Մինչդեռ բերաններս կլեցվեր ջուրով, ու երբ վազեինք փորերնիս լըգըր, լըգըր կըներ խնոցի հարելու պես»[47]։

«Տաշտի մը ջուրը ինքնոր կդարձնեին ու կթափեին, անանկ կթափեին Մաշաթի քարերեն ջուրերը...»[48]։

«Ես սալթայիս դրպանը միշտ կայծքար մը, մեղրի գույն կայծքար մը, հրահան մը, ափի մը չափ ափեթ մը ունեի...»[49]։

«Անոր մազերը (ուլիկի—Գ. Ս.) կարմիր էին, ճիշտ կարմիր ալ չէին, շոր սոխի կեղևի գույնով էին և կակուղիկ»[50]։

---

41 Նույն տեղում, էջ 239։
42 Նույն տեղում, էջ 243։
43 Նույն տեղում, էջ 286։
44 Նույն տեղում, էջ 294։
45 Նույն տեղում, էջ 295։
46 Նույն տեղում, էջ 301։
47 Հանրոր Մենուրի. Կռունկ, ուստի՞ կուգաս, էջ 78։
48 Նույն տեղում, էջ 79։
49 Նույն տեղում, էջ 83։
50 Նույն տեղում, էջ 84։

«Զոզ մը, ձոզ ալ եթե չունիք ձեզունի ավելի երկայն կոթ մը ունի՞ք, վրան էնթարի մը հագցուցեք, գունավոր լաթերեն գլուխ մը շինեցեք, ճակատը կարմիր պղինձե դրամներ կարգով կարեցեք, աջ ոունգը ծակեցեք, կարմիր գինդ մը կախեցեք, քրդու հարս մը կըլլա ձեր դիմացը։ Մորթ ու ոսկորեն է։ Ոչ յուղ կա, ոչ միս վրան, ոչ փոր ունի, ոչ կորութիւններ։ Հղի անգամ ըլլա, չեք կրնար դիտնալ։ Սև ու սուր մինչև ներսդ թափանցող աչքերով շեշտակի կնայի քեզի, ոչ թուրք կնոջ մը պես ճերմակ սավանի մը մեջ կշանա չերևնալ, ոչ ղրղըլպաշ կնոջ մը պես երկայն ու կաս կարմիր քողը ուսեն թիկունքը կնեռե ու անտարբերություն կեղծելով, փարավելով կքալե, ոչ հայ հարսներուն պես կկարմրակի իրեն նայելու ըլլաս»[51]։

«Լուսինը իր լրումի օրերուն մեջ է։ Հատեր է։ Հալած օճառի հրուկի մը պես կերևա Քեշիշ Տյուղիի գագաթը»[52]։

«Բերդ հովիտի առաջքը, Դողուն ձորի, Մասուր ձորի բարձունքներու քարերուն առատությանը կզարմանաս։ ...Թե քարերը, թե հողերը շորցած արյունի՞ մը ըսեմ, շոր սոխի կեղևի՞ մը ըսեմ գույնով են»[53]։

«Կարմիր այտերով էր (կինը—Գ. Ս.) ճիշտ կարմիր ալ չէր ըսվեր. գոց կարմիր մը, լեռան կարմիր դեղին հողերուն գույնեն...»[54]։

«Մեղուները իրենց պարսերուն ինչպե՞ս իրար կանցնին, անդադար փեթակ կմտնեն, դուրս կելլեն, կիներ, այրեր, պատանիներ եփված կամ եփվելիք ափսեները երկու ձեռքով բռնելով մեկ մեկու հետև փուռ կմտնեին կամ փողոց կելլեին»[55]։

Սա այն արվեստն է, որ իր հաստատ ու ամուր կռվանն ունի, այն արվեստը, որ կանգնած է հայրենի հողի վրա ու հողից է սնվում և այնքան բնական ու հարազատ, այնքան անմիջական ու անշպար, որ Գեղեցիկն է ինքնին, այն գեղեցիկը այնպես, ինչպես նա եղել է դարեր ամբողջ։ Սա այն գրականությունն է, որից այլուրի հոտ է գալիս, գյուղական պանրի, մածնի համ և լավաշի բույր, սոխի կծվություն, երբ քաղցած ես լինում և քեզ թվում է, թե չես հագենալու երբեմն։ Եվ չես կշտանում, որովհետև դա այլևս կարոտ է միայն քեզ համար, կարոտի գրականություն, ինչպիսին եղել է և հեղինակի համար։ Եվ

51 Նույն տեղում, էջ 141։
52 Նույն տեղում, էջ 179։
53 Նույն տեղում, էջ 194։
54 Նույն տեղում, էջ 236։
55 Նույն տեղում, էջ 265։

եթե այն չլիներ այդպիսին, մի՞թե Հակոբ Մնձուրին կամ մի ուրիշը թեկուզ, կարող էր հայ գրականությանը պարգևել այն նկարագրական փայլուն էջերը, որ պարգևել է Մնձուրու գրականությունը հայրենի բնությունն ու թեկուզ սոսկ նրա մասնակի բարիքները նկարագրելիս։ Բայց Մնձուրին հասել է և պանթեիզմի սահմաններին, աստվածացնելով բնությունը, աստծուն նույնացնելով, ձուլելով բնության մեջ։ Պաշտամունքից աստվածացում, այդ բարձրակետը մինչև քայլելով հմայված իր շրջապատին, սիրահարված ու մոռացած ինքն իրեն, երկյուղած սիրով սիրելով իր ուսուցչին։ Իր Մնողին ու Սնողին։ Բայց նախ նկարագրական հրաշալիքների մասին, թեկուզ Արմտանի, գավառի սեխերի մասին, այն նկարագրական էջերի, որոնք ուղղված լինելով սոսկ սեխերին, ուղղված կարող էին լինել նաև սիրած աղջկան։

«Գետին նորեն խառնիծակու ափը, Յունապիներեն, Ճուհարքարտակեն ատին, Ջերման կար։ Այս հանդին շամամները աշխարհի ոչ մեկ տեղ կային։ Ասոնք բթիդ բռնեիր, երկու երեք անգամ խորունկ քաշեիր, հոտը երկար ատեն քթեդ չէր երթար։ և ի՞նչ անուշ հոտ. այս վայելքը ուրիշ ոչ մեկ հոտ կուտար քեզի։ Ու մինակ հոտերնի՞ն։ Ափիդ մեջ պահել ու վրանին նայելդ անգամ կբավեր։ Դեղին կըլլային, բայց ո՞ր դեղինը ըսեմ քեզի, լուսինի՞ն, արևի՞ն, մեղրի՞ն, ոսկի՞ն։ Անանկ ալ փափուկ ու զգուշությամբ պիտի շոշափեիր, կդողային ափիդ մեջ»[56]։

Մի այլ տեղ, մի այլ ժողովածուի պատմվածքում, կրկին անդրադառնալով Ջերմայի սեխերին, Մնձուրին նույն սիրահարվածությամբ գրում է. «Ջերմային շամամները համբավավոր էին, քուչակյան տաղերու երգած շամամները։ «Յարս ալ շարժոցու լայրխ-Շարժոցու, շամամ ծծերու լայրխ»։ Խնձորի մը չափ։ Խնձորեն քիչ մը ավելի մեծ։ Բարակ մաշկով։ Դեղին, դեղին գույնով։ Մեղրին դեղինեն ալ դեղին։ Ջէին ուտվեր։ Ափդ առնեիր, կդողային ափիդ մեջ։ Դեմքդ կցոլացնեին՝ նայեիր վրան»։

«Հոտը անմահական էր։ Տունդ մեկ հատ մը դիր, հոտը կբռներ բոլոր տունդ։ Օօ՜խ... ըսել կուտար քեզի։ Պատերուն, Եղիակին խնձորնե՞ր։ Նշանավոր էին։ Գինիի գույն կըլլային։ «Փեսի խնձոր» կսեին։ Զոքանչները իրենց փեսին նվեր կղրկեին»[57]։

Կրկնությունն՝ե՞ր կան այստեղ... Կան, իհարկե, բայց այս երկու նույնանման, գրեթե նույնանման, նկարագրությունների մեջ սերն ու

---

56 Հակոբ Մնձուրի. *Արմտան*, «Մելիքենց Մկրչը», էջ 281։

57 Հակոբ Մնձուրի, *Կռունկ, ուստի՞ կուգաս*, «Արմտանի այգիները», էջ 198։

կարոտը առավել խտացած է կարծես, առավել շոշափելի դարձած երկրորդի մեջ, առավել մանրամասնված։ Եվ, մեր կարծիքով, դրա պատճառը այդ երկու նկարագրությունները իրարից բաժանող տարիներն են։ Անցնող տարիների հետ և խտացած է կարոտը, հուշը. մի բան միայն նույնն է «ափդ առնեիր, կղոդային ափդ մեջ։ Դա երկուսում էլ կա, և թվում է խոսքը Ջերմայի շամամների մասին լինելով հանդերձ. նրանց մասին «չէ»...։ Ինչպիսի հուզիչ ու այրող կարոտ։ Ահա և մի ուրիշը՝ փշատիների, յունապենիների, մասրենիների մասին։

«Երկու փշատիներ և մասրենի մը ես կան, որոնց վրա չես կրնար շղարմանալ։ Շիտակ ելլելու տեղ գետին մակերեսին պառկած երկնցեր են։ Մինչև գետին կեսը հասեր են, ուր որ է դիմացի ափը աղբյուրին կմոտենան. բայց գետը կթողու՞։ Փշատիները ինչ որ է, հասարակ են. մասրենիին հոգի՞ն ինչ է, ջերմ բռնողի պես անդադար կդողա ջուրերուն վրան։ Ան ի՞նչ կլսե ու անցնիլ կուզե դիմացի ափը»[58]։

«Մարդացած» փշատենիների և մասրենու հետ «բեմ է մտնում» և մարդը.

«Մայրը թունդ կելլե, լվացքը կձգե, օրանը կօրե որ գետին վրա կերթա ու կուգա։ Երկու յունապիները ամեն օրելուն, իրենք ալ թունդ կելլեն, կծռին ու կշտկվին ու իրենց ոտերը, տերևները իրարու զարնելով ծափիկ կխաղան մանկիկին վրա»[59]։

«Գետին նեղ տեղը ավելի նեղցեր է։ Մասրենին չի դողար, ինքնավստահ դարձեր է։ Ջուրերուն վրա կծփա, բայց վախը գացեր է։ Թող գետը չթողու, փշատիին հետ իրենք պիտի հասնին մինչև դիմի աղբյուրը»[60]։

Մարդ-բնություն, համահարթման մեջ չէր կարող մուտք չունենալ Նրանց «ստեղծողը», ինքը ասուածը, որպես բնության ու մարդու «համահավասարը», նույնանալով ու ձուլվելով մարդուն ու բնությանը։ Դա Մնձուրու գրականության մեջ տեղի ունեցավ ասոիճանական, տրամաբանական զարգացմամբ, մարդու ու բնության նկատմամբ սերը տակավ վերածելով պաշտամունքի և երկյուղածության։ Մնձուրու սիրած և բնության հրաշալիքները նկատած բամբուսիկները, այդ համեստ ու ամաչկոտ ծաղիկները, օրինակ, վերածվեցին հարսների և ի վերջո նմանվեցին... եկեղեցիներում հոգեհանգստյան արարողությունների ժամանակ վառվող... մոմերի։

58 Հակոբ Մնձուրի, Արմատն, «Գետանկար», էջ 293։

59 Նույն տեղում, էջ 294։

60 Նույն տեղում, էջ 296։

«Հոգեհանգիստներուն ժամը մոմեր կբաժնեն ժողովուրդին, անոնց չափ կա ու չկա։ Բայց ամշկոտ, ամշկոտ։ Կողոպան շատ նայելու ըլլաս վրան։ Վարդերուն անունը եկած է։ Անոնց անանկ միտաքսավետ լուսեղեն կարմիրը վարդերը ունի՞ն, անոնց բաժակներուն լուսեղեն դեղինը հոտոցիկները ունի՞ն։ Եվ բույրերը։ Ոչ մեկ բույրի հետ կփոխես։ Բամբուսիկներուն պես ալ աղվորիկ ծաղիկ կա՞ աշխարհիս վրա...»[61]։

Ծաղիկների ամենեն «աղվորիկը», գեղեցիկը, լուսեղեն կարմիր, լուսեղեն դեղին գույներով, ամենահոտավետները, ամենաբուրավետները բոլոր ծաղիկների մեջ, միայն դրանք կարող էին նմանեցվել վառվող մոմերի, այն էլ եկեղեցական արարողությունների ամենահուզիչ պահերից մեկում... «Հոգեհանգիստներուն ժամը մոմեր կբաժնեն»։ Հենց այդ մոմերին։ Այն մոմերին, որոնք ձոնվում են աստծո, մեռելների հոգու հանգստյան համար, որպեսզի այդ հոգիները «հանդերձյալ աշխարհում» բամբուսիկների մեջ լինեն լուսեղեն, «ապրեն» լույսերի մեջ։

«Կաթվուկին քարը իր ժայռերովը մեծ կաշեպատ Ամամավուրք մըն է, կրսես որ, կեցուցեր են բլուրին դագաթը, մեծ պահրին իրիկունները ժամը կկարդան որ ժողովուրդը մտիկ ընե ան Ամամավուրքին պես»[62]։

Այստեղ հայամավուրքի նմանեցումը աստվածապաշտական, կրոնական կույր հավատքի արդյունք չէ իհարկե, այլ բնության ընկալման բնապաշտական սահմաններին հասցված մղում։ Մղում, որ լուսեղեն է. լույս։ Իսկ այդ լույսը տարածվում է Մնձուրու դրականության էջերի մեջ հավասարապես, լուսավորելով թե բնության մեջ գործող բոլոր անշունչ ու շնչավոր իրերը ու թե կենդանի, ապրող ու շնչող բոլոր էակներին։ Այն էակներին, որոնք պակասավոր են շատ անգամ, մեղավոր ու մեղսակից հաճախ, տգետ ու անգործունյա թերևս, բայց ինչ-որ տեղ «ի վերուստ» տրված լույս ունեն իրենց մեջ և կարևորը, էականը ոչ թե սովերելն է թեկուզ գոյություն ունեցող աղոտ ցոլքը, այլ առավել լուսավոր դարձնելը, այդ աղոտության վերացումը, մարդկանց մտքի ու հոգու մեջ մի քիչ առավել լույս ու վաղվա օրվա համար առավել դեղեցիկի հույս առաքելը։ Դա է դրականության առաջնահերթ խնդիրը, դա է նրա կոչումն ու առաքելությունը։ Եվ Մնձուրին իր հերոսներին ձգտում է այդ ուղիով առաջնորդել, հաճախ ցույց տալով սովերը, նրանց մեջ առկա սովերը՝ հանուն լիակատար լույսի։ Ցնո՞րք է դա, եթե ցնորք էլ է «կաթվուկին քարը իր ժայռերովը մեծ կաշե-

61 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Խաղցեք զառնուկներս, ուլիկներս, խաղցեք, մարդն ալ դնաց, տերան ալ դնաց, խաղցեր», էջ 232։

62 Նույն տեղում, էջ 230։

պատ Ասմավուրք մըն է», թող նայեն, «մտիկ ընեն մարդիկ բնութիւնը, թող նայեն «կաթվուկին քարին» և լույսը, աստծո բնության լույսը, վաղ թե ուշ, կճառագեն նրանց հոգիներում ևս և լույս կլինի...

Այդտեղ էր ինչպես Միսաք Մեծարենցի, ինչպես նրանից առաջ ստեղծող բոլոր դասականների, այնպես էլ Հակոբ Մնձուրու պանթեիզմը։

* * *

Հակոբ Մնձուրին բացառապես լավ գիտեր բնությունը, ճանաչում էր յուրաքանչյուր ծառն ու թուփը, ծաղիկն ու բույսը. սփյուռքահայ գրականության մեջ ոչ մի «գյուղագիր» չունեցավ նրա նմանը, եթե չհաշվենք Վազգեն Շուշանյանին։ Մնձուրու գրականության մեջ յուրաքանչյուր ծաղիկ ու բույս իր անունն ուներ և զարմանալի էր նման իմացությունը։ Թերևս այդ անուններից շատերը արմատներին էին, թերևս... «յունապենիներ, ճեհրիներ, մոշենիներ, փշատիներ, մասրենիներ, թանթրուենիներ (մենք շաթնուկ կըսեինք)[63], գրեխներ (մենք ջրնետիչ կըսեինք)։ Շաթնուկներեն ալ մեջի ծուծը կհանեինք, ջրնետիչ կշինեինք, իսկ ջրնետիչով ալ ջուր կցայտեցնեինք իրարու վրա, աղջիկներուն վրա։ Կաղնիների ոստերը, մատղաշ ճյուղերը տև կկոչվեին (գյուղացիները ամեն աշուն շարաթներով կկրեին, կգիզեին, ձմեռը ոչխարներին տալու համար, որոնք մեծ ախորժակով կուտեին ու կսնանեին այդ տերևներով). լեռը տև գնալ, այդ կնշանակեր, այսինքն կաղնիների ոստեր ու մատղաշ ճյուղեր հավաքելու գնալ։ Տեսեն ամիսը սեպտեմբերն էր։ Դեռևս գինձի ծառ կար (մետաղի պես կարծր տերևներով էր։ Տորոնի կարմիր կնտեր կային տերևներուն վրա։ Ինչպե՞ս բուսեր էր, ինչպե՞ս կապրեր ժայռերուն մեջ), դեռևս կային բույսերը, խոտերը, խոլորձները, դմակ դեղինները, հոտոցիկները, աղվեսի պոչիկները, մկան ակռիկները, բռան ծաղիկները, եղան ճակտիկները, ածուպոչիկները, խործնանները, դեռևս առավել հետաքրքիրը (մենք ճերմակ լուբիային լովաս կըսեինք, կանաչ թարմ լուբիային՝ սլիկ կըսեինք։ Բիլավի ձավարի մանրուքին մենք՝ ձնիկ կըսեինք), հարդին կարծր, չմանրվող մասը՝ կոթինմ կկոչվեր, ոսպի վայրին՝ վիկ» և այլն, և այլն...

---

63 Մնձուրին երբեմն ասում է, թե ինչպես կկոչեին այս կամ այն բույսը արմատներին։

Թերևս ապրող ու հարատևող մի գրականության համար նման մանրամասները ավելորդ ծանրաբեռնվածություն թվային, բայց հիշել, իմանալ, որ սեպտեմբերը «տևի ամիս կկոչվեր», որ բույսեր կային, որոնք աղվեսի պոչիկ, մկան ակռիկ, եղան ճակտիկ էին կոչվում և նույնիսկ ճերմակ լուբիան՝ «լովաս կկոչվեր», իսկ կանաչը՝ սլիկ և այլն, այժմ միայն հուզում են, որովհետև Մնձուրու գրականությամբ նոր ասպարեզ հանված այդ անունները (թերևս մեզ է այդպես թվում) դառնում են հույժ թանկագին և հուշում են մի ժողովրդի կորած մի մասի ու նրա այնքան հարուստ ու ճոխ մշակույթի մասին և այն էլ սրանից մոտ երեք քառորդ դար առաջ դեռևս։ Աշխարհից մեկուսացած, հեքիաթային թվացող, բայց ծանր ու նույնիսկ դաժան հոգսերով ապրող նրա մարդկանց շրթներում այդ բառերը, ոչ ավելի ոչ պակաս, թվում են բանաստեղծություն։ Եվ դա է գեղեցիկը, ուրախ թվացող այդ անուրախ կյանքում։

IV

> «Մեր ամեն երգերը պանդխտութենե կառնեին իրենց թեմաները։ Մեր օրորներեն շատ քիչը իրավեն օրոր էին։ Շատը, շատ շատը, անհատնումը պանդուխտին ուղղված, բացական կանչելու համար շինված էին։ Մեր մայրերը պանդուխտի երգեր կանչելով մեզ կքընացնեին։ Մենք պատրվակներ էինք, իրենց կարոտները, հուզումները պարպելու համար»։

Գավառում գլխավոր պրոբլեմը զարիբությունը, պանդխտությունն էր։ Բոլոր դժբախտությունների, ողբերգությունների հիմքը դրանից էր գալիս։ Պրոբլեմ, որ անխուսափելիորեն կանգնած էր ամեն ընտանիքի, ամեն տան վրա։ Եվ բացառապես յուրօրինակ բնույթ ու հիմք ուներ այդ պրոբլեմը։ Առերևույթ դրամի չգոյությունն էր պատճառը, բայց ոչ մեր ներկա ժամանակների հասկացությամբ։ Գյուղացիները, մեծամասնությամբ, գյուղական ընտանիքները ամբողջ տարին, թեկուզ ոչ բազմատեսակ ու ճոխ, բայց և այնպես ապահովված էին սննդով, սոված մարդ չկար կամ գրեթե չկար։ Կարելի է ասել նույնիսկ սննդի որոշ տեսակների առատություն ու լիություն էր զգացվում, նույնիսկ ոչ արհամարհելի ավելցուկ։ Բայց կարիք կար հիմ-

նական մի բանի՝ փողի, որ չկար։ Եվ զարմանալիորեն, մասնավորաբար գյուղերում, դրա սուր ու հրամայական կարիքն էր զգացվում։

«...դրամ չկար գյուղը։ Ամենեն ունևորները ճակատի կամ շիվի զարդոսկիներ մը ունեին կիներուն համար։ Իմ դավառս՝ ինչպես Եփրատի ենթակա մյուսները, Քեմախը, Չմշկածաղը, Ակը, Արաբկիրը կամ Տիվրիկը այրերը պանդուխտության ղրկող դավառներեն էր։ Մեր բերքերը ո՞վ կառներ։ Իմ տունս օրինակ մեղի բավելեն ավելի ցորեն կհանեինք։ Շատ ընկույզ ունեինք։ Ամբար մը ընկույզ, կարասներով չոր թութ, ռուպ (բեքմեզ—Գ. Ս.), օղի, գինի, վաթսուն կթոց կողով խաղող կունենայինք, որու՞ պիտի ծախեինք։ Չորս տեղ այգի ունեինք, պահապանի դրամ երկերկու ղուրուշ այգի դլուխ ու մեկ մեկ կող ալ ալյուր։ Ալյուրը կուտայինք, ութը ղրուշը Պոլիսեն դրամ պիտի դար որ տայինք»[1]։

Դա էր պանդխտության պատճառը Հակոբ Մնձուրու սեփական օջախի օրինակը, որ գյուղի բոլոր տներին էր հատուկ, որ նկարագրվածից, ինչպես երևում է, հեռու էր կարիքավոր լինելուց, այնուամենայնիվ չորս այգիների պահապանների համար չուներ այն ութ ղուրուշը, որպեսզի կարողանար վճարել։ Բայց չէ՞ որ փողի կարիքը զգացվում էր ոչ միայն պահակներին վճարելու համար, կային կառավարական հարկերը փողով վճարելու պարտավորությունները, կար տնային անհրաժեշտ այլ ծննդամթերքների ձեռք բերման համար նույնպես փողի անհրաժեշտությունը։ Իհարկե, այս ու մնացյալներից ամենակենսականը պետական հարկերն էին։ Իսկ յուրահատուկ այդ կացության պարտադրածը ողբերգություն էր արդեն, որովհետև պանդխտությունը միայն ցավ ու վիշտ, լավագույն դեպքում այրող կարոտ էր բերում իր հետ և ընտանեկան կյանքի համար անսովոր, աննորմալ պայմաններ ու կացութաձև։

«Երջանիկ չէին ըլլար մեր հայրերը, ոչ ալ մանավանդ մեր մայրերը։ Ամուսնութենեն տարի մը ետքը մեր հայրերը կձգեին մեր մայրերը պանդխտելու կելլեին։ Մենք շատերը դեռ աշխարհ եկած չէինք ըլլար կամ մեկ երկու ամսվան հազիվ կըլլայինք։ Եվ այս պանդխտությունը կշարունակվեր իրենց կյանքի տեղությանը։ Կուգային 4—5 տարին անգամ մը, տարի մը կկենային, նորեն կերթային։ Քսանեն վաթսուն՝ քառասուն տարվան մեջ ընդամենը հինգ կամ տասը տարի մեր հայ-

1 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Մեր մայրերը», էջ 89։

ները գյուղը կըլլային, երեսունհինգ քառասուն տարի այրիի կյանք մը կապրեին մեր մայրերը»[2]։

Երեսունհինգից քառասուն տարի պարտադրյալ «այրիի» կյանքը մի կողմից, երեսուն-երեսունհինգ տարիների պանդխտությունն ու դրա հետևանքները մյուս կողմից, երկու կողմի համար էլ հղի էին դառը արդյունքներով։ «Արդյունքներ», որոնց, դեռ իր գրական առաջին քայլերից, տարիներից, անդրադարձավ Հակոբ Մնձուրին և գրեց նաև պիես՝ «Նաղարը»։ Հակոբ Մնձուրու գրականության ճնշող տոկոսը հենց այդ պանդխտության պատճառած ավերների, հոգեբանական, սոցիալական հիմքերի բացահայտմանն է միտում և երևի այդ մարզում էլ նա մնում է եզակի կամ եզակիներից մեկը մեր ողջ գյուղագրության մեջ, եթե նկատի ունենանք մանավանդ ողբերգության բազմակի երեսներին նվիրված նրա պատմվածքները, որտեղ ոչ միայն մեկնումի ցավն ու մնացողի վիշտն է առկա, այլև տուն դարձողի ուրախությունը։ Գրականություն, որտեղ մանրամասնորեն, առանձին պատմվածքներով նկարագրված ու պատկերված է այդ ամբողջ ճանապարհի թե հոգեկան ներքին և արտաքին, աշխարհագրական մանրամասները և այդ ճանապարհի ընթացքում խորացող վշտից, կարոտից ծնված ամբողջ ֆոլկլորը։ Մի խոսքով, պանդխտության պատճառի ու հետևանքների՝ ալֆան ու օմեգան։

Կասկածից դուրս է, որ իր այրերը պանդխտության ուղարկած գյուղը կամ գյուղի առանձին օջախը, առաջինը պիտի զգար տան բացակա տղամարդու կարիքը, թեկուզ բերքի ստացման անմիջական աշխատանքներում, դաշտում, այգում։ Վերջիվերջո, դա անհրաժեշտ ձեռքն էր, որ չկար այժմ և հարկ էր նրա տեղը լցնել թեկուզ «գլխաքանակով», որ այր մարդու չգոյության դեպքում կարող է կինը լինել։ Եվ «բախտավոր» էին զգում այն օջախները, որտեղ, ասենք, դեռ մանկության հասակը նոր բոլորած տղա երեխա ունեին։ Այստեղից էլ սկսվում էր յուրօրինակ, ծիծաղելի, բայց նույնպես ողբերգական մի երևույթի առկայությունը գյուղերում։ Ամուսնացնում էին, դեռ կնոջ ու ամուսնության մասին նվազագույն գաղափարն իսկ չունեցող դեռահաս պատանուն։ Իհարկե, ավելորդ է այստեղ խոսել սիրո մասին։ Ամուսնացնում էին, որպեսզի պանդխտության մեկնած այս կամ այն տղամարդուն փոխարինող աշխատող ձեռք ունենան։ Եվ ինչ խոսք,

---

2 Նույն տեղում։

այդ ամուսնությունները հակաբնական էին և ոչ քիչ դեպքերում, դառնում էին նոր ողբերգությունների աղբակ.

«Ամեն մարդ ինչու՞ հարս կուզե (տաս տարեկան տղան ամուսնացնում էին իրենից երկու-երեք անգամ տարիքավոր կնոջ հետ— Գ. Ս.): Աշխատելու համար։ Տունը, ախոռը ավլե, աղբը շալկե տանի աղբանոցը թափե, տունը ջուր չկա, կուժը շալկե ջուր մը բերե, լեռը խոտ բաղող, դաշտը արտ քաղող, եզին փորող, բահող մը ունենալ։ Հարս ըսածդ անոնց համար է։ Ջավակ բերելը երբ ըլլա կըլլա։ Թող տղան մեծնա, էրիկ մարդ ըլլա ու ջավակ ունենա։ Հիմա իրմե ջավակ սպասող չկա»[3]։

Հետաքրքիր է նաև հետևյալ երկխոսությունը.

«Մերերոնց վարի տունեն Գոբբալ մամս. «Հարս, սա տղաղ չկարգե՞ս»,— կըսեր ամեն օր, «Ի՞նչ ընեմ Գոբբալ հարսիկ, շատ պզտիկ է, խելքը չհասնիր, կարգվիլը ի՞նչ է չի գիտեր» կպատասխաներ. «Թող չգիտնա, թող պզտիկ ըլլա», կբարկանար մամս, «մինակ թե հարսը մեծ ըլլա, քեզի հարսը պետք է, հարսը տղուդ պիտի չառնես, տանդ համար պիտի առնես»[4]։

Հարսը տղուդ պիտի չառնես, տանդ համար պիտի առնես։ Ամեն ինչ ասված է։ Դա, ինչ խոսք, ծիծաղելի ու ողբերգական էր, բայց նաև հատուկ չէր միայն հայ գյուղերին, նույն ձևով էին վարվում այլազգիները։ Բացառապես հետաքրքիր է Մնձուրու հետևյալ նկարագրությունը.

«Ջնդնուտցիք ալ ղղըլպաշ էին։ Ալի էֆենտիին Աղը կյուղելը երբ կարգեցին, ճղճիմ տղա մըն էր։ Մելեքը առին անոր որ մեկ մը կարգված ու էրիկը մեռած էր։ Մելեքը ըսես ըմբիշի մը թևերը ու մարմինը ուներ։ Աղը կյուղելը Մելեքին քով կկայներ մեջքի դոտին անգամ չէր հասներ գլուխը, իրենց ջորին չէր կրնար հեծնել։ Մելեքը կգրկեր ու կհեծցներ։ Մելեքը հորենական տունեն շատ արտեր ժառանգած էր իր արտերուն միացնելով սեփականացնելու համար իր տղուն առավ ու իր հարսը ըրավ Ալի էֆենտին»[5]։

Այստեղ միտումը, իհարկե, սեփականատիրության, առավել հարստանալու կիրքն էր, մի հանգամանք, որ գեթ նման «մեքենայությունների» խնայված էր հայ կյանքում։ Հայ գյուղերում, մյուսների

3 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Իմ տղայությունս», էջ 22—23։

4 Նույն տեղում, էջ 24։

5 Նույն տեղում, էջ 27։

հակառակ, մեծ մասամբ կարիքն էր ստիպում անել նման քայլեր։ Ամուսնություններ, որոնք անխուսափելիորեն հանգեցնում էին սեռական վաղ հասունացման, պատճառ դառնում հիվանդությունների, ուժասպառության և այլևայլ բարդությունների։ Վերջիվերջո, հարսը ամուսնանում էր ոչ թե ամուսնու հետ, այլ «ամուսնանում» էր տվյալ տան վրա, բացառելով հոգեկան կապը իր ամուսնու հետ։ Իսկ եթե կապ, համենայն դեպս, լինում էր, դա միայն մարմնական, անասնական կյանքը հիշեցնող։

«Հարս մը ամենեն առաջ տանը մալն է հոքը էրկանը։ Գիշերի գիշեր ձեր տղուն ծոցը պիտի պառկի, էրկանը կընիկն է, անկե անդին անորը չէ, տանը հարսն է, դերդաստանին մալն է»[6]։

Լինում էին դեպքեր, երբ նույնիսկ նշանվող, ամուսնացող պատանին չէր իմանում այդ մասին։ Եթե իմանար էլ, չէր կարողանում ըմբռնել նշելության խորքն ու նշանակությունը։

«Մեկ մըն ալ տարաձայնվեցավ թե Մուշեն նշաներ էին։ Քեմախի Մարեկը չկա՞ հոնկե է ըսին աղջիկը։ Մենք տղաքս ձգենք, Մուշեն ալ լուր չուներ իր նշանվելեն։ Ան ալ չէր գիտեր»[7]։

Մուշեին հաշվի առնող չկար, հաշվի էին նստում հարսի հետ և առաջին հերթին նրա արտաքինի, արտաքին ուժի ու դիմացկունության և պիտի ասել, ընդունված բարքերը հոգում էին այդ մասին... Հարսի համար իր դավակին մեծացնելը, խնամելը իր պարտականությունների մեջ չէր մտնում։ Հարսը կամ հարսիկը իր դավակին. «միայն առաջին երեք-չորս ամիսը շալակը կկապեր, լեռը, դաշտը, ուր երթանք հետերնիս կտանինք։ Այնուհետև մամուս, մորս կձգենք։ Ինք միայն մինչև կաթը կտրելը ժումեժում կուգա կծծցնե, կերթա։ Անոնք թող պառկեցնեն, հագվեցնեն, կերակրեն, նային»[8]։

Այդ հոգատարությունը, ինչ խոսք, մեկնում էր ինչքան կարելի է հարսից օգուտ քաղելու, նրան աշխատացնելու շահադիտությունից։

Հարսը, կինը, մինչև թոռներ ունենալը տան աշխատող ձեռքն էր, գլխավոր աշխատող ձեռքերից մեկը, կողքի սենյակներում կապված եզան, ջորու ու էշի նման։ Եվ դրանից էլ մեկնած անուշադրության էր մատնված, անտեսվում էր նրա ուսումը, զարգացումը, իսկ եթե չէր անտեսվում, միայն բացառիկ, եզակի դեպքերում։ Ընդհանրապես

---

6 Նույն տեղում, «Հայան հարսիկին Մուշեն», էջ 171։

7 Նույն տեղում, էջ 172։

8 Նույն տեղում, «Կինս ու ես», էջ 263։

Նույնիսկ կարևորություն չէր տրվում նրա տարրական դրագիտությանը։ «Իր աղջիկները չի դաստիարակող ազգը, իր ապագան կորստյան է մատնում», ասացվածքին անտեղյակ էին Արմտանում և նրա շրջակայքում։ Բայց ունեին իրենց ուրույն մտածելակերպը, որ ուղղակի հակասության մեջ էր վերը մեջբերվածի հետ։

«Կին մը կարդալ գրելը սորվի ինչի՞ պիտի գործածե» կըսեին մեր պապերը, մամերը»[9], դրա համար էլ աղջիկները դպրոց չէին գրկեր... Այդ հետադեմ կարծիքը տարածվում էր և տղաների վրա. «Կարդա որ ի՞նչ պիտի ըլլա։ Տեհա քու դեղիդ Նշան պատվելին (ուսուցչը-Գ. Ս.), Մեծ գեղին Քերոփ պատվելին, Թեղուտի Մինաս պատվելին շատ կարդացին ի՞նչ եղան, գլոխնին ամպե՞ը հասավ, լաթեր մը ունին, վրանուն կթափի, կնիկներնին ըսես տակերնին վարտիք չկա, քառսուն կարկըտանով վարտիք կհագնին։ Աս չէ՞։ Աշխարհքը շատ կարդացողնե՛ն է անցեր»[10]։

Երբ այդպիսին էր կարծիքը, երբ ամեն ինչի չափ ու կշիռը բարեկեցությունն ու փողն էր, պարզ է, որ կանայք, իրենց պանդուխտ ամուսինների փոխարեն, դառնում էին նաև տան հիմքը, նրա սյունները։

Դրա համար էլ կանանց պանդխտության գնալը բացառված էր։ Բացառված էր նաև, շատ քիչ դեպքերում Պոլիս (Ըստամբուլ) իրենց ամուսինների մոտ գնալը, այցելության կամ հիմնապես։

«Ի՞նչ գործ ունեն մեր կինները Ըստամբուլ։ Անոնք մեր տունները շենցնողներն են, տուներուն հիմերն են։ Առանց անոնց մեր տունները կգոցվին։ Կփլին։ Մենք գյուղացի ենք, քաղքցի չենք։ Անոնք ալ, մենք ալ չենք հարմարիր Ըստամբուլի նիստ ու կացին, վարք ու բարքին»[11]։

«Տուն մը ծառի մը կնմանի։ Ծառ մը հանես, ուրիշ տեղ մը տանիս դնես, հարյուրին մեկը կբռնե, ինսունինը կչորնա։ Մենք մեր տունը չենք չորցներ, չենք գոցեր։ Կանիծվինք, գերդաստանը ցանուցիր կըլլա, կմարի»[12]։

Կանանց, հարսների հասցեին տրված այս միակ գնահատականը, ովքեր կով ու ոչխար կթողներն էին, կաթն ու կիթը տնտեսողները, արտերը քաղողները, կալերը, եգիները բոբիկ ոտքերով ջրողները, դեռևս

---

9 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Մենք մանուկներս», էջ 158։

10 Նույն տեղում, էջ 162։

11 Նույն տեղում, «Սիլաս», էջ 271։

12 Նույն տեղում։

ծննդաբերողները, սերունդ պահողները, անտարակույս գնահատականների ամենամեծն էր և գալիս էր այն խոր ու ճշմարիտ գիտակցությունից, որ հարկավոր է «ծառը պահել», այն փրկել, չանել երբեք արմատախիլ։ Դա, իհարկե, ծնունդ էր առնում, մեծ մասամբ, այդ անգրագետ, կիսագրագետ բազմությունների ունեցած խոր ու անբեկանելի հայրենասիրությունից, հողասիրությունից։ Հայրենիքի, հողի, տան նկատմամբ տածած սիրուց ու նրանց սրրությունից։ Այդ հարցում, Հակոբ Մնձուրու պատմվածքներից ելնելով, հասանովացիները առավել աչքի էին ընկնում, դառնալով խորհրդանիշ իրավ ու իսկական հայրենասիրության։

«Հասանովացիները որոնք չէին պանդխտեր, մեծամասնությունը փռապան էր։ Ըստամբոլ փուռ կբանեցնեին։ Ասոնք Ըստամբոլ չէին հաստատվեր, չէին ուզեր, տուն մը քանի՞ ոսկի էր, մեկ չէ, տասը տուն կրնային գնել, բայց կպանդխտեին ու նորեն երկիր կվերադառնային, իրենց տեղը, իրենց եղբայրը, հայրը, ղավակը գնելով։ Հայրենի գյուղը, պապերուն տունը, արտերը, այգիները թողնելով գաղթելը կայպանեին։ Ընողին հետ հարաբերությունները կդադարեցնեին։ Իրարու հետ մականուններովը կկանչեին, անուն շատ քիչ կգործածեին, դավառին ընդհանրացած սովորությունովը»[13]։

Այդ հայրենասիրությունն էր, անշուշտ, այդ մարդկանց արդարացումը, որ հաճախ դեմ էր գնում նաև այլ ասպարեզներում ընդունված կարծիքներին։ Հակոբ Մնձուրու «Սիլայում» պանդխտությունից վերադարձող Սըլոյանի բեռներում, անթիվ ու անհամար սնդուկների մեջ գտնվում են նաև երեքը, որոնց պարունակության մասին «զեկուցում» է Սըլոյանը։

«Սնդուկ մը ձերմակ ըսբառմաշեթ մոմ ու խունկ է, ժամուն բերի։ Երկու սնդուկ ալ մայրենի լեղու, քերական, հեգարան, տետրակ, գրիչ են, դպրոցի աղոցն է, փարա հավաքեցինք ու առինք»[14]։

Հուզիչ է, իհարկե, նման վերաբերմունքը, երբ, մանավանդ, զարիր ընկերների հավաքած փողով է առնված... դպրոցի աղոց համար։ «Փարա հավաքեցինք ու առինք»։ Շատ է խոսուն, իհարկե, որ ավելորդ է դարձնում հավելյալ մեկնաբանությունները։

Եվ ինչքան հուզիչ են, խորիմաստ ու ուսանելի այդ մարդկանց ասեղծած իմաստուն խոսքերն ու ասացվածքները և ինչքան հարուստ,

---

13 Հակոբ Մնձուրի, *Արմտան, «Էմիրկյանի փուռը գնաց»*, էջ 124։

14 Հակոբ Մնձուրի, *Կռունկ, ուստի՞ կուգաս, «Սիլա»*, էջ 283—284։

պատկերավոր ու ողբերգական այն քառատողերը, բանաստեղծությունները ու հայրենները, որոնք արդյունք են պանդխտության, նրանից ձեռք ձգված փորձառության, նրանից մեկնող այրող կարոտի ու սիրո զեղումների։ Հակոբ Մնձուրու՝ հայ բանասիրությանը մատուցած մեծ ծառայություններից մեկն էլ այն է, որ պատմվածքներում և ժամանակագրություններում մեջբերելով դրանք, կարողացել է կորստից փրկել այդ բոլորը և պարգևել նրանց հավիտենականության անվիճելի ուղեգիր։ Տանք մի քանի նմուշ պանդխտության հետ առնչվող գոհարներից, որոնք հաճախ էլ ստեղծվել են Թրքերեն լեզվով, հայերի կողմից։

Հարսների ստեղծած հայրենները, որոնք հաճախ հորինվում էին, երբ նրանք հավաքվում ու խոսում էին իրենց կարոտներից ու ամուսիններից.

1. Զարկիր կրակ տվիր, աղաս
Կերիմ, կվառիմ,
Ջուրի պես ծարբվցեր եմ, աղաս
Ճամփուդ կնայիմ։

2. Քներ եմ խոշ[15] եմ եղեր, աղաս
Սիրուդ սերխոշ[16] եմ եղեր,
Հերու շատ աղեկ էի, աղաս
Աս տարի ի՞նչ եմ եղեր, կամ՝ Աս տարի գեշ եմ եղեր։

3. Հաներ եմ կապույտս, աղաս,
Հագեր եմ ալը,
Ես քենե կարոտ եմ, աղաս,
Ի՞նչ ընեմ մալը[17]։

4. Շըլլե[18] ես չըլլայի, աղաս
Քո սիրած յարը,
Շըլլե իս չի բերեր, աղաս
Իս բերող մարը։

5. Տուն եկուր աղաս, ելիր տուն եկուր
Արմուղանդ[19] չեմ ուզեր, աղաս
Արեգ առ եկուր։

---

15 խոշ (Թրք.)—մի տեսակ, հաճելի։
16 սերխոշ (Թրք.)—գինով, հարբած։
17 մալ (Թրք.)—ապրանք։
18 շըլլե (գավառաբարբառ)—երանի թե։
19 արմաղան, արմուղան (Թրք.)—գավ. նվեր։

(«Աղաս» կամ ըստ Հակոբ Մնձուրու՝ ղղելպաշների «Աղամը» պարսկերեն է և հայ կանանց կողմից՝ քսանից մինչև քառասուն տարեկան հասակի իրենց ամուսինների հասցեին օգտագործվել է որպես կարոտի, սիրո արտահայտություն)։

6. Ըստամբոլ մի գովեք
Երկրի վար է
Լեռները մշուշ են
Ճամփեին քար է։

Կամ՝

Ըստամբոլ մի գովեք երկրի վար է,
Լեռները մշուշ են, ճամփեին քար է,
Ըստամբոլը շինողին վարպետը ոռնա,
Ով որ հոն կերթա մեկի կմոռնա։

Այս երգը, միաժամանակ, որպես օրորոցի երգ երգվել է երեխաներին քնացնելու համար։ «Մեր օրորներեն շատ քիչը իրավեն օրոր էին»—

7. Խաչին, լուսունկին նորուն
Յար ես քու ճամփադ կնայիմ,
Յար ես տղա դուն տղա
Մեր սիրուն չաղերն[20] են հիմա...

8. Քերվան կուգա ինչ խումաշի[21] բեռներ կան,
Արանիս ալ ինչ ծովեր ու լեռներ կան...

Կամ՝

Քերվան կուգա ինչ խումաշի բեռներով
Արանիս ալ ինչ ծովերով, լեռներով։

9. Հարեն եմ, հարեն կանչող եմ,
Ծովերուն վրայեն նավով անցնող եմ
Ամեն անցող դարձողին յարս հարցնող եմ։

10. Լուսունկան փրթավ խորեն,
Միրզա լեռան վրայեն,
Ոսկի գիրով նամակ մը,
Թաթարը բերավ յարես։

---

20 չաղ (Թրք.)—դար, այստեղ ժամանակների իմաստով։
21 խումաշ, քումաշ, (Թրք.)—կերպաս։

11. Պաղճան եկուր որ տեսնեմ,
Զեռդ երկնցուր որ վարդ տամ,
Արանիս ձյունոտ լեռներ կան, աղաս,
Ըսե, ինչո՞ր ես քեզի տեսնեմ։

12. Լեռները ծակեի, պատուհան բանայի
— Աղաս ձեռքս անցնեի, շղթան զարնեի։
— Աղաս, ինձի համար միչնար բաղարը,
— Դուն ազվոր ես, թող չկպի քեզի գեղին նաղարը։

13. Ստամբուլը շնողին, աղաս, վարպետը ոնա
Զեն թողուր որ Սիլա դան, Ստամբոլին բողերը։

Ինչպես ասացինք, եղել են նաև երգ ու հայրեններ թրքերենով, որոնց հեղինակները նույնպես հայեր են եղել։

1. Ղարշումա կել քի կյորեմ
Էլին ուզաթ կյուլ վերեմ
Արամբզտա ղարլը տաղ
Պեն սենի նասը՝լ կյորեմ[22]։

2. Ինտիմ սուտան իշմեյն
Օրախ ալտըմ պիշմեյն
Տեսիլեր աղան կելտի
Ղանատ ալտըմ ուշմայա[23]։

3. Տութ աղաճը պոյումճա
Տութ յեմետիմ տոյումճա
Աղամ աղղըմ ղուրույա
Յար տեմետիմ տոյումճա[24]։

4. Պու կենճ ույմամիշըմ, աղաս
Պաշ յերե գոյմամիշըմ
Կեչմիշ յարըն քերվանը, աղաս
Ույումուշ կյորմեմիշըմ[25]։

Բերում ենք տողացի թարգմանությունները.

22 Արի դիմացս, որ տեսնեմ
Երկարիր ձեռքդ վարդ տամ
Մեր միջև ձյունոտ լեռ
Ես քեզ ինչպես տեսնեմ։

23 Իջա ջրից խմելու,
Մանգաղ վերցրեցի հնձելու,
Ասացին աղաղ եկավ
Թև վերցրեցի թռչելու։

24 Թթի ծառը իմ հասակին
Թութ չկերա կուշտ ու կուռ,
Աղաս բերանս չորանա
Յար չասեցի կուշտ ու կուռ։

25 Այս գիշեր չեմ քնել, աղաս
Հլուխս գետնին (բարձին) չեմ դրել,
Անցել է յարին կարավանը, աղաս
Քնով եմ անցել, չեմ տեսել։

Այս վերջին քառատողի առաջին և երրորդ տողերի վերջում կրկնվող «աղաս»-ը անհերքելի վկայությունն է, որ այդ երգերի հեղինակները հայերն են եղել, թեպետ Հակոբ Մնձուրին նույնպես վկայում է. «Շատ ալ թուրքերենները կային։ Բայց չկարծեք թե թուրքերը հորինած էին։ Հայերուն ստեղծագործություններն էին, հայու զգացումներով, գեղջուկ, նախնական։ Մենք, հայերս կկանչեինք»[26]։

Եվ, վերջապես, կար այսպիսի ասացվածք։ Արմտանում պանդխտությունից վերադարձողներին ասում էին «Ապաշխարանք ըլլա», այդ երկու բառի մեջ դնելով զարիբությունից վերադարձող մարդու անցկացրած դառն օրերի մասին այն պատկերացումը թե ի՞նչ է նշանակում պանդխտությունն ու պանդխտելը։ Ապաշխարանք ըլլա։ Բայց վերադառնալով գյուղ, իրենների ու հարազատների մոտ, կարո՞ղ էր վերադարձողը վերջնականապես լրացրած, ավարտած համարել իր կրածը... ապաշխարանքը։ Հավիվ թե... սկսվում էին գյուղական սովորական, առօրյա կյանքը, արդեն գյուղի ներքին կյանքի հոգսերը և քաշված, տարված ապաշխարանքն ու ծանր անցյալի տարիները դրախտ չէին խոստանում եկվորին, ինչպես դրախտ չէր այդ կյանքը, նրանից անբաժան մնացած, նրա տեսական բնակչի համար։ Դրա գլխավոր պատճառներից մեկը, արդեն ուրիշ մի աղա էր, ոչ այն սիրելին, կարոտյալը, այլ իսկականը, գյուղի աղան, գյուղում մնացածը, անհոգի այն հարուստը։ Եվ գյուղում բացառիկ փոքրամասնություն կազմող աղայական կամ հարուստների այդ դասակարգը շահագործում էր իր նմաններին, եթե այդ նմանները կարողությամբ իրենից ցածր էին կանգնած։ Իսկ եթե երբեմն հավասարի հետ էր գործ ունենում, ապա գործի էին դրվում խարդախությունը, նախանձն ու ատելությունը, չքողարկված թշնամանքն ու բանսարկությունը։ Ինչ էլ լինեին պարագաները, երկու դեպքում էլ գյուղի այդ աղան բարոյազուրկ էր իր էությամբ, անհոգ ուրիշի ինչքի ու պատվի նկատմամբ։ Դա դասակարգային սկզբունք ու զգացողություն էր, դրա համար էլ իրարից քիչ էին տարբերվում նրանք, բոլոր աղաները, լինեին հայ, թուրք, քուրդ, թե զզլբաշ։ «Բայց իմ նկարագրություններես, ինչպես մեր շուրջի այլազգիները, դուք ալ մի հետևցնեք, որ մենք ունևոր էինք։ Մենք հինգ գյուղ

---

26 Հակոբ Մնձուրի, Կոմնկ, ուստի՞ կուգաս, «Մեր մայրերը», էջ 90։ «Ժամանակագրություն», «Մարմարա», հուլիս, 1960, № 5787։

էինք, ամեն գյուղի մեջ երկուական տուն կելլեր որ ունևոր էին, ա-նոնցմե ալ մեկ բանին նայիս հարուստ ըսվելու չափ չէին»[27]։

Պարզվում է, որ Արմատանում ու շրջակայքում իսկական հարուստ աղաների թիվը երկու-երեքից չէր անցնում։ Հակոբ Մնձուրին իր պատմվածքներից մի քանիսում, գեղարվեստական բարձր վարպետությամբ, հաճախ անուղղակիորեն մերկացրել է այդ հարստության հիմքը կազմող շահագործումը («Քենը», «Մարտոն»), բացահայտել է հարուստների վարքն ու հարաբերությունները միմյանց նկատմամբ («Տուրսուն էֆենտի», «Էմիրկյանի փուռը գնաց») և ի ցույց դրել աղաների «այլանդակ բարոյականը» («Բոբիկ ոտքերով Մկրչը» և այլն)։ «Քենը» պատմվածքում Հաճի Ներսես աղան բացօթյա խնջույք է տալիս Ջերմանում։ Հավաքվել են բոլոր տարեց աղաները։ Ջերման է գալիս նաև Վարդանը, որին, իհարկե, հրավիրող չի եղել։ Այս վերջինը պարզապես եկել է «փորը կշտացնելու հույսով»։ Նման միջավայրում Վարդանի նման մեկն էլ է հարկավոր, որպեսզի աղաներին ջուր բերի, օջախներին հսկի (խորոված և այլն սարքելու) և, վերջապես, կատարի այս կամ այն աշխատանքը։ Դրա համար էլ նրա երևալը աղաները ընդունում են հաճույքով։ Սկզբում նրան ուղարկում են անասուններին հսկելու. չէ որ նրանք եկել են ձիով, ջորիով, էշով։ Վարդանը աղաների սեղանից ոչ հեռու նստած, անհագ աչքերով հետևում է նրանց կերուխումին։ Իսկ աղաները ուտում են մեծ ախորժակով, ոչ թե ուտում, այլ խժռում, խժռում են ամենահամեղ ճաշերը՝ էլ դառան խորոված, էլ ձավարով լցոված դառան փոր, փլավ, մեղրի մեջ թաթախված խմորեղեններ և այլն, և այլն և «մոռանում» են իրենցից քիչ հեռու նստած և իրենց անասուններին հսկող Վարդանին։

Վարդանը հոգու խորքում վիրավորված է սաստիկ, և երբ աղաներից մեկը, վերջապես, հիշում է նրան և երկարում խմորեղենը, որ պիշի է կոչվում, Վարդանը մերժում է խոցոտված արժանապատվությամբ։ Բայց ո՞վ է հասկանում աղքատ մարդու հոգեբանությունը։ Աղաների սադիզմն ու ցինիզմը հասնում են իրենց գագաթնակետին և նրանք, տեսնելով մերժումը, ձեռք են առնում խեղճին։

. «—Վարդանը պիշի չուտեր, կրկնեցին աղաները միաբերան»։ «Սուրճերը կամուրջին այգիները պիտի խմեին», դրա համար էլ առանց նվազագույն ուշադրության արժանացնելու Վարդանին մեկնեցին բոլորն էլ, տանելով նաև ծառաներին։ Ծառաներն էին միայն, որ վերջում,

---

27 Հակոբ Մնձուրի, Կոտկ, ուստի՞ կուգաս, «Մենք ինչ կհագնեինք», էջ 216։

խղճալով Վարդանին, առաջարկեցին նրան մնացուկներով կշտացնել փորը, ու փոռոցը գյուղ հասցնել։ Բայց Վարդանը երդվեց ոչինչ չվերցնել իր համար, ոչինչ չուտել, միայն ծրարեց փոռոցը, փլավն ու հացը մեջը ու ճամփա ելավ։ Փոռոցը և ավելցուկները իր համար չէր, որ տանում էր, ոչ էլ իր հարազատների։ Այդ բոլորը նա Բողեց Հաճի Ներսես աղայի տանը և առանց բառ իսկ ասելու բռնեց իր տան ուղին։ Գյուղամիջում երիտասարդները գիտեին, որ Վարդանը Ջերման էր գնացել, հարցրին.

«— Դուն ալ աս օր Ջերման էիր, Վարդան ախպար, աղաներուն հետ էիր, մի պահեր, ըսին տղաքը։

— Է, հա, ի՞նչ կա, ի՞նչ պիտի պահեմ, պատասխանեց Վարդան գժկամությամբ։

— Հեչ... կհարցնենք, ըսին, շատվո՞ր էիք։ Քանի՞ հոգի էիք։

— Համրելու չէի՞ յա, կայինն, շատվոր էին։

Երիտասարդները հետաքրքրվեցան։

— Ինտո՞ր եղավ որ դուն միանակ եկար, աղաները ի՞նչ եղան։

— Պոչերնին փակելու, կենալու չէի՞ յա, ըսավ, անոնք ալ կուգան հարկավ։ Անոնք կամուրջին եղիները գացին, ես ելա եկա։

— Վարդան ախպարը հետերնիս խոսիլ ալ չուզեր, նկատեցին տղաքը։ Անանկ է յա, աղաներուն հետ սերն ու մեղրը, դառերը կերավ, հարկավ մեր երեսը չնայիր։

— Շիտակ է, կերա, դուք ինչու՞ կեցաք հոս, Բող դուք ալ գայիք տը ուտեիք, պատասխանեց։

Իրիկվան ցուրտը սկսած էր։ Ոտքերը Թրջած ճամփուն ձյուներեն, կմսեր ամբողջ մարմինովը։

Տուն գնաց, կինը Թոնիրին Թաղարը կրակ լեցուցած էր, մտավ մինչև վիզը մեջը ու պառկեցավ։ Աչքերը բաց, առիրին գերաններուն ու մարգակներուն նայեցավ։

— Վարդանը պիշի չուտեր, Վարդանը հեչ պիշի կուտե՞, կրկնեց ինքնիրեն։ Աղաներուն հեղնությունը մտեն չէր ելլեր։

— Ի՞նչ կըսես դուն քեզի, հետաքրքրվելով հարցուց իր կինը, որ նույնպես Թոնիրին դեմի կողմը եկավ ու նստավ ու իր ամուսինին կնայեր, որու՞ հետ կխոսիս։

— Բան չկա, հեչ, ես ինձի հետ կխոսիմ, պատասխանեց Վարդան ու լռեց։

* * *

Հետևյալ առաու աղաները ժամեն ելեր էին խմբովին, փողոցը իրեն հանդիպեցան։

— Ծո՛ Վարդան, երեկ ե՞րբ տուն եկար, մենե առա՞ջ, թե՞ մենե ետքը, հարցուց Հաճի Ներսես աղան։

— Առաջ եկա, պատասխանեց Վարդան, գլուխը կախած, գետինը նայելով։

— Փորդ կշտացուցի՞ր աղեկ մը։

— Կշտացուցի, պատասխանեց Վարդան ու լռեց։

— Փիլավն ու հացերը մեր տունը բերեր էիր, սա ինտո՞ր ուտել է, ծո՛ տղա, ըսավ Հաճի Ներսես աղան, թող ձերը տանեիր, տղաքդ կուտեին։

— Էհ իշտե չտարի, ըսավ Վարդան։

— Անանկ մըն ալ քթիդ առաջքեն կխոսիս որ, գիտես քի սրդոզեր ես, ավելցուց Հաճի Ներսես աղան, ծո երթալով աղեկ մը քիպար դարձար։

Վարդան չպատասխանեց։ Աղաները հեռացան։

— Քիպար դարձա, ի՞նչ գիտցար։ Սերը, գառները, պիշը դուք ուտեք, ոսկորներն ու շոր փիլավն ալ ես։ Անոթի կմնամ չեմ ուտեր։

Ու գլուխը կախ, մենախոսելով քալեց»[28]։

Այս մեջբերումը արեցինք երկու նպատակով։ Առաջինը ցույց տալու համար մնձուրիական սեղմ ու արագ այն գրելաոճը, որ մարդկային հոգեբանությունների բացահայտման մեծ ու խոր ընդունակություններով է օժտված։ Հարց ու պատասխանի առավել դժվարին գրական այդ տեխնիկային հաճախ է դիմում Մնձուրին, առավել կենդանի դարձնելով, առավել շոշափելի իր միջավայրն ու հոգեբանությունը։ Մնձուրին իր արվեստում պարտադրող չէ, այլ, ավելի շատ, թելադրող։ Երկխոսության այդ ձևը, բացառելով հեղինակային խորհրդածություններն ու միջամտությունները, առավել իրապաշտ է դարձնում, առավել հավատի հերոսներին, նրանց ապրումներն ու մտածելակերպը։ Նախադասությունների «տողատակերում» բացահայտ երևում են դեմ հանդիման կանգնած երկու դասակարգի մարդկանց ամբողջական հոգեկան աշխարհը։ Ու եթե նրանցից առաջինը, հարուստը, աղան իր քամահրանքով, ցինիզմով մերկացնում է իր էությունը, որ հոգկանք է առա-

28 Հակոբ Մնձուրի, *Կապույտ լույս*, «Քիներ», Ստամբուլ, 1958, էջ 27—28։

ջացնում ընթերցողի մեջ, երկրորդը, աղքատը, ծառայողը այն մարդն է, որ իր արհամարհված վիճակում էլ արժանի է դառնում սիրո, որովհետև բարձր է պահում մարդկային, թեպետ ոտնահարված, բայց գովելի արժանապատվությունը։ Եվ այս, թաքցնելով իր ներքին տառապանքն ու ընդվզումը նույնիսկ իր հարազատներից՝ կնոջից, երեխաներից ու յուրայիններից՝ գյուղացի իր նման աղքատ երիտասարդներից։ Թելադրող այդ ոճը, որի մեջ, ինչ խոսք, լռելյայն զգալի է հեղինակային համակրանքը, որի կողմում լինելը առավել բարդ ու դժվարին է, քան այն արվեստը, որ թեպետ արդար, բայց պարտադրանքով է անում, հասնում իր նպատակակետին։ «Պարտադրանք», որ շատ անգամ մտածելու քիչ բան է թողնում ընթերցողին։ Կարդալով այս, թեկուզ հիշյալ պատմվածքի երկխոսությունները՝ մի կողմից Վարդանի ու գյուղի երիտասարդների, մյուս կողմից՝ Վարդանի ու Ներսես աղայի միջև, ընթերցողը կարող է մղվել երկար մտորումների, որոնք խոսում են գյուղում աղայական անմարդկային բարքերի ու մտայնությունների, արհամարհված զանգվածների, «խոնարհների» հոգում խմորվող ընդվզումների մասին, որոնք թեպետ պասսիվ վիճակում են գեռ, բայց, այնուամենայնիվ, ակտիվ են թեկուզ հոգեկան աշխարհում տեղի ունեցող փոթորկումներով։

Երկրորդ, այս մեջբերումը, մանավանդ երկխոսությունը, Վարդան ախպոր պատասխանները հիշեցնում են նույնպես կենցաղային հիմքերի վրա գրված մի այլ պատմվածքի հերոսին, Ներսես ախպարին՝ արևմտահայ գրականության մի այլ հեղինակի՝ Ատրպետի առավել ճանաչված «Տժվժիկից»։ Ճիշտ է, Ատրպետի (Սարգիս Մուրայաջյան, 1860—1937) «Տժվժիկում» Նիկողայոս աղա—Ներսես ախպար բախումը բավականին այլ դրդապատճառներ ունի և երբեք նույն միջավայրի ու հոգեբանական պայմանների արդյունքը չէ, ինչպիսիք են Մնձուրու «Քենը» պատմվածքի Ներսես աղա—Վարդան ախպար բախման պայմանները, բայց անառարկելի է նրանց միջև գոյություն ունեցող անմիջական ու ներքին կապը։ Երկու պատմվածքների միջև գոյություն ունեցող կապը հոգեբանական այն ռեալությունն է, որ հատուկ էր տիրող խավերին և այն ընդվզումը, որ խմորվում էր երկրորդների հոգու մեջ, այն տարբերությամբ, որ Ատրպետի Ներսես ախպարը, եթե համբերությունից այլևս դուրս եկած իր «աբբայի տակ թաքցրած թոքը դուրս հանելով, այնպես շրմփացրեց Նիկողայոս աղայի քթին, բերանին, որ վերջինս ապուշ դարձավ, տեղն ու տեղը մնաց՝ երեսը, գլխի թանկագին շալը, վիզը արյունով ներկված»։ Մնձուրու Վարդան ախպարը

«գլուխը կախ, մենախոսելով քալեց»։ Բայց հաստատ որոշած էր, որ հակառակ սաստիկ սոված լինելուն չի ուտելու նույնիսկ ամենահամեղ ու թանկ խմորեղենը և ավելին, նույնիսկ նրանց բացակայության. երկրորդը «շրմփացրեց» «փռոցն ու ավելցուկները» աղայի տնեցիներին։ Երկու հերոսներն էլ սոված մնացին, բայց աշխատում էին բարձր պահել մարդկային արժանապատվությունը հասարակության և իրենց իսկ խղճի առաջ։ Դաժան այդ ինքնաղսպումն էր էականը, մարդկային նվաղագույն վերաբերմունքը կորցրած դասակարգի առաջ, արժանապատվությունը պահելու, մարդկային մնալու պայքարը։ Այդ պայքարում Ատրպետը վերջում ակտիվության մղեց իր հերոսին, Մնձուրին մնաց պասիվ, բայց լռելյայն նույն... Թելադրանքի դիրքերում։

Այդ թելադրանքը առավել սուր ընույթ ստացավ Հակոբ Մնձուրու «Մարտո» պատմվածքում, որտեղ բիրտ ու բռի շահագործման կողքին բացահայտվեց նաև ընդվզումը։ Պատմվածքի հերոս Մարտոն, «աղքատ, հացի կարոտ երիտասարդ, բնավորությամբ հեզ ու համակերպող» մարդ է։ Ավետիս աղան կանչել է Մարտոյին, որպեսզի բակում «սարվընացուները պատեր, սրեր, մնացած ցախերն ալ կոտրեր»։ Մարտոն անում է այդ բոլորը, ցրտից սաստիկ մրմնջելով ու երբ վերջացնում է, Ավետիս աղան, տեսնելով, որ դեռ իրիկնանալու բավական ժամանակ կա, պատվիրում է Մարտոյին, որ նա տան եղած կոճղերն էլ ճեղքե։ Տարիներով տան ներսում մնալուց փոշոտված, չորացած, կայծքարի պես կարծրացած կոճղերն էլ Մարտոն հանում է բակ ու ճեղքում։ Սկսում է մթնել, ձյուն է գալիս։ Գիշերը Ավետիս աղայի մոտ են գալիս գյուղի աղաները։ Ավետիս աղան կանչում է Մարտոյին, որ այս անգամ էլ հյուրերին սուրճ եփի ու սպասարկի։ Մարտոն անխոս անում է նաև այդ նոր պատվերները։ Նա միաժամանակ ծանոթ է գյուղացիներին, որպես լավ «հարեն» կատարող ու «տեֆ» նվագող։ Աղաները Մարտոյին սիրում են, որպեսզի իրենց ևս ուրախացնի։ Մարտոն կատարում է այդ խնդրանք-պատվերները ևս։ Նվագում է ու երգում, երգում է ու նվագում, ժամեր ամբողջ ոտքի հանելով բոլորին և երբ բոլորը պատրաստվում են գնալու ու մեկնում են, ինքն էլ ոտքի է ելնում ու ուզում է գնալ։ Այստեղ սկսվում է կրկին մնձուրիական երկխոսությունը.

«—Կերթա՞ս, Մարտո—հարցուց Ավետիս աղա։

— Երթամ, ինչ ընեմ, Ավետիս աղա, պատասխանեց, ձեռքերը իրարու մեջ առնելով ու շփելով։

— Ծո տղա, ըսավ Ավետիս աղա, օտար չես դուն, տան տղա կսեպվիս, դրացի ես։ Թող հարսները երկու հատ հաց բերեն, տուն տար, վաղ առտու տղաքդ կելլեն, կուտեն։ Փարա՞ ալ կուզես, փարան ինչ պիտի ընես։

— Դուն գիտես, պատասխանեց Մարտո, հուսալով որ դրամ ալ պիտի տար։

Մեծ հարսը երկու թոնրահաց բերավ ու տվավ, Ավետիս աղան բաժնվեցավ ու Մարտոն տեղն ու հացերը առավ ու դուրս ելավ հուսախաբ։ Շիտակ տուն գնաց։

Տղաքը ընացեր էին, պատռտած մթելի մը տակ կծկված, իրարու սեղմված երեքն ալ։ Կինն ալ նորածինը օրոցքեն հաներ, ծիծը բերանը տվեր, նույնպես քնացեր էր երեխային հետ։ Թիթեղե պզտիկ ճրագը իրեն համար չէին մարեր ու քարյուղի անախորժ, գեշ մուխը ծգլեր էր հողե մերկ տնակին մեջ։ Մարեց լույսը ու ինքն ալ պառկեցավ կնոջը քով։

Առտուն գեշ տրամադրությունով արթնցավ, հայհոյելով Ավետիս աղային որ մինչև իրիկուն բանեցուցեր, դիշերն ալ խաղ կանչել տվեր ու ընդամենը երկու հաց տված էր։

Բերանը բան մը չդրավ ու անորի փողոց ելավ։

Գյուղին երիտասարդները Արութին տունն էին հավաքվեր, ձայներին հոնկե կուգար։ Ներս գնաց ու դուռը կամացուկ մը բացավ։ Վառարանը կարմրելու աստիճան վառեր, մեկ քանիները թուղթ կխաղային, իսկ մյուսները նախնական կահավորումով սենյակին մեջ, հողե հատակին վրա ընկողմաներ, ոմանք ալ սրունքնին երկարեր կծխեին, կկատակեին։ Բացագանչություններով դիմավորեցին զինքը։

Մարտո չպատասխանեց ու խոժոռ դեմքով մը նստավ անկյուն մը։

— Ծո երեկ ո՞ր էիր, Մարտո, դիշերը Կիրակոսենցը ինչու՞ չեկար, հարցուցին տղաքը։

— Մարտոն երեկ հարուստներուն հետ էր։ Ավետիս աղային ցախերը կոտրեր է, դիշերն ալ աղաներուն հարեն կանչեր է, փարա շատ առավ, ըսին ուրիշները։

Մարտո որ երեկվընե ի վեր պոռթկալու առիթ մը կփնտրեր՝ հայհոյեց Ավետիս աղային ու բոլոր հարուստներուն։

— Ծո իրա՞վ բան մը չտվավ, հարցուցին տղաքը։

— Է չէ՛, պոռաց Մարտո, տժգույն, ծակավեր դեմքը կարմրելով. քանի՞ անգամ պիտի ըսեմ։ Երկու հաց տվավ։

Երկու հա՞ց, գոչեցին տղաքը, ցուրտ տեղը մինչև գիշեր աշխատցուց, գիշերն ալ տեֆթ չալեցիր, ու երկու հա՞ց մինակ ուվավ։ Հինգ դրու՞շ ալ չէր կրնար տար, յա չէ՝ նե կեռ կոտ ալյուր։ Անպարները կճաթին ալյուրեն։ Հարսներուն ծոցեն հինգը մեկնոց ոսկիները ձգելը գիտե։

Ու իրենց ընկողմանած տեղերեն անոնք ալ հայհոյեցին Ավետիս աղային զույգ հարսներուն հասցեին, միաժամանակ այպանելով Մարտոն որ չէր արտահայտվեր, վախցեր էր։

Մարտո լռեց, թողուց որ հայհոյեն ու հետևեցավ թուղթ խաղացողներուն խաղին, ատեն ատեն թուքը կլլելով՝ ինչպես իր վարժությունն էր»[29]։

Այս երկրորդ մեջբերումը արեցինք, որպեսզի առավել պարզ դառնա երկու հատվածներում առկա շաշափելի տարբերությունը։ Եթե առաջին պատմվածքում Վարդան ախպարը զյուղամիջում իր երիտասարդ յուրայիններից թաքցնում է ճշմարտությունը, երկրորդում Մարտոն պատմում է Ավետիս աղայի անհոգի ու բիրտ շահագործման մասին և ավելին, պոռթկալով, հայհոյում է «Ավետիս աղային և բոլոր հարուստներուն»։ Եվ մինչ Վարդան ախպարը կուլ տալով իր վիրավորված արժանապատվությունը, պատմվածքի վերջում՝ գլուխը կախ, մենախոսելով քայլում է», Մարտոն թուքը կուլ տալով թողնում է, որ յուրայինները նույնպես հայհոյեն «Ավետիս աղային զույգ հարսներուն հասցեին»։ Տարբերությունը բավականին մեծ է, կարծես ինչ-որ տեղ Մենձուրին մնալով իր թելադրողի դիրքերում, այնուամենայնիվ, իր հերոսներին ընդվզման ճանապարհին մի քայլ առաջ է տանում, «գլուխը կախ քայլելուց» հասցնելով, թեկուզ հայհոյանքով՝ պոռթկման աստիճանին։ Նույնն են աղաների վարքագծերը, թեկուզ տարբեր պայմաններում, գործելակերպը նույն անմարդկային շահագործումն է։ Ներսես աղան ոչընչով չի տարբերվում Ավետիս աղայից, բայց Մարտոն Վարդան ախպար չէ այլևս։ Նա արդեն «հայհոյել» գիտե, հակառակ, որ նա նույնպես, ինչպես շեշտված է պատմվածքի սկզբում, «բնավորությամբ ալ հեզ ու համակերպող» մարդ է։ Մարտոն ավելի մոտ է Ատրպետի Ներսես ախպարին, մոտ է, քանի դեռ չի թոթափել Ներսես ախպոր նման աղաներից ունեցած վախը, որի մասին յուրայինները ակնարկում են նրան. «միաժամանակ այպանելով Մարտոն, որ չէր արտահայտվեր, վախցեր էր»։

---

29 Նույն տեղում, «Մարտոն», էջ 305—306։

Հակոբ Մնձուրին, իհարկե, «Վարդան ախպար» ու «Մարտո» է, լավ գիտե նրանց, իրեն իսկ թերևս, բայց առավել լավ է ճանաչում նաև աղաներին, նրանց շահագործման ձևերն ու նրբությունները լավ իմանալով, գիտի ոչ միայն հակադիր դասակարգերի բախումը, այլ նաև տեսել ու ապրել է գոյություն ունեցող այն հակասությունները, քեռն ու նախանձը, որ եղել ու գոյատևել է այդ հատուկենտ հարուստների մեջ իրար նկատմամբ, նույն դասակարգի մեջ, թերևս նույն ու ավելի անմարդկային ձևով ու նրբություններով, քստմնելի խորամանկությամբ։

Այդ մասին է խոսում «Տուրսուն էֆենտի» պատմվածքը։ Պատմվածքի հերոսները հայեր չեն, թուրք ու քրդեր են, բայց հարուստը և հարստություն դիզելու միջոցները ազգության հետ կապ չունեն կամ շատ քիչ կապ ունեն։ Տարբերվում են միայն գործելակերպերը։ «Մեքերթմեցի Տուրսուն էֆենտիին հացը չկերած մարդ չկար» նախադասությամբ է սկսվում պատմվածքը և ի հայտ է գալիս, որ Տուրսուն էֆենտին առերևույթ առատաձեռն, հյուրասեր ու «աղնիվ», գործունյա մարդու համբավ ունի։ Նա դավառում Մեճլիսի խարեի անդամ է, դեկավար, այնտեղ ամենաազդեցիկն է, «զայմախամին աջ կողմն է իր տեղը»։ Ավելին, նա դավառի ամենամեծ հողատերն է։ «Մեքերթմեի գյուղին հողերուն կեսն ավելին իրն էր. նույնպես և մոտակա Սիլիր գյուղինը։ Շատ տեղեր ալ ջաղացքներ, փարախներ, մարգագետին ու արտեր ուներ», հարուստ, որի հավասարը չկար գրեթե։ Այն աստիճան, որ իր հողերի միայն մեկ մասը կարող էր մշակել տալ իր մշակներին, մնացյալ մասը հանձնում էր մարաբաներին, որոնց հետ կալից կալ կիսում էր բերքը։ Ամեն տեղ ու ամենից հարգ ու պատիվ վայելող Տուրսուն էֆենտին սակայն, ուներ թաքուն մի թշնամի, որ այլ մեկը չէր, քան մի ուրիշ մեծահարուստ՝ կուլանցի Կոճո պեկը։ Վերջինիս թշնամանքն ու նախանձը կապված չէր, իհարկե, հակառակորդի անմիջական անձի հետ, նրա հարստության ու վայելած հարգ ու պատվի դեմ էր ուղղված։ Պատմվածքում հավատի փաստերով ու ռեալիստորեն ցույց է տրված այդ երկու հարուստների պայքարը, որ հիմնված է միայն խարդախությունների, բանսարկությունների, սուտ ու կեղծիքի վրա։ Սուտ ու կեղծիք, դավ ու մեքենայություններ, որոնց մեծապես օժանդակում է պետական մեքենան, գործող օրենսդրության առաձգականությունը, նայած թե ո՞վ է ավելի կաշառում, յուղում այդ մեքենան, ո՞վ է տվյալ պահին ավելի ազդեցիկ, հզոր։ Ում ձեռքին են կառավարման սանձերը։ Իսկ կատարված խարդախությունները բացահայ-

տելը հեշտ է, եթե կողմերից որևէ մեկը կորցրել է իր ազդեցության ոլորտները և ընկել է մյուսի տնօրինության տակ։ Գայլային օրենքն է գործողը, անսկզբունք, անմարդկային օրենքը։ Երեկվա «աղնիվ» կարծվածը փաստորեն կարող է մերկացվել ապօրինությունների մեջ, իսկ ապօրինի մարդը, մի օրից մյուսը, առաջինի կործանումով դառնալ «աղնիվ» մարդ։ «Աղնիվը» ուժեղն է, հարուստը, ժամանակավոր «անխոցելին»։ «Տուրսուն էֆենդի» պատմվածքը վերջանում է վերջինիս կործանումով. Տուրսուն էֆենդիի հրապարակից որպես հարուստ ու հարգարժան մարդ վերանալով ու նրա դիրքերը գրաված Կոճռ պեկի ազդեցության մեծացումով։ Մի հանգամանք, որ չգիտես ինչքա՞ն կտևի, երևի մինչև հրապարակ իջնի մի ավելի խարդախ ու ձեռքին ավելի ստոր մեքենայության խաղաթղթեր ունեցող, նոր մի մեծահարուստ թուրք կամ քուրդ պեկ։ Մնձուրու միտումը այդ պատմվածքում նույնպես թելադրող է, նա ոչ մեկի կողմը չէ, նրա պատմվածքի խորքում անխնա, անմարդկային շահագործումն է, որ բացահայտորեն երևում է աղաների միմյանց դեմ տարած պայքարի ընթացքում, երբ բացահայտվում է մեկի կամ մյուսի խարդախությունը, խարդախություն, որի նպատակը հարստության կուտակումն է ի հաշիվ աշխատավոր գյուղացիության անհողի շահագործման։ Եզրակացություն, որ ընթերցողի առաջ, իր լրիվ մերկությամբ, ի ցույց է դրվում, առանց հեղինակային մտորումների, պարտադրանքի, ասվածի, նկարագրվածի տողատակերից։

Թուրք ու քուրդ աղաների, պեկերի մեջ գոյություն ունեցող մրցակցության հիմքում եթե ընկած են ազդեցության գոտիներին տիրելու, ղեկավար պաշտոններ ձեռք բերելու և այսպիսով հարստությունը կրկնապատկելու, եռապատկելու տենչը և այդ ճանապարհին, նպատակի իրագործման համար միջոցների մեջ խտրություն չդնելը, որ միշտ էլ վերջանում է մեկնումեկի սնանկացումով, կործանումով, ապա հայ մեծահարուստների՝ իրար մեջ ունեցած թաքուն պայքարի հիմքում ընկած է... նախանձը։ Այդ չար նախանձի, անհիմն մեծամտության, նույնպես կործանարար, ողբերգական վերջի մասին է պատմում Հակոբ Մնձուրին «Էմիրկյանի փուռը գնաց» պատմվածքում։

«Մեծ գեղի Նահապետյանը իր Անծղկայի այգին խնջույք մը տվավ։ Անանկ խնջույք մը տեսնված չէր գավառին այգիները. տրվածները ամենքն ալ հասարակ կերուխումեր էին»։

«Նահապետյանինը ամառվան կիսուն, Վարդավառին ու Աստվածածնին մեջտեղի կիրակին եղավ։ Ինչե՞ր չըրավ։ Ան ոչ միայն երկու

գյուղերուն, գավառին յոթը գյուղերու իր բարեկամները, ծանոթները հրավիրեց։ Լման թուր մը՝ այսինքն երկու հարյուր հիսուն հաց եփեց ու զրկեց իր տունեն։ Կուժերով օղի, կուժերով գինի, պտուկներով յուղ, պարկերով ձավար գնաց։ Իր ոչխարներեն ամենեն պարարտներեն կտրվեցան։ Լիճքը ապսպրեց Եփրատի քարայրներու առաջքեն երեք, չորս օխանոց ծածաններ բռնվեցան։ Ապուշտային տղոցը լուր զրկեց երկու եղնիկ զարկին ու բերին Ապուշտայի քարերեն։ Ըսին թե նախանձը Նահապետյանին ընել տվավ այս խնջույքը։ Ուզեց էլպակյանը գերազանցել։ Նախանձեցավ որ քսան չորրի բեռներով Ըստամբոլեն հայրենիք եկավ, այդ գիշերը մինչև առտու կարավանին զանգակներուն ճանկըրը, ճանկըրը ձայները չթողուցին, որ գյուղ գյուղերուն տունները քնանային, տղուն հարսնիքին յոթը օր, յոթը գիշեր գինի հոսեցուց. հարսին ու տղուն պսակի թափորին վրա ոսկի տեղացուց։ Անոր բրածը ավելիով ինք չէ՞ր կրնար ընել։ Ան եթե էլպակյան էր, ինքն ալ Նահապետյան էր»[30] (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։ Իսկ ի՞նչ է լինում անիմաստ այդ մրցակցության, չար նախանձի, անհիմն ցուցադրական կրքի արդյունքը։ Լինում է այն, որ խմիչքի ազդեցության տակ Նահապետյանը ակամա ասանում է թուրը ծառա Մելլուտին, երբ փորձում է, քեֆի բորբ պահին, իր նշանառության վարպետությունը ցույց տալ ու կրակել այս վերջինիս գլխին, այն իբր գլխից թռցնելու նպատակով։ Բայց կապարը խոցում է ոչ թե նշանակետը, այլ սպանում է մարդուն, որ երեք գրոշի արժեք չուներ տվյալ իրականությունում։ Արդյո՞ք... «Նահապետյանը ազատ արձակվեցավ, բանտ չպահեցավ», բայց «էմիրկյանի փուռը գնաց։ Կնոջը՝ Զիմառցիին՝ շիվերուն, ճակատին, պարանոցին ռուպիները, գրամիցները, հինգրմանկնոց ոսկիներն ալ գացին։ Նորեն ալ պարտական մնացին Ակին Ժամկոչյանին, Տիվրիկցի Հայրանյանին»[31],

Իհարկե, Նահապետյանը ազատ արձակվեցավ... շնորհիվ թրքական «արդարադատության», որտեղ հոսեց այն ամենը, որի ցուցադրման համար տրվեց խնջույքը։ Նախանձը լավ վախճան չունեցավ, հանգելով նման անիմաստ ու ողբերգական վերջավորության։ Բայց միայն այդպիսի՞ վախճանի... Այդպիսի ցուցամոլական արարքները հղի էին առավել մեծ ողբերգություններով, որոնք չուշացան։ «Արմտան» հատորում Հակոբ Մնձուրին չի խուսափում նաև ասել այդ մասին։ «Ոսկի

30 Հակոբ Մնձուրի, *Արմտան*, «էմիրկյանի փուռը գնաց», էջ 122—123։

31 Նույն տեղում, էջ 127։

տեղաց Էլպակյանի հարսնիքին» պատմվածքը դրա վառ վկայությունն է։ Սա հարսանեկան այնպիսի մի նկարագրություն է, որ հիշեցնում է պալատական ղեխությունները, որոնք, ինչ խոսք, եղել են անցյալի արևմտահայ գյուղերում, շատ անհեռատեսորեն, այն մարդկանց կողմից, ովքեր չեն իմացել ինչպես ծախսել հեշտ ճանապարհով շահված փողը, փորձանք դառնալով ժողովրդի ու ազգի գլխին։ Մենք այստեղ զանց ենք առնում այն տասնյակներով անբանաձևելի նկարագրությունները, որոնք զարմանք են պատճառում ընթերցելիս, զարմանք և, երևի, ավելին, ոչ միշտ դրական առումով։ Միայն տանք այդ նկարագրություններից մեկը, որի հավաստիությանը, ինչ խոսք, կասկածել չի կարելի։ Բայց տալուց առաջ հիշենք, որ Մնձուրու գավառում, և առհասարակ, փողը հարցերի հարցն էր և նրա լրիվ չգոյությունն էր պատճառը զարիբության վիշտ ու տառապանքների։ Իսկ ի՞նչ կատարվեց այդ հարսանիքում. «Հարս ու փեսան Սեպուհ լեռան Ավագ վանքին վանահայր վարդապետը պսակեց, շաթալ թագը գլուխը, էլպակյանին ստիպումովը։ Ու երբ՝ հարսնության նվիրական երեք քողերով քողված հարսը ու ուսերուն վրա փեսայության ծիրանի պինիշը կրող փեսան ձիեր հեծած եկեղեցիեն տուն առաջնորդվեցան, դուռը, սեմին առջևը, երեք անգամ օդեն ոսկի տեղաց իրենց վրա, մահմուդիե, ազիզիե դարդոսկիներ, ավստրիական քառմիցներ։ Ու հարսնևորները ձիերուն ոտքերուն տակ փռվեցավ ոսկիները ժողվելու»[32]։ Սա, դեռ սկիզբն էր հարսանեկան այդ տոնախմբության... Երբ, ինչպես շեշտեցինք. «...դրամ չկար գյուղը։... պահապանի դրամ երկերկու զուրուշ այգի գլուխ, մեկ մեկ կոտ ալ ալյուր։ Ալյուրը կուտայինք, ութը զրուշը Պոլիսեն դրամ պիտի դար որ տայինք» (էջ 108)։ Այո, ողբերգություն էր կատարվածը։ Պատմվածքի վերջում Հակոբ Մնձուրին արդեն շեղվում է իր թելադրող արվեստագետի դերից և անցնում է խորհրդածությունների։ Կարող է այդ խորհրդածությունների հետ չհամաձայնվել ընթերցողը, բայց որ դրանք հետագա դեպքերում նաև իրենց ազդու բաժինն ունեցան, մեր կարծիքով, դրա մասին հակառաել դժվար թե կարելի լինի։

«Այնուհետև չնախատեսված դեպքեր իրարու հաջորդեցին։ Մարդ կրնա՞ գիտնալ գլխուն դալիքները։ Պոլիս տեղավորվելու ըլլար, երբեք պիտի չպատահեին այս բաները իրեն։ Եվ կամ անանկ փառավոր կարավանով մը երկիր չմտներ, տղուն անանկ փառավոր հարսնիք մը

32 Հակոբ Մնձուրի, Արմատան, «Ոսկի տեղաց էլպակյանի հարսնիքին», էջ 201։

չըներ, ոսկի չտեղացներ հարսին փեսին գլխուն։ Կարմիր հողերու այդիին մեջ ատ խնջույքը չտար, խրախճանությունները չըլլային, լճացին գլուխեն մինչև ոտքերը ոսկիներուն մեջ չշողար։ Փառքի, համբավի իր այս տենչերը կերան գինքը։ Նախանձեցան։ Իր կնոջը ցանկացին։ Իր անկումին ուրախացան։

Ու հետևեցան առիթները։ Գավառներու մեջ հայտնվող քաղաքական դեպքերու առաջին խմորումներուն մատնեցին գինքը իբր գործակից մը այդիները, Ջերմայի քարայրները, լեռը ապաստանող Արխանյանի խումբին։ Ի զուր աշխատեցավ իր անմեղությունը հաստատելու, անոնց հետ հետին կապ մը չունենալը ապացուցանելու։ Ի զուր վերաքննության դիմեց։ Առտու իրիկուն իր հաղը ուտողները անգամ չպաշտպանեցին գինքը, հակասական վկայություններ տվին։ Երդնկա փոխադրվեցավ ու բանտը մնաավ։ Կինը չդիմացավ եղածներուն, շատ չապրեցավ ու նույնպես մնաավ։ Ղալաթիո ու Ալաճա համամի աղորիքները որոնք փակված էին արդեն ծախվեցան։ Գրեթե բան մը չանցավ ժառանգորդներուն ձեռքը, ինչպես հաճախ կվերջանան այս տեսակ փլուզումները։ Անկե ետքը այդ շինքերը քանի՞ փոփոխություններու ենթարկվեցան, քանի տերերու ձեռք անցան»[33]։

Տուրսուն էֆենտին զոհ գնաց Կոճո պեկի խարդավանքներին, բայց դուրս եկավ բանտից, Նահապետյանը սնանկացավ, բայց բանտ չնստեց, իսկ Էլպակյանին չօգնեցին անհատնում ոսկիները, որովհետև, այստեղ անարդար փաստերի դեմ հանդիման գործեց թրքական «արդարադատությունը» և բանտարկվեց Էլպակյանը, քանի նրա հարցը թրքական պետականության համար ամենադյուրազգաց կողմին էր դիպել՝ ...քաղաքականության։ Հայկական հասունացող հարցին։ Եվ այդ բոլորը, ի հետևանք նախանձի, ցուցամոլության և ազդեցության ոլորտների, անհիմն կիրք ու քինի։ Այդ բոլորը հիմք չունեցող, անիմաստ փառամոլության ու մրցակցության։ Փողի գործած թաքուն ավերի։ Եվ ինչպիսի նմանություն։ Տուրսուն աղային ուրացան նրա սեղանից «հաց ուտողները», նույնը պատահեց և... Էլպակյանին։ Այդ մարդիկ Տուրսուն աղայից զատորոշվում էին մի այլ կողմից ևս։ Չէին իմանում, որ լինելով թրքական արդարադատության պաշտպան ու կողմնակից, նրա մեքենային յուղ լցնողներ, առաջին հարվածն էին ուտելու, երբ ժամանակները հասունանային հայկական հարցը իսպառ բնաջնջելու համար։ Թուրք իշխանությունները առաջին հարվածը իջեցնելու էին իրենց ամե-

33 Նույն տեղում, էջ 206—207։

նամոտ կանգնած, իրենց ստրկացած հարուստ հայերի դլխին։ Իսկ պատմությունը դրա ճշմարտության մասին արդեն լիաթոք խոսեց 1915 թվականին։ Երևի «բախտավորություն» էր, որ դեռևս էլպակյանի կինը վաղ մահացավ, որին տենչում էին, ցանկանում։ Այդպիսիներին դաժան անպատվություն ու մահ կամ անձնասպանություն վիճակվեց լավագույն դեպքում։

Յուցամոլ, չար նախանձով համակված այդ մեծահարուստների, իրենց կանանց նկատմամբ բացառապես պատվախնդիր այդ մարդկանց կյանքը, նրանց բարոյական ըմբռնումը ինչպիսի՞ն էր արդյոք գավառներում։ Մի՞թե դրական գծերով էր դա աչքի ընկնում ավանդական բարքերով ապրող անցյալի հայ գյուղերում։ Հակոբ Մնձուրու պատմվածքները այդ հարցում ևս ուրախացնող շատ քիչ բան ունեն։ Այստեղ ևս մնձուրիական ռեալիզմը դեմ է աղայական բարոյականության, միշտ պասսիվ թելադրողի իր դիրքերից։ «Բոբիկ ոտքերով Մկրչը», «Երկայն թևերով Նշանը» հենց Մնձուրու առաջին՝ «Կապույտ լույս» ժողովածուում խոսում են այդ մասին՝ բարոյական դիմակի տակ սեռական սանձարձակության ու անամոթության մասին, որ ոչ միայն խախտում է իրենցից ցածր կանգնած մարդկանց պատվի նորմաները, այլև ոտնձգության փորձեր է անում իրենց իսկ դասակարգի կանանց նկատմամբ, նույն կեղծիքի ու դավի սեփական գործելակերպով։ Սերուկ աղան և Երկան աղան, նույն գյուղից, մոտ ընկերներ են, առաջինը խանութպան է, երկրորդը՝ հողատեր և հոգաբարձու։ Մի օր, երբ «բոբիկ ոտքերով, դեղին պեխերով Մկրչը փողոցին անցնելուն տեսավ որ խանութպան Սերուկին բակը մարդ չկար, իսկ ախոռին դուռն ալ բաց էր։ Հարմար պատեհություն, խորհեցավ։ Սերուկը շատ հավ ունի։ Հավերը շատ հավկիթ կածեն։ Մտնելու, վերցնելու է։ Քանի մը անգամ ըրած էր, չէր հասկցվեր, նորեն ընելու է»։

Եվ այսպես, պարզապես ձու գողանալու նպատակով խանութպան Սերուկ աղայի ախոռը մտնող Մկրչը, տեսնելով, որ տանն էլ մարդ չկա, երբ անցնում է ներս, լսում է, որ դրսից ինչ որ ոտնաձայներ են գալիս։ Չկարողանալով փախչել նա թաքնվում է ամբարների ետևը և անսպասելիորեն տեսնում, որ ներս են մտնում Սերուկ աղայի կին Գոհարն ու հոգաբարձու Երկան աղան։ Առաջին պահ չհասկանալով եղելությունը, շշմած Մկրչը քիչ անց խելքի է ընկնում, որ երկուսի մեջ «սիրային» կապ գոյություն ունի։ Պահված տեղից նա լսում է նրանց «սիրո» անամոթ խոստովանությունը և հաջորդ օրվա ժամադրության մասին։ Որոշում է տեսածն ու լսածը հետագայում պատմել Սերուկ աղային և

զգուշացնել նրան ու, երբ պատահաբար հանդիպում է աղային գյուղամիջում, «պատի մը շուրջին երկնցված գերանի մը վրա» գյուղի մյուս աղաների հետ նստած զրուցելիս, մտածում է, որ դա է հարմար պահը։ Բայց միաժամանակ խորհելով, որ Սերուկ աղան կհասկանա իր գողության մասին, լռում է։ Քիչ անց, հենց Սերուկ աղայի կնոջ մոտից վերադարձող Երկան աղան միանում է այդ վերջիններին և խառնվում խոսակցությանը։ Ասել-չասելու վարանման մեջ տարուբերվող Մկրչը տեսնում է, որ Երկան աղան հանում է իր ծխատուփը ծխախոտ փաթաթելու համար, բայց Սերուկ աղան կանխում է Երկանին և առաջարկում իր սեփական ընտիր թութունը։ Դա ավելի է գրգռում Մկրչին, սովորական մանր գողին, որ ընդվզում է, տեսնելով իրենից բարձր կանգնած, հարուստ այդ աղաների, մանավանդ Երկանի երկերեսանիությունը։ Մանր ձվի գողը ներքին զայրույթ է ապրում ի տես ավելի մեծ գողի, պատվի գողի առաջ։ Այդ եղրակացությունը մերն է, իհարկե, իսկ Մընձուրու պատմվածքը վերջանում է բոբիկ ոտքերով Մկրչի լուռ մենախոսությամբ.-

«—Տուր, տուր, աղեկին տուր, աղեկ ծխախոտեն տուր որ ծխե, Երկանին շատ հարգ տուր որ երթա տունդ, կնիկդ ծունկերուն վրա առնե ու խաղցնե, տահա ուժով խածնե երեսները, մեկտեղ սեր ու մեղր ուտեն ու բարեկենդանը ընեն»։

«Մեկ մը մարեն անցուց որ եկլեր, աղաներուն առաջքը Գոհարին ըրածները պատմեր, բայց իսկույն նորեն զսպեց ինքզինքը։ Չէ՞ որ իրեն պիտի հարցնեին Թե ինք ինչպե՞ս կրնար տեսած ըլլալ, իր գործը ի՞նչ էր Սերուկին տունը։ Չկրնալով որևէ ձևով ըսել գաղտնիքը, երերաց իր նստած տեղը, շրթունները շարժեց ու հաղոտ ոտքերը իրարու վրա դրավ, կալերուն նայեցավ»[34]։

«...կալերուն նայեցավ»։ Այս վերջին երկու բառի մեջ է թերևս կատակերգական երանգով գրված այս պատմվածքի ողջ ողբերգությունը։ Բոբիկ ոտքերով Մկրչի նման ընթերցողը նույնպես ստիպված է լինում ժպտալ, բայց և ներքին ընդվզումով «ինչ-որ տեղ նայել», միշտ աչքերի առաջ տեսնելով Մկրչի վերջին լուռ մենախոսության տոն տվող տեսարանը... աղաների «սիրալիությունը» մեկմեկու նկատմամբ, երբ դեռ նոր, նրանցից մեկի պատվի դեմ ոտնձգություն է կատարված, նրա իսկ տան մեջ։ Եվ ավելին, դեռ վաղը կատարվելու է նրա ավելի խորացրած կրկնությունը։

34 Հակոբ Մընձուրի, Կապույտ լույս, «Բոբիկ ոտքերով Մկրչը», Սամսրուլ, 1958, էջ 47—48։

«Բոբիկ ոտքերով Մկրչում», ծանոթ ու հարազատ մարդկանց մեջ կատարվող լուռ, ստոր այդ արարքը առավել քստմնելի բնույթ է ստանում, երբ կողմերից մեկը, երբ դողացված պատիվը, կատարված ոտնձգությունը, ուղղված է հակադիր, խոնարհ դասակարգի աղջկա կամ կնոջ դեմ։

«Առտուն կանուխ բահն ու փետատը ուսին Նշան դուռը քաշեց ու տունեն՝ դուրս ելավ։ Առու բանալ կերթար ժամուն արտերուն։ Գյուղին աղանները դպրոցին դուռը նստեր էին, բիրերը քովերնին։ Ոչխարն ու կովերը բակերեն հանելով նախրատեղին տանելու պահն էր, ու ինչպես ամեն առտու՝ կխոսեին գյուղական անցուդարձերու, արածելու գացող ոչխարներու վրա։ Նշան խոշոր բարևով մը բարևեց զանոնք։

— Աստծու բարին, Նշան ախպար, կերթա՞ս, ըսին։

— Հրամեր եք, պատասխանեց Նշան՝ կանգ առնելով։

— Հայտի դնա, քեզ տեսնենք, աղեկ աշխատե, հը՞... օրականդ առնելու մի խորհիր մինակ։

Ու բացատրեցին թե ժամուն, ապրին գործն էր։ Ինք ալ ջահել մը չէր, իրենց տարեկից խոշոր մարդ մըն էր, խրատ տալու չէին իրեն։

Նշան պատասխանեց թե գիտեր, կզդար այդ բոլորը։

Աղաներեն մեկը, Միսաք աղան, որ կարմիր գիծերով սպիտակ էնթարի մը հագած էր, մինչև կրունկները հասնող փեշերով, ըսավ։

— Ծո ես ալ քեզ պիտի կարդեմ, Նշան... Ինձի լուրը կուգա, չգիտնաս թե չեմ իմացեր, մի պահեր... Դալար խաթունին հարսը կուզես եղեր։

Նշան ժպտեցավ։ Իրավ էր, Դալար խաթունին հարսը՝ Գոհարը կնության առնել կուզեր։ Իր կինը, անոր ալ ամուսինը մեռած էին, երկուքն ալ այրի էին, ու Նշան կհավներ անոր»։

Այսպես վերից նայելով, «ծո՛ Նշանով» դիմելով համադյուղացուն, աստվածահաճո գործ կատարելու ձգտում ցուցաբերող Միսաք աղայի առաջարկից ուրախ տրամադրությամբ լցված Նշան ախպարը հեռանալով աղաների մոտից ամբողջ օրը մտորում է իր ամուսնության մասին, օրհնում աղային, չի կասկածում, որ եթե խոստացել է Միսաք աղան, գործը գլուխ կգա։ Աշխատում է մեծ եռանդով ու խանդավառությամբ և երբ հոգնած ու ուժասպառ վերադառնում է տուն, դեռևս ուզում է փողոց դուրս գալ կրկին ու անցնել իր «ապագա» կնոջ՝ Գոհարի փողոցով, նրան տեսնելու փափագով։ Դառնալով Գոհարի բնակած տան փողոցը, Նշան ախպարը հանդիպում է Հայրապետ ամուն,

«որ բակին առաջը մժեղոտ առվին եզերքը իջեր, ոտքերը ջուրը դրեր նստեր էր, վարդապետի խոշոր մորուքը կուրծքին փռած»։

Եվ սկսում է խոսակցությունը։ Գոհարի սիրուց վառվող բորբոքուն Նշան-ախպարը, ի վերջո կարողանում է խոսակցության նյութը բերել իրեն հետաքրքրող թեմային, ասելով, որ քիչ առաջ Գոհարի տան դուռը բաց էր գտել, բայց զարմացել էր, որ ներսից ձայն չէր լսվում։

«— Դալար խաթունը հիմա ցավ մը ունի որ... հարեց Հայրապետ ամուն։

Նշան հետաքրքրվեցավ։

— Ի՞նչ։

— Հարսին համար կըսեն թե ծոցվոր է։

— Մի՛ ըսեր, է՛... բացականչեց հանկարծ Նշան դայթակղած։

— Է՛... ն այս է, պատասխանեց Հայրապետ ամուն, փորը լեցուն է կըսեն։

Պահ մը լռեց ու շարունակեց։

— Խոսվածներուն որ նայիս անկե է, Միսաք աղայեն է... կըսեն։ Հեմ շիտակ է։ Աստծուն օրը տուներնին էր, բարեկամ եմ ըսելով... Դալար խաթուն... ձեր օղին աղվոր է... Հա՛րս, Գոհար, ձեր խաղողները անուշ կըլլան, ձեր Քար-Ներքևի էգիներուն դինիները համեղ են... Խմեց, կերավ, հարան ալ տեսքոտ է քիչ մը; խելոք, մինակ գտավ, համոզեց, ան ալ միամիտ, համոզվեցավ, ետքն ու ետքը այս փորձանքը բերավ խեղճին գլխուն... ան Միսաք աղային ո՞ր մեկ սրիկայությունը, որու՞ տղա է, հորը անունը տուր...»[35]։

Եվ այսպես, պարզվում է, որ գյուղի գպրոցի առաջ, աղաների մոտ հրապարակորեն «բարիք» անել առաջարկող Միսաք աղան, իր իսկ կատարած ստորության հետևանքները ծածկելու համար է ուղում Գոհարին որպես կին տալ Նշան ախպորը։ Սա, իհարկե, ստորության այն տեսակն է, որի դեմ անպաշտպան է մնում... բարոյախոսությունը։ Իսկ պատմվածքում, համենայն դեպս, առկա է մենաբրիական «բարոյախոսությունը»։

«Գլուխը կուրծքին կախած Նշան աչքին ներքովը խել մը ատեն նայեցավ Հայրապետ ամուին մորուքին, առանց որևէ բառ արտասանելու։ Հետո ոտքի ելավ ու իր երկայն թևերը թույլ թույլ կախելով տուն դարձավ»[36]։

---

35 Նույն տեղում, «Երկայն թևերով Նշանը», էջ 301։

36 Նույն տեղում։

Այս երկու նախադասությունները, որ եզրափակում են պատմվածքը, երկար ժամանակ չեն կարող հեռանալ ընթերցողի հիշողությունից. Նշան ախսոր «երկայն թույլ թևերը», «որևէ բան» շարահանելը, արվեստի միջոցով գտնված այն հակահարվածն են, որոնք պոռթկուն են դարձնում կատարված... սրիկայությունը, որը, ինչպես նշվում է, ոչ առաջինն է և ոչ էլ վերջինը։

Ի դեպ, ինչպես ասել ենք, Հակոբ Մնձուրին իր գրականության մեջ շատ տեղ է տվել գյուղական սեռային բարքերին, տեղ է տվել, թերևս, որևէ մեկ այլ հեղինակից ավելի և դա անսովոր ու տարօրինակ ոչինչ չունի իր մեջ։ Վերջիվերջո, անցյալի հետամնաց, մշակութային տարրական բարքերից զուրկ գյուղական կյանքում, հենց կյանքը ինքը, մեծ տեղ էր հատկացնելու և մինչև օրս էլ հատկացնում է դրան։ Սեռային կյանքի սկզբից իսկ սխալ ու անառողջ դրվածքը, ի վերջո մարդկային այդ նորմալ ապրումների նկատմամբ, տվյալ շրջապատի բարոյական անբանաձևելի պահպանողականությունն ու միաժամանակ, որպես հաճույքի միակ միջոց, օրինավոր ու անօրեն հակվածությունը, պիտի որ դուռ բանային բազում ողբերգակատակերգություններին։ Ավելին, առանց այդ ոլորտի լայն ու խոր ուսումնասիրման, մեզ համար առավել անհասկանալի էին մնալու հենց իրենք, մարդիկ։ Դա այն քողն էր, որի վերացումով առավել շոշափելի է դառնում մարդու, այս դեպքում, գյուղացի մարդու հոգեբանությունը։ Կեղծ բարոյականության դիմակի տակ շրջանցել այդ պրոբլեմը, որ գլխավորներից մեկն էր, նշանակում էր թերի, այն էլ շատ թերի ու պակասավոր ներկայացնել գյուղն ու գյուղացուն։ Դեռևս, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ պրոբլեմի բազմաթիվ երեսներում պիտի լինեին և՛ ուսանելի, և՛ օրինակելի կողմեր ևս, այնպիսիները, որոնք բացառապես դաստիարակիչ են նաև այսօրվա համար։ Հակոբ Մնձուրու «գյուղագրության» գրական կողմերից մեկն էլ հենց դա է։ Այդ միտումը։ Եվ այդ միտման նպատակադրվելիս Մնձուրին մղվել է մի սկզբունքով՝ իրապաշտության, թե լավը և վատը պատկերելիս նա ավել է այն, ինչ տեսել է, ապրել, ապրելիս ցավ զգացել ու ուրախացել։ Նրա տվյալ թեմայով գրված պատմվածքներում, որոնք ճնշող տոկոս են կազմում, հիմքը բարոյականությունն է, խոր բարոյականությունը, առողջի, լավի ձգտումը և այդ է երևի պատճառը, որ սեռային կրքի ամենավատ, հիվանդագին դրսևորումները նույնիսկ վեր հանող նրա որոշ պատմվածքներում դժվար է որևէ բիծ նկատել, գտնել, որ զրանք գրված են գրականության ու արվեստի բարձր բարոյականությունից

խոտոր նպատակներով։ Չէ՞ որ, վերջիվերջո, ինքը, Հակոբ Մնձուրին, բարոյական մարդու այն եզակի տիպարներից մեկն է և եղել է իր ամբողջ կյանքի ընթացքում։ Իսկ ի՞նչ է պարզվում մեր անցյալի դյուզում, երբ ծանոթանում ենք Մնձուրու այդ միտման նվիրված պատմվածքներում...

Առաջին՝ պարզվում է, որ իրական սևը դեռ փոքրուց հնում էր պահվում այրերից։ «Աղջիկները դպրոց չէին երթար։ Չէին զրկվեր որ երթային։ Անոնք պիտի կարգվեին, կնիկ մարդ պիտի ըլլային։ Զավակ պիտի ունենային»[37]։ Աղջիկների հանդեպ պահպանողական այդ կեցվածքը շարունակվում էր հետագայում էլ, նույնիսկ ամուսնանալուց հետո... Նախ կար «մունջ»-ությունը, այսինքն հարսը չէր կարող խոսել իր կեսրայրի հետ, օտար տղամարդու հետ, միայն կարող էր նշաններով, ինչ որ անորոշ, տարատամ սվսվոցներով բացատրվել, նույնիսկ եկեղեցում կանայք առանձին տեղեր ունեին, այր մարդկանցից հեռու, այնպես որ այր մարդիկ չկարողանային տեսնել նրանց։ Ընդհանրապես երեխաներին եկեղեցի չէին թողնում, առավել աղջիկներին.

«Աղջիկները մեզի պես ալ չէին։ Տարին երկու անգամ հաղորդություն առնելու մի՛այն կերթային։ Հարսնացուի տարիքը պիտի գային, որ ժամ երթալու սկսեին։ Կիներուն տեղը բուն ժամը չէր։ Երեք վերնատուներն էին։ Ամենեն վարը ծեր կիներուն էր, անոր վրա միջին տարիքավորներուն վերնատունն էր, իսկ ձեղունը հարսներուն, հարսնացուներուն էր։ Երեքն ալ վանդակապ էին։ Վանդակներեն կհետևեին արարողություններուն։ Էրիկմարդոց կարգերը, ատյանը, տղոցը դասը չէին կրնար դալ կայնիլ ու աղոթել։ Անպատշաճ էր։ Ինչպե՞ս պիտի ծերագրեին ու երկրպագեին։ Իսկ սեղան ելլելը բոլորովին արգիլված էր։ Գայթակղություն մըն էր եթե կին մը սեղանը երևար։ Մաքրություն մը, ավելու անդամ չէր թույլատրվեր»[38]։

Այդ բոլորի մեջ, իհարկե, ենթագիտակցական սեռային տարբերությունն էր։ Սեռային «մեղքը» կնոջ վրա բարդելու զարմանալի ըմբռնումը։ Թվում էր, թե տղամարդը գործ չուներ սեռայինի հետ և միայն կինն ու կանայք էին, որ գայթակղեցնում էին այրերին։ Բացառապես հետաքրքիր են Հակոբ Մնձուրու «Մեր ժամը» պատմվածքի, ներքևում մեր մեջ բերած էջերը, որտեղ պարզ ու որոշ երևում է թանձր պահպանողականության տակ թաքնված անխոստովանելին, որ ներկա դեպ-

---

37 Հակոբ Մնձուրի, Կոռնիկ, ուստի՞ կուգաս, «Մենք մանուկներս», էջ 158։

38 Նույն տեղում։

քում Մնձուրու գրչի տակ երևան է գալիս իր բացահայտ մերկությամբ։ Էջեր, որ ինչպես Մնձուրուց մեր մեջբերած այլ նկարագրություններ ու վկայություններ, ծառայում են փրկել կորստից հայ ժողովրդի ամբողջ մի հատվածի բարք ու վարքի անցյալի իրականությունը։ Իրականություն, որ բացառապես պատկանելով հայ ժողովրդին, չի բացառում նաև այն տարրերը, որ փոխ են առնվել այլազգերից և մասնավորապես թուրքերից, մահմեդականներից։ Չէ՞ որ, վերջիվերջո, այդ երկուսը մասնավորապես ապրում էին նույն շրջապատում, նույն կամ նույնանման հոգեբանությամբ, մտածելակերպով, որոնց հիմքում հետամնացությունն ու նրա պարտադրած պահպանողականությունն էր։

«Մենք մեր աղոթքը ծնրադրելով կընեինք մեր ժամուն մեջ։ Կիները իրենց վանդակներուն ետին, իրենց ճյուպլենները սեղմող քյոսթեկները կքակեին, ծունկի կուգային, մենք ալ նույնպես մեր տոշակներուն վրա կծնրադրեինք (չմրսելու համար բոլորն էլ իրենց տներից ուլի կամ գառնուկի մորթուց կամ քուրջից պատրաստված բարձեր ու դոշակ էին բերում եկեղեցի։ Այդ դոշակները թողնում էին եկեղեցում։ Այդպիսով ամեն ոք իր սեփական տեղն էր ունենում—Գ. Ս.), ճակատնիս դետնին դնելով կհամբուրեինք տախտակամածը, ոտքի կելլեինք, կշտկվեինք ու կխաչակնքեինք։ Երկրպագությունով կընեինք մեր աղոթքը (այդ դիրքը շատ է հիշեցնում մահմեդականների նամազը—Գ. Ս.), երկրորդ ալ ապաշխարանքի ծնրադրություն մը ունեինք։ Ասիկա մեր քահանան մեզ խոստովանեցնելի հետո մեր մեղքերուն թողության, հաղորդության արժանի ըլլալու համար կպարտադրեր մեզի, մեր տարիքին, առողջության ույժին համեմատությունով, երեք ծունկեն սկսյալ մինչև տասնհինգ, քսան ծունկ։ (Բացահայտ երևում է ինքնակամորեն մուծված օտար տարրերը—Գ. Ս.)։ Օրը երկու անգամ պարտավոր էինք ընելու, մեկ առաուն, մեկ մը իրիկունը։ Թերանալու պարագային մեղքը կմտնեինք։ Ժամը թող չըլլար, տունը արտը, լեռն ալ ընդունելի էր (ինչպես մահմեդականների մոտ—Գ. Ս.)։ Ամեն Շաբաթի, Ծնունդի այս ապաշխարանքը անհրաժեշտ էր։ Վերջին օրը խոստովանիլ ու հաղորդվիլը կմերժվեր։ Շաբաթ մը ու ավելի առաջվընե սկսելու էինք։ Ամենեն շատ ծնրադրությունը հարսերուն կտրվեր։ Ինչու որ անոնք ամենեն ավելի մեղավոր կրնային ըլլալ, սեռային մեղանչումին միշտ ենթակա ըլլալով։ *Անոնցմե շատերը զրպաններին Երուսաղեմի համբիչներ ունեին, ձախ ձեռքերնին բռնելով թե կերկրպագեին թե կքաշեին համբիչին կուտը որպեսզի չկորսնցնեին համրանքը։ Եթե ոչ-տեղացի ըլլայիք, վանդակներուն ետևը անոնց ստվերներուն դինվորական համաշա-*

փությունով իջնելն ու ելլելը դիտելով, ու երեսուն, քառասուն համբիչներուն միաժամանակ տախտակամածին վարնվելեն գոյացող շխրտոցները լսելիք՝ չէիք կրնար շղարմանալ։

Բայց ապաշխարություն մը միայն աղոթքով, երկրպագությունով տեղը տարված չէր ըլլար։ Նույնքան և ավելի մեծ պարտավորություն մը կար։ Ամեն խոստովանող այր և կին պետք էր մինչև ճաղորդվիլը հրաժարեր մարմնական ամեն հարաբերություններեն, անկողիններուն մեջ պետք է իրարմե հեռու պառկեին, իրենց մարմինները չդպեին իրարու։ Պահք ալ պահք էր։ Կիները պետք չէր որ թույլ տային որ իրենց ամուսինները պագնեին զիրենք։ Արուն բնության մեջ բոլոր տեսակներուն մոտ եղածին պես անհագ էր։ Կինը պարտավոր էր իր գերազույնը ըներ ինքզինքը պաշտպանելու, շհանձնվելու համար։ Հակառակը՝ եթե տեղի տար՝ բուն մեղավորը ինք կըլլար։ Ասկե վախնալով կիները կուլային, արցունք կթափեին դիշերը իրենց անկողիններուն մեջ, կհանդիմանեին իրենց ամուսինները, երբ անոնք անդրդվելի կմնային. «Մեղք ունի, մեղք... կըսեին, քու երեսդ ես մեղքը չեմ մտներ։ Հեմ մեղքին շատը ինձի կիյնա, թողելու որ ըլլամ։ Ի՞նչ կըլլաս, հուսա քանի մը օր չե՞ս կրնար ինքզինքդ բռնել», կամ «կպառամ, կձգեմ անկողինը, կերթամ քովնտ» կսպառնային։ Իրենց էրիկները գիտեին թե ատ չէին կրնար ընել։ Դիշերով անկողինեն ելլեին, ու՞ր պիտի երթային, ու՞ր ուներին գնալիք, կամ կրնայի՞ն պոռալ. տունը մարդիկը արթնցնել ու ոտքի հանել»[39] (ընդգծումները մերն են—Գ. Ս.)։

Կատակերգական երանգներ ստացող, իր էության մեջ, սակայն, ծիծաղելիորեն տխուր այս հետամնացությունը, որտեղ երևի պակաս չէր նաև եկեղեցու կամ անհատ քահանայի սադիզմը, դեռ ուներ իր շարունակությունը, արդեն, որոշ չափով այլ բնույթի։

«Տանը մեջ ամեն տեղ կարելի չէր սիրաբանել։ Օջախը՝ կրակ վառված տեղը նվիրական էր։ Հոն չէր ըլլար։ Խոհանոցը նմանապես։ Ուտելիքներ կային, բերաններս պիտի երթային, պիտի ուտեինք, հոն ալ չէր ըլլար, հացին թոնիրին քովը, թող պաղ ըլլար, հաց չեփվեր այդ պահուն, չէ՞ որ հացը հոն կեփվեր, նույնպես չէր ըլլար։ Հացատունը, հացին տաշտին քովը, հացը կենար, չկենար, մեծ մեղք կգործվեր, հացատունը կպղծեինք։ Հացը ամենասուրբ էր։ Ցորենի, ալյուրի ամբարներուն առջևները, ետևները, անոնց մութ անկյունները, ամենևին ներելի չէր ձեռքի կատակներ ընել, իրարու հետ գզվռտիլ, իրար պառկեցնել,

---

39 Հակոբ Մենուրի, Արմտան, «Մեր ժամը», էջ 218—220։

կամ սեղմուել, համբուրելը։ Ալյուրին, ցորենին քով կարելի՞ էր ընել ասոնք։ Մեղա, մեղա, ցորենի կանանչ արտերուն մեջ պահելու ու սիրաբանելն ալ շատ մեղք էր։ Արտերուն սրբությունը կպղծեինք։ Ատոր պատիժը սովով կպատժվեինք։ Շաբաթ գիշերները՝ կիրակմուտքերուն՝ դարձյալ-այր ու կին չէին կրնար մարմնական հարաբերություններ ունենալ։ Նվիրական էին, տուներուն մեջ խունկ կծխվեին, մեռելներուն համար կաղոթվեին։ Ամ գիշերվան ծնունդ մը մեղքի ծնունդ մըն էր։ Չար, անզուսպ կըլլար։ Կիրակմուտքի վաստակ կըսվեր անանկին։ Անանկ աղջկան մը «Աղջիկ հայրդ մայրդ քեզ շաբաթ գիշե՞ր է վաստակեր» կամ անանկ տղա մը՝ «Ծո կիրակմուտքի վաստա՞կ ես, ի՞նչ ես, ինչու՞ մտիկ չես ըներ» կըսեինք»[40]։

Այնուամենայնիվ առաջին մեջբերման հետ համեմատած այս երկրորդը ինչքան էլ նույնպես տարօրինակ, բայց և այնպես հասկանալի էր ու ըմբռնելի, թեկուզ մեր ներկա ժամանակների մոտ-հեռավորությունից։ Չէ՞ որ, ի վերջո, այս մեկում, ինչքան էլ միամիտ լինեին բարքերը, կար, առկա էր սրբազան մի բան, ավանդական այն լավը, որ ծնունդ էր առնում աշխատանքի, հայի, տան նկատմամբ մարդկանց ունեցած երկյուղածությունից։ Տան օջախը, խոհանոցը, հայրենի տաշտը, հացը, ցորենի, ալյուրի ամբարները, նույնիսկ ցորենի կանաչ արտերը, ինչպես նկեղեցին, սրբազան էին, նրանց հանդեպ սեր, հարգանք ու երկյուղածությունը պարտադիր։ Եվ դա, ինչ խոսք, բացառապես լավ էր։ Դրանից էր, երևի, որ անցյալի այդ մարդկանց տան հիմքը, ընտանիքը ամուր և հաստատուն էր։ Դա առաջին հերթին դալիս էր աշխատանքի, մարդկային քրտինքի նկատմամբ տածված սիրուց ու հարգանքից։ Աշխատանքը նման ձևով սիրող ու հարգող, մեր դեռևս մոտ, բայց արդեն հեռու հեռավոր անցյալի այդ սրբազան մամերն ու պապերը, դրանով բաց էին անում անբեռնաձևելի դաղտնիքի այն բանալին, որ տոկունությունն էր մեր ժողովրդի՝ դարերի պատճառած արհավիրքներին։ Անշուշտ, մեր այսօրվա դիտակետից այդ տողերի մեջ կարելի է և գտնել ծիծաղելին, տարօրինակը և այն հիմնականը, որ սերը թեկուզ, այնուամենայնիվ, նրանց համար, հակառակ իր բնական, բնույթան օրինականության, չէր դադարում, որպես մեղք դիտվել։

Այս բարոյապաշտությունը շարունակվում էր և անծանոթ տղամարդկանց նկատմամբ։ Ամուսնացած աղջիկը հանդես չէր գալիս

---

40 Նույն տեղում, էջ 221—222։

ծանոթ ու օտար տղամարդու, հյուրի առաջ, իսկ ամուսնացածը, հարսը լավագույն դեպքում մունջ էր մնում։

«Իր կինն ալ... հետևեցավ անոր։ Առանց բառ մը արտասանելու առ բարևեց ինձի, մեր երկիրին կիներուն բարևելու եղանակովը, ամփոփելով աջ ձեռքին բթամատը, ցուցամատն ու միջնամատը, դնելով մեղմորեն իմ ձեռքիս վրա, հետո բաժանելով ու տանելով իր շուրթին, հետո ճակատին, ի վերջո կրկին շուրթին։ Երկու անգամ կրկնեց այդ արարողությունը, միշտ միայն իր մատները համբուրելով ու ճակատին դնելով։ Ես կհասկնայի հաջորդաբար երկու անգամ կատարեց բարևելը, ինձի բարի եկար ըսել կուզեր։ Հետո հեռացավ, միշտ մունջ։ Իսկ Նարոն իրեն ազապ աղջիկ չեկավ»[41] (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։

Դեռ կար ավելին, որը անցնում էր նույնիսկ կատակերգության սովորական, ընդունված սահմանները։ Իր գյուղից հեռու մշակության եկած Օվակին այցելության է գալիս նրա կինը։ Հայտնի է, որ այդ անսովոր այցի պատճառը կարոտն է իր ամուսնու նկատմամբ։ Բայց ամբողջ օրը մինչև գիշեր տնեցիների պնդումներին հակառակ Օվակի կինը ամաչում է ամուսնուն մոտ գնալուց, նույնիսկ ձևացնում է, որ չի էլ հետաքրքրվում նրանով (անվայել էր մեծերու ներկայության։ իր երիկովը հետաքրքրվիլը, որպեսզի մարդերուն չանցընեին թե իր մարդը տեսնել եկեր էր)։ Մինչդեռ հենց գալու նպատակն էլ դա է։ Եվ ամբողջ օրը, բազմաթիվ պնդումներ, գնալ, տեսնել ամուսնուն, մնում են անտրամաբանականորեն ապարդյուն։ Գործը հասնում է այնտեղ, որ երբ գիշեր է լինում և տան հարսը առաջարկում է գոնե գնալ ու քնել, Օվակի կինը պատասխանում է.

«—Քուրու ես կխպնիմ, ես ձեր տունը անոր հետ չեմ պառկիր»։ Իրար են անցնում բոլորը, տան հարսը, նրա կեսուրը, իղուր։ Օվակի կինը մնում է անդրդվելի, ոչ մի տրամաբանական առաջարկ չի հասնում նրա մտքին, «քարը կխոսի՞։ Քար դարձավ»։ Պատմում է Մնձուրին ընդվզեցուցիչ այդ ծիծաղելի փաստի առաջ, խոսքը տալով վերջում իր հերոսուհիներից մեկին. իր իսկ մորը.

«— Աղջի շունչանորդի կնիկ, իս ալ մեղքը կխոթես գիշերով, չէի՞ր գիտեր որ մեր տունը դայիր նը էրկանդ ծոցը պիտի պառկեիր։ Ի՞նչ ընենք։ Մեր ծո՞ցը առնենք քեզ պառկեցնենք։ Զատ տոշակ ձգենք։ Օր կխպնեիր նը ինչու՞ եկար։

Չշարժեցավ կայնած տեղեն։ Լռեց։ Մայրս ճարահատ կնոջս.

41 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Սիրահարություն մը», Ստամբուլ, 1958, էջ 273։

— Աղջի հարս, առ վարի տունը տար, ամբարներուն առաջքը, մթնել մը, դոշակ մը տուր, թող պառկի հոն ըսավ»[42]։

Ամոթխածության նման աստիճանի տակ, Օվակի կնոջ անդրդվելիությունը, պարկեշտությունից նույնիսկ հեռու է մի քիչ, ծիծաղելի սահմաններից էլ դուրս, թեպետ պատմվածքը կարդալիս դժվար է չծիծաղել։ Բայց դա ևս փաստ է և հենց այդ փաստն է վերին աստիճանի հետաքրքիր։ Դա նույնպես անսպասելի մի դանձ է անցյալից փրկված։ Պիտի հիշել նաև, որ այդ փաստը մեր օրերին հասցրած «Օվակի կինը», մայր է երկու զավակների, իսկ նրան դիմավորող տան հարսը, որ պատմվածքում հանդես է գալիս որպես Մնձուրու կինը, երբ նրան առաջարկում է տուն մտնել ասում է. «Դուրսեն օտար մարդ չկա։ Ես, կեսուրս, մեծ կեսուրս ու մեկ էլ ախպարդ ենք։ «Ախպարդ» ըսածը ինձի համար էր։ Անշուշտ վայելուչ չէր օր էրիկը ըսեր»[43]։

Իհարկե, նման պայմաններում թանձր ամոթխածության սեռային կյանքի որևէ դրսևորման խորը թաքունության, գաղտնիության, հավատքի, սեռերի իրար նկատմամբ ունեցած հեռավորության պայմաններում, նրանց հետևանք ու արդյունքների նկատմամբ տարրական ճիշտ գիտելիքներից զուրկ պիտի մնծանային ոչ միայն պատանիները, այլև հարսնացած աղջիկները։

«Մենք լսած էինք, գիտեինք թե ծննդարերությունները ծունկերեն են։ Երբ աղջիկ մը կնիկմարդ ըլլա ծունկը կբացվի, պլիկը կելլի, («Մենք պլիկ կըսենք նոր ծնած երեխաներուն», գրում է Մնձուրին) նորեն կգոցվի։ Ծունկը չի՞ ցավիր։ Ո՛չ։ Չի ցավիր։ Երբ աղջիկներուն կհարցնեինք անոնք ալ մենք ավելի բան մը չէին գիտեր։ Ուսերնին վեր կընեին, շրթունքնին կսեղմեին, կնայեին անդին»[44]։

Գաղտնիությունը գաղտնիություն, ամոթխածությունը ամոթխածություն, մեղքը մեղք, բայց բնությունը անում էր իրը։ Պատանիները արդեն կարծիքներ էին փոխանակում և անցնում առաջ, մտորում ամուսնության մասին։ Մտորում, հենց տարված պատանեկան խաղերով, հենց այդ խաղերի ընթացքում։

«Տղաքին միտքը մեկեն բան մը ինկավ.

— Տղաք, ըսավ պառկած տեղեն. ըսենք թե մեզի հարցնելու ըլլան թե դուք որ աղջիկը կառնեք, որու՞ կհավնիք, ի՞նչ կընեք դուք, ո՞վ

---

42 Հակոբ Մնձուրի, Արմտան, «նիպը», էջ 107։

43 Նույն տեղում, էջ 103։

44 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Մանկություն», էջ 86։

կառնեք։ Խորենին չեմ հարցներ։ Անոր մարը նշանած է ան լիճքեն։ Մեր երեքիս կհարցնեմ։

— Ես Մանուկանց Մարոն կառնեմ, ըսավ Միքայելը։

— Ես ալ Բարիկանց Նանոն կառնեմ, ըսավ Տրդատը։

— Ես ալ վարի Արմտանցի ճորտենց Նարոն կառնեմ, ըսավ Հմայակը։

— Հիմա ձեզ կարգենք ըսելու ըլլան, կկարգվի՞ք տղաք, ընդմիջեց Միքայելը։

— Ինչու՞ չկարգվինք, պատասխանեցին Տրդատն ու Հմայակը։ Դուն չե՞ս կարգվիր, կարգվելու, Հարսին ծոցը պառկելու պես աղվոր բա՞ն կա։

Նոր կարգվող տղոցը կհարցնես նը չե՞ն ըսեր։ Աշխարհի ամենեն աղվոր շաքարին, ամենեն աղվոր մեղրին, ամենեն, ամենեն աղվոր շերպեթին համը ի՞նչ է անոր քովը։

— Հեմ մենե պլիկ չըլլա՞ր կըսես դուն, շարունակեց Տրդատ։ Չորսըս ալ մեկ տարիքի ենք, տասնչորսը լմնցուցինք, տասնեհինգը մտանք։ Ինձմե, Հմայեակեն, Խորենեն, քենե պլիկ չըլլա՞ր։ Մարոն, Նարոն, Նանոն պլիկ չե՞ն կրնար բերել։ Վղբր, վըղբր։

Ու ոտքի ելան շալուկ խաղալու համար»[45]։

Անշուշտ, տասնչորս-տասնհինգ տարեկանում շատերին էին ամուսնացնում, բայց այդ տղաները դեռևս շալուկ էին խաղում և իրականում չգիտեին, թե ինչպե՞ս էր ծնվում երեխան։ Ու երբ մի կողմից տեղի էին ունենում հանդուգն այդ խոսակցությունները, մյուս կողմից նույնիսկ հղիացած կանայք «Քարենտած» կոչված վայրում «նշան առնելով քար կնետեն, ինկած տեղը սահելուն կամ մնալուն համեմատ աղջիկ թե մանչ պիտի ծնեին կգիտցվի...»[46] և մեծերը դեռևս «Կապանի աղբյուրը ուր է իրարու փակած երկու ժայռերու ճեղքեն ջուրը կվազե, ամոթ է, անունը չեն ըսեր, շըսվիր, կնիկմարդիկը էրիկ մարդոցը քով կխըպնեին, անկե որ խոսվի, ամեն էրիկմարդ ալ կնիկմարդոց քով անունը չտար, ըսելու ըլլա, կկարմրին, վատ կնային, մեղի ալ չէին ձգեր, կշեխեին, բերաններուս կդարնեին ըսելու որ ըլլայինք»...[47]։

Բայց այդ բոլորով հանդերձ նույն սեռի մարդիկ իրար մոտ, ինչպես երեխաները, պատանիները, դեն էին շպրտում ամոթի նվաղագույնը և խոսում էին։ Սա դեռևս արդյունքն էր թաքունության, գաղտ-

---

45 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Գյուղի տղայություն», Ստամբուլ, 1958, էջ 317—318։

46 Հակոբ Մնձուրի, Արտման, «Մեր կարմիր եզը», էջ 17։

47 Նույն տեղում, «Խնկենց տունը», էջ 240։

նիության, զսպվածության և երբ առիթ էր լինում, հասնում էին... անամոթության։

Այդ բոլորը, այսինքն մի կողմից եկեղեցու, հասարակության, անգիր օրենքների խիստ կանոնները, չափազանցված ամոթխածությունը, մյուս կողմից օրենքի սահմաններից դուրս, մեղադրող աչքերից հեռու զգացվող համարձակությունը, սեռային հարցերից անտեղյակությունը, ագիտությունը, վաղ ամուսնությունները, տղամարդկանց ոգալի պակասը, ամուսնությունն ու ամուսնական կյանքը, իր հիմնական տարրերից մեկով, սեռային կողմով կողմերին մղում էր այնպիսի իրավիճակների, որոնք քիչ բան ունեին զվարճալի և հաճախ պատճառ էին դառնում ողբերգությունների։ Տեղի էին ունենում հաճախակի տարիքային անհավասար ամուսնություններ, ժամանակից վաղ, դեռ նոր ամուսնացած, արդեն փաստորեն «այրիացումներ», հաշվենկատ ամուսնություններ և դրանց հետևանք հունից «արգարացի» շեղումներ, որոնք լավ վախճան չէին խոստանում։ Ավելացած այս ամենին նաև ամուսնուց հեռու ապրող, միայնակ, գեղեցիկ կանանց շուրջ նյութվող դավերն ու խարդավանքները օտար տղամարդկանց ու դյուղի այս կամ այն հարուստի կամ աղայի կողմից։ Իհարկե, դրանք բացառություններ էին, ոչ քիչ, բայց, համենայն դեպս, բացառություններ, հիմնականում այն սրբազան առողջ ավանդությունների ու հասատատուն այն ընտանեկան հարկերի կողքին, որոնք հենց այդ ավանդապահության շնորհիվ մնում էին կանգուն և օրինակելի։ Այն օրինակելիությամբ, որոնց շարունակման համար տարված պայքարը, նրանց պատմականորեն կործանումից ու կորստից հետո էլ, արդեն սփյուռքում ու սփյուռքահայ դրականության համար շարունակեցին օրինակ ծառայել և սատարեցին ըստ սփյուռքահայ դրականության հիմնական միտումներից մեկին՝ ազգապահպանմանը։ Հակոբ Մենձուրու դրականությունը այդ օրինակելիին, ավանդականին տրված տուրքն է ամենից առաջ, ինչպես և ասել ենք, առանց խուսափելու նաև այն շեղումներից, այն ողբերգություններից, որոնք կային ու չէին կարող չլինել։ Չէ՞ որ այդ դրականության առաջին ու գլխավոր հերոսը մարդն էր։ Մարդը իր դրական ու բացասական կողմերով։ Եվ եթե այսօր այդ պատմվածքներից, հարյուրավոր պատմվածքներից կազմված Արմտան վեպում, մարդը երևում է առավել դեղեցիկ, առավել սիրելի ու սրբազան, որովհետև այն պատկերված է բացառապես շոշափելի իր կողմերով, դրականով ու ժխտականով հանդերձ։ Դրականով ու ժխտականով, հաղթանակներով ու պարտություններով, երբ նկատի ունենանք ամբողջությունը, եղրակացությունը։ Դրա

համար էլ, խոսելով ողբերգությունների ու ժխտականի մասին թվում է առավել բյուրեղացնում ենք դրականի նժարը, ինչպիսին Արմտանն էր ընդհանրապես։ Այո, Արմտանում կային և ժխտական հերոսներ, կային և ողբերգություններ և այս բոլորը սանդղամատերով՝ ամենածիծաղելիից մինչև ամենատխուրը։ Վերադառնալով կրկին սեռային կյանքի ոլորտներին, դրանք Հակոբ Մնձուրուն ստիպեցին գրել երկու տասնյակից ավել պատմվածքներ, որտեղ նա բացառապես իրապաշտ երանգներով նկարեց և ծիծաղելին և տխուրը, և բնականը և անբնականը, և առողջը և վատառողջը։

Նախ ծիծաղելիի և առողջի մասին։ Պիտի անմիջապես նկատել, որ պատկերելով առողջ սեռային ցանկության միամիտ դրսևորումներ, ցանկասիրություն, որ շատ անգամ անհարմար կացությունների մեջ է գցում հերոսներին, անժուժկալություն, որ դառնում է իսկապես ծիծաղելի, երբեմն էլ ողբերգական, Հակոբ Մնձուրին, թվում է, որ ձգտում է զվարճալի պատմություններ հրամցնել իր ընթերցողներին։ Այդ ձգտումը միաժամանակ և նպատակ է, որ վերջում ընթերցողի մեջ ծողնում է կոմիկական, բայց և այնպես սիրելի մի մարդու, հաճելի մի դեպքի հանդիպած լինելու տպավորություն։ Նույնիսկ այն հերոսները, որոնք զոհ են գնում չափազանցված բնազդների, ընկնում ողբերգական վիճակների մեջ, ինչ-որ տեղ նույնպես սեր ու համակրանք են ստեղծում իրենց նկատմամբ։ Դրա պատճառը Մնձուրու այն խոր սերն է իր հերոսների նկատմամբ, այն խոր կարեկցանքը, որ գալիս է նույնիսկ նրանց հետամնաց ու տխուր բարքերը նկարագրելիս, որ նույնությամբ փոխանցվում է ընթերցողին։ Թվում է, որ ամեն ինչ՝ և ծիծաղելին, և տխուրը, և առողջը, և վատառողջը, և տառապանքը, և ուրախությունը տեղի են ունենում մի այնպիսի վայրում, որ ինքնին, անկախ այդ բոլորից, վերին աստիճանի սիրելի է։ Եվ քանի սիրելի է, ուրեմն և ներելի իր զարտուղություններ մեջ։ Թերևս նկարագրված նույնանման մի դեպք ու հերոս չկարողանային ստեղծել այն ծիծաղն ու համակրանքը, եթե լիներին, ապրեին այսօր։ Սա, կարծես, անհետացած, կորած այն սիրելի մարդու հիշատակի վերապրումն է, որի թերություններին անգամ նայում ես որպես առավելությունների։ Եվ դրա պատճառը միայն այն է, որ նա չկա այսօր, որ նա մահացած մի սիրելի է քեզ համար և դու կուզենայիր, իհարկե, որ նա իր թերություններով ու ժխտականով հանդերձ միայն լիներ քո կողքին, միայն ապրեր։ Այդպիսին է Արմտանը, այդպիսին են Արմտանի հերոսները։ Եվ եթե այդպիսին չլիներին, մի՞թե կարելի էր ծիծաղել «Երկայն պեխերով Աղիկի» վրա, որ իր

գյուղացի Պեկամուի, ծերուկ այդ մարդու խենթշային խոսակցությունները հրահրելու և նրան հրահրելով իր ցանկասիրությանը հագուրդ տալու նպատակով, պնդում է շարունակել ինքնին անվայել մի արարքի մանրամասները.

«— Հարս մը տեսա որ հանվեր էր, կլոդնար»,— սկսում է ծերունին։ Եվ շարունակում է պատմել։ Իսկ Ազիկը հրահրելով նրան, հրահրում է իր կիրքը.

«— Ըսե՛, ըսե՛, Պեկամու, ըսե դուն... աղվո՞ր էր։

Պեկամուն սկսավ պատմել, նկարագրել լողցող մերկ կնոջը իրանը, ղիստերը, մազերը։

— Միսերը թու՞յլ էին։

— Պինդ, ձիգ... վրան ընկույզ կոտրե։

Ազիկին աչքերը վառեցան ցանկությունեն։ Տեղը փոխեց ու ավելի լավ իմանալու համար առաջը եկավ, ծունկ ծունկի նստավ ու տեղացուց հարցումները»[48]։

Իսկ պատմվածքի վերջում պարզվում է, որ այդ գեղեցիկ, մերկ կինը, որ ծերունի Պեկամուն տեսեր ու մանրամասն նկարագրում է և հավանաբար նկարագրել է և ուրիշներին ևս, այլ մեկը չէ, քան հենց Ազիկի կինը։ Իր կինը։ Իհարկե, ծիծաղելի է։ Բայց կարդալով ու լրացնելով պատմվածքը, թվում է, որ թե Պեկամուն և մանավանդ Ազիկը, միամիտ, համով ու հոտով այն մարդկանց աշխարհից էին, որ այժմ չկան այլևս։ Այդ չկան է անաղարտ դարձնում ինքնըստինքյան հոռի նկարագրեր կրող այդ մարդկանց անցյալը։ «Ա՜յ սատկելիք ծեր» ասում է պատմվածքի վերջում Ազիկը, հայհոյելով լռելյայն թե իրեն և թե ծերունուն, բայց ընթերցողը, ինչ-որ տեղ նույնիսկ ներողամիտ ծիծաղ է զգում իր շրթներին թե Պեկամուի և թե Ազիկի հասցեին։

Այս անգամ արդեն ոչ թե հեռվից, դիտողի կողմից ինքնությունը չպարզված մերկ կնոջ, համենայն դեպս, իրավացի պատմության, այլ գործ ունենք լրիվ երևակայության ու ստի վրա հիմնված երիտասարդական մեծախոսության զոհ դարձած Փիլիկի հետ («Երեկ ո՞ր էիր»)։ Ծուռ վիզի տղան և Սևի տղան գյուղի տավին մոտ խոսում են իրար հետ. նյութը կրկին սեռայինն է։ Խոսակցությունը հանկարծ կանգ է առնում Փիլիկի կնոջ վրա, իսկ Փիլիկը «որ տավին տակի կողմը, ուր ուռիները շուք կընեին՝ կանաչ խոտին վրա պառկեր էր» սրատարուի

---

48 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Երկայն պեխերով Ազիկը», Ստամբուլ, 1958, էջ 293։

ականջ է դնում։ Տղաներից մեկը, անհիմն մեծամտությամբ, գերազանցելու համար ընկերոջը, տալիս է Փիլիկի կնոջ անունը և գրգռելով նրա հետաքրքրասիրությունը, նկարագրում է այնպիսի անցուդարձեր ու իբր Փիլիկի կնոջ հետ սիրային խոսակցության այնպիսի մանրամասներ, որոնք իրականում չեն պատահած երբեք։ Բայց արդարացիորեն խռովված իր լսածներից և կատաղած, Փիլիկը հազիվ հասնում է տուն և հարցուփորձելով կնոջը և տեղեկանալով, որ տղաների ասածի նման իր կինը երեկ անցել է այն վայրերից, որոնց մասին հիշատակել էր մեծախոս սրիկան, այլևս չհավատալով շարունակությանը և կնոջ ժխտումներին, սկսում է անխնա ծեծել ու հայհոյել կնոջը, չմտածելով նույնիսկ, որ պատմողը կարող էր միայն հեռվից տեսած լինել, թերևս հետապընդել... և ստել հետագա դեպքերի մասին։ Ծնունդ է առնում մի նոր ողբերգություն, մի նոր ու խոր դժուություն, ընտանեկան ծանր դառնություն, որից անմասն չեն մնում և երեխաները։ Այստեղ ևս մեծախոս այդ երկու երիտասարդների ընդհանրապես տիպական այդ վարմունքը, հակառակ բացահայտ իր սրիկայության և դաժան հետևանքներին, թվում է նույնպես ծիծաղելի։ Թվում է, թե մեր այսօրվա կյանքում միայն ու միայն դատապարտելի այդ արարքը, անցյալում ղերծ էր նման գնահատականից, որովհետև այդ մարդիկ միամիտ երիտասարդներ էին վերջապես և Փիլիկն ու իր կինը պարզասիրտ, բարի և դյուրահավատ ամուսիններ, որոնք պարզապես ոչ այնքան դատապարտելի մի խաբեության զոհ դնացին։ Այդպե՞ս է իրականությունը։ Իհարկե այդպես չէ։ Բայց Մնձուրին ցանկանում է, որ այդպես ընկալվի իրականությունը, չէ՞ որ այդ նրա սիրած ու կորցրած աշխարհի արդեն առավելություն դարձած թերությունն է։ Ընթերցողը հասկանում է այդ։ Բայց հասկանալը քիչ է. նա ևս, հասկանալով հանդերձ, Մնձուրու նման է սիրում այդ աշխարհի նույնիսկ նման մարդկանց։ Որովհետև Մնձուրին ու նրա Արմտանը իր ամբողջությամբ հոգեհարազատ է նաև ընթերցողին։ Նա դեռ չկարդացած, արդեն գիտի «Ցորնիկին Գիրգորը» պատմվածքի համանուն հերոսին, որ կնոջ մահից վեց ամիս հետո որոշում է ամուսնանալ և քանի որ ոչինչ չունի՝ ոչ հող, ոչ հարստություն, ոչ ծառ, ոչ անասուն,—ուրեմն հարկ է ամուսնանալու համար դիմել խաբեության ու աշխատել գրավել միայն հեռավոր գյուղերից մեկին, որը իրեն ճանաչելու կարելիություն չունի։ Թե ի՞նչ կլինի հետո, այդ չի հետաքրքրում ընթերցողին։ Նրան հետաքրքրողը դժբախտ, աղքատ ու անհամբեր այդ հերոսի ամուսնությունն է միայն, նրան երջանիկ տեսնելը, թեկուզ ժամանակավորապես։ Դրա համար էլ ընթերցողը,

10—602

Հակոբ Մնձուրու նման, իր հերոսի քայլերին հետևում է ներողամիտ ժպիտով, լուսլյայն հավանություն տալով նրա սուտ խոստումներին, մեծախոսություններին, մինչև Ակցի Շիրազի հետ ամուսնանալը, նրան տուն բերելը։ Բև ի՞նչ կկատարվի այդ ամուսնությունից հետո, իրեն ունևոր, հողատեր ու անասնատեր ցույց տված «Յորնիկին Գրիգորի» հետ, ի՞նչ տեղի կունենա, երբ նրա կինը տեսնի ու հասկանա, որ իր «հարուստ» ամուսինը ուտելու հաց իսկ չունի, այդ արդեն այնպիսի խորհրդածություններ առիթ կարող է ստեղծել, որից միայն մնում է մարդու մեջ այնպիսի բաղցր հուշ, որ ծիծաղ է գծագրում հիշողի դեմքին անցյալի այդ կերպարները մտաբերելիս։ Ծիծաղ են առաջացնում նաև այն անժուժկալությունները, որ տարիքն առած, այրիացած Սըլոյանին ստիպում են ամուսնանալ։ Սըլոյանը սիրահարված է Կանճենց Զիմառցուն՝ հայտնի ու անվանի մի գեղեցկուհու, որի հետ վերջապես ամուսնանալով մեծ շուքով, գնում է մեղրալուսնի, այնպիսի մի մեղրալուսնի, որ «քսան տարվանները, նոր հարս, նոր փեսաները ըրած չէին»։ Արդյունքը լինում է ողբերգություն՝ Սըլոյանի մահը, որի պատճառը ոչ ոք չի «հասկանում»։ Անժուժկալությունը մահվան սեմին է կանգնեցնում մեզ ծանոթ մի այլ հերոսի, երիտասարդ մի նորապեսայի «Քեռիին տունը» պատմվածքից։ Այստեղ, երբեմն հակառակ ողբերգական վախճաններին, ծիծաղը ուղղված է արդեն մարդկային այնպիսի թուլություններին, որոնք խորքում, իրենք իսկ ծիծաղելի տարրեր են կրում և վնասում են միայն այդ թերություններն ու արատները կրողներին։

Մնձուրին շատ հաճախ ծիծաղում է նաև սեռային առողջ, անզուսպ բնազդների վրա, որոնք ի հայտ են գալիս անդիմադրելի գեղեցկության առջև, բնության մեծաղոր ազդեցության տակ և, վերջապես, ամուսնական կյանքում, բնական ու օրինավոր պայմաններում, այր և կնոջ միջև։ Այսպիսի դեպքերում Մնձուրու հումորը դառնում է բացառապես բնական, բանական և վարակիչ։ Նման պատմվածքների ռեալիզմը արդեն ընթերցողին տալիս է, պատում ռոմանտիկ այն քողով, որ կյանքինն իսկ է, կյանքի այն սակավ ռեալիստականին, որ ռոմանտիկ է նաև, քաղցր ու երազային։ Իհարկե, այդ պատմվածքների որոշ հերոսներ մնում են հուսախաբված, չեն հասնում իրենց ցանկացած արդյունքին, ամոթանքի են արժանանում երբեմն, բայց ապրում են երևակայված կրքի քաղցրությունը և նրա նույնիսկ անհարմար վիճակների մեջ են ընկնում, ծիծաղելի դառնում, միայն նրա համար, որ տրված տուրքը մարդկային առողջ բնազդներին լինելով հանդերձ, չեն կարո-

ղանում՝ հարգել նույն մարդկային չափն ու պատշաճությունը։ Այդ խախտումից էլ առողջ ծիծաղը։ Նման պատմվածքներ են «Զիմնիրին մի, ղըզ-զիմնիրիմ յա»՝ («Լողանում ես աղջիկ—լողանում եմ յա»), «Հաց ուզելու պես», «Ավետենց աղջիկը», «Դարեան ճամփովը», և այլն։

Հակոբ Մնձուրին խոսում է նաև անհավասար ամուսնությունների և դրանից առաջացած սոցիալական ողբերգությունների մասին, իր գութն ու համակրանքը շեշտելով նրանց զոհերի նկատմամբ։ Ինչպես այլ սոցիալական չարիքների մասին խոսելիս, այս հարցում ևս, Մնձուրու նշանակետը իհարկե խոցել է նաև այդ չարիքների արմատները հանդիսացող պատճառները։ Մի տեղ հարուստների վարքագիծը, շահագործումը, մի այլ տեղ հասարակության հետամնացությունը, տգիտությունը, բայց հիմնականում, որպես սկզբունք, գրողի գրականության հիմնական առանցքը ոչ այնքան դատապետումն է չարիքը պատճառողների, այլ ավելի իր պաշտպանության, գութ ու համակրանքի տակ վերցնելը այն «խոնարհներին», ովքեր զոհ են չարիքի։

Այստեղ, իհարկե, նկատվող նրբությունը նաև արդյունք է նրա ապրած ու ստեղծագործած միջավայրի քաղաքական պայմանների և մեկ էլ, հենց այդ քաղաքական պայմանների առավել դաժանի տակ, նրա արդյունք հանդիսացող այդ չարիքների գործընկեր ազդակիչների նկատմամբ տածած որոշ ներողամիտ դիրքորոշում։ Չէ՞ որ, վերջիվերջո, դատապետման արժանին, առաջին զոհը դարձավ կատարված պատմական դաժանության, որից հետո զոհվեցին նաև «խոնարհները»։

Նույն սրի տակ կոտորված դասակարգերից մեկի դեմ բացահայտ ընդվզումը քողարկելով երկրորդների նկատմամբ խորացրած, շեշտված համակրանքով, Հակոբ Մնձուրին լուսեղյան իր տուրքը տվեց նրանց ևս անհայտ շիրիմներին։ Բայց ի պատիվ Մնձուրու, չխուսափելով, ինչպես շատ ու շատ սիրելի գրողներ, իրապաշտությունից, չիդեալականացնելով, չսրբագնելով անցյալի վատն ու հոռին։

Անդրադառնալով անհավասար ամուսնությունների թեմային, կարելի է հիշել «Ատը դյուղելը», «Էյուպ աղան», «Իմ տղայությունս», «Հարենը», «Աննան» պատմվածքները, իսկ սեռային կեցության բարդություններից առաջացած ողբերգություններին նվիրվածներից՝ «Էլիֆ», «Համը» և այլն, որոնցից յուրաքանչյուրը պեղում է սոցիալական հիմք ունեցող այդ շեղումների գործած ավերները։ Այս պատմվածքներում Հակոբ Մնձուրին վերցրել է ոչ միայն հայ հերոս-հերոսուհիների, այլև այլ ազգությունների, նույնպես իրենց մոտ ու հարևան գյուղերի հերոսներին, այսպիսով ընդգծելով սոցիալական անհավասարությունների ու

բարդությունների համընդհանուր բնույթը, որոնց զոհն էին և՛ հայը, և՛ թուրքը, և՛ զզվելպաշը, և՛ հույնն ու ասորին։ «Ատը գյուզելը» պատմվածքում հերոսն ու հերոսուհիները զզվելպաշներ են։ Հեղինակը պատմում է առաջին դեմքով, Ղարապուտաղի ափերին իր ակամատես և ականջալուր եղած հետևյալ դեպքի մասին։ Ղարապուտաղի ափերում գտնվող դղումի ու սոխի արտերում «քանի մը վայրկյան վերջ մայր մը, տղա մը երևցան, հետերնին ալ ջորի մը ու քովը սոխի արտ մը կար, սոխերն ալ հողեն հանած էին, տուն տանելու համար դրեր էին որ չորնան, անոնց մոտը եկան ու կայնեցան։ Ջորիին վրա պարկեր կային, մայրը առավ զանոնք, սոխերուն եղերքը նստավ, զատեց ու պարկերը լեցուց, իսկ տղան կեցավ ու դիտեց»։ Պատմվածքի հետագա տողերից պարզվում է, որ տղան ջերմախտով էր վարակված, հազիվ տասնհինգ տարեկան, նիհար, վատառողջ պատանի էր, իսկ մայրը՝ դեղանի և ուժեղ՝ Մելեկը, երեսունհինգը անց։

Եվ ի՞նչ... Պարզվում է նաև, որ մայր ու տղա կարծվածները ոչ թե մայր ու տղա են, այլ այր և կին։ «Ատը գյուզելը» տղան, ամուսինն է այդ ուժեղ և գեղանի կնոջ։ Ավելի ողբերգականը հայտնի է դառնում շարունակությունից, որի մասին պատմում է արդեն էհմետ աղան Հակոբ Մնձուրուն. «Ալի էֆենտին իր գործը գիտե, պատասխանեց աղան։ Աս Մելեկը իր մեծ տղուն կինն էր։ Անկե չորս հատ ալ թոռ ունի։ Ան մեռավ, պզտիկ տղուն Ատը գյուզելին առավ։ Կթողու՞ որ ուրիշին երթա։ Մելեկը հորենական շատ արտեր ունի թե հոս և թե վարի Ջայդարան։ Աս սոխին արտն ալ Մելեկին է։ Դուն ըլլայիր ի՞նչ կընեիր։ Կհանեի՞ր ասանկ կնիկ մը ձեռքեդ»[49]։

Մելեկի հարստությունից չզրկվելու համար, իր առաջին որդու կորստից հետո, երկրորդ որդուն նրա հետ ամուսնացնող Ալի էֆենտին, զոհ է տալիս և «Ատը գյուզելին»։ Դա ևս դաս չի լինում հարստությունը որևէ կերպ ձեռքից չհանելու մարմաջով տարված էֆենտուն և նրան նոր ռիսկի է մղում։ «Ալի էֆենտին կձգե՞ր որ ուրիշին երթա... Ան ի՞նչ խելացի է։ Ուրիշ զավակ չուներ, իր եղբոր տղան իրեն որդեգիր ըրավ Մելեկը անոր տվավ։ Մելեկին արտերն ալ իրեն մնաց նորեն։ Հիմա ճյուպպեն կհագնի, կնստի բակին դուռը, ձորը կդիտե։ Մելեկն ու որդեգիրն ալ իրեն համար կբանին»[50]։

Հետաքրքիր են այդ ողբերգության բազմակի երեսները. նախ երե-

---

49 Նույն տեղում, «Ատը գյուզելը», էջ 96։

50 Նույն տեղում, էջ 97։

սունհինգ տարեկանն անց կնոջ, երկու անգամ այրիացած Մելեկի որևէ նախաձեռնությունից զուրկ լինելու հանգամանքը, շահագործվելը և երրորդ անգամ իր ձրիակեր, ծույլ կեսրայրի կամքով ամուսնանալը։ Դեռ հաղիվ մանկության տարիքից դուրս եկած երեխաների, այն էլ հարազատ, սեփական զավակների հավշենկատ, անհավասար, կործանման մղող պարտադիր ամուսնությունները և ամենաողբերգականը այդ բոլորի, հասարակության կողմից խելամիտ ու խելացի նկատվելը։ «Դուն ըլլայիր ի՞նչ կընեիր, կհանեի՞ր ասանկ կնիկ մը՝ ձեռքդ», կամ «Ան ի՞նչ խելացի է»։ Սթեն հանուն փողի ու հարստության Ալի էֆենտին զոհ է տալիս իր հարազատ երկու որդիներին ու վերջում էլ իր եղբոր տղային, ամուսնացնելով նրանց իրենցից կրկնապատիկից ավելի մեծ կնոջ հետ, ապա նույն միտումներով ու տրամաբանությամբ՝ գեղանի, ջահել էմինեին կնության են տալիս, այն էլ ոչ որպես առաջին կին, բառացիորեն ծերացած ու ալեհեր էյուպ աղային, աղջկա պապիկի տարիքի մի մարդու (էյուպ աղան)։

«— Աղջի խենթեցա՞ր։ Պապուտ տեղ է ան։

— Մորս ըսե։ Մարս ու Անշա մորքուր մը ունիմ վերի Ուխտիկը, երկուքը ըրին։ Հարուստի տուն է ըսին ու տվին»[51]։

Ահա և տրամաբանությունը։ Այդ էլ Թրքական գյուղերից։ Բայց եթե «Ատը գյուղեղում» և «էյուպ աղայում» հերոսներն ու հերոսուհին իրենց տառապանքի ու ողբերգության լուռ կրողներն են, ապա այդպիսին չէ ասորական կյանքից վերցված «Աննան» պատմվածքում՝ Աննան։ Այստեղ էլ անհավասար ու անարդար ամուսնությունն է։ Գեղանի ու ջահել Աննային դարձյալ նույն միտումներով ու տրամաբանությամբ ամուսնացրել են «գեղնած, ցավագար, երեսալով քայլող և հաղիվ Աննայի կես հասակին հասնող» մի մարդու հետ, որի «տունը շատ հարուստ են, ջրաբբիներ, պարտեզներ, ընդարձակ այգիներու տեր են»։ Բայց Աննան նման չէ մյուսներին և պատրաստ է տրամաբանական դրաման՝ Աննան մի գիշեր չվանով խեղդում է ամուսնուն և փախչում, դեպի ո՞ւր... «ոչ որ գիտեր»։ Մի այլ, «Հարեն» պատմվածքում, զզվելապաշ Նարդոզը տարիքավոր մարդու երկրորդ կինը չդառնալու համար անձնասպան է լինում։ Նրա մասին հետագայում «Հարեն» են երգում։

Այդ ողբերգությունները, ցավոք, եզակի երևույթներ չէին Արմբատանյան շրջապատում։ «Իմ տղայությունս» պատմվածքում բազմաթիվ հավաստի փաստեր կան, որոնք ծիծաղելի են նաև, ծիծաղելիի ողբերգա-

---

51 Նույն տեղում, «էյուպ աղան», էջ 196։

կան իմաստով ամենաշատ։ Եվ ի՞նչ կարելի էր սպասել այդ «ամուսիններից», որոնք ամուսնանում էին և անգիտակ, և անզոր ամուսնության նույնիսկ բնության պարտադիր օրենքներին ու պարտավորություններին։ Լրիվ անտեղյակ։ Հոգեպես և մանավանդ ֆիզիկապես տհաս ու անզոր։ Ամուսնություններ, որոնց խորքում միայն շահն ու սեփականությունը, շահագրգռվածությունն էր։ Եվ դեռևս տգիտությունը, ամեն ինչ կնոջ վրա բարդելու, չբերության մեղքը միակողմանի տեսնելու հետամնացությունը և այդ բոլորից ծնող այլազան դժբախտությունները («Էլիֆ»)։ Թրքուհի Էլիֆին վտարում են տնից, անպատվում, երբ հայտնի է, որ, համենայն դեպս, կինը նախապես ծնել է երեխաներ և իր երկրորդ ամուսին Օշիկն է չբերության պատճառը։ Բայց ո՞վ կհավատա, եթե զավակ չի ծնվում, ուրեմն մեղավոր է... կինը։ Այդ բոլորը ծնող սեփականատիրության, ընչաքաղցության, տգիտության և հետամնացության, դրանց դումարած սնահավատության և սնոտիապաշտության դրսևորումները, մանավանդ այս վերջին նշվածները, առատորեն կային և հայ գյուղերում։ Աղդագրական տեսակետից շափազանց հետաքրքիր են Հակոբ Մնձուրու պատմվածքներում առկա այս վերջին փաստերը, որոնք կարելի է առանձնացնել և ունենալ ժամանակաշրջանի առավել ցցուն պատկերը, որ, այնուամենայնիվ, ուրախալի ոչինչ ունի իր մեջ, թեպետ դրանք գրված ու պատկերված են թեթև ոճով, մի տեսակ նաև ոչ ժիտոդակական գիրքերից։ Եվ հենց դրանում է նաև նրանց բացարձակ հավաստիությունն ու անառարկելիությունը։ Տանք ժամանակաշրջանի մարդկանց հուզող «հավատալիքների» որոշ օրինակներ, որոնց հետագայում առանձին մշակումները շատ բան կարող են տալ անցյալի մեր արևմտահայ ժողովրդի կենցաղի ու բարքի մասին։

Ահաղդու հավատքը ծնունդ էր առնում մանկուց, նրա հիմքերը դնում էին տան մամիկները իրենց թոռներին դեռևս հեքիաթներ պատմելիս... նրանց այս կամ այն բանը անել տալու, կամ խաղից ետ պահելու համար։

«—Հավկի՞թ, կրկնեց Նուռ մամը։ Պահը է նը։ Ասուված պապային պահքն է նը, դուն չգիտե՞ս։ Տեր պապը ետքը կիմանա, որ հավկիթ ես կերեր, կուգա բերանդ քար կդնե, կկարե, ա՛լ չես կրնար բանալ, վա՜յ ինձի։ Սուրբ Սարգիս պապան ալ քեզ կկապե իր ձիուն պոչը, կքաշե կտանի ապառաժ քարերուն վրայեն։ Սուր սուր քարերը կպատռեն քթիկդ, բերանիկդ, արյուններդ կվազեն, կմեռնիս։ Մենք ա՛լ Շողիկ չենք ունենար։ Մեղքուկ չե՞ս»[52]։

52 Նույն տեղում, «Նորեն Նուռ մամը», էջ 204։

Մի հատիկ ձու չուտելու համար առաջ քաշված այդ ահավոր ու դաժան հետևանքները, անհնար է, որ երեխայի հոգու մեջ իրենց ավերիչ դերը չկատարեին հետագայում։ Մանկուց հոգիներու մեջ սրսկված այդ վախը զումարվելով լեռնանում ու դառնում էր համոզում ու հավատք և ստանում առասպելային ծավալ և տոն տալիս տնբանաձևելի ծեսերի և այնպիսի դրսևորումների, որոնք նույնիսկ հաստատված և ընդունված թատերական չափ ու ձևեր ունեին։ «Զարմանալին» այստեղ, իհարկե, առաջին հերթին, նաև, Հակոբ Մնձուրու ոչ ժխտողական կեցվածքն էր, ինչպես ասացինք։ Վերջիվերջո պիտի չմոռանալ, որ Հակոբ Մնձուրին ինքը և հեղինակն էր այդ բոլորի, բայց և ամենահավատի հերոսը։ Այստեղ էլ բերված փաստերը վերաբերում են և հայերին և այլոց։ «Մեր մեջ ձեր դիտցած հիվանդությունները ամենևին չկան։ Մեր հիվանդությունները միմիայն աչքն կուգան. ատ ալ հիվանդը որ օրը որու՞ հանդիպած է, ո՞վ իրեն աչք ըրած է, անոր տանը շեմին կտաշենք, կամ առանց գիտցնելու հագածներեն մեկ երկու թել կբրցնենք, այրելով մուխը հիվանդին կուտանք, կշնչե, կաղեկնա»[53]։ (ընդգծումները մերն են—Գ. Ս.)։

Բայց, ինչպես և պետք էր լիներ, հիվանդները չեն լավանում։ Իհարկե, կարևորը հիվանդի ապաքինումը չէ, որ հետաքրքրում է մեզ, այլ երևույթը և դրա բազմազան դրսևորումները։ Ահա, օրինակ, խիթի բուժումը.

«Քիչ հետո խիթերը սկսան։ Կակը կարծեց թե պիտի մեռներ։ Կարգ մը դարմաններ լսել էր հովիվներեն խիթի համար։ Բիրը տնկեց հողին մեջ, փորը բացավ, մերկ փորով ինկավ բիրին վրա, սեղմեց ու դարձավ բիրին բոլորտիքը, քանի քանի անգամներ։ Անօգուտ։ Հետո գլուխը գետինը, սրունքները դարվեր օդին մեջ մնաց ատեն մը, ու գլխին վրա թավալեցավ։ Ետքն ալ սալ քար մը առավ, դրավ պորտին, մատներովը դարձուց ու սեղմեց։ Բայց իզուր, խիթերը, կսաստկանային։ Այն ատեն պառկեցավ կռնակի վրա ու զարհուրելի ցավերու մեջ սպասեց։ Իրեն կթվեր թե հույս չկար։ Ի վերջո քունը տարեր էր»[54]։

Վախի բուժումը.

«Զարակապանի ճիշտ դիմացը, ձոկի դյուղեն վեր, սարեվանդի մը վրա, ձոկի պապային գիտարեթը կար։ Սարեվանդը համակ կապարագույն ժայռերե կազմված է։ Գիտարեթը պատ անգամ չունի, ավելի ճիշ-

---

53 Նույն տեղում, «Արմտանն», էջ 93։

54 Նույն տեղում, «Անոթությունը», էջ 169—170։

տը մարդկային ձեռակերտի հետին նշանը անգամ չկա, շորս անջատ ժայռեր են, իսկ անմիջապես անդին, մեկ կարգի վրա ու լեռան մեջ թաղված երեք ժայռեր շարված են, որոնց գագաթները միայն կտեսնվին։ Երեք տեսիլներու գերեզմաններ են կըսեն ատոնց համար, թեև գերեզմաններու ամենուին նմանություն չունին։ Ամ գերեզմանները դացողը, բժշկություն խնդրողը, եթե վախի հիվանդություն կտառապի, անպայման կբժշկվի։ Առավան մը դեմ, լուսուն ատաղը դեռ նոր կծագեր, Քերվան ղբոանը Ղարապապայի ղիարեթին հավատարությանը եկած էր, Լեռնո հոն հասավ։ Երեք անգամ ղիարեթին ու գերեզմաններուն շուրջը դարձավ, յուրաքանչյուրին առաջքեն, դեսինեն, ծռեցավ ու երեք մատներով որչափ կբռնվի, ճոկ, այսինքն ուխտի ավաղ առավ, կերավ ու մեկենեցավ։ Օգուտ մը չգտավ։ Հիվանդությունը չանցավ»[55]։

Ջերմախտի բուժումը.

«Մանավանդ մենք հիվանդություն մը ունինք, ինչ գիտնամ, կա՞ր մեկը, որ գոնե քանի մը տարին անգամ մը անկե չբռնվեր։ Ջերմը՝ մալարիան՝ մենք անոր գողցնել կըսեինք։ Արաքաղին նավրտուքը, մեր բարձրավանդակին արտերեն իջնելով կալ կամնելու սկսած եղանակին կհայտնվեր։ Ամեն տունե երկու, երեք հոգի անկողին կիյնային։ Մեր խելքովը պատճառը մեր ամառվան անզգուշություններուն, լեռը ձորը ուր ըլլա մեր պառկիլ քնանալուն, ամեն տեսակ ջուրեր խմելուն, ապուռ-ջուպուռ ուտելուն կուտային։ Մեզ կհանվեցնեին, սխտոր մածունով ընկույզի, ուռիի թարմ տերևներու մեջ կպառկեցնեին, կաթնուկ կըսեինք, լեղի էր, արտերը կբուսնեին, անոր կաթը շորցնելով կխմցընեին, ամենեն ուժատու ուտելիքները կբերեին մեզի, կատիպեին, կաղաչեին որ ուտեինք, «կեր, կըսեին, ուտելով պիտի աղեկնաս, ուտելով մարդ ուժ կառնե, կբուրնանա»։ Բայց ջերմը չէր երթար մեր վրայեն, չէինք ըրընտնար։ Ջնկր ջնկր կդողայինք, հանեն ալ կկրակվորեինք։ Տոշակնիս, վերմակնիս խխում կդառնային, կդեղնեինք, կհալեինք»[56]։

Աչքի ցավերի բուժումը.

«Ամեն կալի աչքի ցավ մը ունեինք։ Մեր աչքերը կճպռոտեին, կցավեին։ Կալերուն փոշիներեն մեր աչքերը, քիթերը ծեփող մրեղներեն կըլլա կըսեինք։ Ղբոլանղըճ Ուշաղիները կային, որոնք վարերեն, հա-

55 Նույն տեղում, «Քսիկի բազարջը», էջ 259։

56 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Մեր Վերիզեղին տեր Պողոսը», էջ 87—88։

բալեն կուգային, ձիավոր էին, դյուղն դյուղ, կալն կալ շրջելով աչքի ցավերը կդարմանեին։ Արծաթ ղուրուշնոց մը կուտային, մեզ կկեցնեին իրենց ձիերուն առաջը, աչքերնիս կբանային, իրենց նստած տեղեն, ձիին վրայեն դեղին հեղուկ մը կկաթեցնեին, աչքերնիս դեփդեղին կըլլար։ Դեղջուր կըսեին, աղբյուր մը ունեին ձորի մը մեջ, կերթային անոր ջուրովը կլվայինք»[57]։

Դեռևս կային այնպիսի հիվանդություններ, որոնց անուններն ու բնույթը... արմտաններեն էին միայն։ Ինչպես աշնան վերջերին հայտնըվող ու աշունքուլ կոչվածը, ձմռան վերջավորություններին հայտնվող ու ձմեռքուլ անվանվածը։ Դեռևս այնպիսիները, որոնք «անուն» չունեին, բայց... ունեին իրենց «բուժումը»։ Թեպետ այս վերջին «հիվանդություններն» էլ շատ սակավ էին պատահում։ Օրինակ, նրանցից մեկը կոչվում էր «ճարսենեարիլ»։

«Ասանկ հիվանդություն մը հարսին հետ մեկտեղած առաջին գիշերը, կամ օր մը, երկու օր հաքը կըլլա, ան ալ հաղարեն, բյուրեն մեկուն կպատահի, տղան ճղճիմ կըլլա, հարսը ուժեղ կըլլա, տղան չի կրնար հաղթել հարսին։

— Երդիք հանե, Մրղա լեռան գիմացը թող երեք անգամ պարե, աղեկ է, ցավը կերթա վրայեն, կավելցնեն»[58]։

Եվ անանունը.

«Սուրբ Երեսմին դարձին Սըլոյան երրորդ անգամ Ստամբուլեն ծրար մը ոսկի ուղեց։ Մինչև Վարագա խաչի կիրակին շարունակեց մեղրալուսինը, ու առ երկուշաբթի ցերեկին հանկարծ հիվանդացավ։ Մեկ շաբաթվան մեջ այնքան նիհարցավ, դունատեցավ որ անճանաչելի դարձավ։ Երդնկա երեք օրվան ճամփա է, հոնկի բժիշկ բերին, չաղեկցավ։ Խարբերդ չորս օրվան ճամփա է, հոնկի գացին բերին, ան ալ չեղավ։ Զար աչք է, ըսին, ալերեն կախված է ըսին, պապիի տետեեն հմայեկ մը գրել տվին, բերին, յոթը ճամփուն չաթը թաղեցին, քառասուն ակն, քառասուն աղբյուրն ջուր բերին, իրար խառնեցին, խմցուցին, քառասուն սերմ, քառասուն պտուղ, բույսեր հանեցին, խյուս շինեցին, կերցուցին, մեկեն չէ մեկեն դարման մը չեղավ։ Ջիմառու ասուված վար եկուր, ինչ եղավ աս մարդուն»[59]։

«Ջիմառու ասուված վար եկուր» արտահայտությունը արմտանյան տեղական բնույթ ունեցող բացականչություն էր, վերջին «դեղամիջոցը»,

57 Նույն տեղում, էջ 68։

58 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Քեռիին տունը», Ստամբուլ, 1958, էջ 254։

59 Նույն տեղում, «Ջիմառու ասուված վար եկուր», էջ 290—291։

երը բոլոր այլ օգնության ձև ու դարմանները սպառվում էին և մարդիկ մնում էին շվարած։ Նման դեպքերում դիմում էին արդեն Աստծու, Զիմաուցի՝ իրենց աստծուն։ Իսկ մինչ այդ շարունակում էին և տնական խոտ ու բույսերով, սխտոր ու մածունով և տնա-թատերական բուժումներկայացումները։

«Իրիկուն մը (պեկիշենցիից Ճուհար կինը—Գ. Ս.) տաքությունների մեջ կայրեր՝ տուն եկավ, պառկեցուցին։ Ալ անկե հոբը օրն օր վիճակը ծանրացավ։ Ջերմ չէր։ Անանկ ջերմ չէր ըլլար. նայեցան որ չէր աղեկնար, սխտորով մածունի մեջ թաթխված ուռի թարմ տերևներու վրա մորն մերկ պառկեցուցին, ատ տերևներով ալ ծածկեցին ամեն կողմը։ Ան չեղավ, ընկույզի տերևները ավելի աղդու է ըսին, նորեն սխտորով մածունով ընկույզի տերևներու մեջ պառկեցուցին նորեն ամեն կողմը ծածկեցին, չաղատեցավ վերջապես»[60]։

Այսպիսով մահանում է Մինաս քեռու հինգ կանանցից առաջինը, Պեկիշենցի Ճուհարը, երկրորդը՝ Լճացին, մեռնող կնոջ տեղ խնամա եկողը «երրորդ տղամարությանը երրորդ տարին փորը երթալով ուռեցավ։ «Աչքի եկած է» ըսին բոլոր խելահասները, որովհետև ուժեղ, առողջ կնիկ էր, տեղ մը չէր ցավեր, ինչե՞ն պիտի հիվանդանար, պատճառ մը չկար։ «Աչքը քարը կճաթեցնե, ո՞ւր մնաց մարդը»։ Գյուղին անուններն եկած բոլոր չար աչք ունեցողներուն շիմերը գիշերով տաշեցին, տաշեղները անկողինին քովը վառեցին, մուխը պտտուցին վրան, աղոթեցին, օդուտ չըրավ, չաղեկցավ»[61]։

Լճացին էլ մահանում է։ Երկու կին «անհայտ», «անանուն» հիվանդությունների և յուրօրինակ բուժումների զոհեր են դառնում։ Բայց միայն մարդի՞կ էին համատարած այդ տգիտության զոհերը, կենդանիներին էլ նույն ճակատագիրն էր վիճակված։ Մարդանասուն կապը իր սահմանները տարածել էր նաև բուժման միջոցներում։ Հետաքրքիր է հետևյալ պարբերությունը.

«Այն տարի հերկերուն օրերը կմոռանային։ Գավառին բոլոր գյուղերուն մեջ եզերու սաստիկ պահանջ կար։ Նախորդ տարին, կալոց ատեն էր, համաճարակ մը գյուղերուն մեջ գրեթե եզ չէր թողեր։ Դարման գիտցող մը չկար, տեսեր ես հանկարծ լուծը վիզը, կալին վրա դարձող եզը մեկեն կանգ կառներ, կսկսեր դողալ, սրունքներուն վրա չկրնար մնալ, ու կիյնա գետին, մեկ կողմին վրա, ու կմեռներ։ Եզուն ու միսը

60 Հակոբ Մնձուրի, *Սրմտան*, «Մինաս քեռին հինգ կնիկները», էջ 117։
61 Նույն տեղում, էջ 117։

կանգային իսկույն։ Այնքան շուտ կմեռներ որ դանակ անդամ կարելի չէր ըլլար հասցնել, մորթելու, միսը առնելու համար։ Տերերը ստունով սուգի մեջ կմտնեին։ Այլազգ թե հայ բոլոր գյուղերուն մեջ աղոթքներ, հսկումներ ընելով, հետո Սեպուհի Ավագ վանքեն Դեղթափն ու Թադեոս առաքյալի Աջը բերելով, յուրաքանչյուր գյուղի մեջ խաչահանգիստ ընելով ու բոլոր եղջյուրավոր անասուններուն խաչահանգիստի ջուր խմցնելով միայն կրցան վերջապես համաճարակը կեցնել»[62]։ (Ընդգծումները մերն են—Գ. Ս.)։

Նման սնահավատությունը և, ինարկե, բացառապես հետաքրքիրն ու շահեկանը «այլազգ թե հայ բոլոր գյուղերուն մեջ» հայկական ծիսակատարությունների կատարման փաստն է և խաչահանգիստի ջրի՝ խաչի հետ անհաշտ ազգությունների կողմից նույնիսկ ընդունելի լինելը։ Այդ բոլորը հաստատում և վկայում են նախքան տեղահանության և ջարդերի կազմակերպումը վերից, տվյալ ժողովուրդների միջև գոյություն ունցող սերտ ու անխախտ կապը և այդ ժողովուրդների մեջ հայերի գրաված ակնառու, առաջնորդող դերը։ Ի դեպ, նման փաստերի հանդիպում ենք նաև Հակոբ Մնձուրու այլ պատմվածքներում, որոնք իրենց բնույթով ու խորքով ծիծաղելի լինելով հանդերձ, միաժամանակ հուշիչ են բացառապես և խոսում են նշված անխարդախ բարեկամության և մեկ-մեկու նկատմամբ տածած հավատի ու վստահության մասին։ Ահա քուրդ Հեսոյին բուժելու համար ինչպես հայ քահանա են բերում.

«Վերի Արմտանու Տեր Պողոսը բերին որ հայու տերտերե մը ավելի զղջլպաշ տեսնի մը, քրդու սեյիդի մը կնմաներ, իր քրդական էնթարիովը, մեջրի գոտիովը, կարճ սալթայովը։ Հեսոն նստեցուցին, գլխուն ավետարան մը կարդաց, խաչհանգիստ մը ըրավ։ Սըլոն, Ղընան, Կասուը, կարդով քարայրները որչափ մանուկ, կին, այր կային։ Սըլոյին քանի մը այծերը որոնք հիվանդ կամ սրունքնին կտրած ըլլալով քարայրը կմնային, ամենքն ալ ոտքի կեցան, երկյուղածորեն մտիկ ըրին, կարծես հիվանդը իրենք ըլլային։

Խաչհանգիստին ջուրը Հեսոյին խմցուցին։ Ավետարանը, խաչը համբուրել տվին, իրենք ալ պագին»[63]։

Սնահավատության նման դրսևորումները, անկասկած, չէին կարող նաև խոր ազդեցություն չթողնել ժողովրդի բառ ու բանի, դարձ-

---

62 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Եղերը», Ստամբուլ, 1956, էջ 116—117։

63 Նույն տեղում, «Էլմա կիպի բնյվազը յեմեզ քի, էհո՜՜՜», էջ 136—137։

վածքների և նիստ ու կացի վրա։ Անհետևանք չէինք կարող անցնել կեցության ոլորտներում նաև։ Նման փաստերի պակաս չի զգացվում Մնձուրու պատմվածքներում։ Տանք առանձին նմուշներ։

«Ամաններն ալ լվացի՞ր, ամաննոցը դրի՞ր։ Ամանները գիշերը անլվա ձգելը մեղք ունի»[64],— ասում է սկեսուրը հարսին։

«Նապաստակ էին որսացեր, կխորովեին։ Նապաստակը ես գիտեի որ պիղծ կենդանիներեն կհամարվեր մեր երկրին մեջ. մեր ժողովուրդը ոչ ուտելի համարելով կխորշեր անկե...»[65]։

Մորթված անասունների «ամորձիքները, ուղեղները շուներուն, կատուներուն կուտային շուտելվիք պիղծ համարելով, ուղեղը խլինք է, խլինքը անկե կուգա կարծելով»[66] և այսպես տասնյակ ու տասնյակ փաստեր։ Այդ փաստերի կուտակումը մի կողմից, վերև մեջ բերված այլ փաստերը մյուս կողմից, շատ անգամ հանգեցնում էին այն ողբերգական հետևանքներին, որ սնահավատությունը իրենց հողում խորացրած մարդկանց աչքերին «իսկական» տեսիլքներ էին երևում, նույնիսկ իմբային... հարսանիքներ, հոգիներ... տեսանելի, մարդկայնացած, երևում էին հագնված, դիմակավոր, պարելիս ու երգելիս։ «Կռունկ, ուստի՞ կուգաս» հատորում «Ալերուն հարսնիքը» պատմվածքում պատկերված են այդ երևույթներն ու նրանց հետևանքները։ Քարամ մամը, պատմվածքի հերոսուհին, վկայում է իր տեսածների մասին, թե ինչպես «Ալերը»[67], Աղեկները մարդկայնացած հարսանիք կազմակերպեցին իր իսկ աչքի առաջ և «անհամար բերաններ հարսնառի հարեններ կանչեցին, սաղերը զարնվեցան զիլերով տեֆերը շալեցին, հարսը մորը տունեն հանեցին և դեռևս իրեն ալ ուզեցին հարսնատուն տանել»։

Իհարկե, այդ բոլոր արտառոցությունների, չափազանցությունների մեջ կար տվյալ հերոսների տգիտությունը, նախապաշարյալ վիճակը, բայց ասել, որ դրանք միայն ու միայն խոր տգիտության հետևանք էին, կարծում ենք այնքան էլ ճիշտ չի լինի։ Չէ՞ որ այդ բոլորը արդյունք և հետևանք էին նաև այդ մարդկանց խոր միամտության, բարության, աստվածավախության և չբացահայտված գերբնական ուժերի առաջ երկյուղածության։ Մի խոսքով՝ մաքուր, անմշակ սրտի, որ մա-

---

64 Նույն տեղում, «Հարսնություն», էջ 86։

65 Նույն տեղում, «Սիրահարություն», էջ 277։

66 Հակոբ Մնձուրի, Կռունկ, ուստի՞ կուգաս, «Մենք ինչ կուտեինք», էջ 224։

67 Ալեր, աղեկներ—մեռածների հոգիները, որոնք, իբր, այցելում էին ապրողներին։

ջուր ու երկյուղածորեն սիրում էր մարդկանց, իր նմաններին, անասուններին, բնությանը, մեկնած, թերևս, հենց չարի ու բարու դեմ մանկուց իր մեջ կուտակված անդիր թելադրանքներից, որ գալիս էր առաջինը՝ նույն ինքը՝ բնության, իր համար գաղտնի ու «աստվածային» խորհրդից։ Եվ այն հավատից, որ մարդը մեռնում է միայն ֆիզիկապես, իսկ հոգին շարունակում է ապրել։ Նրանց համար հողը՝ ամենասիրելին, ուներ երկու շերտ։ Վերևում ապրում էին ողջերը, ներքևում՝ մեռածները, նրանք շարունակում էին «ապրել» հողի տակ, մինչ իրենք՝ շնչավորները, վերևում էին։ Դրա համար էլ, երբ վերջանում էր գյուղը, սկսվում էր... գերեզմանատունը։ Գյուղի և գերեզմանատան նման հարևանությունը իր իմաստն ուներ։ Իր խոր ենթատեքստը։ Եվ այդտեղից, մեռած մարդկանց հոգիների այցը ողջերին։ Այստեղից նաև այն խոր սերն ու երկյուղածությունը վախճանվածների նկատմամբ։ Տեխնիկական առաջընթացի մեր անսովոր զարգացման հասած ներկա ժամանակաշրջանում, երբ դիակները նույնիսկ կիզվում և դառնում են փոքր աճյունասափոր կամ շաղ են տրվում օդում, դեռևս, իհարկե, դժվար է հասկանալ «Ալերուն հարսնիքը», բայց կարելի է, իհարկե, ըմբռնել ,թե ինչի՞ց էին ծնունդ առնում դրանք և նույնիսկ զտնել, որ այդ բոլորի մեջ ինչ-որ լավ ու դեղեցիկ բան էլ կար, որ քսաներորդ դարի վերջին տասնամյակները խլեցին մեզանից, ինչպես նույն դարի առաջին տասնամյակները մեզանից խլեցին արևմտահայ գյուղը, ինչպես այն կար ու եղել էր իր անեղծ, միամիտ ու անխաթար վիճակում։

V

> «Իրավ ալ մարդ երբ տեղ մը կամ բան մը շատ սիրե, թույլ կուտա ինքզինքին չափազանցելու, բայց նորեն ալ շատ իրավ կան ըսածներուս մեջ»։

Բայց այլևս անցյալին պատկանող, կորուսյալ այդ գյուղերի մարդիկ գիտեին նաև լավ ծիծաղել ու ուրախանալ։ Ինքնաբուխ ու անխարդախ էին նրանց ուրախությունները, որովհետև անխարդախ էր նաև նրանց աշխատանքը։ Տքնաջան, առատ քրտինք քամող օրերից հետո, պատրաստ էր ուրախությունը, պարն ու երգը՝ հենց դաշտերում ու արտերում։ Ընդհանրապես աշխատանքը կոլեկտիվ էին կազմակերպում, միանում էին մի քանի ընտանիքներ և լծվում էին արտքաղի աշխա-

տանքներին։ Դա իր պատճառներն ուներ և շահավետ ու օգտակար էր կոլեկտիվ կազմած ընտանիքներին։ Նախ նրա համար, որ արտաքաղի ժամանակաշրջանում բոլորը գիշերում էին արտերում։ Ամեն տան այր չէր լինում զարիբության պատճառով։ Հեռավոր սարահարթի արտերի մեջ գիշերելը առանձին կանանց համար կարող էր անապահով լինել։ Հետո բազմատեսակ աշխատանք էր արտքաղը. «կեմ պատրաստել, խուրձ կապել, բեռնել», այնքան էլ կանանց համար աշխատանքներ չէին։ Հետո, ամենակարևորը, փորձով գիտեին, որ հավաքական աշխատանքը, որ ոգևորություն էր ստեղծում, գործը ավելի արագ էր առաջ տանում։ Հարգում էին հերթը, դժգոհությունների առիթ չէին տալիս. «արտքաղի ավանդություններով համաձայն, որ տանը արտի հերթը լիներ, նրա արտը կհնձվեր», դրա համար էլ ճաշի պատրաստությունները բոլոր աշխատողների համար պարտավոր էր հոգալու հերթը հասած արտի տիրոջ տունը։ Ճաշերը այնտեղից էին բերվում։

Արտքաղի բազմատեսակ աշխատանքներին լծված յուրաքանչյուր խմբի գործ ուներ իր հաճույքն ու իր ուրախությունը։ Օրինակ, Հակոբ Մնձուրին «Սիրահարություն մը» պատմվածքում վառ գույներով է նկարագրում հենց իր ստանձնած գործի մանրամասները, որպես վկա ու մասնակից։

«Արտերուն որանները կալը տանելու գործը ստանձներ էի ես»։ Այն ժամանակ դեռ պատանի էր Մնձուրին «կանցնեի արտերու եզերքին։ Բովանդակ դաշտին եզերքը ցրված էին այր ու կին հնձվորներու բազմությունները, որոնք կհնձեին անդադար։ Ամեն ճամփաներեն նույնպես որայաբարձ ջորիներու, էշերու շարաններ կհայտնվեին։ Անոնք կուգային, կհասնեին, կմիանային իմիներս, երկայն երկայն կարավան մը կկազմվեր ու որան կրող տղոց մեծ խումբով, կենդանիներուն պարանոցներեն կախ զանգակներուն բազմաձայն հնչյուններով ու երգերով մենք հաղթականորեն կիջնայինք գյուղ, կալերը»[1]։

Այս աշխատանքը կատարողներին «որան կրող» էին անվանում։ Նկարագրված սեղմ տողերից իսկ երևում է, թե ինչպիսի տոնական տրամադրություն էր տիրում մարդկանց, աշխատավոր մարդկանց բազմություններում։ Դա, կարծես թե մի ուրիշ, արդար աշխարհ էր, բոլորովին տարբեր հենց այն աշխարհից, որ կար, գոյություն ուներ։ Աշխատանքը մաքրում, աղնվացնում էր մարդկանց, մասնավորապես

---

1 Հակոբ Մնձուրի. Կապույտ լույս, «Սիրահարություն մը», Ստամբուլ, 1958, էջ 270—271։

հավաքական աշխատանքը։ Եվ անցյալի այդ հայ մարդիկ, իրենց շըրջապատող ոչ հեշտ պայմաններում, գտել էին գաղտնիքը՝ աշխատանքը տոնի վերածելու։ Դա, ինչ խոսք, մեր ժողովրդի՝ դարերից եկող և նրա գոյատևման գաղտնիքը բացահայտող բանալիներից մեկն էր։ Ավանդներ, որոնք անցնում էին սերնդից սերունդ։ Ավանդներ, որի վերջին վկաներն ու պատկերողները եղան Մեծարենցն ու Վարուժանը և Հակոբ Մնձուրին։ «Սիրահարություն մը» պատմվածքի նեղքս բերվող տողերը չի կարելի կարդալ առանց հուզումի և ներքին պոռթկուն հրճվանքի։ Դրանք նաև գլուխգործոց էջերն ու վկայություններն են հենց Հակոբ Մնձուրու։

«Արտ դարձա, որ երգերը սկսեր էին։ Միայն մերինեն չէր, հեռուեն, մոտեն, բոլոր արտերեն կբարձրանային եղանակները։ Լուսինը ծագեր էր լեռան վերեն, լուսավորեր էր բովանդակ շրջավայրը։ Ամեն մարդ ոտքի վրա էր, գրաված էին իրենց կարգերը, կհնձեին՝ օգտվելով դիշերային լույսեն օր առաջ ավարտելու համար գաղը։ Մեր արտին մեջ կերգեին «Եկուր աղվոր, եկուր հետդ ջուխտ երթանք», հետո «Լուսնկան փրթավ խորեն» արտերգերը։ Միշտ այրերը կսկսեին, հետո կիները կկրկնեին։ Լուսնկին լույսին մեջ, հակած մեկ դծի վրա, փուշերեն չխայթվելու համար մատներնին փայտե մատնոցներ անցուցած, սարնելով ու շիշկացնելով մանգաղներուն ու մանգաղները տարուբերելով կխմբերգեին անոնք բարձր, խիստ բարձր։ Ես կորոշեի մասնավորապես բոլորին մեջեն Նարոյին ձայնը։ Անոնք նույն տեսեն մրցում մըն ալ սկսեր էին։ Այրերն ու կիները երկու խումբի բաժնված, արտին չհնձված մասերեն երկու հավասար բաժիններ ընտրած, կհնձեին արագ-արագ, անընդհատ առաջանալով, բուռ-բուռ որաները շարելով իրենց հետը։

Մեկեն բարձրաձայն ծիծաղներու մեջ կիները հաղթանակը տարին այրերեն առաջ ավարտելով ու թումբ հասնելով։

Անմիջապես ստորոտի արտին մեջ ուրիշ տեսարան մը հայտնվեցավ։ Ելա կայնեցա։ Երկու տղամարդեր քով քովի կհնձեին։ Անոնք իրենց հակած թիկունքներուն վրա մանուկ մըն էին կայնեցուցեր, մանուկին մեկ ոտքը մեկին, երկրորդը մյուսին թիկունքին։ Ու կառաջանային մանգաղներու միաչափ շարժումներով, միշտ մանուկը իրենց վրա կրելով, առանց ցնցումներ պատճառելու։ Ու միաժամանակ հարց ու պատասխանի ձևով երգախառն զվարճալի դրամախոսություն մը արտասանելով, բարձրաձայն հաճախ ծիծաղ առթող բառերով, բոլոր արտերուն արտվորը հանդեսի կայնեցնելով։

Վարեն, շատ վարեն զանգակներու եղանակներ լսվեցան։ Բազմաթիվ զանգակներ միահամուռ կհնչեին։ Որան կրող անասուններու կարավան մըն էր որ կանցներ դաշտին կետրոնեն։

Ինչ գեղեցիկ էին այդ բոլորը լուսնային այս վճիտ գիշերին մեջ։ Ես ախորժով մտիկ կընեի, չէի հագենար դիտելեն ու զմայլելեն։ Ինձի ծանոթ էին այս տեսարանները մանկութենես ի վեր։ Ուրախ էի ներկա ու մասնակից ըլլալով իմ գյուղացիներուս ոգևորություններուն։

Ինձի կթվեր թե աշխատանք չէր տոն էր, արտային հանդես էր որ կկատարվեր լուսունկի լույսով, գիշերային այս պահուն»[2]։

Հակոբ Մնձուրին իր ամբողջ աստանդական կյանքում «լսեց» այդ զանգերի զողանջը, իսկ նրա գրականությունը, իր ամբողջությամբ, հայ գրականության համար եղավ այդ նույն զանգերի զողանջը..., ինչպիսի զողանջ էր Դանիել Վարուժանի «Հացին երգը», իր ամբողջությամբ։

Այս իրիկուն ձեզի կուգանք, հույսն երգելով,
Արտի համփով
Ո՜վ մարագներ, մարագներ.
Ձեր պատերուն մեջ խավար
Թող նոր արև նըշողե,
Երդիքներուն վրա դալար
Լուսնակն ալյուր թող մաղե.—
Ահա ձեզի բերեր ենք խար՝ խուրձերով
Հարդը՝ անուշ ուրցերով։
Այս իրիկուն ձեզի կուգանք, հա՜յն երգելով,
Կալի համփով,
Ո՜վ ամբարներ, ամբարներ.
Ձեր մութ ծոցին մեջ հրսկա
Թող բերկրության շող ցաթի
Սարդոսատյանը ձեր վրա
Թող ըլլա քող մ'արծաթի.
Չի բերեր են սայլե՜ր, սայլե՜ր շարքերով,
Ցորե՜ն՝ հազար պարկերով։

Ամեն ինչ նույնն էր։ Միայն Վարուժանի ու Մնձուրու գյուղերի տարբերությունն այն էր, որ «ցորենն հազար պարկերով» Արմտանում սայլերով բերել չէին կարող։ Բերում էին էշերով ու ջորիներով։

«Սայլերով փոխադրությունը անհնարին էր, որովհետև ոչ տափարակ, լեռնուտ էր մեր երկիրը, դառիվար ու դառիվեր ճամփաներով»[3]։

---

2 Նույն տեղում, էջ 278—280։

3 Նույն տեղում, էջ 271։

Դա իդիլլա էր, այն մեկը, որով տարվեցին ու երգեցին սկսած Հեսիոդոսից, մինչև Վերգիլիոս ու Միստրալ, Դոդե, Մեծարենց, Վարուժան ու... Մնձուրի։ Դրա դագաթները արևմտահայ գրականության մեջ եթե բանաստեղծ որպես՝ Դանիել Վարուժանն էր, սիյուռքահայ գրականությունում, որպես արձակագիր հանդիսացավ Հակոբ Մնձուրին։

Եվ պարում էին, պարում, ուրախանում, երբ վերջացնում էին դաշտային աշխատանքները և արդեն պատրաստվում էին հարսանիքների։ Եվ ինչպիսի՜ հարսանիքներ էին դրանք... Նախ սկսվում էր «հարսնիք ձեննելով»։ Մնձուրին «Կոզիկ» իր լավագույն պատմվածքներից մեկում նկարագրում է կարիքավոր հերոսի սպասումն ու երազը, որ պատահաբար իր ձեռքից բաց է թողել «ձեննելը»։

«Հարսնիք ձեննելը» (հրավիրելը) իր գործն էր։ Գյուղին մեջ ամեն հարսնիքի գինքը կկանչեին։ Ատկե ան ամեն հարսնեստան պաշտոնական դեմքն էր, ամբողջ շաբաթը հարսնևորներուն մեջ էր, անոնց հետ կուտեր կխմեր։ Հապա ձենած տուներեն իրեն բերված պարգևնե՞ը,— թաշկինակ, մրգեր, գոտի, ո՞ր մեկը...»[4]։

Հարսանիքները ընդհանրապես ձմռան ամիսներին էին անում և առհասարակ այդ ամիսները խնջույքի և ուրախության ամիսներ էին։ Հարսանիք եթե չկար, անվանակոչումներ կային։

«Ջյունին տակ կյանքը իր բոլոր ուժովը կշարունակվեր հոն գյուղերուն մեջ։ Բան, գործ չուննենալով՝ աղջիկ, տղա կկարդեին, օրերով կշալեին, կպարեին։ Անուններ կտոնախմբվեին։ Նույն անուններով տասնյակներով տուներու մեջ մարդիկ մինչև իրիկուն, մինչև կես գիշեր մեկ տունեն կելլեին մյուսը կմտնեին, խումբերով, շնորհավորելու, գինի խմելու ու գինովնալու համար։ Սուրբ Սարգիսի կիրակիեն մինչև բարեկենդան, ամեն իրիկուն, ու բարեկենդանի շաբաթը՝ հինգշաբթիեն մինչև կիրակի չորս օր հարս, աղջիկ, երիտասարդ կերգեին ու կխաղային»[5]։

Դեռևս կային այդ բոլորի «թատերական» ձևականությունները. օրինակ, հարսանիքներին հաջորդող հարսի ձեռքերն ու ոտքերը հինայելու ծիսակատարությունները.

«Հինային ղնա կըսենք, հարսին ձեռքը հինայելու գիշերին՝ ղնակեճեսի (ղնայի գիշեր) կըսենք։ Հարսնևորները դափերը չալելով հինադրեքի երգը կերգեն հարս եղողին մինչև որ ձեռքերը, մատներուն

---

4 Նույն տեղում, «Կոչիկ», էջ 34։

5 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Մելիքենց Մկրտը», էջ 284։

եղունգները, ոտքերը, ոտքերուն եղունգները հինայվին, հինագրեքը վերջանա»[6]։

Այս «թատերականություններին» մաս էին կազմում նաև հարսի բերած օժիտի ցուցադրումը՝ հատուկ արարողությամբ։ Նման արարողություն տեղի էր ունենում նաև սլա եկող, զարիբությունից վերադարձողների բերած նվերների ցուցադրումով։

«Սովորություն էր որ մեկ մը հարսին հետը բերած պռուզը (օժիտ) կբացվի հարսնեատունը, հարսնևորներուն ներկայությանը, մի առ մի կցուցվի, որպեսզի պատմվի ամենուն, երկրորդ ճամփորդին՝ երկիր դարձողին բեռները կբացվին հրավիրված աղգականներու կիսաբոլորակին առջև, որպեսզի բերնե բերան տարածեն ինչեր բերած ըլլալը»[7]։

Դեռ ոչ միայն օժիտի ցուցադրումը, հինայի դիշերը և դրանց նվիրված հատուկ երգ ու երաժշտությունը, կային նաև «հարսը դուռը հանելու», «հարսի ձի հեծցնելու», «հարսը մորմեն բաժնվելու» առանձին արարվածները։ Եվ, իհարկե, այդ բոլորին ընկերակցող երգ ու պարը։ Եվ նույնպես հարենները, որոնք կոչվում էին «հարսնառի հարեններ».

«Բացեք մարեր բացեք, դավիքը բացեք
Մենք մեր հալալն առնենք,
Դուռ վերջը լացեք։

. . .

Եկուր աղվոր աղջիկ հարս եղիր մեղի
Ժողվի հարսնևորդ առ երթանք մեղի։

Հարսանեկան ուրախությունների ժամանակ կային «զուտ կանացի» սրահներ, որտեղ միայն կանայք էին պարում ու երգում և՝ «միայն այրերու մեճլիսներ», այսինքն սրահներ, որտեղ միայն այրերն էին զվարճանում։ Ավելացնել այդ բոլորին նաև ամուսնական առագաստին հաջորդող մի այլ «արարված»՝ հարսին կույս բերված լինելու փաստումը, կարծում ենք ճշտված կլինեն այդ բազմարար «թատերդության» առանձին արարները։ Հետաքրքիր է նաև մեջբերել հարսանեկան պարերի մնձուրիական նկարագրության որոշ մանրամասներ։ Պարեր, որոնք տարբերվում էին ոչ միայն գավառից գավառ, այլև գյուղից գյուղ և յուրաքանչյուրն ուներ հատուկ մշակում ու երանգ։

---

6 Նույն տեղում, «Իմ գավառիս թուրքերենը», էջ 66։

7 Նույն տեղում, «Ոսկի տեղաց էլպակյանի հարսնիքին», էջ 200—201։

«Զիմառու պարեր խաղցան, դեմ դիմաց, երկերկու հոգիով, երեքական չափու վրա։ Բենկի պարեր խաղցան, երեքական հոգիով, բաղուկները վեր, մատները իրար ագուցված։ Հարայ-հրոցներ խաղցան, դեմ դիմաց, մեկ մեկ հոգիով, սրունքներու ցնորեցնող արագությունով։ Հինա խաղցուցին, ամեն դիշեր, հարսնետան տանիքը, որպեսզի ամենքեն տեսնվեին։ Այս պարը հարսներուն հատուկ էր, միայն անոնք խաղցան։ Սալային բոլորտիքը վառված մոմերով, հինան նոր կլայեկված շողշողուն ափսեի մը մեջ, պարողը աջ ձեռքին հինդ մատներուն վրա բարձր բռնած շուրջպարի բոլորակին կետրոնը գալով, ինքն իր վրա դառնալով ու պարելով, հետո սալան իր հաջորդին փոխանցելով ու նորեն շուրջպարին մեջ մտնելով ու յուրաքանչյուրը իրարմե անջատ, պարերուն ամենեն զուսպովը, շնորհալիովը, թեաթաթանովը, քսան, քսանհինդ հարսներ պարեցին ու դարձան իրենք իրենց վրա։ Ու դեռ ո՞րը թվել։ Թամզարու պարե՞րը, երկսեռ պարե՞րը, թեանցուկնե՞րը, թեերը բարձր մատները իրարու ագուցվածնե՞րը, թեերը իրարու ուսի բոլորապարե՞րը։ Կրսեին թե ոչ մեկ հարսնիքի մեջ պարերու այսքան տեսակներ պարած էին»[8]։

Հակոբ Մնձուրու մեկ այլ պատմվածքում նշվում են նաև վերևում չհիշատակված այլ պարերը. «բոլորապարեր», «քաջապարեր», որոնցից վերջինը հեղինակը նկարագրել է այսպես. «Իրարմե անջատ բոլորակ մը կազմելով, նախ շատ կամաց, շատ համբ, հետո հետզհետե արագանալով, ափերը դեմ դիմաց իրարու զարնելով ու դառնալով, ափերը հետզհետե կարմրելով, ալ չդիմանալու աստիճանին հասցնելով...»[9]։

Տարին, իհարկե, միայն ձմեռը չուներ ուրախությունների համար, ձմեռը ընդհանրապես հարսանիքների ամիսներ էր, բայց ձմռան հաջորդող գարնան ու ամռան ամիսներին էլ կային կրոնական տոներ, որոնք նույնպես ուրախությունների ատիթ էին. «Վարդավառին, Աստվածածնին գյուղերուն բազմությունները ուխտատեղիները կվազեին։ Նշանություններ կկազմակերպվեին, ճիրիթ կնետեին, ձի կխաղցնեին, դավուլ զուռնա կշալվեր»[10]։

Մասսայական սպորտային տոնահանդեսներ հիշեցնող այս ուրախությունները հին արմատներ ունեին մեր ժողովրդի պատմության

8 Նույն տեղում, էջ 203։

9 Նույն տեղում, «Էմբրիկյանի փուռը գնաց», էջ 125։

10 Հակոբ Մնձուրի. Կապույտ լույս, «Ակնցի Եզնիկ էֆենտին», Ստամբուլ, 1958, էջ 200։

մեջ, ավանդներ, որոնք շարունակվում էին նույն անկեղծությամբ։ Ինչպես ուրախություններն էին «թատերականացված», «թատերականացված» էին և սուգն ու ողբերգությունները։ Նախորդ գլուխներում նկարագրել ենք սգո տեսարաններ, երբ դրա առիթը թեկուզ լինում էր ոչ թե մարդը, այլ կենդանին։ Այժմ ամփոփ գծերով, մի անգամ ևս պատկերացում կազմելու համար, մեջ բերենք Հակոբ Մնձուրու նման նկարագրություններից ևս մեկը, որ այս անգամ նվիրված է «մահտունին» և պատկերում է սուգն ու նրա «արարողության» բազմակի երեսները։

«Երեցկինը բերին, էրիկմարդոց մեծ սենյակը անկողին փռեցին պառկեցուցին։ Տիկի պես ուռեցած էր։ Աչքերը գոցեց, քնացավ հանդըստացավ ըսին։ Աչքերը կես մը նորեն բացավ՝

— Ե՞ս կը... ըսավ, չավարտեց մնաավ։

Մահտուն եղավ տունը։ Գյուղին պառավներուն լուր տվին։ Այրերը դացին արտվորին ըսին։ Մեծ Արմտան Թումասենց, Լուսեփիկանց ազգականներուն ըսին։ Թեղուտ, Ապուշտա, Հասան օվա մարդ ղրկեցին, լուր տվին։ Ջուր տաքցուցին, լոգցուցին, պատանքեցին, ճաղը դրին ժամ տարին։

Տանը ամենեն մեծ սենյակը, էրիկ մարդոց սենյակը ուր մնաավ մեռելի սենյակ ըրին։ Պառավ մայրը, երեք քույրերը, Թաոոն ու ամենեն մոտավորները սենյակին ճակատը ծնկածալ նստան, լաչակնին քակեցին, մազերով աչքերնին գոցեցին։ Լողները, լուրը առնողները, տուներեն, արտերեն, շուրջի չորս գյուղերեն երկերկու, երեքական խումբերով քալեցին եկան։ Միմիայն կիներ, ոչ մեկ այր, քառասունեն վեր կեսուրի տարիքներովը։ Ամեն եկող ծունկի եկավ, աջ ձեռքի երեք մատները՝ բթամատը, ցուցամատը, միջնամատը ամփոփեց, նախ մորը, հետո քույրերուն, հետո Թաոոյին ու մոտավորներուն ձեռքին վրա դրավ, հետո իր մատները իր բերնին, իր ճակատին տարավ ու առանց բառ մը արտասանելու, իրմե առաջ եկողներուն շարունակությունովը ծնկածալ նստավ, լաչակը արձակելով, մազերովը աչքերը գոցելով։

Այդ գիշեր մինչև կես գիշեր, հետևյալ ցերեկը, հետևյալ գիշերը. երրորդ ցերեկը, երրորդ գիշերը լացին ու Դշխո կանչեցին։

Լեռներու Մարիկն էր արարողությունը վարողը, էրիկը անհայտանալուն մինակը լեռները թափառելուն, լեռներուն հետ խոսելուն, Լեռներու Մարիկ դրած էին անունը։ Ան նախ «Դշխո՜... Դշխո՜... կրացականչեր, հայրդ, մայրդ ողջ են, քույրերդ, զավակներդ ողջ են, դուն ինտո՞ր աշխարհը ձգեցիր... գացիր... Դշխո՜... Դշխո՜... իրիսկին եղար,

տերտերոջը հետ մեռնեիր ու աստրը չտեսնեի։ Դշխո՜... Դշխո՜... Դշխո՜... դուն ինտո՞ր եգնատան բալլին առնեմ ըսիր, չի նայեցար խաղողին Բուփին տակը, բալլիի տեղ օձը բռնեցիր. ճակատդ ա՞ս գրված էր»։ Աղջիկությունը, հարսնությունը, երեցկինությունը, ծննդաբերությունները հիշեցին։ Ամեն կին իր հիշատակները պատմեց հանդարտ ու մեղմ ձայնով ու ամեն պատմութենե ետք լեռներու Մարիկը հանկարծ ահավոր, անմարդկային արտահայտություն մը կառներ, ու ամենքը միասին որչափ կրնային բարձրաձայն «Դշխո՜... Դշխո՜... Ինչու՞ մեզ ձգեցիր, ինչո՞ւ քուկիններդ ձգեցիր ու գացիր «պոռացին»։ Այդ պահերուն այս գորշ, այս ճերմակ, այս խառնի խուռն թափած, այս թնճուկ մազերով, մարդ երեսնուն նայելու կվախնա պառավ մահվորներուն ոդբերը մինչև աղբյուրները, կալերը, գյուղին ծայրամասերը հասան։

Կանոնական յոթը օրը կերակուր չեփվեցավ։ Ոչախր մարեցին։ Ոչախը չվառեցավ։ Ամեն օր կարգով կերակուր տարավ ամեն տուն։ Խոով ալ ըլլար տարավ։ Պարտավոր էր։ Կբանադրվեր գյուղեն։ *Մահը եթե այսօր անոր էր, վաղը իրեն պիտի չգա՞ր»*[11] (ընդգծումները մերն են— Դ. Ա.)։

Նման նկարագրությունները, որոնք մեծ տեղ են գրավում Հակոբ Մնձուրու պատմվածքներում, ոչ թե խախտում են պատմվածքների գեղարվեստական արժանիքները, ընդհակառակը, լրացնում ու ավելացնում են դրանց գունագեղությունն ու համը։ Որովհետև, արտաքուստ, մեջբերումից, թերևս չոր տվյալներ ու վկայություններ թվացող այդ տողերը, պատմվածքներում հնչում են ամբողջական ու չեն խաթարում կառուցվածքի գեղարվեստական մակարդակը։ Ինչ խոսք, ասելն ավելորդ է, դրանք անգնահատելի էջեր են, որոնք ապագայում մեծ օգուտ կտան նաև հայ ժողովրդի մի մեծ հատվածի ազգագրությունն ամբողջացնելիս և միաժամանակ տխուր, թախիծով հիշել կտան մեր անցյալի, թեկուզ ծայրահեղ, թեկուզ թատերային, բայց և այնպես, դրանց մեջ առկա և ոչ քիչ լավ ու գնահատելի, սիրելի, հայրենաբույր ու հայաբույր ավանդների, վարք ու բարքի մասին։ Եվ այն մասին, որ դրանց վկայագիրը տվել է վերին աստիճանի հայրենաբույր ու հայաբույր մի գրող՝ Հակոբ Մնձուրին։

---

11 Հակոբ Մնձուրի, *Կռունկ, ուստի՞ կուգաս, «Օձը մատս կծեց... օձը մատս խածավ...», էջ 188—189։*

VI

«Մեր աչքերը վարժված էին մեր կիներուն հագուստին, որ միջին դարեն, հարյուրավոր տարիներեն կուգար»։

Համեստ էին Արմատանի բնակարանները։ Գետինը հող էր, կարասի, նույնիսկ աթոռ, չկար. «Մեր տուներուն գետինը հող է, ծեփված ու ամրացված, կարասի, աթոռ չունեինք։ Մենք չարդախին ինչպես սենյակներուն գետինները տոշկած ենք ներքնակներով, զունեղ կապերտներով, չուլերով, անոնց վրա կնստինք»[1]։

Խոնարհ այդ պայմաններում գործող անձինք, նույնպես հեզ, խոնարհ ու համեստ մարդիկ էին, կաշկանդված հին, ավանդական, տարօրինակ սովորություններով։ Այդ անձանց գլխավորներից մեկն էր հարսը, որ երկար տարիներ, բառի իսկական իմաստով անխոս էր մնում տնեցիների հետ, նույնիսկ Հակոբ Մնձուրու առաջին կինը։

«Կինս պապուս, մամուս հետ անխոս է։ Հորս մորս հետ ալ անխոս է։ Տունը իմ ու տղոցս հետ կխոսի, միայն թե երբ մենք մեղի ըլլանք»։

Տարօրինակ են, իհարկե, այդ բարքերը, երբեմն նույնիսկ ծիծաղելի, օրինակ, վերոհիշյալների հետ Մնձուրու կինը, եթե կարիք լինի խոսելու, պետք է միջնորդ ընտրի կա՛մ ամուսնուն, կա՛մ զավակներին, իսկ եթե ստիպված խոսի, ունի իր... մունջերենը։ Եթե տանը միջնորդ չկա մեծերի հետ խոսելու համար, նման դեպքում, խոսակցական լեզուն մունջերենն է։

Ահա մի նմուշ այդ «մունջերենից»։

«Ըֆֆ... կընե շրթներուն արանքեն շունչը ներս քաշելով—իր «այո»-ն է։

— Ը ը... կընե—իր «ոչ»-ն է։

— Շը՛շ... կընե—իր «տես, նայե»-ն է։

— Հը... ի՞սս... կընե — իր բողոքն է, իր «ինձի՞ ես, ե՞ս ըրի»-ն է»[2]։ Եվ այսպես շարունակ։

Հարսների մունջությունը նկարագրող բազմաթիվ էջեր կան Մնձուրու պատմվածքներում («Կողիկ», «Հարսնություն» և այլն), և ինչպես

---

1 Հակոբ Մնձուրի, *Արմատան*, «Կինս ու ես», էջ 258։

2 Նույն տեղում, էջ 257։

Երևում է, «մունջերենը» յուրաքանչյուր հարսի մոտ յուրահատուկ «բառապաշար» ուներ։ Իմաստ ու տրամաբանություն կա՞ այդ բոլորի մեջ։ Հարցը դա չէ, իհարկե։ Այստեղ կարևորը այդ բարք ու սովորություններին տոն տվող պատճառն է, որ ծնունդ է առնում մեծերին տածած հարգանքից ու պատկառանքից։

Այդ բարք ու սովորությունները տարածվում էին արտաքին հագուստ-կապուստի, նստվածքի, կեցվածքի, սեփական պահվածքի վրա։ Հակոբ Մնձուրու պատմվածքներում մանրամասն նկարագրված է գյուղական այրերի և կանանց արտաքինը, հագուստները իրենց մանրամասներով, մինչև սպիտակեղենը («Ոսկի տեղաց էլպակյանի հարսնիքին», և, մասնավորապես, «Մենք ինչ կհագնեինք» և այլ պատմվածքներում)։ Առանձին ու խիստ բարքեր ու սովորություններ կային, անգիր օրենքներ նաև դրսում, նույնիսկ եկեղեցում, մասնավորապես կանանց համար։

Իհարկե, այդ բոլորի մեջ դեր էր խաղում և այն հետամնացությունը, որ կանայք երկրորդ դասի մարդիկ են։ Արհամարհանք կար այդ բոլորի մեջ կանանց նկատմամբ և միջին դարերի շատ տարրեր՝ կանանց պարտադրված այդ մեկուսացման մեջ։ Չհաշված, որ տան, նույնիսկ դրսի աշխատանքներով, անշուշտ կանայք էին ծանրաբեռնված։

Իսկ այդ աշխատանքները, առաջին հերթին, առիթ էին իրար հետ կուշտ ու կուռ խոսելու, տան մեջ մունջ լինելու դատապարտվածությունից հետո. «Աղբյուրին գուռներուն առաջը, սալ քարերուն վրա կիները լվացք կընեն։ Էնթարիները վեր ժողված, յուրանաձև գունավոր ներքնավարտիքներով, բոբիկ ոտքերով, բոլորը միասին կխոսին, առանց մեկ-մեկու ժամանակ թողելու ու հասկ ծեծողներու ըրածին պես, թակերը կելլեն ու կիջնեն լարերուն վրա»[3]։

Սա, իհարկե, նաև նկարչություն է Մնձուրու գրականությունում։ Նկար, և ինչպիսի՜ նկարներ կան, ի՞նչ գունագեղ, վառ նկարներ նրա էջերում, որոնք, մի անգամ ընթերցելուց հետո, կուտակվում են հիշողության մեջ և ընթերցողի հոգին պարուրում խոր թախիծով։ Ահա նման նկարներից նաև մի ուրիշը. «Դուռ մը բաց է ամայի փողոցին վրա, ուրկե քահանան կանցնի։ Երկու հարսներ, մեկը գեր, մյուսը երկայն, կայներ են շվարը, առիքեն կժչվանով տիկե խնոցը կախեր, գեմ

3 Հակոբ Մնձուրի, Կապույտ լույս, «Մուտք», Ստամբուլ, 1958, էջ 15։

դիմաց անցեր կհարեն։ Գեր հարսը որ փայլուն գեմքով է ու լեզվանի, միշտ կխոսի ու կինդա, իսկ երկայնը որ սև աչքեր ունի, ու գեղին փուլերով լաչակ, մտիկ կընե։ Ու երկուքը միասին ուժեղ բազուկներով առիքեն ձգված խնոցը կհարեն արագ արագ։ Մածունը կերթա ու կուգա շարունակ խնոցին մեջ միօրինակ եղանակ մը հորինելով։ Միաժամանակ անոնք ականջ կդնեն ձայնին, որուն փոփոխութիւնեն պիտի գիտնան թե յուղը թանեն զատվելու վրա՞ է թե ոչ։ Իրանները քիչ առաջ հակած, գեր հարսին հորդող ստինքները խնոցին մածունին պես կերթան ու կուգան, կբաղխին ամեն անգամուն շապիկին ու էնթարին, կհարվին։ Երկուքն ալ լաչակները քիչ թուլցուցեր են, քրտինքները կհոսին իրենց այտերեն ու ամեն շարժումի անոնց թիկունքի ծամերն ու գոգնոցներուն փունջերը թունդ կելլեն, կփաթթվին բարակ հարսին երկայն սրունքներուն, գեր հարսին մեջքին ու լիքը ազդրերուն, կխաղա՞ն. կկատակե՞ն։ Բայց ահա կդադրեցնեն հարելը։ Երկայնահասակը ծունկի կուգա, կբակե տիկին բերանը, որ յուղոտած ու խիստ է դարձած ու լույսին կբռնե։ Ներսը յուղի բիծեր կծփան թանին երեսը, ափովը շոյելու ձևով տիկին վրայեն կջանա ժողվել, թանձր կդտնե զայն, լոշիկով ջուր կլեցնե, բերանը պինդ կկապե, ու կշարունակեն հարել դեմ դիմաց։ Ծամերն ու փունջերը նորեն կսկսին ոստոստել, խաղալ հարսներուն մարմիններուն հետ, խնոցին ձայնը կտիրապետե իրենց խոսակցությանը ու բաց դուռնեն դուրս գալով՝ կծավալի, կլեցնե փողոցը»[4]։

Թվում է այդ ձայնը... «բաց դուռնեն դուրս գալով» հասել է նաև մեզ և դեռ «կծավալի՞...» գալիք դարերի համար, որպեսզի պատմի նաև հետագա սերունդներին այդ սիրելի, այդ քաղցր, ծանր ու պաշտելի անցյալը։ Սա նկար է նաև, որ չի խունանա, դարեր տակավին, քանի կա հայ գրականությունը։

Իր երկրի, Արմտանի բարքերն ու սովորությունները նկարագրելիս Մնձուրին չի մոռացել և ոչ մի մանրամաս, սկսած անուններից, վերջացրած մի այնպիսի մանրուքով, ինչպիսին այրական պեխերն են։ Սկսած մանկական նիստ ու կացից, սնվելուց, մինչև պառավական կենցաղի հետին երևույթը։

«Մեյ մըն ալ պըյըխներդ ոլրե, ծայրերը վեր դարձուր, մարդու մը էրիկ մարդությունը ցուցնողը պըյըխներեն են»[5]։

Զարմանալի է, բայց այդ բարքերը շարունակվում էին նաև մեր

---

4 Նույն տեղում, էջ 12։

5 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Աղաճան Ամուին էլմասը», էջ 71։

դարի 40-ական թվականների վերջերին Թուրքիայում, մասնավորապես Սեծովյան ափերի բաղաքներում։ Այդ կողմերից բանակ կանչված երիտասարդները զորացրվելիս, հայրենի քաղաք չէին վերադառնում, մինչև չվերականգնվեին պեխերը։ Տղերիս հեղինակը անձամբ ներկա է եղել նման երևույթների թրքական բանակում։ Խուզված պեխը առնականության «կորուստ» էր համարվում և ծանր հոգեկան ապրումներ պատճառում։

«Գյուղին համար կարևորը՝ հարաղատությունը չէր, տանը անունին շարունակությունը, տունը չգոցվելը, օջախը չմարիլն էր»։

«Իմ երկրացիներս Աղա, Ջանո, կամ Աղվոր, Պեկո կգնեին տղոցը անունը, մեռած սիրելիի մը կամ մեռած հորը, եղբորը անունը տանը մեջ հավերժացնելու համար, ու բուն անունը չէին կանչեր, չհուզվելու, սրտերնին վեր չելլելու համար»[6]։

Հետաքրքիր են մանուկների մկրտության սովորությունները, նրանց անկողինն ու օրորոցները, նրանց թիեցումը, մանավանդ այդ վերջինի մասին Մնձուրուց եկող հաստատումներն ու վկայությունները, որոնք մի անգամ ևս փաստում են, թե ինչքանով միախառնված էին, կողք-կողքի ապրող տարբեր ազգություններն ու ցեղերը։

«Մեր աշխարհ գալեն մինչև տասը օր մեզ կմկրտեին, եղանակը ամառ ըլլար թե ձմեռ։ Մենք օրոցք չունեինք. կախօրրան էր մերը։ Տանը կամ սենյակին մեկ անկյունը պատե պատ կախօրրան կկապեին, մեզ մեջը կպառկեցնեին։ Մեր Ավազանին ձորին լեռը երախայի ավազ ունեինք, կապույտ գույնն, կմաղեին, մեր օրրանին մեջ կտարածեին։ Օջախը ամեն եղանակին թաղարով տաք ավազ կունենայինք, պաղ ավազով կբարեխառնեին, մեր մարմինին դիմանալու աստիճանին կբերեին վրան շորլաթ մը փռելով մեզ կպառկեցնեին։ Մեր սրունքներն ու թևերը հողլաթով մը ու վրաքաշիկով մը կամփոփեին, կամարով մը կկապեին երես-ծածուկով մը մեր աչքերը կդոցեին, որպեսզի մեր շուրջը չտեսնեինք, ու մեր օրրանը կերթար ու կուգար, կփարտվեր որչափ անգամ, ալ Աստված գիտե, քսան, երեսուն, քառասուն, մինչև որ մեր քունը տաներ»[7]։

«Միայն մեր մորը կաթը ծծելն ալ պայման չէր մեզի։ Չկա՞ր ան, բացակա՞ էր, ու՞շ պիտի դար։ Գյուղը ըլլայինք, որ տունը որ ծծմայր կար մեզ կտաներին որ կաթ տար մեզի։ Արտերը նույնպես։ Թող հայ

6 Նույն տեղում, «Իմ տպավորությունս», էջ 23։

7 Հակոբ Մնձուրի, Կոմնկ, ուստի՞ կուգաս, «Մենք մանուկներս», էջ 153։

չըլլային, բուրf, fուրդ, ղզբլպաշ ըլլային, գիրկը կուտային որ ծծցը-նեն մեզ։ Սիրով կկատարեին։ Աստուծմե կվախնային։ Աստված կպատ-ժեր զիրենք, չէր ներեր եթե ղլանային։ Ես բոշա կնոջ կաթ անգամ ծծած եմ։ Հինգ, վեց ամսվան եմ եղեր, գենկեզ լալկան բան մըն եմ եղեր։ Մայրս երեխայի հոգի ղրկեր էին որ պիտի մաղեր ու բերեր։ Ես արթընցեր եմ ու սկսեր եմ լալ։ Եվ ի՞նչ լալ, դուքնս փոխվեր, կապուտ-ցեր եմ, պիտի ճաթիմ։ Գյուղը ծծմայր չկա, մամն ի՞նչ ընե, վախցեր է, գիս ղրկեր, տարեր է մեր փոսուն բուռի կալերը, բոշաներուն, բոշա ծծմոր մը գիրկը տվեր են որ ծծեր ու լացս կտրեր եմ։ Հայ բոշաներ էին, մաղագործ էին, կալմաղ, քարկալմաղ, ցարմաղ կշիներին։ Երբ մեծցա ամեն ամառ երբ բոշաները գային բոշա ծծմայրս գիս որ տես-ներ գլուխս կշոյեր, «Քեզի կաթ տվեր եմ, ես ալ fու մայրդ եմ» կըսեր։ Ո՞ր օր ես ուշ տուն դառնայի, ինձի կսպասեին մայրս կամ մամս երե-սիս կուտային «ի՞նչ պիտի ըլլա բոշայի կաթ ծծեցիր, բոշա եղար, աչքդ դուրսն է» կըսեին»[9] (ընդգծումները մերն են—Գ. Ս.)։

«Ակռա չունեինք, չէինք կրնար ծամել, մեր մայրերը, մամերը կամ որևէ մեկ աղղականը լուբիան կամ բակլան, բիլավը մեզի համար իրենք կծամեին, մեր բերանը կբանային, իրենց ծամածը իրենց մատ-ներովը կմտցնեին մեր շրթներեն ներս, մենք կկլլեինք»[10]։

Կասկած չկա, որ թե թիեցնելու և թե կերակրելու նման սովորու-թյունները, ինչքան պայմանների պարտադրանքն էին, այնուամենայ-նիվ, քիչ չէր երևի նաև անիմացությունը առողջապահության տարրա-կան գիտելիքներից, որոնք հավանաբար քիչ էին փորձության ենթարկ-վում, տրված լինելով, որ առողջ էին նրանք, այդ գյուղացի կիներն ու «մայրերը» ու մամերը և... աղղականները։

Հետաքրքիր են նաև դպրոցական առաջին քայլերը, այբբենարանը, եկեղեցիներում երեխաների «ընթերցված» ընթերցելու սովորույթները, որոնք նույնպես մանրամասն նկարագրված են Մնձուրու առանձին պատմվածքներում։ Պիտի ասել նաև, որ Հակոբ Մնձուրին մի նոր ման-րամաս նկարագրելիս, հաճախ է հիշեցնում, կրկին շարադրելով մի այլ տեղ պատմած սովորույթը։

«Բուն անունը Աղա չէր, Վարդան էր, հորը անունը դրած էին, և չհիշելու համար հորը անունը (մենք գիտեինք, որ չէին հիշում «չհուզվելու,

---

9 Նույն տեղում, էջ 155—156։

10 Նույն տեղում, էջ 156։

սրտերնին վեր չելլելու համար»—Գ. Ս.) Աղա կըսեին։ Ան մենե երկու տարի մը պպտիկ էր։ Փոշեցանոտ երեսներ մը ուներ։ Մազերուն գույնն ալ, ինչի՞ նմանեցնեմ՝ չխաշած հավկիթը կոտրելու ըլլամ, անոր դեղնուցին գույնովն էին (ընդգծումը մերն է—Գ. Ս.)։ (Ինչքան է մնձուրիական այդ նմանությունը, հարազատ, անպաճույճ, գյուղացիական)։ Դրպրոցը մենք հեգարանը երկրորդ անգամ կես ըրեր էինք, ան դեռ տախտակ կկարդար. ըսել կուզեմ ձեռքինը գրքի տեղ տախտակ մըն էր, քերականի մը մեծությունով. տակը բռնելիք կոթով մը, վրան թուղթ մը փակցված «խաչ օգնյա՛ ինձ» մը ու այլ բան դիմը գրված։ Գրերը՝ սա գիմ է, սա ծա է, սա կեն է, իր տարիքը տղաքը անոր վրա կսովրեին, որովհետև անոնց քերական չէր տրվեր, մեկ օրվան մեջ կպատռեին»[11]։

Եկեղեցիներում միայն Դանիելի գիրքը կարդալը... փողով էր, այն էլ տարօրինակ սովորությամբ՝ աճուրդ հիշեցնող ձևով։ Ում հայրը ամենաշատ փողն էր առաջարկում, Դանիելի գիրքը կարդում էր նրա որդին (տե՛ս «Կանանչ, ուստի՞ կուգաս»—«Մանկություն», էջ 81)։

Իհարկե, այդ բոլորը մենք չէ որ կասկածի կամ քննադատության ենք ենթարկելու, դրանք ավանդաբար անցնում էին սերնդից սերունդ։ Լա՞վ էին թե վատ այդ բարքերը, այդ չէ կարևորը, այլ ավանդույթները, որոնք, ինչ խոսք, սիրելի էին ինչ էլ լինեին, ինչքան էլ խոցելի ու քննադատելի կողմեր ունենային։ Իսկ ո՞վ կարող էր պնդել, որ դրանք, այդ բոլորը, հիմնված չէին փորձով ու փորձառությամբ ձևռք բերված լավագույնի վրա։

Ինչպիսի մանրամասնությամբ Հակոբ Մնձուրին նկարագրել է գյուղական տարազները, նույնպիսի մանրամասնությամբ («Մենք ինչ կտադնեինք») խոսել է ուտելիքների ու սննդի բազմազան տեսակների մասին, որոնք օգտագործվում էին Արմտանում և շրջակայքում։ («Մենք ինչ կուտեինք»)։ Այս երկու պատմվածքներից բացի Մնձուրին բազմաթիվ այլ պատմվածքներում ևս անդրադարձել է թե հագուստ-կապուստի և թե սննդի այլևայլ առանձին մանրամասներին, հաճախ կրկնելով արդեն տրվածն ու ասվածը։ Բայց նման դեպքերում նաև նրա կրկնությունները այնքան օրգանական միասնություն են կազմում տվյալ պատմվածքի միջավայրի հետ, որ կարդացվում են առաջին տպավորության պարգևած հաճույքով և երբեք չեն հիշեցնում, թե «կրկնվում» են։

Մնձուրու պատմելաձևը նույնիսկ ամենաչոր նյութին հաղորդում է մի ներքին ջերմություն, օրինակ, երբ խոսում է սովորական հացի կամ

---

11 Հակոբ Մնձուրի, Արմտան, «Խնկենց տունը», Ստամբուլ, էջ 239։

լավաշի մասին, ընթերցողը զգում է նրա բույրն ու համը և ավելին. ընթերցում է «քաղցածությամբ»։ Տանք մի երկու-երեք նման նկարագրություններ, որ ապացույցն են նաև գրողի նկարագրելու բարձր կարելիության։

«Մեր հացերը բարակ թերթեր էին առանց միջուկի։ Մենք խմորին գունդերը կբանայինք, կտարածեինք բապաթին վրա, կփակցնեինք թոնիրին կողերուն, կեփեինք, կկարմրեին։ Ակիշով կհանեինք։ Կկրեինք հացատունը, ու մեկ պատեն մյուսը երկնցուցած ձողերեն, պարաններեն երկուական կկախեինք, ավելցածն ալ տարծոցներուն վրա կտարածեինք։ Հացատան մեջ չկրնար շարժելու աստիճան հացով կլեցնեինք (ընգունված էր ամիսը մի անգամ հաց եփել—Գ. Ս.)։ Անոնց ախորժելի հոտը տուներուն մինչև երկու փողոց անդին կերթար։ Քաղաքի հացերուն պես ճերմակ չէին, կարմրորակ թուխ էին, բարակ էին ու հացատան մեջը կչորնային։ Ամեն ճաշի քանի հաց պետք էր վար կառնեինք, կշրջբքեինք, այսինքն ջուր կցանեինք, սալային մեջ կպառկեցնեինք, կծածկեինք, կփափկանային։ Անուշ էին, աղի չէին, չէինք ուզեր որ աղի ըլլային»[12]։

Կամ՝

«Մեր պարտեզներուն ու այգիներուն մեջ գրեթե բոլոր բանջարեղենները կմշակեինք։ Ամառը թարմը, ձմեռը ամառեն չորցված ու մթերված ընդեղենները կուտեինք։ Միս չուներինք, ուտիքիները յուղով կեփեինք, իսկ պահքիները (և պետք է ըսեմ որ անխտիր տարվույն բոլոր պահքերը կբռնեինք) ժուրով կուտեինք։ Ժուրը ընկույզն էր։ Գուշկին մեջ կծեծեին, սխտոր ու կարմիր պղպեղ կխառնեին ու կերակուրներուն վրա կանցնեին։ Հետո ըսեմ նաև որ մեր բոլոր կերակուրներուն տակը, երբ դդալով չէր, մատներով պիտի ուտեինք, հաց բրդված պետք է ըլլար։ Մենք շատ ժուր կուտեինք։ Գյուղին շուրջի բոլոր պարտեզները ընկուզենի էին։ Ընկույզը մեր գլխավոր բերքերեն էր։

Թութեն ըսպ, այսինքն բեքմեզ կպատրաստեինք։ Թութը մեր երկրորդ գլխավոր բերքն էր։ Մեր այգիներուն թթենիները մինչև սեպտեմբերի կեսերեն ալ վերջ բերք կուտային, ուրիշ տեղերուն պես միայն հունիսի, հուլիսի մեջ չէին տար։ Խոշոր ու անկուտ էին, մատներդ իրար կփակցնեին անուշեն։ Ամեն տուն ըսպ կար։ Նախ սև էր, հետո հետզհետե կդեղներ, կթանձրանար, կքարանար, դանակով կկտրեինք ու այն-

---

12 Հակոբ Մնձուրի, *Կռունկ, ուստի՞ կուգաս, «Մենք ի՞նչ կուտեինք», էջ 219։*

քան կանուշնար որ կայրեր ներսերնիս։ Հետո թութեն օղի, քացախ, պաստեղ ու ուտելու բզուկներով չոր թութ կպատրաստեինք։

Մեր երրորդ մեծ բերքը խաղողն էր։ Մեր այգիներուն գրեթե ամբողջը խաղող էին։ Խաղողեն թարխանա կշինեինք, պաստեղ, բլիթ, ընկույզով շարոց ու բզուկներով գինի։ Շատ գինի կիմեինք, անուններու տոնախմբությանը մանավանդ։ Գործ չկար, գործի երթալ չկար ամբողջ ամեռը։

Հերիսան ու քալաճոշը մեր բացառիկ կերակուրներեն էին։ Հերիսան աքաղաղով, հավով կեփեինք։ Քալաճոշը՝ չորթանեն։ Չորթանահարով կարծր չորթանները կհալեցնեինք, յուղով, ընկույզով, սիտորով, պղպեղով ու խորովածի միսով կպատրաստեինք։ Բաղարջը յուղով, հավկիթով կշինեինք թոնիրը։ Պիշին խմորի բարակ թերթեր էին, յուղին մեջ կեփեինք։

Մենք մեր թթունները (թուրշունները) աղով կպատրաստեինք։ Մեր ջուրերուն շնորհիվ համբավավոր էին։ Բոլոր տեսակները ունեինք։ Միայն պղպեղովը դեփ դեղին, ոսկի դեղին կըլլար։ Տեսքը միայն բերնիդ ջուրերը կվազեցներ։ Խառնը, լոլիկ, ստեպղին, աղատագեղ ու մանր պղպեղովը նուռի գույն ջուր մը կունենար, ինչ ու ինչ ախորժաբեր էր, հացդ թաթխելդ, նորեն թաթխելդ կուգար։ Հետո ճակնդեղի թթուն։ Կաղամբի թթուն ուտելե վերջ ջուրը երկու գավաթ մը խմելու ես որ զովացներ, մոմոցներ քեզ։ Կերածները մարսեիր»[13], և այլն։

Կարող են այդ բոլորը և այն էջերը, որոնք նույնքան և ավելի մանրամասնությամբ նկարագրում են մարդկանց հագուստ-կապուստը, այնքան գունեղ, աչքառնող, շլացնող ձևով, հարց առաջացնեն ինչ-որ տեղ. թե դա մի՞թե գրականություն է, բառի իսկական իմաստով։ Բայց մի՞թե կարելի է չընդունել, թե Մնձուրու խաղողները, թթունները, լավաշը... լինելով մեր իմացած սովորական թթուն, խաղողն ու լավաշը, տարբեր չեն միաժամանակ դրանցից իրենց պատկերված տեսքով, որ նրանք կենդանի են ավելի, քան սովորական թվացողը մեզ համար։ Եվ մի՞թե Մնձուրու պղպեղը «դեփ դեղին, ոսկի դեղին կըլլար» այն պղպեղն է մեզ համար, որ գիտենք։ Եվ այո, և ոչ։ Իսկ Մնձուրին հասկանում է... մեզ։

«Ձեմ գիտեր, ախորժեցա՞ք։ Բայց ես որ իմ երեկս, իմ անձերս, իմ երկիրս խոսեցուցի, պետք էր որ անոնք ևս ըսեի»[14]։ Կարծում ենք մի

---

13 Նույն տեղում, էջ 226—227։

14 Նույն տեղում, էջ 227։

փոքր անճշտություն կա այդ նախադասության մեջ... «պետք էր որ անոնք ևս ըսեին» տեղ, հարկ էր գրել. «պետք էր, որ ասոնք ևս... խոսեցուցեին»: Այո, Հակոբ Մնձուրու լավաշը, թթուն, խաղողը, դեռևս նրա սալթան, շալվարը, եէմենիներն ու չափուլաները խոսում են իրենք և դա... երբ «խոսում են»... գրականություն են, ավելի քան... աղգագրությունը:

Իսկ քրտինքով ու ծանր աշխատանքով ձեռք բերված այդ բոլոր բարիքների հանդեպ մարդկանց տածած հիացումն ու մանավանդ հարգանքը, այդ հիացում ու հարգանքից ծնունդ առնող անկիր օրենքնե՞րը ու դարավոր ավանդություններ՞ը... Դրանք արդեն խոսքի բնույթի ու սեռի մասին, երբեք կասկած չեն տալիս:

Վերցնենք թեկուզ հացի հանդեպ գյուղացու կեցվածքը: Հացը սուրբ է, նրա հանդեպ երկյուղած սեր գոյություն ունի, երբ պատահաբար այն ընկնում է գետնին, վերցնում են, համբուրում և դնում մի անկյուն, նույնիսկ հաց ուտելիս պետք է լուռ, զուսպ լինել, չխոսել, չշաղակրատել, հաց ուտելու ժամանակ հեքիաթ պատմել իսկ չի կարելի մանուկներին: Հարգանքն ու երկյուղածությունը սովորեցնում են փոքրուց:

«— Հացին վրա հեքիաթ չեն ըսեր, ձագուկս, մեղք է, պատասխանեց Նուռ մամը:

— Չէ, ձագուկներս, խրատեց վերստին Նուռ մամը, հաց կերած ատենը, չե՞ք գիտեր դուք: Հեքիաթ չեն ըսեր: աղեկ չէ»[15]:

Հակոբ Մնձուրին «Սիրահարություն մը», «Խիզը», «Մելիքենց Մկրչը» պատմվածքներում, երբ նկարագրում է յուրահատուկ ճաշերի տեսակներ, տալիս է «ցանկը»՝ մենյուն արտքաղի ժամանակ մատուցված ճաշերի, ծանոթացնում է Զատիկից հետո պատրաստվող «ճաշացուցակին», որ մինչև նոր բերքերի դուրս գալը շատ համեստ է՝ հաթ, մածուն, թան ու թանով ապուրից և նկարագրում է հետաքրքիր սովորություններ: Օրինակ, ինչպե՞ս էին ուտում պանիրը Արմատանում. «Մենք պանիրը առանց ջուրի չէինք ուտեր: Թասը ջրով կլեցնեինք, Նանոն զմելիովը բարակ բարակ կկտրեր մեջը, հացը ջուրը կոխելով մեր մատներովը քչիկ մը պանիր առնելով կուտեինք: Հացերնիս ջուրը կծծեր, կհատներ ջուրը, տակը եթե քիչ մը պանիրի լոսունք կմնար, նորեն մինչև թասին բերանը կլեցնեինք ջուր, կթաթխեինք հացերնիս...»[16]: Կամ «Կաթը ուտելիք մը չէր, նախանյութ մըն էր մեղի համար: Անկե պանիր

---

15 Հակոբ Մնձուրի, *Կապույտ լույս*, «Նորեն Նուռ մամը», Ստամբուլ, 1958, էջ 206:
16 Հակոբ Մնձուրի, *Կռունկ, ուստի՞ կուգաս*, «Մանկություն», էջ 81:

պիտի շինեին կամ եռացնելով պիտի մակարդեին ու մածուն ընեին։ Մածունն ալ չէին սեղան բերեր ու ուտեր։ Կհարեին յուղը առնելու համար։ Թան շատ կուտեին, ուտիքներուն հացը կբրդեին մեջը ու թանով կկշտանային»[17]։ Եվ այլն, և այլն։

Հակոբ Մնձուրին մանրամասն շարադրել է տան մանրամասները՝ հիմնական սրահի, մուտքի և երդիքի կառուցվածքն ու կահավորումը.

«Մեր երդիքները շատ հաստատուն էին, ինչու որ շատ հաստ սյուներու վրա կեցուցած էին, սյուներուն վրա քանի տեղ հեծան, անոնց վրա պատե պատ գերաններ, գերաններուն միջև դարձեկներ, մարդակներ երկնցված, ու այնքան կկպցնեին իրարու որ փակածի պես կերևնային, անոնց վրա որթոտով, շոր սեղերով կծածկեին, սեղերուն վրա հաստ ծեփ մը կքաշեին ու այս ամենուն վրա ծնկաթաղ մը հող կլեցնեին, ձյուն կտեղար, անմիջապես կելլեին կքերեին կավլեին, անձրև մը դար նուևն նորեն անմիջապես կելլեին մրեղ, այսինքն հարդափոշի մը կցանեին ու կլողեին, ալ ատ երդիքները ինչ կըլլային։ Շաբաթ մը գիշեր ցերեկ անձրև տեղար մեր տունները չէին կաթեր, ջուրերը կհոսեին, կերթային, հարսնիքները երդստանը կընեինք, այնքան հարսնևորները լման շաբաթ մը կցատկեին, կխաղային, կպարեին, ամենևին տունը չէր երերար, հող մը, փոշի մը չէր իյնար, տակը եղողները խորունկեն զուռնային տավուլին ձայնը կլսեին միայն։ Բայց երբ ձյունը իջնա չքերվի ու հալի վրան, անձրևը դա ու ջուրերը լճանան, լողող չըլլա ու տարիներով շարունակվի, այդ տունը ի՞նչ կըլլա, կիլի, մեր արմտաներենի մեջ ավերակին բապպոս կըսենք, բապպոս կըլլա...»[18]։ Նա չի մոռացել նաև նկարագրել, թե կահկարասիի չգոյության պայմաններում ինչպես էին նստում «ճաշասենյակում» և ճաշում։

«Ամենքը գետինը կբոլորվեին։ Մալապատիկ, շիտակ չէին նստեր։ Ամեն մարդ, ամենուն տեղ ըլլալու համար, կողմնակի պետք էր նստեր, արտ քաղողները արտերը ճաշի նստելուն պես մեկ սրունքը տակերնին առնելով մյուսը երկնցնելով»[19]։

Մնձուրու գրականությունը, նրա վկայությունները, անցյալի գեղջուկ ու պարզ մեր աշխարհի թանկագին փաստերից են, անվերադարձ անցյալ կյանքի կորստից փրկված մասունքները, որ ավելի են արժեքավորվում հենց այդ փաստերի ու վկայությունների առատությամբ, ու մասնավորապես լրիվ հավաստիությամբ։

---

17 Նույն տեղում, «Մենք մանուկներս», էջ 156։

18 Հակոբ Մնձուրի. Արմտան, «Ահարոնին, Մարոյին պատմությունը», էջ 37—38։

19 Նույն տեղում, «Մելիքենց Մկրտը», էջ 283։

VII

«Դուք հոս մեր օրորները չունիք, դուք օրոր չունիք, որովհետև իղձեր չունիք»։

Ինչպիսիք էլ լինեին քաղաքական ու տնտեսական պայմանները, կյանքը ինչ-որ տեղ ինչքան էլ հետամնաց ու ծանր լիներ, այնուամենայնիվ հայ գյուղացիները մաքուր էին, անեղծ, սրտաբաց. եթե լալ էր հարկավոր, գիտեին լալ, բայց երբ առիթ էր տրվում ծիծաղելու, ծիծաղում էին լիաթոք։ Ինչպիսիք իրենց սերն ու ատելությունն էր, համապարփակ։ Սրամիտ էին նաև, քչախոս թեև, բայց խոսելու դեպքում արդարամիտ, խոցող, գիտեին ձեռք առնել, բայց լսող էին նաև, հարգալից՝ մեծերի նկատմամբ ու սիրառատ փոքրերի հանդեպ։ Աստվածավախ էին, քրիստոնյա, բայց ուրախանալ ու սիրել գիտեին հեթանոսների նման, այլասեր էին նաև, լայնախոհ, ինչպես պապերն էին իրենց, այնպես, ինչպես լինում էին իրենցից սերած որդիները։

Հակոբ Մնձուրին հարազատ զավակն էր, հարազատ կրողը այն բոլոր առավելությունների, որոնք նրանցն էին և նաև կրողը այն բոլոր թերությունների, որոնք ունեին իհարկե։ Որովհետև մարդ էին նրանք ամեն բանից առաջ։ Մարդ՝ բառի լայն ու իրավ իմաստով։ Հարուստ, բացառապես հարուստ էր նրանց լեզուն, հայերենը, որ ուներ նաև իր արևմտահայերենը։ Հակոբ Մնձուրին տասնյակ հարյուրավոր բառեր ունի իր պատմվածքներում, որոնք, որպես հոմանիշներ, շատ դիպուկ ու սրտամոտ են հնչում գործածական բառերի կողքին. նա իր պատմվածքներում օգտագործել է այնպիսի նմանություններ, դարձվածքներ, ասացվածքներ, որոնք զարմացնում են իրենց բացառիկ դրավչությամբ, իմաստությամբ ու բանաստեղծականությամբ։ Իսկ բանահյուսական այն պաշարը, որ Մնձուրիով գալիս է մեր գրականությունը, դժվար է գնահատել։

Իհարկե, մանրամասն ուսումնասիրել Հակոբ Մնձուրու գրականության այնքան արժեքավոր այդ տարրերը դուրս է մեր աշխատության սահմաններից, բայց, կարծում ենք հարկավոր է որոշ կարծիք ունենալ դրանց մասին։ Մենք այդ բոլորի կապակցությամբ, առանձին գլուխներում խոսել ենք, երբ առիթ է ներկայացել, այժմ տանք նմուշներ, առանձնացնելով դրանք, որպես անջատ նմանությունների և ժողովրդական մտածողության մտածել ստիպող փաստերի։ Բայց նախ սկսենք այն բառերի հարուստ թվարկումից, որ Մնձուրին բերում է հայ գրականու-

թյուն, որպես իր գավառի տուրքը հայոց լեզվին։ Դա, ինչ խոսք, ինքնին առանձին արժեք է ներկայացնում։ Արձանագրում ենք միայն փոքր մի մասը այն հոմանիշ բառերի և որոշ նոր ճաշատեսակների, որոնք, մեր հայեցողությամբ, ուշագրավ են։ Բերում ենք այն ձևով, ինչ ձևով գրել ու արտահայտել է հեղինակը (ընդգծումները մերն են—Ս. Գ.)։

1. Մեր արմտաներենի մեջ սափորին պոկավոր կըսեինք։ Մեր պոկունքին վերցնելով խմելնուս համար։

2. Շալակնիս մուլին առաջը վար առինք, որ մեր հայերենովը մարագին տանիքին մուտքին կըսեինք։

3. Իրավ որ իր առջի կինը խանպակը մեռնելեն ասդին քանի՞ հատը փեշքաշեցին իրեն (ամուսնանալ ուզեցին—Գ. Ս.)։

4. Արտերուն մեջ ցորենները իրենք զիրենք գետնեն ազատեր էին, կանուխ ցանվածները ծունկբաղ մը եղեր էին, ավելի կանուխ ցանվածները՝ տարեկանները ծունկբաղն ալ անցեր էին։

5. Ամենքը ծնկածալիկ նստան։ Ոտքերնին երկնցնել չկա։

6. Մեր շունբնոցներեն... (շար ու գող տղաներ—Գ. Ս.)։

7. Մեր արմտաներենի մեջ ավերակին բապպոս կըսենք...

8. Մեռնող կնոջ տեղ եկող երկրորդ կինը խումա կկոչվի... (այս բառը դալիս է թրքերենից։ Անցյալում Թուրքիայում այրերը իրենց առաջին կնոջ ողջության ժամանակ էլ կարող էին խումա բերել և ոչ միայն մեկը, այլ երկուսը, երեքը, չորսը։ Այսինքն ունենալ չորս-հինգ կին միաժամանակ—Գ. Ս.)։

9. Մենք պարտեզներուն ածուք կըսեինք։

10. Մենք փոցին վալա կըսեինք։

11. Մենք հացին փշրանքին լոսուք կըսեինք։ Ամենամանրին՝ ջծնրիկ։

12. Մենք բուն կըսեինք գուլպաներուն։

13. Սև լվացք այծի մազերեն գործված չուլերը, ցորենի ու ալյուրի պարկերը, հապիկանները լվալն է։ Այսինքն ոչ ճերմակեղեն և տնային հագուստներ։

14. Մենք կոճակին բանտ կըսեինք։ Բանտերով կբանտեինք... այսինքն կոճակով կկոճկեինք։

15. Ամեն կին երկրորդ հագուստ մը ուներ, տոնականը, որուն պատենի կըսեին։

16. Կամակ—հիվանդտեսի եկողների բերած ուտելիքը։

17. Կզկալ—մորուսավոր։

18. Քալանոշ—չորթանով (չորթանահարով կարծր չորթանները

12—602

կհալեցնեինք), յուղով, ընկույզով, սխտորով, պղպեղով ու խորոված մսով ճաշ։

19. Կանկար—անուշ ու կաթնոտ կըլլար։ Յուղով, հավկիթով կեփեինք։ Կշորացնեինք, ձմեռն ալ նորին յուղով ու հավկիթով կեփեինք։

Եվ դեռ ինչքան նման հոմանիշներ և ճաշերի առանձին անուններ...

Ահա և ժողովրդական դարձվածքների, ասացվածքների որոշ, գյուղական բարբ ու սովորույթներին շատ բնորոշ, նմուշներ.

1. Սատանային ըսածին պես թե «հայուն եաբի կնիկը ես ըլլայի»։ (Ասվել է այն իմաստով, որ իբր գյուղացի հայ մարդը, իր երկրորդ կնոջ հարգը ավելի է իմացել—Գ. Ս.)։

2. Կեցար կեցար, կռունկը աչքեն զարկիր։

3. Աղբար պաղիրկյան ըլլա, յարն ուրախանա, աղբար աղբատանա՝ քույրը տերտոմն ըլլա։

4. Խենթն է գացեր հարսնեատուն, ըսեր է սա աղեկ է քան զմեր տունը...։

5. Ջուրը կուգա ջաղացքը կաղա, գոդոշը կուտե, կելլե կխաղա։ (աշխատանքը ուրիշները կանեն, ինք իր քեֆին է, խաղացողը, ուրախացողը ինքն է—Գ. Ս.)։

6. Անշան տեսար փուշան մուցար։

7. Մեծնաս ու մեծ մը ըլլաս, շատնաս ու գեղ մը ըլլաս։ (Օրորոցային)։

8. Հարսանիքիդ մաղով ջուր պիտի կրեմ։ (Ամեն իրիկուն մեր աղջիկները, հարսները խաղողի կթոցները, կողովները մինչև շուրթերը ձյունով, կուժերու պես շալկած, մեկ կարգի վրա, հնդյակներով, տասնյակներով կալերեն մաքուր ձյուն կրերեն, օջախներուն վրա խալկինները կլեցնեն որ հալին։ Ձյունը կհալեցնենք, որ ձմռան խմելու ջուր ունենանք)։

9. Էլիֆը տեսներ մարդակ կկարծեր։

10. Կնիկ ըսածդ էրիկ մարդու պես չէ, շուտ կապրի, շուտ կանցնի, շուտ կնիկությունը կերթա։ Էրիկ մարդ մը յոթանասուն տարեկան ըլլա չկշտանար, նորեն աչքը կնիկներուն է։

11. Հարսին տեղը հարս կուգա, ավելի աղեկը կուգա, աղուն տեղը տղա չի գար, տունը կդոցվի։

12. Քեզի պես շանը շարական, երթաս ապրիս բարբարական։

13. Մարդ տարիքը առնելով է որ կնկան արժեքը կհասկնա։

14. Օձի վրա խոսիլը աղեկ չէ կըսեն։ Թշնամիդ կխոսի վրադ։

15. Աչքը քարը կճաթեցնե, ո՞ւր մնաց մարդը։

16. Էշ չե՞ս, էշն ինչ գիտե նուշն ինչ է։

17. —Բարին արևուդ...

— Բարին որդոցդ արևուն (կանանց փոխադարձ բարևելը)։

Այժմ մի քանի նմուշներ հայհոյանքներից ու անեծքներից։

1. Աղջի, օտար տան ցախավել, ջրի վար տամ քեզ։

2. Աղջըղջի անանկ աղջիկը, ջրի վար տամ ու ջրի վեր ժուռ գամ։

3. Սիրողնուդ սիրտը խառնվի։ Թրխեցնք տեղերնիդ։

4. Մեղք ալ կա նէ շըլլիդ ըլլա։

5. Շըլլե, դուն չըլլայիր իմ սիրած յարը
Շըլլե, քեզ չբերեր քեզ բերող մայրը։

6. Կնիկ պիտի ըլլաս, կնկտի քեզի պես կնիկը, մար պիտի ըլլաս ճարմրի քեզ պես մարը...։

7. Ատը ղալասը... (թրք. անունդ մնա, այսինքն՝ մեռնես)։

8. Քու կաթդ ու մակարդտ... քու օխտը պորտդ... Ճիվերիս տղան։

9. Հիմա բերանս չբանամ, հորդ մորդ դանկեն չսկսիմ, շուն շանտրդի կնիկ...։

10. Հեյ քու պապուդ կողին...։

11. Անոնք ի՞նչ մորերնուն մանածը ծախած են... մեր շունթնթողները։

Հակոբ Մնձուրին իր պատմվածքներում անդրադարձել է նաև հարկերի գանձման ժամանակ գործադրվող ամենադաժան ու անմարդկային բռնություններին։

«Ամենեն ադղու կերպը չվճարողներուն ոչխարը, կովը, եզը բանտարկելը կըլլար կալի մը մեջ։ Շատ կդպեր ինձի այդ տեսարանը, կփշաքաղվեի երբ ժամերով անոթի այծերուն մե՞... մե՞... ները, կովերուն մո՞... մո՞... ները կլսեի»։

Չվճարված գումարի համար անասուններին այդպես սովի մատնելը շատ էր անսիրտ, իհարկե։ Չհաշված մարդկանց նկատմամբ կատարված բռնությունն ու ծեծը։

Հարկահանության ձևերից մեկն էլ շահնայությունն էր։

«Միաժամանակ ան շահնայություն կըներ։ Ամեն տարի աճուրդներուն կմասնակցեր ու ինգ-վեց գյուղի տասնորդը կվարձեր կառավարութենեն։ Բոլորին ծանոթ է որ շահնաներուն և գյուղացիներուն միջև միշտ անհամաձայնություններ կծագին և ատիկա գլխավորաբար պաղաթին պատճառով։ Դրությունը ինքը կստեղծեր այդ բանը։ Անշուշտ ամենքը ցորենի, գարիի, վիկի, որոմի պես չեն որ կոտով չափվին ու տրեն մեկի հաշիվով տասանորդը առնվին։ Անդին խոտը, բանջարե-

ղենները, պտուղները կան, որոնք պաղաթը կկաղմեն, որոնց շահնան մեկ ութերորդի փոխարժեքը դրամով կպահանջե որ հատուցվի։ Բերք չառներ, որովհետև ոչ կրնա մթերել, ոչ ալ ծախել, հետո, օրինակ, այգիի մը, ծառի մը պտուղին ոչ բանակը կարելի է ճիշտ գնահատել, ոչ ալ հետևաբար արժեքը։ Արդեն կան բերքեր որ մինչև տասանորդներուն աճուրդը քաղված, մթերված են։ Այդ ամենքին այն դուրս կուգա, որ շահնան անձնական, ենթադրական հաշիվներով գյուղե մը, ասենք, հինգ հազար ղրուշ կպահանջե, գյուղացին կպնդե թե շատ է, չհոժարիր, ու երկուստեք վեճերը կշարունակվին, շահնան կալերը հոսելու հրաման չտար, կմնան անձրևներուն ներքև»[1] (ընդգծումը մերն է—Գ. Ա.)։

Անշուշտ հարկերի գանձման անսովոր ու արատավոր ձևերը, նրա գանձման կապակցությամբ գործածված դաժանությունն ու անմարդկային կերպերը ծանոթ են մեր գյուղագրական գրականությունից։ Հակոբ Մնձուրին այստեղ նոր բան չի ավելացնում։ Միայն հետաքրքիր է այն փաստը, որ նրա գյուղացիք, որ դեմ էին ընդհանրապես գրել-կարդալ սովորելուն, դեմ էին մասնավորապես աղջիկ երեխաներին դպրոց ուղարկելուն, թեկուզ տղաների՝ երկար տարիներ դպրոցում սովորելուն, այնուամենայնիվ, իրենք պահանջ էին զգում, որ այս վերջինները գոնե եթե սովորելու էին, սովորեին հայերեն «բարևագիր» և թուրքերեն աղերսագիր ու մուրհակ գրելը[2]։

Այսինքն, մի խոսքով գոնե ինչ-որ գենք ունենային կյանքում իրենց պարտադրված երկու դժբախտությունների ժամանակ։ Առաջինը՝ ղարիբության, բարևագիր գրելու համար և երկրորդը՝ կառավարական հարկերն ու վաշխառուների մուրհակները և դրանից աղերսագիր ու մուրհակ գրել սովորելու պահանջը։

---

1 Հակոբ Մնձուրի, *Կապույտ լույս*, «Տուրսուն էֆենտին», Ստամբուլ, 1958, էջ 176։

2 Հակոբ Մնձուրի, *Կոունկ ուստի՞ կուգաս*, «Մենք մանուկներս», Ստամբուլ, 1974, էջ 159։

VIII

«Ասենցմե վերջ իմ ժամանակագրություններս կուգան, այս կամ այն նշանաներուն, տեսածներուս վրա։ «Ժամանակագրություններս» օրագրություններ են, գրողներու, գիրքերու, գրական տեսություններու և իմ վրա։ Իմ լսածներս ենս։

Հակոբ Մնձուրու ժամանակագրությունները ամփոփում են սեռի երեք տարբերակներ, որոնք մեր վերը մեջբերած տողերից ևս, կարելի է սահմանել հետևյալ կերպ։

Ա. մտածումներ, եզրակացություններ իր տեսածների, ապրածների, զգացածների մասին ընդհանրապես, գնալով կոլոստյան դատապարտվող անցյալի ավանդական բարք ու սովորույթների մասին ափսոսանք մասնավորապես։

Բ. մտորումներ գիր ու գրականության, մշակույթի մասին գրված օրը օրին և գործող, ժամանակակից գրականության մասին գրախոսականներ հիշեցնող զրույցներ ու խորհրդածություններ, կարծիքներ հեղինակների և նրանց լույս ընծայած գրքերի մասին։

Գ. սեփական անձի, առօրյա ապրումների, հոգս ու մտահոգությունների վերլուծումներ և խոստովանություններ, պարզաբանումներ սեփական գրական ճաշակի, ոճի ու գրելաձևի մասին։

Այս բոլորը, սակայն, բացառապես նման իրեն, սրտամոտ ու անկեղծ, անմիջական, յուրօրինակ այն ոճով, որ մնձուրիականն է։ Ի դեպ, մնձուրիական մի նոր տեսակի պատմվածքներ հիշեցնող այդ «ժամանակագրությունները» տարածվել են նաև նրա անձնական նամակագրությունների վրա, մի խոսքով, այն ամենի վրա, որի տակ նա գրել է իր ստորագրությունը։ Իհարկե, այդ բոլորի մեջ ամենակատարյալը եղել են իր գյուղին ու նրա շրջապատին, իր գյուղացիությանը, հարազատ, հայրենի հողին նվիրված նրա պատմվածքները։ Դրանցից հետո այն պատմվածքները, որոնք նվիրվել են քաղաքին, Պոլսի բարք ու կենցաղին, քաղաքից վերցրած հերոսներին, որոնք, ի դեպ, արվեստի տեսանկյունից դիջում են առաջիններին և մեծ մասամբ պատկերում են Ստամբուլի արվարձաններն ու նրանց մարդկանց («Սկյուտար», «Ֆլորիա», «Գնալը» և այլն)։ Ժամանակագրությունները ավելի սրտաբաց և սրտամոտ զրույցներ են, եթե այս վերջինները լինեն նույնիսկ... գրախոսականներ կամ գրական տեսություններ։ Թվում է, թե տարիների բեռան տակ իմաստնացած գրողի հետ բռնվել ես մտերմիկ զրույցի, որի

ընթացքում խոսում է միայն նա, խոսում է հեքիաթ պատմելու կամ իր պատմվածքներից որևէ մեկը ընթերցելու նման, որ ծանոթ ու շատ սիրելի է քեզ և, ամենաէականը, չես ուզում, որ վերջ գտնի երբևէ։ Համովհոտով այդ շատ սովորական թվացող «խոսք ու զրույցը» սակայն, բացառապես ուսուցանող է և, ամենակարևորը, ճաշակ դաստիարակող ու ուղի նշող։ Ներուկ Մնձուրին, որ ամբողջ մի կյանք իր հայացքը ուղղել է անցյալին, իր «ժամանակագրություններում» զարմանալիորեն ժամանակակից է, նույնիսկ գիտի ամեն մանրամասն ու մանրուք, նրա իր շրջապատում, պոլսահայ գրականության մեջ է տեղի ունեցել կամ ունենում։ Այնուամենայնիվ, նրան օտար չեն նաև սիսյուրբահայ ժամանակակից գրականությունը, որի մուտքը Ստամբուլ այնքան էլ հեշտ չի եղել բոլոր ժամանակներում։

Այդ ամենից անկախ Մնձուրու «ժամանակագրությունները» թանկ են առավելաբար նրա համար, որ մամուլում ցրված այդ էջերից տեղյակ ենք լինում նաև նրա՝ «իր վրա», իր մասին ասածները, որոնք այսօրվա և, մանավանդ, վաղվա համար անգնահատելի արժեք են ներկայացնում հեղինակի սեփական ստեղծագործությանը առավել մոտից գիտակ լինելու և նրա անձը առավել հավատի ընկալելու իմաստով։

«Ժամանակագրությունների» առաջին ենթաբաժանման տակ ընկած գրությունների մեջ, կարմիր գծի նման, անցնում է ափսոսանքը հին ավանդական բարքերից, նիստ ու կացից ակամա բաժանման դիտակցության։ Բաժանում, որի հիմքում ընկած են մարդկանց վրին փաթաթված... կապիտալիստական նոր փոխհարաբերությունները։ Օրը օրին գրված ու մամուլին հանձնված նման էջերում շոշափելիորեն երևում են փողի, մարդկային նոր հարաբերություններում այդ ավերիչ գործոնի կատարած ու առաջ քաշած քաղաքային նոր կենցաղային բարքերն ու ավերները։ Բայց էականը այդ բոլորի մեջ, նորի կողքին, քաղաքին հատուկ կենցաղային նկարագրություններն են, որոնք նույնպես շատ բան են բացահայտում անցյալի, արդեն անհետացող քաղաքային կենցաղի ու կարելիությունների մասին։ Հակոբ Մնձուրին «Երանելի օրեր» խորագրով իր ժամանակագրություններից մեկում, խոսելով քաղաքային «դաստկան տան» կորստյան մասին, գրում է.

«Հիմա տունը շահագործումի գիտումով կշինվի։ Դրամով դրամ շահեցնող գործերուն մեջ տուն ունենալը, տուն շինելը, տուն ծախելը ամենեն շահ բերող գործերեն է։ Ինչ գեղ որ անոր վրա եղած շահագիտությունները ամեն շահագիտութենեն ավելի կազդեն ժողովրդին հավասարակշռությանը»։

«Մեր օրերուն տունեն ելլելու, տունեն հանվելու, տուն փնտրելու արարվածներուն մեջի անձերը դուք ըլլայիք, ի՞նչ կխորհեիք մեր քաղաքակրթության վրա։ Սթայնբեկի «Զայրույթի ողկույզներուն» մեջ գործ, ապրուստ, տեղ փնտրելու համար Կալիֆոռնիո ճամփաները ինկողներու տեսարանները չե՞ն հիշեցներ ձեզի անոնք»[1]։

Այս տողերի տակ բացահայտորեն շեշտված է դարի ողբերգությունը, որ ամայացնելով գյուղը, այլասերում է նաև քաղաքը, քաղաքաբնակին, մանավանդ ամերիկյան նշանավոր գրողի հանրահայտ վեպի՝ «Ցասման ողկույզների» հետ անցկացվող զուգահեռը, խտացնելով գույները, մղում է խորապես մտածելու։ Հակոբ Մնձուրին նման ժամանակագրություններում հաճախ է դիմում իր Արմտանին, իր սիրած ու նախընտրած «կարոտի գրականությանը», հուշերին, պատմում է պանդխտության անցյալի դառն օրերի մասին՝ «Ես Ձեզի մեր պանդխտությունը կպատմեմ»— գրում է նա։ Նման ժամանակագրությունները մի տեսակ սևագրություններ են, համառոտակի նոթեր, որոնցից շատերը, նույնիսկ որոշ պարբերություններ, հետագայում մշակվել են և դարձել մնձուրիական հայտնի ավարտուն պատմվածքներ։ Այնպես որ, իր ամբողջական գործին ծանոթ լինելուց հետո, այդ տիպի ժամանակագրությունները կորցնում են իրենց հետաքրքրականությունը և եթե մնում էլ են հետաքրքիր, միայն նրա համար, որ այդ էջերից երևում է, որ Մնձուրին ինչպե՞ս կարողացել է մի քանի սյունյակ ընդգրկող այդ խտացրած տողերից հետագայում մեծ ու ավարտուն պատմվածքներ ստեղծել։ Ի դեպ, այդ աշխատանքի մասին կա նաև իր «Ժամանակագրություններում»՝ «ինչպե՞ս կգրեմ», որի մասին մենք կխոսենք հետագայում։

Հակոբ Մնձուրու «Ժամանակագրությունների» ամենակարևոր, էական և ուսանելի մասը, անկասկած, առաջին հերթին նրա գրադատական էջերն են, գրողների ու գրականության մասին իր դիտողություններն ու տեսակետները, որոնք տվյալ սեռի ամենածավալուն մասն են ընդգրկում։ Պիտի ասել, որ Հակոբ Մնձուրու տեսադաշտից չի վրիպում Ստամբուլում կատարվող որևէ գրական շարժում և լույս ընծայվող որևէ գրական երկ, մասնավորապես, եթե այն երիտասարդներին է վերաբերում, և ի մասնավորի պատկանում է ստամբուլահայ գրականությանը։ Այդ «Ժամանակագրություններում» խոսվում է նաև իր սերնդակից

---

1 Հակոբ Մնձուրի, Ժամանակագրություն, «Երանելի օրեր», «Մարմարա» օրաթերթ, 5 մայիսի 1954։

գրողների, արևմտահայ գրականության դարասկզբի նշանավոր գործիչներից ստացված տպավորությունների մասին։

Ընթերցելով Հակոբ Մնձուրու «Ժամանակագրությունները», այսինքն մի այլ որակումով նրա գրագետական հոդվածները, զգում ես, որ արդեն ծերության բեռան տակ իմաստնացած գրողը ինչպես անխոնջ կերպով հետևում է, ուղղություն ցույց տալիս երիտասարդներին, ապրում վաղվա գրականությամբ և մեծ ուսուցչի, նահապետի դեր կատարում, համեստորեն շարադրելով իր փորձն ու դավանանքը, որ բացառապես ուսանելի է ու առողջ։

«Ձեզի հետ մշակույթի վրա պիտի խոսիմ», «Վարդան Կոմիկյանի պատմվածքները», «Նորերուն վրա», «Զահրատի Մեծ քաղաքը», «Ծովակի հոբելյանին առիթով խոսքեր», «Լևոն Մեսրոպին, Արսեն Երկաթին, Թրենցին վրա», «Զոհական՝ Համբարձում Հարությունյան», «Պարսկահայ գրող Հր. Ֆալյանի վրա», «Խ. Ամիրյան, Հ. Գալուստյանին վրա», «Իրանահայ արդի գրողներու վրա», «Քար կաթիլներուն՝ Խրախունիին ու բանաստեղծության վրա», «Մարմարայի վրա» («Մարմարա» օրաթերթի—Գ. Ս.) և այլն... խորագրերում անդամ երևում է հետաքրքրությունների լայն ծիրը, նշված տարիների ստամբուլահայ երիտասարդ գրականության և գրողների նկատմամբ. Վարդան Կոմիկյան. Զահրատ, Խրախունի, Հ. Գալուստյան, Խ. Ամիրյան և այն բոլորը, որ կոչվում են... «նորեր», դեռևս իրանահայ գաղութի գրականության նկատմամբ և այլն։ Խոսելով «նորերուն վրա» Հակոբ Մնձուրին նշում է գրականության հանդեպ իր վիրքն ու կեցվածքը և մոտեցման չափանիշը, որ բնորոշվում է, ինչպես ասացինք, գրականության բացառապես առողջ ըմբռնմամբ և միաժամանակ հանդուրժողականությամբ ու բացառիկ հոգատարությամբ։

«Մեր օրերուն գրողը չի կրնար արդեն, ինչպես իր նախորդները, իր գործին մեջ փակվիլ ու իր շուրջը եղածներուն, խոսվածներուն դիմաց անտարբեր կենալ։ Ան չի կրնար չեզոք մնալ։ Պետք է ու պարտավոր է կողմ բռնել ու արտահայտվիլ»։

«Ինձի համար՝ ով աղվոր բան մը ըսե ու տա՝ կհմայե զիս։ Իսկ ամեն նորը, զարտուղին գրականության թե փիլիսոփայության մեջ հայտնվի՝ զիս կառևանդն, գլուխս կբանամ կվազեմ անոր։ Հարելու պարագա չկա անպայման։ Տղայութենես կար այս բանը իմ մեջ. ինչ ուրախ եմ, որ չգնաց ինձմե։ Ամեն ես մեր նորերուն փակա, կկարդամ զիրենք։ Իրավցընե գեղեցի՞կ են ամեն գրածնին։ Թող չըլլան։ Ոչ գեղեցիկներ,

անհաջող, տղայորեն ասվածներ ալ կան անշուշտ։ Պիտի գա սակայն ժամանակը, որ լավագույններն ալ պիտի տան»[2]։

Հակոբ Մնձուրին գտնում էր, որ մեր օրերի գրողը չի կարող շեզոք մնալ, պետք է ու պարտավոր է կողմ բռնել... Իսկ կողմ բռնել, Հակոբ Մնձուրու համար նշանակում էր, ինչպես այդ ցույց էր տալիս նաև նրա սեփական ողջ ստեղծագործությունը, լինել առաջադիմական դիրքերում, այսինքն կյանքում ու գրականության մեջ՝ արդարի, լավի ու գեղեցիկի կողքին, նրա կողմը։ Այդ էր նրա չափանիշը և այդ չափանիշով էլ դատում էր նա երիտասարդների ստեղծած գրականությունը, անհաջողի, «տղայորեն» ասվածների նկատմամբ հասկացողությամբ ու հանդուրժողականությամբ, վստահ ու համոզված լինելով, որ կգա ժամանակը և նրանք ևս կտան լավագույնը։ Հակոբ Մնձուրու գրադատական «ժամանակագրություն» հոդվածները տարբեր են ընդունված կարգ ու կանոնից։ Դրանք ընթերցելիս, թվում է, որ ոչ թե տպագիր խոսք են, այլ կենդանի զրույց, ուսուցչի հարց ու պատասխան, մի խոսքով, մնձուրիական, բացառապես յուրօրինակ ասուլիս՝ հեղինակի ու ընթերցողների միջև։ «Գրախոսվող» գիրքը պատճառ է հանդիս, առաջին հայացքից գրքի հետ կապ չունեցող «շեղումների», որոնք, համենայն դեպս, ինչ որ կապ ունեն, խորապես, հենց խնդրո առարկա ստեղծագործությունից անմիջականորեն ստացված տպավորությունների և մտորումների հետ, որոնք, ինչ խոսք, յուրօրինակ տեսություններ են։ Հետաքրքիր օրինակ է այս տեսակետից Զահրատի (Զարեհ Յալտաղճյան) «Մեծ քաղաքը» ժողովածուի կապակցությամբ Մնձուրու լույս ընծայած «Ժամանակագրությունը»։

«—Ամեն ինչ մեծ է մեծ քաղաքին մեջ—հաճույքը մեծ—ցավը մեծ ու անոնք որոնք պզտիկ մարդիկ են—երբեք հանդիստ պիտի չըլլան մեծ քաղաքին մեջ»։ Կիրիլիսոփայե Զահրատ իր մուտքի քերթվածովը։ «Անձրև» քերթվածին մեջ անձրևեն չի ներշնչվիր ան, Մեծարենցին պես «Ի՞նչ արբեցությամբ» մը չի տար մեզի։ Բնությունը չի հափշտակեր զինքը։ Երկու Աշխարհամարտերը շատ փոխեցին մեզ։ Նորերը Բիեր Լուիսի «Պիլիթիսի երգերը» չեն գրեր այլևս, ոչ ալ Օսկար Ուայլտի Սալոմեն։ Օսկար Ուայլտի ըրած գրականությունը։ «Թու թեկ պիուրիֆ ուլ լայս»՝ գեղեցիկ սուտեր ըսելու գրականությունը նորերը կմերժեն։ Զիրենք գրավողը մարդն է, ինչպես որ է ան, բիրտը, և իրականությունը, նույնպես ինչպես որ է, ամենօրյա բիրտը։ Երևակա-

2 Հակոբ Մնձուրի, Ժամանակագրություն. «Նորերուն վրա», «Մարմարա» օրաթերթ, 28 հուլիսի 1960, № 5865։

յության կռնակ կդարձնեն։ Երբ անձրևը կտեղա Զահրատ իր տունը Է-հացի բիլոն կմտաբերեն։

«Պատերազմի հարուստի տուն չեք կրնար մտնել—փարթամ տան տանիքը չի վայելեր որ—ես և նմաններս ձեզ կսիրենք—Առատություն կբերեք—հացին բիլոն կաժանենա»։ Կրսե անձրևին համար։

Ավելի առաջ Ճանճիկյանը, անկե ետքը Գալուստյանը նույն բաները չըսի՞ն։ Դիրքի, կացության տեր եղողները չեն ախորժիր այս գրականութենեն, ուրիշներ, գրողներեն՝ նախնական կգտնեն, գրականության վատասերումով կբացատրեն։ Նորերը կխնդան, համառորեն կշարունակեն իրենց ճամփան։ Միայն թե զիրենք չսիրողները չեն խորանար, չեն անդրադառնար թե ինչու՞, ինչե՞ն, ուրկե առաջ կուգա այս փոփոխությունը։

Զահրատ «Մեծ քաղաքին» մեջ ժողովուրդին, չունևորին քերթողն է։ Ան իր պզտիկ թաղին քերթողն է»։

Նույն «ժամանակագրությունում» Մնձուրին, շարունակելով իր խոսքը, Զահրատի կերտած «Կիկո» կերպարի մասին, գրում է.

«Անոնց մեջ Զահրատ երդիծանք կգնե, որ ծաղրանք կամ արհամարհանք չէ։ Հակառակը գորովանք կա մեջը։ Մարդկային է։ Ան կսիրե իր Կիկոն։ Ո՞վ է ան։ Գծագրություն մը, ստեղծագործություն մը։ Զահրատ ինք գծած է իր Կիկոն, սև մատիտով։ Ինք ստեղծած է զայն։ Ան ողջ եղող մարդու մը չափ իրավ է։ Դուք Կիկոն տեսած չե՞ք։ Ան հայ է։ Ամեն հայ թաղի մեջ կա Կիկո մը։ Բոլոր հայ կիները, աղջիկները Կիկոն կճանչնան, կկատակեն հետը, ան մեր վա-նյու-փիեն է։ Կիկոյի վրա այս քերթվածները ալբոմի մը պես պիտի մնան մեր բանաստեղծության մեջ»։

Եվ, վերջապես, եզրակացությունը.

«Իր դիրքը կարդացեք եթե կսիրեք բանաստեղծությունը, մեր մոլորակին վրա մարդուն ըրածներեն ամենեն աղվոր բաներեն մեկը։ Զահրատեն՝ իր ըսելու՝ ուրիշ բառով գրելու կերպին վրա իմ ըսելիքս պիտի ըսեմ։ Իր կերպը իմ ամենեն շատ հավնածս է։ Երկրորդ մը չկա-ինձի համար միակն է, քեզի հետ խոսելու պես գրելը։ Մեջինները պարպելու, թափելու համար։ Աստվածները, աստվածուհիները անգամ կհմայես, երբ կան մեջդ, եթե գրքեր ունիս, ըսելիքներ շատ ունիս։ Միակ չէ ինք։ Մեր օրերուն շատ ընդհանրացավ սրիլ փարլեն»[3]։

---

3 Հակոբ Մնձուրի, *ժամանակագրություն, «Զահրատի՝ «Մեծ քաղաքը», «Մարմարա» օրաթերթ, 9—10 փետրվարի, 1961, № 6056—57։*

Ընդունված կարգ ու կանոններին չհպատակվող մնձուրիական այս գրույց-գրագրությունները, հակառակ «գեղումներին», հագեցած են կուռ սկզբունքայնությամբ, գրական առողջ դիրքորոշմամբ և էականը գրականության ու կյանքի նկատմամբ հստակ կեցվածքով։ Եթե հիշենք, թե Հակոբ Մնձուրին ի՞նչ էր ասում «նորերին», պարզ է դառնում, որ նրա՝ այս վերջիններին ուղղած, չեզոք չլինելու, պարտադիր կողմ բռնելու կոչը, այլ բան չէ, եթե ոչ կոչ՝ կյանքի հետ լինելու, մարդկանց ցավ ու վշտերին, հոգսերին անմիջական դարման բերելու ձգտում։ «Կողմնակալություն՝ հանուն կյանքի բիրտ իրականությունը փոփոխել կարենալու», տառապող ու պայքարող մարդկանց բաղմությունների հետ միասին քայլելու համոզվածություն։ Եվ այդ բոլորին գրականության ուղիով նպաստելու որպես պայման, որի համար չկա երկրորդ միջոցը, մարդկանց հետ խոսել պարզ ու հմայիչ լեզվով, գրել խոսելու պես, ինչպես դեմ դիմաց խոսում և բացվում են մարդիկ իրենց ցավ ու հոգսերի մասին և ինչու՞ չէ, նաև հաղթանակների ու ուրախությունների ժամանակ։ Գրել, մի խոսքով, հավատքով, անկեղծ... «քեզի հետ խոսելու պես»։ Այդպիսին էր Հակոբ Մնձուրին իր պատմվածքներում, այդպիսին եղավ նաև իր «Ժամանակագրություններում»։ Գրելու այլ կերպ չկար ու չեղավ նրա համար։ Եվ այս ամենաշատ նրա համար, որովհետև հորդում էր ասելիքից, որովհետև «ասելիքներ շատ ուներ»։ Ասելիքի շատությունն էր պատճառը երևի նրա գրականությունում առկա, վերև նշված «շեղումների»։ Բայց շեղումնե՞ր էին դրանք... Թեկուզ «Ջահրատի՝ Մեծ քաղաքը» ժամանակագրությունում, մտերմիկ զրույցից ստացված այն մտքերը, որոնք թվում են, թե կապ չունեն գրախոսվող գրքի հետ, անմիջականորեն կապված են թեմային և այն հարստացնում են նոր կողմերով, առավել շահեկան ու հասկանալի դարձնում, ինչպես հասկանալի ու շահեկան էին նրա պատմվածքներում, առաջին հայացքից պատմվածքի հիմնական թեմայի հետ անկապ թվացող երկրորդական մանրուքներն ու մանրամասները։ Կարդալով Մնձուրուն, երբեմն քեզ թվում է, թե հեշտ էր որևէ էջից վերցնել մի պարբերություն կամ թեկուզ մի տող։ Բայց դա թվում է միայն, իսկ իրականում, երբ առավել ուշադիր ես կարդում գրվածը, տեսնում ես, որ սովորական բառն անգամ եթե հանելու լիներիր իր գրված տեղից, իր հմայքից շատ բան կարող էր կորչել համենայն դեպս։ Գրել խոսելու նման,—ասել է Մնձուրին, բայց չէ՞ որ խոսելիս հաճախ չես կարողանում խուսափել ավելորդություններից, ասենք վերև նշված «Ժամանակագրությունում» կա այսպիսի մի տող. «երկրորդ մըն ալ ըսեմ, որ ամե-

նեն կարևորն է, նույնիսկ ամենեն առաջ պետք է ըսեմ սա»։ Տրամաբանորեն հետևում է, որ եթե նոր ասվելիքը ամենակարևորն էր, ուրեմն թող ասվեր նախապես, փոխանակ շեշտելու, թե «նույնիսկ ամենեն առաջ պետք է ըսեմ սա»։ Բայց փորձեք հանել այդ նախադասությունը, կամ ուղղել պարբերությունը ու կտեսնեք, թե ամենից առաջ կկորչի այն ջերմությունը, մտերմությունը, խոսքի այն անմիջականությունն ու անկեղծությունը, որ մնձուրիական է, իսկ առավել էականը, կկորչի նոր ասվելիքի կարևորությունը, որ առավել է կարևորվում, դառնում ընդգծուն՝ «միամիտ թվացող ավելորդությունից» հետո։

Հակոբ Մնձուրու գրագատական «ավելորդություններում» երբեմն պատահում են այնպիսի մանրամասներ, որոնք որևէ հարմար առիթով չպատմվելու կամ չգրվելու դեպքում, կարող էին շատ բան պակասեցնել սփյուռքահայ գրականության ու գրողի անցած ծանր ու դժվարին ուղին բացահայտելու, այն լրիվ պատկերացնելու և հասկանալի դարձնելու համար։ Մանավանդ, երբ նկատի ունենանք, որ այդ բոլոր բացահայտումները անմիջական առնչություն են ունեցել գրողի կյանքի ու գրական գործունեության հետ։ Մի խոսքով, նման էջերը կենդանի և շատ թանկարժեք վկայություններ են մի այլ տեսանկյունից՝ իսկական ժամանակագրության առումով։ Օրինակ, բացառապես հետաքրքիր են «Վարդան Կոմիկյանի պատմվածքները» ժամանակագրության գրախոսվող պատմվածքների հետ կապակցություն չունեցող հետևյալ տողերը, որոնք մի տեսակ «մուտք» լինեն կարծես.

«Տեղն է հայտնելու թե պատմվածքը ամենեն ավելի մատով ցուցնելիք գրական սեռը եղավ մեր ստամբուլահայ գրականության մեջ, մեր դարուն երկրորդ քառորդեն սկսած։ Վեպը, ըսել կուզեմ մեծ վեպը չտվինք։ Չէինք կրնար, որովհետև զայն գրելու համար լայն ժամանակ կպահանջե, ուրիշ որևէ գործ մը չընել, նստիլ գրելնիս պետք է։ Իսկ մենք գիշերն գիշեր, մեր գործերեն տուն պիտի դառնանք, մեր տնեցիները պիտի պառկեցնենք, որպեսզի մենք մեզի մնանք, մեկ երկու ժամ գրենք։

Մենք ոտքի վրա կգրենք, ոտքի վրա ճաշելու պես, ու ճամփան գալած, գործի մը աշխատած պահերուն մեր գրելիքները կհասունցնենք։ Բայց եթե վեպը չկրցանք տալ անոր տեղը աղվոր պատմվածքներ տվինք»[4]։

---

4 Հակոբ Մնձուրի, ժամանակագրություն, «Վ. Կոմիկյանի պատմվածքները», Մարմարա» օրաթերթ, 1959, № 5356։

Այս տողերը, անտարակույս, վկայություններ են, անգնահատելի վկայություններ Հակոբ Մնձուրու անցած ուղու մասին մասնավորապես, իսկ սփյուռքահայ գրողի մասին ընդհանրապես և այդ առումով էլ մեծապես շահեկան։ Մի այլ ժամանակագրությունից, որտեղ խոսվում է Գուրգեն Բրենցի՝ պոլսահայ մի այլ գրողի մասին, հանդիպում ենք նույնպես հետաքրքիր տողերի, որոնց մեջ մեզ համար կրկնակի արժեք են ներկայացնում Հակոբ Մնձուրու կյանքի հավելյալ մանրամասները, «ծիծաղելի» թերևս և ողբերգական միաժամանակ։

«Ավելի շատ ան կուգա ինձի։ Իր տեղը նստելու և խոսելու հարմարություն բնավ չունենալուն։ Կիրակիներն են իր օրերը, առտուները, մեր եկեղեցին պատարագի ժամերուն։ Բանկալեն, ուր գիտե թե ես նստած կըլլամ, Եսայանի անկյունին կտեսնեմ իր գալը։ Այս ժամերը հարմար ալ չեն ինձի, ինչու որ բանկալը եկեղեցիեն դուրս կամ դիմացը չէ։ Ներսն է, գավիթը, անոր աջ կողմը։ Ամեն ժամ մտնող մեր առաջքեն պիտի անցնի, մեզի պիտի նայի։ Աղվոր բան մը չէ հարկավ ժողովուրդին մեզի նայիլը, մեր խոսիլը դիտելը։ Հետո մոմ կգնեն, դրամ կավրեն, առոնցմով իմ զբաղվիլս պետք է։ Բայց ի՞նչ ընեմ մարդը, գործի օրերը իր գործը ձգե, ելլե ինձի գա, խոսելու համար։ Ատկե չենք կրնար մեր ուղածին չափ խոսիլ, բայց հակառակ այս պզտիկ անպատեհություններուն, նորեն ալ ժամանակ կգտնենք մեր ըսելիքները իրարու ըսելու»[5]։

Իհարկե, նման պայմաններում, ժողովրդի աչքի առաջ, այն էլ մոմ վաճառելով զբաղված Մնձուրու և Բրենցի «ըսելիքները» սովորական առօրյա խոսակցություններ չեն կարող լինել։ Այդ նեղ պայմաններում, խլված թանկ պահերը, հատկացվում են գրական ծրագրերի, խորհրդածությունների և երևի երբեմն էլ վեճերի։ Պարզվում է, որ սփյուռքահայ գրողի համար ոչ միայն դժվարին են գրել կարենալու պայմանները, որոնք գոյություն չեն ունեցել, այլ նաև ժամանակն ու միջոցը... խոսիլ կարենալու։ Այդ է պատճառը, որ Մնձուրին նույն ժամանակագրությունում գրել է հետևյալը, որը հաստատում է նաև մեր ասածը.

«Խոսիլը գրելու չափ գեղեցիկ է։ Խոսիլը նույնքան ստեղծագործող է, քեզ տալ է։ Խոսիլը սերմ ցանել է, ծլելու, արձակվելու պատրաստ։ Ամեն կրոնի հիմնադիրներուն, մարգարեներուն ըրածը ըսել է, խոսիլ

---

5 Հակոբ Մնձուրի, Ժամանակագրություն, «Լեոն Մեսրոպին, Արսեն Երկաթին, Բրենցին վրա», «Մարմարա» օրաթերթ, 1962, № 6395։

է, խոսիլը վարակել է։ Թեյատունները ամենեն հարմար տեղերն են խոսելու։ Թող ներսը լեցուն ըլլա մարդերով։ Բոլորվեն սեղանի մը շուրջը, երկու, երեք, չորս ժամ, կամ ինչքան կուզես, խոսե, ըսե։ Ոչ որ քեզ կմիջամտե։ Թեյարանները, սրճարանները լավագույն վայրերն են գրականության ինչպես բոլոր արվեստներու համար։ Բոլոր երկիրներու մեջ բոլոր գրողները, ամեն արվեստի մարդիկ հոն կըլլան։ Ինչ դեղ որ մենք չենք երթար, չենք փափաքիր ու կժանդոտինք»։

Այս կարոտը, խոսել կարենալու այս տենչը և այն թեկուզ սրճարաններում, թեյարաններում հագեցնել չկարենալու իրականությունը սփյուռքահայ գրողին, Մնձուրուն ստիպել է լուրջ խոսքի սով ապրել, տառապել՝ իր սիրտն ու միտքը իր գրչակցին կարենալ բաց անելու անկարելիությունից։ Անկարելիություն, որ ստիպել է առօրյա ապրուստի ծանրաբեռնվածությունը, ընտանիքի բեռը, գրողին վիճակված դաժան ճակատագիրը։ Եվ այդ է պատճառը երևի, որ խոսելը, խոսքը, խոսականը, ոչ թե բամբասանքն ու աժան գրույցը, արժեքավորել է և գրողին ասել է տվել, որ «խոսիլը գրելու չափ գեղեցիկ է, խոսիլը նույնքան ստեղծագործող է, քեզ տալ է»։ Վերջապես, որ այն «սերմ ցանել է, ծլելու, արձակվելու պատրաստ»։ Այդպիսին էլ Մնձուրու խոսքն է, նրա գրի, գրչի կողքին։ Եվ դրա համար էլ նրա ընթերցողի հետ անմիջական գրույցները, սիրտը բաց անելը, հավասարազոր են նրա գրական խոսքին։ Ավելի ճիշտ՝ մեկը ամբողջացնում է մյուսին, առավել հասկանալի դարձնում թե՛ հեղինակին և թե՛ նրա ստեղծած հերոսին, եթե պատմվածք կամ վիպակ է գրվածը և առավել շոշափելի է ընծայում գիրքը, եթե գրախոսվում է Մնձուրու կողմից։ Եվ ոչ միայն գիրքը, այլև նրա ժամանակը, պայմանները, միջավայրը։

Մի խոսքով, ինչի մասին էլ խոսի Մնձուրին, կարողանում է այժմեական, հետաքրքիր ու հյութեղ դարձնել այն։ Երիտասարդների մասին հետաքրքրությունը Մնձուրու մոտ չի սահմանափակվում միայն իր շրջապատի, Ստամբուլահայ սերնդով, նա շատ զգույշ և ուսանելի լինելու ձգտումով քննադատում ու խորհուրդներ է տալիս, երբ խոսում է «իրանահայ արդի գրողներու վրա»։ Այստեղ ևս մեկնակետը նույնն է, գրականության մեջ տեսնել մերօրյա ապրող, ռեալ, շոշափելի, ժամանակի բնորոշ հերոսներին, և առավել այդ ամենում՝ ազգայինը։

«Ինչ արբեցությամբ կարդացի այն էջերը, ուր պարսիկն ու Պարսկաստանը կային, բայց պարսկահայը, նոր ջուղացին, թեհրանցին, սալմասցի հայը իր կերած խմածովը, իր նիստ ու կացովը, իր խանութովը, իր արտովը ուղածիս չափ իր տռամովը չգտա, շատ չգտա։ Տե-

սեր ռուս գրականությունը, մինչև հետին պատմվածքները կհորդին իրենց կյանքովը, հոգեբանությունովը։ Մենք ինչու՞ չընենք։ Ամեն տեղացինը՝ նույնքան ալ մարդկային է։ Առանց մեկին մյուսը չկա, չըլլար։

Թերի մը կա հատորին մեջ, կամ իմ աչքովս թերի մը կա։ Մտածումի գրականությունը կբացակայի։ Այնքան շատ բաներ կան ըսվելիք մեր օրերուն մեր եղածներուն, գրականության, քաղաքակրթության, ընկերության, մարդուն վրա։ Գրականությունը միայն պատմվածք, երգ ու խա՞ղ է։ Մենք ալ այդ պակասը ունինք։ Մենք ալ մտածողներ չունինք, մեր մեջ ալ փորձագրողներ չկան»[6]։

Սրանք Մնձուրու ցանկություններն էին, հայաբույրը, տեղացինը, որ նույնքան էլ մարդկային է, առանց մեկի չկա, չի լինի մյուսը։ Մնձուրու ցանկությունը գրականության մեջ տեսնելն էր գրողն ու նրա երկիրը, գրողի խառնվածքի շոշափելիությունը, որ հագեցած լիներ իր հայրենի, իր երկրի գույնով ու բույրով, ինչպիսին իհարկե, իր անձին ու գրականությանն էր, մասնավորապես, գեղարվեստական կալվածինը, իսկ մտածումի գրականությունը, որի բացակայությունը նա տեսնում էր սիյուրքահայ կյանքում, ջանում էր թեթևացնել իր «ժամանակագրություններով»։ Այս վերջիններից մեկում նա գրել է. «Ես գրաղատ քննադատ չեմ, ժամանակագրող եմ, իմ օրերուս եղածները կարձանագրեմ, վկա եմ, իմիններս վկայություններ են»[7]։

Այսինքն՝ վկայություններ՝ «Մեր օրերուն, մեր եղածներուն, գրականության, քաղաքակրթության, ընկերության, մարդուն վրա»։ Այսինքն՝ մտածումի գրականություն։

Հակոբ Մնձուրին վաթսունական թվականներին ընդհանրապես կարճ պատմվածքներ էր գրում և մեկ էլ ժամանակագրություններ, դասարկցրել էր և բնանկարների շարքը և հեքիաթները։ Արդեն այս վերջինները փոքր քանակ կազմեցին իր գրականության մեջ, եթե չհաշվենք այն հանդամանքը, որ բացառապես բնանկարներով հարուստ եղավ իր գրականությունը։ Այսպես, այդ շրջանում գրած իր մի ժամանակագրության մեջ նա, կրկին անդրադառնալով այս վերջինի բնույթին, տալիս է նրա նմուշներից մեկը, որտեղ առավելաբար խո-

---

6 Հակոբ Մնձուրի. ժամանակագրություն, «Իրանահայ արդի գրողներու վրա», «Մարմարա» օրաթերթ, 1964, № 7336։

7 Հակոբ Մնձուրի, ժամանակագրություն, «Քար-կաթիլներուն՝ խրախուսիչ ու բանաստեղծության վրա», «Մարմարա» օրաթերթ, 1964, № 7438։

սում է իր ճանաչած գրողների մասին։ Այսինքն՝ վկայություններ «իմ ճանչցած գրողներուս վրա»։

Այսպիսով, նման ժամանակագրություններից ծանոթանում ենք Զապել Եսայանի, Արտաշես Հարությունյանի, Վահրամ Թաթուլի, Հովհաննես Ասպետի, Հովսեփ Քիշիշյանի, Մանուկ Ասլանյանի և այլոց կյանքի որոշ մանրամասներին և այդ մանրամասների միջից նաև իրեն, որ ավելի հետաքրքիր է։ Ի միջի այլոց սեռի՝ մեր սկզբում նշածերրորդ ենթաբաժանման մեջ ընկնող «ժամանակագրություններում» հարուստ նյութ կա հենց իր մասին արած իր վկայություններում, որոնք շատ ուսանելի են, բազմակողմանիորեն հետաքրքիր, որովհետև այնտեղ բացվում են առաջին հերթին գրողի լաբորատորիան, նրա աշխատանքի ոճը, գրելաձևը և բացահայտվում այն ծանր ու դաժան պայմանները, որոնց մեջ բախին է ընկել ստեղծագործել Հակոբ Մնձուրուն։ Այնտեղ կան նաև սոցիալական փորձառությունից ու փորձից տրված խորհուրդներ երիտասարդներին և առհասարակ բոլոր նրանց, ովքեր վճռել են իրենց կյանքը կապել գիր ու գրականության հետ։ Իհարկե, այդ փորձ ու փորձառությունը արդյունք է կապիտալիստական միջավայրի ու բարքերի պարտադրած կացությունից ելք գտնելու ճիգերին, որոնք հենց գրանով էլ դառնում են շահեկան մեր ընթերցողի համար։

Հետաքրքիր է ծանոթանալ իր պատմվածքներից մեկի պատմությանը, որ հրատարակվել է երկու անգամ. առաջին տարբերակը 1957-ի նոյեմբերի 24-ին՝ «Բագարիջերեն կուգայի» խորագրով, երկրորդը՝ 1964-ի հոկտեմբերի 22-ին՝ «Ես կըսեմ աս մարդը հայ չէ» վերտառությամբ։ Երկուսն էլ գրեթե նույն բովանդակությամբ լույս են ընծայվել «Մարմարա» օրաթերթում։ Ի դեպ, Հակոբ Մնձուրու ստեղծագործությունների ճնշող տոկոսը, մասնավորապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, լույս է ընծայվել հենց այդ օրաթերթում, որն ունի իր պատճառը։

«Իմ համակրությունս «Մարմարա»-յին իր պարունակությենեն կուգա։ Գրական թերթ մը չէ, լրագիր մըն է։ Բայց իմ ամենեն շատ ուզածս կընե, գրականություն կուտա իր ընթերցողին»[8]։ Այսպես, յոթ տարվա ընդմիջումով գրված այդ նույն պատմվածքը ունի հետևյալ «Երկու խոսք ընթերցողներուս հետ սա պատմվածքին վրա»-ն։

«Այս պատմվածքս երկրորդ անգամ գրեցի։ Առաջինը 1957 նոյեմ-

---

8 Հակոբ Մնձուրի, ժամանակագրություն, «Մարմարայի վրա», «Մարմարա» օրաթերթ, 1965, № 7688։

բերի 24-ին նորեն «Մարմարա»-ին մեջ եկավ «Բագառիչներեն կուգայ» էր անունը։ Ինչո՞ւ նորեն գրեցի։ Այս ամառ, ընթերցողներս գիտեն, խելքի մը եռեւեն եղա։ Պատմվածքներս շատցան, գիրք մը հանեմ անոնցմով ըսի ես ինձի։ Գրողները աղջիկ զավակ ունեցող մայրերուն կնմանին։ Մայր մը, աղջիկն որ մեծնա, ինքզինքը կուտե, ինտո՞ր ընե ու ամուսնացնե։ Երջանիկ պիտի ըլլա՞ արդյոք, անշուշտ միակ փափաքն է, բայց նույնքան ալ անոր տունը՝ չմնալը, երթալը, կուզե։ Տեսակին շարունակության բնա՞զդն է որ ընել կուտա արդյոք մորը, ուրիշ ինչպե՞ս բացատրել։ Գրողն ալ՝ երբ գրածներու պատրաստ մը ունենա՝ կեռան իր ըսածները իր մեջը, նույնպես ինքզինքը կուտե, ինտոր ընե ու հրատարակե, իր ընթերցողին հասցնե, շարունակվի անոր մեջ իր տենդերը, իրմե եղածները։ Գիրքը պիտի կարդացվի՞, չի գիտեր, միայն թող հրապարակ ելլե, ատ կմտածե։

Ամենեն վերջը ըլլալիքը ամենեն առաջ ըրի։ Անունը գրի «Արմտան» հոր մը, մոր մը դեռ չծնած զավկի մը անունը դնելուն պես։ Պատմվածքներս զատեցի, դասավորեցի, աս մեկն ալ փնտրեցի չգտա թուղթերուս մեջ։ Մարմարան ալ յոթը տարի առաջվան աս թիվերը չուներ, նստա ու գրեցի։ Ընդօրինակություն մը չէ ըրածս, հին պատմությունը նորեն ստեղծելու հարկադրվեցա։ Երկրորդ հոգնություն մը եղավ ինձի, բայց ի՞նչ ընեի, մարդ մը՝ որ իր խելքին վրա հիանա, հոգնություն մոգնություն չերևար աչքին։ Իրավ է, որ գիրքն ալ չելավ, իր շահին չէի թեև, թող չելլե ի՞նչ ընեմ։ Հին պատմվածքս աղվոր էր թե սա նորը։ Հինը չունիմ, որ ըսեմ, կկարծեմ, կխորհիմ թե աս ավելի աղվոր է։ Հին անունը փոխելս, սա նորը դնելս ավելի ճիշտ ուզածս եղավ»[9]։

Այստեղ արդեն ժամանակն է, կարծում ենք, մեջբերել իր մի ժամանակագրության այն էջերը, որտեղ նկարագրում է իր գրելու եղանակը, իր տքնանքը։

«Ինչպե՞ս կգրեմ։ Ամենեն առաջ սա ըսեմ, որ շուտ չեմ կրնար գրել, ձեռքես ուշ, ձեր երևակայածեն ավելի ուշ գործ կելլե։ Գրածս կարճ ալ ըլլա նույնն է։

Ամենեն առաջ նյութս գալու է։ Գալուն պես կսկսիմ վրան բանիլ։ Միտքս տուն կուգա, ես ալ տուն տվածները կգրեմ, ձեռքս անցած նամակի պահարաններու, որևէ թուղթի կտորներու վրա որոնք մեծ ըլ-

---

9 Հակոբ Մենուրի, Ես կըսեմ աս մարդը հայ չէ, «Մարմարա» օրաթերթ, 1964, № 7378։

լալու չեն։ Ըլլալու ըլլան կկտրեմ։ Սա առաջին ֆապս երկար կտեւ։ Շաբաթը կվերջանա, երկրորդ մը կսկսի, ան ալ կվերջանա, ես դեռ կշարունակեմ, ամեն օր, քիչ քիչ։ Միաժամանակ ալ մտքով կբանիմ, ճամփան քալած ատենս, կամ երբ մինակ ըլլամ։

Այս առաջին սեազրութիւններես հետո երկրորդ ֆապը կհաջորդե, կսկսիմ գրել։ Ճմրթկված թուղթերու տեղ փոքրագիր կտրված թուղթեր կգործածեմ հիմակ, ատ ալ անոր համար, որ ավելի շատ սփիս վրա կգրեմ, առանց սեղանի։ Սեազրութիւններս գրեթե չեմ փնտրեր, կամ շատ քիչ պետք կունենամ անոնց։ Օրը երկու, երեք էջ կգրեմ։ Շաբաթ մը, անկե ալ ավելի կտեւ ատ։ Կարդալն ետքը չեմ հավնիր գրածիս, վերստին կգրեմ։ Ատ անգամ ավելի շուտ կավարտեմ, կըլլա, որ ատոր ալ չհավնիմ, չորրորդ մը գրեմ։ Ալ ատ կգոհացնե զիս։ Նախադասութիւններս ուղածիս պես բյուրեղացուցած եմ, ըսածներս կփոխանցվին, ինչպես, որ կուզեմ։ Խիճ չկա։ Անձերս իրականներու չափ իրական են։ Դիալոգս բնական է, ատկե ուրիշ կերպ չպիտի խոսեին անձերս, գործողությունս տրամաբանական է։ Ես ու գրածս կժպտինք իրարու։ Մոր մը զավակ ծնելուն պես կմոռանանք քաշածնիս։ Կերգեմ, կկատակեմ ամենուն հետ, Մարուքեին կհայհոյեմ, քաղաքը կծախեմ (կհարբիմ— Գ. Ս.) առանց ալքոլի։

Ահա ինչպես կգրեմ, եթե գուք ատոր գրել կըսեք։ Ատ ճիշտ է, որ ուշ գործ հանելս ի վնաս չէ ինձի։ Հակառակը։ Որքան ուշացնեմ ամենօրյա կյանքը կամ միտքս նոր բաներ կուգան ինձի զոր կավելցնեմ։ Ի՞նչ ընեմ, որ խելքս շուտ վրա չգար։ Այսպեսով ավելի՞ ավարտուն բաներ կուտամ կըսեք։ Ծիծաղելի պիտի ըլլար ատ ինձի համար եթե ըսեիք։ Բայց եթե չընեի, ավելի թիրի գործ մը տված պիտի ըլլայի։

Գրածս ավարտելն ետք մոր մը զավկի միջև եղածին պես պորտին կապը կկտրեմ գործիս։ Կապրի՞, չապրի՞ տվածս, ալ ընելիք մը չունիմ։ Գիտեմ, որ չպիտի կրնամ հրատարակել գրածներս։ Առևտրական գործ մըն է ամենեն առաջ զոր չպիտի կրնամ ընել։ Բնութենեն առի, բնության կդարձնեմ նորեն կըսեմ ես ինձի։ Բայց արտադրելու հնշտանքեն ձեռքս չեմ կրնար ետ քաշել։ Ըսելը, տալը հետս պիտի ընթանա»[10]։

Ահա համեղ, հյութեղ, հողաբույր մենաուրիական գրականության պարզության, զուլալության ու անմիջականության բանալին, որտեղ մեկ անգամ ես հաստատվում են, և այս հեղինակի իսկ անմիջական

---

10 Հակոբ Մենուրի, *Ինչպես կգրեմ*, «Մարմարա» օրաթերթ, 1955, № 4039

գրավոր վկայությամբ, որ պարզության, խոսելու նման գրելու, անմիջականության գաղտնիքը, օր ու գիշեր, անդադրում, համառ աշխատանքն է։ Եվ այն թվացողը, թե «ժամանակագրություններում» մասնավորապես և գեղարվեստական ստեղծագործություններում ընդհանրապես, Հակոբ Մնձուրու «շեղումները», «ավելորդաբանությունները», «կրկնողությունները» ակամայից են ստացված և արդյունք են հապճեպության, հիմնովին սխալ է։ Ինչպես շեղումները, այնպես էլ կրկնողությունները, մի խոսքով յուրաքանչյուր մանրամաս, Հակոբ Մնձուրու գրչի համար արդյունք է երկար տքնումի ու համառ, երկարատև աշխատանքի։

Եվ այդ համառ ու անկոտրում աշխատանքից հետո, այն էլ ինչպիսի գժվարին ու «ծիծաղելի» պայմաններում, հրճվանքը ստեղծագործության, որ հիշյալ տողերը գրված ժամանակաշրջանում յոթանասունամյա ծերունուն ասել է տալիս երիտասարդական անմիջականությամբ և խենթությամբ.

«Ես ու գրածս կժպտինք իրարու։ Մոր մը զավակ ծնելուն պես կմոռնանք քաշածնիս, կերգեմ, կկատակեմ ամենուն հետ, Մարուքիին կհայհոյեմ, քաղաքը կծախեմ, առանց ալքոլի»։

«Մոր մը զավակ ծնելուն պես». բայց մի՞թե մայրն անդամ այդքան զավակ ծնելուց հետո, երեք հարյուրի մոտ պատմվածք և հարյուրից ավելի ժամանակագրություն, հայրենական դյուցանկար, հեքիաթ կարող էր... ուրախանալ ու մոռանալ... «քաշածները»։ Երևի միայն ստեղծագործելու հրճվանքն էր հատուկ այդ բոլորին և այդքանից հետո ցուցաբերված համեստությունը՝ «Այսպիսով ավելի՞ ավարտուն բաներ կուտամ կըսեք։ Ծիծաղելի պիտի ըլլար ատ ինձի համար եթե ըսեիք»։ Համենայն դեպս, շատ է ուսանելի։ Համեստությունը, որ, երևի, հատուկ է արվեստագետներին և նրանցից մեծերին միայն.

«Անշուշտ իմ տարողությանս դիտակցությունը ունիմ, անկե ավելի մը չեմ, ըսել է թե ես ալ այսքան կրնայի ըլլալ։ Մեր հիններուն ըսած «աթը այ կեմիսի»ներուն, վեց ամիսեն նավահանգիստը ժամանող նավերուն կնմանիմ, այդքան դանդաղ կաշխատիմ։ Բայց հակառակը չեմ կրնար ընել, արագություններու մեր դարին մեջ, թեև ամեն արագություն ի վնաս գրողին է, իր գործը կտուժե, ժամանակը հաշվի առնվելիք ամենեին պարագա մը չէ։ Ժամանակը բան մըն ալ չէ, անկլոսաքսոններու «թայմ իզ մանի» ժամանակը դրամ է, «դեր իզ նո մասթըրս հու թաութ պիֆսթեք» գլուխգործոց չկա առանց պիֆսթեքի

(բիֆշտեքս—Գ. Ս.) ըսածները առևտրական մտայնության մը արտահայտություններ են»[11]։

Հակոբ Մնձուրին երբեք առևտրական չեղավ նաև իր արվեստում, նա շատ հեռու էր կանգնած նման մտայնությունից։ Նա գյուղացի հողագործն էր, գյուղի ուսուցիչը, քաղաքի ծանր շահագործման ենթակա բանվորը, մտավորականը ու այդպիսին էլ մնաց մինչև իր մահը։ Այո, «ժամանակը հաշվի առնվելիք ամենևին պարագա մը չէր» նրա համար, արվեստագետ, որ կյանքում, իր սիրած գործին նվիրվելու համար ամենաշատ տառապեց... ժամանակի սղությունից։ Չէ՞ր կարող ինքն էլ, իր մի շարք համագյուղացիների նման, սկսելով փոի բանվորությունից, հաց շաղախելուց, եփելուց, ցրվելուց, կամաց-կամաց դառնալ փուռատեր, կարող էր, իհարկե, ինչպես եղան իրենցներից շատերը։ Բայց չէր կարող էլ երևի, ինչու՞ չէր կարող, ի՞նչն էր ստիպում նրան ամբողջ կյանքում, թեկուզ ապրելու համար ամեն ինչ ծայրը ծայրին բերելու, հաճո՞ւյք էր ստանում աղքատությունից... Կա՞ այդպիսի թեկուզ մի մարդ աշխարհում... «Բոլոր գիտությունները, երգահանները, բանաստեղծները որոնք աղքատության մեջ մեռան։ Փիլիսոփան որ կփիլիսոփայե ինչո՞ւ ըրին, ինչու՞ կընե։ Հազար բան կարելի է ըսել։ Բայց բացատրությունը չէ։ Տրամաբանությունը կանգ կառնե։ Մարդը չընելը չի կրնար»[12]։ Այո, հազար բան, հազար բացատրություն կարելի է տալ, բայց ոչ մեկն էլ միակն ու ամբողջականը չի լինի։ Ճշմարտությունը այն է, որ... «մարդը չընելը չի կրնար»։

Հակոբ Մնձուրին գրող էր ամենից առաջ և առանց դպրոցական կամ համալսարանական դիպլոմի։ Բազմակողմանիորեն զարգացած մտավորական, մի խոսքով՝ մշակույթի տեր անձնավորություն։ Մշակույթ, որին մեծ դեր էր վերապահում աշխարհի ու մարդկանց վերափոխման աշխատանքում։

«Գրող մը կրնա հատորներով վեպ, պատմվածք, թատերգություն տալ, տարիներով քերթվածներ գրած ըլլալ, նույնիսկ վաստակավոր գրող մը ըլլալ և հակառակ, որ իր գործը ուրիշ որևէ մեկե ավելի մշակույթի հետ կապված է, մշակույթ չունենալ։

Մշակույթ մը դպրոցեն վերջ կսկսի։ Մենք զայն գրքերեն կառնենք, բայց պետք չունինք ճիգ ընելու անոր համար։ Ան աճելու, սնա-

11 Հակոբ Մնձուրի, ժամանակագրություն, «Իմ վրա, իմ գրքիս վրա», «Մարմարա» օրաթերթ, 1965, № 7609։

12 Հակոբ Մնձուրի, ժամանակագրություն, «Բարեկամիս՝ Ա.-ին», «Մարմարա» օրաթերթ, 1961, № 6313։

նելու կնմանի։ Բնության մեջ ծառը, կենդանին ճի՞գ կընեն, մենք ճի՞գ կընենք մեր աճումին համար։ Ան ինքնիրենը կըլլա։ Հերիք է, որ հիմ մը կա մեր մեջը, զոր չունենալ կարելի չէ, մնացածը, ամեն ընթերցում բան մը կբարդե վրան։ Միայն գրքերեն ալ չէ։ Մեկու մը հետ խոսելեն, մեկն մը բան մը լսելեն, կամ աշխարհի մեջ ամեն օր եղած, պատահածներեն ալ բաժին կհաններ անոր։ Մշակույթ մը թերի կըլլա, եթե մինակ երևակայության գործեր, ստեղծագործություններ, քերթված, պատմվածք, վեպ կամ մինակ մտածումի գործեր, փորձագրություն, ուսումնասիրություն, քննադատություն կարդանք։

Բայց պե՞տք է կարդամ ամեն սեռ ամեն գիրք։ Ոչ։ Ատ չեմ ըներ։ Արդեն ամեն գիրք չեմ կարդար։ Գիրքեր կան որոնցմե կպժգամ։ Գեշ գրվածքներ կան, հետորությունով գրվածները կան, տափակները, անբանացնողները, ամուլները կան։ Անոնց բոլորին վրայեն հաստ գիծ մը կքաշեմ։

Մշակույթը պիտի փոխե մարդը։ Ան պիտի հոկե մեր հասապաշտության, ան պիտի սանձե զայն։ Ան մարդը ավելի մարդկային պիտի ընե։ Կրոնքը չկրցավ ընել։ Ան ամեն անգամուն դիցաբանության, աստվածաբանության մեջ ինկավ։ Չէր կրնար արդեն, ինչպե՞ս պիտի ըներ։ Իր մեթոդները ճիշտ չեն, անբավական են։ Ամենեն առաջ միտքը պետք էր մշակել։ Ան միտքը զանց ըրավ, մտքեն խրտչեցավ։ Տեղը անդենականի վախը, պատիժը դրավ։ Իսկ պատմությունը մինչև այսօր չապացուցուց անոնց բանի մը ծառայելը։ Հավատքի իբր թե ամեն միահեծան տիրապետության դարերուն անգամ մարդիկ զիրար հոշոտեցին։

Կետ մը կա սակայն։ Ամեն մարդ մշակույթի կիրքը կունենա՞։ Ճիշտ է, որ չունենար։ Միայն թե երբ շատոնց ունեցողները, անոնց խոսքը լսելի ըլլա, մարդիկ այն ատեն աղեկ պիտի ըլլան»[13]։

Իհարկե, միամիտ էր այդ հոդվածի վերջաբանը, բայց սպասել Մնձուրուց ավելին չէր կարելի, մանավանդ, այն պայմաններում, որ նրա ապրած ու ստեղծագործած քաղաքական մռայլ ու մութ, փակ միջավայրն ու երկիրն էր։ Կյանքի ու մարդկանց վերափոխման, առավել լավն ու արդարը ընթացքի համար նա չտեսավ սոցիալական իր դասակարգի դերը, ոչ թե չտեսավ, այլ ձևացրեց, թե չի տեսնում։ Չէ՞ որ ամբողջ իր գրականությունը դրան էր ձգտում, կարոտի ու բողոքի կողքին

---

13 Հակոբ Մնձուրի, Զեզի հետ մշակույթի վրա պիտի խոսիմ, «Մարմարա» օրաթերթ, 1955, 4006։

նաև սոցիալական արդարություն։ Պայքարողներ չէին իր հերոսները, չէին էլ կարող լինել, բայց ունեին դիտակցությունը իրենց պատկանած դասակարգի, ինչպես ինքն ուներ՝ Հակոբ Մնձուրին։ Եվ դրանից էր առավել իր բորբ սերը իր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի նկատմամբ։ Սեր, որ արյան մեջ էր, հոգու, սրտի և միաժամանակ մտքի ու առողջ, անխարդախ բանականության։ Հակոբ Մնձուրուն սիրում էին նաև հայրենիքում։ 1976 թվականին տոնվեց նրա ծննդյան իննսունամյակը և դա հանդիսացավ նրա համար, իր կյանքում, թեկուզ հեռվից, ստացած ամենացանկալի գնահատականը։ Այդ երջանկության ջերմ հիշատակը նա պահեց իր սրտում և հայրենիք առաքած յուրաքանչյուր նամակում հիշում էր այդ մասին, հիշում ու գրում։ Երևի նրա մասին միայն կարելի էր ասել, որ երբ մահացավ... հալվիվ իննսուներկու տարեկան էր։ Իրմով փակվում է «կարոտի գրականությունը սփյուռքում»։

Հակոբ Մնձուրին նրա վերջին Առաքյալն էր...

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ 5

ԳԼՈՒԽ Ա

Ինքնակենսագրության արահետներով 10

ԳԼՈՒԽ Բ

Ստեղծագործության հմայքը 60

ԴԵՂԱՄ ԼԵՎՈՆԻ ՍԵՎԱՆ

ՀԱԿՈԲ ՄՆՋՈՒՐԻ

Հրատարակչական խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Նկարիչ Մ. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՎՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Սրբագրիչ Է. Ա. ՍՈՒԽԻԿՅԱՆ

ИБ 424

Հանձնված է շարվածքի 8. 05 1981 թ.։ Ստորագրված է տպագրության 22. 10 1981 թ.։
ՎՖ 10366 Չափը 60×84 1/16 թուղթ, № 1։ Տառատեսակ «գրքի՝ սովորական» բարձր տպագրություն։ Պայմ. 11,53, տպագր. 12,5 մամուլ։ Հրատ.—հաշվարկ 11,1 մամուլ։ Տպաքանակ 3000։ Պատվեր № 602։ Հրատ. № 5504։ Գինը 1 ռ. 90 կ.։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ. 24։
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.

Ա II
66220

1 ռ. 90 կ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220066220